

# Մուշ, fungr Մուշ.

fwurstekawaqrtelenv հուշեր  
Հայաստանից և Թուրքիայից

Խմբագրական կազմ.

Լուսինե Խաչատրյան

Իսնահլ Քեսքին

Ավետիս Քեշիշյան

Ս. Այրուք Օգթուրք

Նանե Խաչատրյան

Նիհալ Վլայրաք

Կարեն Հակոբյան

## Հրատարակիչ՝

Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության  
Սիցազգային համագործակցության ինստիտուտ

## Գաղափար՝

Լուսինե Խառատյան  
Իսմահլ Քեսրին  
Ավետիս Քեշիշյան  
Ս. Այքուբ Օզքուրը  
Նանե Խաչատրյան  
Նիհալ Ալբայրաք  
Կարեն Յակոբյան

## Գլխավոր խմբագիր՝

Լուսինե Խառատյան

Գրքում արտահայտված կարծիքները կարող են չհաճընկնել հրատարակչի կարծիքների հետ: Սույն հրատարակությունը կամ դրա մի մասը կարող է վերարտադրվել՝ ադրյուր պատշաճ կերպով հղելու պարագայում: Հրատարակիչը խնդրում է իրեն տրամադրել ցանկացած նմանատիպ վերարտադրության պատճենները:

Հրատարակությունը վաճառքի ենթակա չէ և կոմերցիոն կամ շահույթի նպատակ չի հետապնդում:

Բիբլիոգրաֆիկ տեղեկատվությունը հրապարակված է Գերմանիայի Ազգային գրադարանի կողմից.

Գերմանիայի Ազգային գրադարանը գրանցել է սույն հրատարակությունը Գերմանիայի Ազգային Բիբլիոգրաֆիայում, մանրամասն բիբլիոգրաֆիկ տեղեկությունները հասանելի են ինտերնետի միջոցով հետևյալ կայքում՝  
<http://dnb.d-nb.de>

## Մրբագրիչ՝

Ազատուհի Սահակյան

## ԶևաՎորում՝

Արթուր Մաշինյան  
«Թաղաք արվեստանոց»

## Նախնական գաղափար՝

Նազարեթ Նազարեթյան  
Մաթիաս Քլինգենբերգ  
Ուլրիկ Պուշ

*dvv international*

Obere Wilhelmstraße 32-53225 Bonn  
Federal Republic of Germany  
Tel.: +49/228-97569-0  
Fax: +49/228-97569-55  
E-mail: [info@dvv-international.de](mailto:info@dvv-international.de)  
[www.dvv-international.de](http://www.dvv-international.de)

For further information please also see  
[www.speakingtooneanother.org](http://www.speakingtooneanother.org)

©2013 *dvv international*

ISBN: 978-3-942755-12-2



ANADOLU KÜLTÜR



Auswärtiges Amt

# Բովանդակություն

Առաջաբան .....	4	պատմասացությունը ազգային-պետական սահմանների դարում .....	62
Երախտագիտության խոսք .....	5	Օգգե Սերգեյը և Ռուզաննա Բաղդասարյան .....	69
Ներածություն .....	6	Սփյուզած բեկորներ .....	69
Մուշ համառոտ ակնարկ .....	11	Արմենուհի Նիկողոսյան և Բերուլ Կայա Անիրական, բայց ողջ իրական, բայց անկենդան .....	77
<b>ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ</b> .....	12	Արմենուհի Նիկողոսյան Վախը .....	81
Ներածություն .....	13	Աբաք Այազ և Սոֆյա Սամուկյան Առարկաններն ու կառույցները՝ որպես պատմության և հիշողության փոխադրողներ. հարցագրույց երկուսիս միջև .....	87
Հիլալ Ունալ և Ծահանե Յալաջյան Հիշողություն, պատկերացումներ.		Ոուզաննա Բաղդասարյան Լոռության փլուզվող պատի դարպասները .....	95
Մուշն ու հայերը .....	15	<b>ԲԵՄԱԿԱՆ ԱՐՎԵՏԸ</b> .....	99
Անի Պողոսյան և Սերժան Չինար «Գնացածներն» ու «մնացածները» .....	23	Ներածություն .....	100
Եյլեմ Նազլը Թաշդեմիր և Ռինեթ Իսաջյան Գանձերի հետևից .....	34	Արիադնա Գրիգորյան, Մարիամ Գրիգորյան և Աննա Պողոսյան Եզրափակիչ ներկայացման սցենար. Մուշ .....	106
Ռինեթ Իսաջյան Խճճամխտում. Կանանց պատմությունները .....	42	Արիադնա Գրիգորյան, Գոհար Յովսեփյան, Մարիամ Գրիգորյան, Մերվե Խան, Սայաթ Թեքիր և Սելին Շաքար Եզրափակիչ ներկայացման սցենար. Գյումրի .....	119
Հազար Աբաք և Տաթև Յայրապետյան Թասից և խաղողի այգիներից մինչև Արարատ. անցյալի և ապագայի խորհրդանշերը .....	48	<b>ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	125
<b>ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ</b> .....	59		
Ներածություն .....	60		
Բերուլ Կայա Սահմանագրկելով անցյալը, վերականգնելով ներկայի պատկերը՝ քարտեզագրությունն ու			

# Առաջաբան

Երբ 2007 թվականին առաջին անգամ դիտարկուում էինք հայ-թուրքական հաշտեցման ծրագրի գաղափարը, հոլյուս մեծ էր, որ երկու երկրների հարաբերությունները մոտ ապագայում կրարելավվեն: «Խոսելով միմյանց հետ» ծրագիրը ծնվեց այս տրամադրություններից և տարբեր երկրներում պատմական հարցերի քննարկման մեր փորձից: Այս գիրքը ծրագիր վերջին փուլի արդյունքն է:

Մեր նախաձեռնությունն արագ թափ հավաքեց և տարբեր փուլերում ներառեց գիտնականների, արվեստագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: Նախաձեռնությունը մասնավորապես ուղղված էր երկու երկրների երիտասարդությանը՝ կարևորելով նրանց առանցքային դերն այդ երկրների հետագա հարաբերությունների ձևավորման ընթացքում:

Ծրագիրը վեր է հանում սովորական մարդկանց հիշողությունները: Սա հաշտեցման գործընթացում և հասարակության ժողովրդավարացման գործում արժեքավոր ներդրում է համարվում: «Խոսելով միմյանց հետ» ծրագիրը նպաստեց Հայաստանի և Թուրքիայի երիտասարդության և պատ սերնդի միջև երկխոսության ընդլայնման ու փոխընբռնման համար ճանապարհ հարթելուն: Ծրագիրը ցույց տվեց, որ իրական հաշտեցումն անհնար է առանց պատմության ճանաչման և երկխոսության:

Հուսով ենք՝ ծրագիրը կնպաստի այնպիսի մթնոլորտի ստեղծմանը, որտեղ Թուրքիան ավելի բաց և անկեղծ կրննի իր պատմությունը, իսկ հայկական կողմը կկարողանա գնահատել Թուրքիայի քաղաքացիական հասարակության համապատասխան նախաձեռնությունները, որոնք հաճախ դժվարին պայմաններում են իրականացվում:

Ծրագրի իրականացման ընթացքում տարածաշրջանի քաղաքական իրավիճակը վատքարացավ: Շատերը հույս էին կապում ֆուտրոլային դիվանագիտության և հայ-թուրքական արձանագրությունների հետ, և ցավալի է, որ հաշտեցման գործընթացը ներկայում կանգ է առել: Այս պարագայում էլ ավելի

կարևոր ենք համարում մարդկանց, քաղաքացիական հասարակությունների միջև երկխոսության պահպանումն ու հնարավորության դեպքում՝ ամրապնդումը: Յիմնվելով այս համոզմունքի վրա՝ Հայաստանի, Թուրքիայի և Գերմանիայի գործընկերներն առաջ տարան և անգամ ընդլայնեցին ծրագիրը՝ հակառակ քաղաքական գործիչների ընդունած դիրքորոշումներին:

Իհարկե, վատքարացող քաղաքական իրավիճակն ազդեց նաև ծրագրում ներգրավված մարդկանց վրա: Մենք հասկացանք՝ որքան դժվար է երկխոսություն հաստատելը, որքան հաճախ ենք երկմտում, երբ արտաքին ճնշումն ահազնանում ու վտանգում է բեկանել հասարակական կարծիքը: «Խոսելով միմյանց հետ» ծրագիրը երբեք հեշտ չի եղել, և իրականում մեզնից շատերն անգամ պահանջել են, որ այն հեշտ չլինի: Չնայած մեր առջև ծառացած մարտահրավերներին, կամ գուցե դրանց պատճառով ծրագիրը դրական ազդեցություն է ունեցել գրեթե բոլոր ներգրավված անձանց վրա: Ուստի, կարծում ենք, որ սա արժանի նախաձեռնություն էր, որն անհրաժեշտ է շարունակել առաջիկայում:

Մենք գոհունակությամբ ենք ներկայացնում մեր դժվարին նախաձեռնության հերթական արդյունքը: Գիրքն ընդգրկում է ուսանողների հեղինակած էսեները, որոնք գրվել են Մուշում (Թուրքիա) և Հայաստանում մշեցիների ժառանգներով բնակեցված գյուղերում կատարած հետազոտության և ուսանողների անձնական փորձառության հիման վրա: Այն միահյուսում է երկու վայրերի պատմություններ՝ Մուշի, որտեղից հայերը վտարվել են, և գյուղերի, որտեղ նրանց մի մասը ապաստան է գտել ցեղասպանությունից հետո: Գիրքն իրար է կապում նորն ու հինը՝ հարցադրումներ անելով դրանց ընդհանրությունների ու տարբերությունների մասին:

Շնորհակալ ենք ծրագրի բոլոր մասնակիցներից, որոնք այս կամ այն կերպ նպաստել են գրքի ստեղծմանը:

Նազարեթ Նազարեթյան  
Մաթիաս Թիմոֆեյերգ  
Ուլրիկ Պուշ

# Երախտագիտության խոսք

Գրքի հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցել են գրքի ստեղծմանը: Խորապես շնորհակալ ենք Գերմանիայի արտօքրին գործերի նախարարությանը՝ ֆինանսական և ծրագրային օժանդակության համար: Ուզում ենք հատկապես առանձնացնել դոկտոր Քրիստին Ալբաուգերի, Համս-Յոհան Շմիդտի, Պերա Դաչըլերի, Սենյոն Պոութերի և հանգուցյալ Քարսթեն-Էրիկ Համների անունները՝ նրանց հետևողական ու մանրակրկիս աշխատանքի համար:

Գերմանիայի ժողովրդական քարձորագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտի (Դի-Վի-Վի Ինքրենցյան) մեր գործընկերները նույնական մեծ օգնություն ցուցաբերեցին: Հատկապես երախտապարտ ենք Ուլրիկե Պուչշին, որը սկզբից մինչև վերջ հետևել է ծրագրին՝ մասնակիցների հետ մշտական կապ պահպանելով և իշեցնելով վերջնաժամկետների մասին, Մարիամ Քլինգեներգան և Նազարետ Նազարեթացին, որոնք մտահացել են ծրագրին 2009 թվին և հետագայում էլ ուշադիր հետևել իրականացնան վերեկներին ու վայրէքներին: Ծրագրի և գիրքը իրականություն դարձան նրանց անսպառ եռանդի և մեր գործի հանդեպ հավատի շնորհիվ: Շնորհակալ ենք երեխ Վարդարին՝ իր մասնակցության և միջնորդի ոժվարին գործառություն կատարելու համար:

Խորապես պարտական ենք մեզ հետ աշխատած փորձագետներին, որոնց ներդրումն անշափ արժուողություն և գնահատություններ: Երախտապարտ ենք պրոֆ. Լեյյա Նեյզիին Ստումբելի Սարանցի համալսարանից՝ բանակիր պատմության դասընթացների համար (Մուշչում և Հայաստանում), դոկտոր Անուշ Շովհան-Շիսյանին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից՝ տեղական պատմության դասընթացների (Մուշչում և Հայաստանում) և գրքի պատրաստման տարրեր փուլերում տված խորհուրդների համար: Դոկտոր Ալբերտ Քըրոլարը (Ստոմատոլի Բիլգի համալսարան) լուսանկարչության արժեքավոր դասընթաց է վարել, ինչպես նաև օգնել է ուսանողներին լուսանկարելու ընթացքում ու կառուցղական խորհուրդներ տվել լուսանկարչության հասեների վերաբերյալ: Բենական արվեստի խնդիր փորձագետներ Շողակար և Ցոլակ Գալստյաններն արժեքավոր ներդրություն ունեցան խնդիր ուսուցնամ, ինչպես նաև դաշտային աշխատանքի, սցենարի մշակման և բենադրման ընթացքում:

Սեր երախտագիտությունն ենք հայտնություն մթուրիայի և Հայաստանի գործընկեր կազմակերպություններին՝ ծրագրի հաջող իրականացնամ նպատակով գործադրած ջանքերի և տրամադրած ժամանակի համար: Հատուկ շնորհակալություն մթուրիայում գործող Անադրլու Քուլքուր կազմակերպության ներկայացուցիչներ Ռազմիկ Զքթին, Թամար Նալճին, Սելեն Ասլանին և Օս-

ման Կավալային, ինչպես նաև Հայաստանում գործող «Հազարաշեն» Ազգարանական հետազոտությունների հայկական կենտրոն կազմակերպության՝ ի դեմս դոկտոր Հարություն Մարտուրյանի, դոկտոր Ջրանուշ Խառաւոյան-Առաքելյանի և Վիկտորյա Աստրյանի: Նրանք ոչ միայն կարողացան հաջողությամբ իրականացնել այս բարդ ծրագիրը, այլև հուսալի աջակցություն ցուցաբերեցին գործին արնչըլող կազմակերպչական և բովանդակային հարցերում:

Քազմակի գործընկերներ, ուղեկիցներ, լրագրողներ և տեղական հշխանությունների ներկայացուցիչներ Հայաստանում և Թուրքիայում իրենց ներդրումն ունեցան ծրագրի հնարավիրինս հաջող իրականացման գործում: Փորձել ենք բոլորի անունները հիշատակել այստեղ: Թուրքիայում Սալիհ Յուչեն և Ֆարիհ Կրգունը «Երիտասարդության կենտրոնացում» ՀԿ-ից, ինչպես նաև Ոհրմվան Ալբասը «Երիտասարդ քայլեր» միությունից օգնեցին բազմազան կազմակերպչական հարցերում: Լրագրող Շահենը մեզ հետ այցելում էր գյուղեր և օգնում տեղացիների հետ կապ հաստատել: Մուշի մեր ուղեկցողը Հայրեթին մաշը օգնում էր գոյութել այնպիսի մարդկանց հետ, ովքեր առանց իր միջնորդության հավանաբար չին համաձայնի հանդիպել մեզ: Ղենիզ Սինան Բուլազըրաշին և «ՂԱՄՍԱ մշակույթի և արվեստի կենտրոն» աշխատանքային տարածք տրամադրեցին քատրական խմբին, իսկ ՂԱՄՍԱ-ի անդամներ Վեյսել Սեմերիջիովլուն, Ակմեր Ակրնը, Բիլալ Բուլազըրաշին, Սորատ Սոմերը և Դիլան Այկութը ծրագրի ընթացքում դարձան քատերական խմբի անդամ և մասնակցեցին մեր բենադրությանը:

Հայաստանում մեծ աջակցություն ստացանք գյուղապետերից և մի շաք մարդկանցից, որոնք օգնեցին տեղացիներին բացատրել մեր ծրագրի նպատակն ու նրանց վստահությունը շահել: Այս առօլով շատ ենք կարևորությ Ուկեհավակ գյուղից Ձեմս Սուրայյանի, Սուտերից՝ Գուրգեն Չաքարյանի, Ցամաքասարից՝ Գոռ Գրիգորյանի, Կաթնաբյուրից՝ Աշոտ Շովհաննիսյանի, Զարթոնքից՝ Պարույր Սարգսյանի, Տարոնիկից՝ Ալբերտ Խաչատրյանի, ինչպես նաև Դաշտանեմի դպրոցի տնօրեն Մուշեղ Գևորգյանի օգնությունը: Կուզեհնը երախտագիտության խոսք ուղղել նաև Օշականի մշակույթի տաճ տնօրեն Յայկ Շովհաննիսյանի՝ մեր ներկայացուցիչ բենադրելու նպատակով տարածք տրամադրելու համար:

Գրքի հայերեն լեզվի սրբագրիչը Ազատուիի Սահակյանն էր:

Վեջապես մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում այն բոլոր մարդկանց, որոնք այս կարևոր ծրագրի ընթացքում մեզ հետ կիսվեցին իրենց հիշողություններով և անձնական փորձով: Նրանք մեր շարադրանքին շունչ, միև ու արյուն ներարկեցին՝ կյանքի կոչելով ճեզ ներկայացվող այս գիրքը:

# ՆԵՐԱԺՈՒԹՅՈՒՆ

## Ծրագիր

Այս գիրքը 2009 թվականի օգոստոսին սկիզբ առած «Խոսելով միմյանց հետ մեջ մեջամասակների կրթությունն ու բանավոր պատմությունն ի նպաստ հայ-բուրժական հաշտեցման» հավակնությունում խորագիրը կրող ծրագրի վերջին արդյունքն է: Ծրագիրն իրականացվել է Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության (Դի-Վի-Վի հեթերնեյշնալ), «Դագարաշեն» Ազգարանական հետազոտությունների հայկական կենտրոնի (Հայաստան), Դայ դերասանների միության (Հայաստան) և Թուրքիայում մշակույթի և արվեստի ոլորտներում գործող «Անադուլու քուլթուր» կազմակերպությունների համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության կողմից՝ նպատակ ունենալով կամուլցներ գցել Հայաստանում և Թուրքիայում ապրող մարդկանց միջև մեջամասակների կրթության, միջմշակութային փոխանակման և բանավոր պատմության հետազոտության միջոցով:

Ծրագիրն իրականացվել է երեք փուլով (2009-2010, 2010-2011 և 2011-2013), որոնցից յուրաքանչյուրը հիմնվել է նախորդի հաջողությունների և նվաճումների վրա: Այս ընթացքում կազմակերպվել են մի շարք ուսանողական ճամբարներ, որտեղ մասնակիցները ձեռք են բերել բանավոր պատմության մերրոդվ հարցազրույց վարելու, փոքր ծրագրեր մշակելու և իրականացնելու հմտություններ, ինչպես նաև լուսանկարչության, թատերական ներկայացման և գրավոր խոսքի միջոցով ինքնարտահայտման կարողություն: Մեր ծրագրի առաջին արդյունքը Լեյլա Նեյզի (Թուրքիա) և Դամանչ Խառուտյան-Ալաքելյանի (Հայաստան) հեղինակած «Խոսելով միմյանց հետ՝ անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում» գիրքն է՝ հիմնված ծրագրում ընդգրկված ուսանողների մասնակցությամբ երկու երկրներում գրաված հարցազրույցների վրա: Բանավոր պատմության հետազոտության նյութերն օգտագործվել են նաև շրջիկ ցուցահանդեսում, որն արդեն կազմակերպվել է Հայաստանի և Թուրքիայի մի շարք քաղաքներում:

Ծրագրի երրորդ և վերջին փուլը բաղկացած էր երկու տարբեր բաղադրիչներից՝ տեղական պատմության աշխատաժողովներ մասնակից ուսանողների համար և Թրիլիսիում, Բաքումիում, Նիկոսիայում, Բերլինում ու Փարիզում անցկացված շրջիկ ցուցահանդեսուներ: Այս գիրքը տեղական պատմության աշխատաժողով բաղադրիչի արդյունքն է:

## Տեղական պատմություն

Տեղական պատմությունը պատմության ուսումնասիրությունն է որոշակի աշխարհագրական համատեքստում: Տեղական պատմության նախաձեռնությունները հետպատերազմյան (Երկրորդ համաշխարհային) Գերմանիայում հիմնված համայնքային կամավորական կազմակերպությունների էին: Մինչ օրս գործող այս կազմակերպությունների նպատակն է ստեղծել այլընտրանքային տեղական պատմություն՝ համարդելով անձնական, իրադարձությունների, շենքերի մասին բանավոր պատմությունները և արխիվային փաստերը: Մենք որոշեցինք կիրառել այս գերմանական մոտեցումը հայ-բուրժական բարդ համատեքստում, որտեղ պատմության գրեթե ոչ մի համատեղ մասնագիտական կամ հասարակական հետազոտություն չկա: Սակայն քանի որ մեր խնդրո առարկան ավելի վաղ պատմություն ունի, քան Երկրորդ համաշխարհայինը, մենք կարողացանք տեղական պատմության մերոդն ու գործիքակազմը (բանավոր պատմության հարցազրույցներ, ընտանեկան արխիվներ և լուսանկարներ) օգտագործել անցյալը վերանայելու ու վերահմաստավորելու, ինչպես նաև ցույց տալու համար, թե ինչպես է այն տարբեր ձևերով կառուցվել երկու երկրներում:

Այս նպատակով մենք ընտրեցինք Թուրքիայի տարածքում գտնվող մի շրջան, որը հայերի պատմական հայրենիքի մի մասն է, և որտեղ հայերը դարեր շարունակ ապրել են ընդհուպ մինչև 1915 թվականի պետական մակարդակով կազմակերպված տեղահանությունը, որն ավարտվեց զանգվածային կոտորածով: Ընտրությունն ընկավ ներկայի Թուրքիայի հարավարևելյան Սուլշ քաղաքի ու Սշո դաշտի գյուղերի վրա: Դեռ այստեղ էլ կազմակերպվեց ուսանողական առաջին ճամբարը: ճամբարի նպատակն էր Հայաստանից և Թուրքիայից տասական ուսանող վերապատրաստել բանավոր/տեղական պատմության, լուսանկարչության և բնական արվեստի ուղղությամբ, որից հետո նրանք պետք է գրուցեն Սուլշի և շրջակա գյուղերի բնակչների հետ, լուսանկարներ անենքն և ներկայացնան հանար ուշագրավ պատմություններ գտնեն: Այսիսկ մեր կատերի մեջ կատար առաջին անգամ կազմակերպություն՝ մարդկանց անձնական պատմությունների և լուսանկարների միջոցով: Ծրագրի հաջորդ հանգրվանը Հայաստանում էր, որտեղ մենք ննանատիպ աշխատանք կատարեցինք՝ այցելելով 20-րդ դարի սկզբի վայրագությունները վերապատճենելով ժառանգմերով բնակեցված գյուղեր: Այս պատճենը, Մուշի տեղական պատմությունը վերակառացվելու էր սահմանի երկու կողմերում գրանցված անձնական պատմությունների հիման վրա:

## ნამდარნერე

2011 թվականի ամռանը Թուրքիայից և Հայաստանից տասական ուսանող ընտրվեց՝ տեղական պատմության երկու ճամբարների մասնակցելու համար: Մասնակիցները բաժանվեցին բանավոր պատմության, լուսանկարչության և բժնական արվեստի խմբերի: Խմբերից յուրաքանչյուրը հավասար քանակությամբ մասնակից ուներ Հայաստանից և Թուրքիայից և առաջնորդվում էր հայ և թուրք համակարգողների զույգի կողմից, որոնց ներն ուսանողներին ուղղործելը ինչպես նաև դաշտային աշխատանքը, նյութի վերլուծությունն ու վերջնական արդյունքի նշակման գործներացը համակարգելն էր: Նախքան Մուշշի ճամբար գալը համակարգողներն ուսւուցողական այց էին կատարել Քեռլին, որտեղ ծանոթացել էին տեղական պատմության գերմանական փորձին և միջնորդության հմուտության հատուկ դասընթացի էին մասնակցել: Թեև, ըստ ծրագրի, աշխատանքային ճամբարենվածության մեջ մասը պետք է ընկներ համակարգողների վրա, յուրաքանչյուր խումբ նաև համապատասխան փորձագետ ուներ: Փորձագետների դերը ուսանողներին իրենց ոլորտներում (քանավոր/տեղական պատմություն, լուսանկարչություն և բժնական արվեստ) վերապատրաստելը և ծրագրի ողջ ընթացքում մասնագիտական խորհուրդ և ուղղություն ուղյուղ տալն էր:

Առաջին ճամբարը կազմակերպվեց 2011 թվականի հոկտեմբերին Մուշում և տևեց երկու շաբաթ: Մուշի նման փոքր քաղաքի համար մեր խումբը բավական մեծ և նկատելի էր: Մենք շուրջ քառասուն հոգի էինք՝ ուսանողներ, համակարգողներ, փորձագետներ և կազմակերպիչներ Դայաստանից, Թուրքիայից ու Գերմանիայից: Մեզ հետ էր նաև ծրագրի և ճամբարների մասին վավերագրական ֆիլմ նկարահանող խումբը, որը հետևում էր մեր յուրաքանչյուր գործողությանը<sup>1</sup>: Նախատեսված էր, որ ճամբարի ընթացքում թուրքիայից ուսանողը հայաստանցի ուսանողի հետ նոյն սենյակում էր մնալու, ինչը մինյանց ավելի լավ ճանաչելու հնարավորություն կատերելու և կիրախուսելու հետագա շփումը: Ծանոթությունների առաջին օրվանից հետո յուրաքանչյուր խումբ կատարվելիք դաշտային աշխատանքի մասին տեսական դասընթաց անցավ համապատասխան փորձագետի կողմից: Բանավոր պատմության խմբի ուսանողները մասնակցեցին քանավոր պատմության մեթոդաբանության և Մուշի պատմության դասընթացների, լրամանկարչության ուսանողները՝ լրամանկարչական հմտությունների, իսկ բժնական արվեստի խճույզ ուղղողներած ուսանողներին ներկայացմեա այս ուղ-

1. Ծրագրի մասին նկարահանվել է «Յանապարհի սկզբին» խորագիրը կրող վավերագրական ֆիլմը, որն արդեն ցուցադրվել է մի քանի փառատոններում (թեմայում՝ Անձնական Վարդար, պրոյցյալ Ձեզնեն Գյուղել, օսեանական՝ Գյուղ Սպասարարություն):

Ողլուրյանք ծրագրի ողլեզրած մոտեցումը: Դաշտային աշխատանքն սկսվեց դասընթացներից անմիջապես հետո: Իրենց համակարգողների առաջնորդությամբ բանավոր պատմության խմբի ուսանողներն այցելում էին Սուշ քաղաքի և շղակագյուղերի բնակչության, գրուցում և գրանցում նրանց ընտանեկան պատմությունները: Լուսանկարչության խմբի անդամներն իրենց լուսանկարներում վավերագրում էին Սուշը, իսկ բեմական արվեստի խումբը փորձում էր հետաքրքիր տեղական պատմություններ հավաքել իր եզրափակիչ բեմադրության համար (յուրաքանչյուր ճամբարի վերջում մեկական ներկայացում էր նախատեսված): Ամեն դաշտային օրվա վերջում խմբերը հավաքվում էին հյուրանոցի դահլիճում և պատմում օրվա իրադարձությունների ու իրենց գգացողությունների մասին:

Պատմությամբ զբաղվողները գիտեն, որ պատմությունը միայն այն չէ, ինչ տեղի է ունեցել անցյալում: Պատմությունը նաև այն է, ինչ մենք ապրում ենք, և այն, ինչ կարծում ենք, որ անցյալում տեղի է ունեցել: Սուշլում մեր խումբը դարձավ տեղական պատմության ներգրավված դիտողը: Շրջանում կանոնավոր բանակի և Քրդական աշխատավորական կուսակցության գինյալների միջև ընդհարումներ էին տեղի ունենում: ճամբարի առաջին շաբաթվա վերջում՝ 2011թ. հոկտեմբերի 23-ին, Թուրքիայի արևելյան նահանգներում տեղի ունեցավ 7.1 բալ ուժգնությամբ ավերիչ երկրաշարժ, եպիկենտրոնը՝ Վանի նոտակայքում: Մեր խումբը զգաց և երկրաշարժը, և հետերկրաշարժային ցնցումները, իսկ Մուշի օդանավակայանն անմիջապես կան բերվող օգնության կենտրոնական հանգույց դարձավ: Այս իրավիճակում ուսանողների համար երեքն դժվար էր կենտրոնանալ հարյուր տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների վրա, եթե պատմությունը գրվում էր հենց մեր աչքի առջև:

Ուշագրավ է, որ անզամ Թուրքիայից որոշ մասնակիցների համար այս շրջանը կարծես օտար երկրի լիներ: Թուրքիայից և Հայաստանից մասնակիցների մեծ մասն առաջին անգամ էր Մոլչում: Մամուլը, պատմության դասագրքերն ու պաշտոնական տեսակետները, ինչպես նաև մեր ընտանեկան պատմություններն ու գրականությունը (հատկապես հայերի պարագայում) մեզ սուրցել էին տարածքի մասին որոշակի պատկերացումներով, որոնք ոչ միշտ էին հաճընկնում իրականության կամ մեր իսկ փորձի հետ: Յայերի համար Մոլչը երազների երկրի եր, դրախտավայր, իրենց ամենանշանավոր հերոսների ու արվեստի մարդկանց հայրենիքը: Նրանք պատկերացնում էին Մոլչը ինչպես 20-րդ դարի վերջում՝ էին և նշանավոր վաճերու ու եկեղեցներ, Հայաստանի Հանրապետության աշխարհագործքան այդքան նման գեղեցիկ բնապատկերներ, միջուցետն, բայց այս անբորոշ արանց տեղի ներևակի բնակիչները:

րի: հնչ-որ առումով Սուշի ճնան պատկերը նատյուրմորտ կամ գեղեցիկ բնապատկեր էր իշխեցնում: Թուրքիայից որոշ մասնակիցների, հասկապես Սուամբուլի բնակիչների համար, սա անհանգստությունների գոտին էր, այն տարածքը, որտեղ տեղի էին ունենում բախումները: Այսպես, լարված արտաքին և ներքին մրնուրություն, իրականության և պատմության հետ փաստացի առերեսումն ստիպեցին որոշ մասնակիցների հրաժարվել ծրագրից, և ճամբարի առաջին շաբաթվա վերջում երեք թուրք ուսանող տուն վերադարձան:

Չնայած այս դժվարին իրադրությանը՝ ճնացած մասնակիցները շարունակեցին դաշտային աշխատանքը: Պետք է արձանագրել, որ նրանցից շատերը չունեին ինչպես անհրաժեշտ տեսական և գործնական պատրաստվածություն, այնպես էլ դաշտում աշխատելու փորձ և ընդհանուր համատեքստին էլ շատ քիչ էին ծանոթ: Նրանք մուտք էին գործում պատմության մի ուրիշ մակարդակ՝ Մուշի ներկայիս բնակիչների պատկերացրած անցյալը: Պատմության այս տարրերակը սկսվում էր մոտավորապես 20-րդ դարի սկզբին՝ այնտեղ, որտեղ պատմությունն ավարտվում էր հայերի համար: Մուշով գրառված պատմություններում հիշողության հսկայական բաց կար տարածքի և հայերի համար նրա պատմական կարևորության մասին:

Լեցինը «անհոգ հին ժամանակների» պատմությունները, երբ հայերը, քրիստոն ու թուրքերն ապրում էին կողք կողքի, բայց այդ պատմությունները սովորաբար շատ ընդհանուրացված էին, գրեթե միֆականացված, և մեր գրուցակիցների խոսքերից դատելով՝ մարդիկ հիմնականում անտեղյակ էին հայկական նշակույթի կոթողներից և հուշարձաններից: Մի այլ խնդիր կար՝ կապված հարցագրույց վարելու տեխնիկական կողմի հետ: Սեր գրուցակիցները հիմնականում թուրքերեն էին խոսում, իսկ ոմանք է՝ միայն քրիստոն: Ուսանողներն այնպես էին խմբավորված, որ թուրք մասնակիցը վարեր հարցագրույցը և քարօնմանը: Այսպիսով, զրոյացին հետևելու շատ էր դժվարանում: Երեմն գործներացն է ավելի էր բարդանում, քանի որ հայ մասնակիցը որևէ հարց էր տալիս անգերենով, թուրք մասնակիցը քարօնմանում էր թուրքերեն, որից հետո մեր տեղական գործներից հարցը քարօնմանում էր քրիստոն, և նոյն հարցորդականությամբ հետևում էր պատասխանը: Զրոյացը միշտ չէ, որ սահուն էր ընթանում, ինչպես հարկն է բանավոր պատմության հարցագրույցում: Այս պատճառով Մուշով գրառված հյութերում հետաքրքիր պատմությունների պակաս կամ և, և ինչպես կուսնեք գրի տարբեր էստեմում, որոշ պատմություններ կրկնվում են: Չնայած այս բոլոր դժվարություններին՝ առաջին ճամբարը զգայական և մտավոր առումով ուսանելի փորձ էր բոլոր ներգրավված անձանց համար: Մեզ հաջողվեց դրամից դրւու բերել տեքստեր, ներկայացման

կտորներ, որակյալ լուսանկարներ և ամենակարևորը՝ մեր համատեղ պատմությունն ու փորձը:

Երկրորդ ճամբարը կազմակերպվեց 2012 թվականի ապրիլին Հայաստանում: Առաջին ճամբարի մասնակիցները, ինչպես նաև մեր խումբը համալրած որոշ նոր մասնակիցներ տեղակայվեցին Գյումրիում, իսկ դաշտային աշխատանքներն ընթանում էին Արագածոտնի, Արմավիրի և Շիրակի մարզերում, քանի որ այն գյուղերը, որտեղ 20-րդ դարի սկզբում Մուշից հատուկենու փրկվածները բնակություն էին հաստատել, Հայաստանի տարբեր մարզերում են գտնվում:

Ճամբարի սկզբում մասնակիցները ևս մի վերապատրաստում անցան, ինչից հետո խնդերը դրւու եկան դաշտ՝ ամենօրյա այցեր կատարելով Հայաստանում ընտրված գյուղերը: Ֆիշտ է, Մուշի և Հայաստանի ճամբարների ընթացքում նանատիպ մի շարք խնդիրների առջև կանգնեցինք, ինչպես, օրինակ, հարցագրույցների ժամանակ համաժամանակյա քարգմանության ավահովումը, սակայն կային նաև զգայի տարրերությունները: Մուշով մենք ապրում էինք մեր դաշտում, մինչդեռ Հայաստանում բնակության վայրն այլ էր: Նկատի չունենք միայն ֆիզիկական դիրքը՝ Գյումրիում ապրելը և տարբեր գյուղերում աշխատելը, կամ Մուշով ապրելն ու հենց այնտեղ էլ աշխատելը, այլ նաև դաշտի բովանդակային մասը: Այնպես ստացվեց, որ Մուշի դաշտը ոչ այնքան մարդկանց, որքան տեղի, վերջինիս աշխարհագրության, բնության և հուշարձանների մասին էր, իսկ Հայաստանինը՝ մարդկանց և նրանց պատմությունների:

Մուշով շատ մարդիկ կամ չգիտեին, կամ խուսափում էին տեղի ունեցած վայրագրությունների մասին խոսելուց, մինչդեռ Հայաստանում բոլորը պատրաստ էին իրենց ընտանեկան պատմությունը պատմել: Մուշով ներխմբային հուզումների գագաթնակետը Վանի երկրաշարժն էր, իսկ Հայաստանում՝ Ցեղասպանության հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին Ցեղասպանության հուշահամալիր կատարած այցելությունը: Հայաստանյան ճամբարն ավարտվեց երկանամերձ Օշական գյուղում կայացած եզրափակիչ ներկայացմանը և լուսանկարների ցուցահանդեսով: Տեղի ընտրությունը խորհրդանշական էր, որովհետև հայոց գրեթե արարիչ Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Մշո դաշտում, բայց բաղված է Օշականում: Ինչպես եզրափակիչ ներկայացումը, այնպես էլ ցուցահանդեսը բաղկացած էին Թուրքիայում և Հայաստանում արված լուսանկարներից և գրանցված պատմություններից: Այսպիսով, անցյալը և ներկան, սահմանի երկու կողմն մարդիկ և նրանց հիշողությունները հանդիպեցին Օշականում՝ սահմաններից ազատված իրենց պատմությունը պատմելու:

## **Գրքի գաղափարը, նյութի մշակումն ու շարադրանքը**

Գրքի գաղափարը մշակվել է 2011թ. սեպտեմբերին Բեռլինում հետևյալ մարդկանց կողմից (խմբագրական թիմ):

Լուսինե Խառատյան

(գրքի ընդհանուր համակարգող և խմբագիր)

Ավետիս Քեշիշյան

(բանավոր պատմության խմբի համակարգող, Հայաստան)

Խնամակ Քեսրին

(բանավոր պատմության խմբի համակարգող, Թուրքիա)

Նամե Խաչատրյան

(լուսանկարչության խմբի համակարգող, Հայաստան)

Ս. Այգուր Օգրուրը

(լուսանկարչության խմբի համակարգող, Թուրքիա)

Կարեն Յակոբյան

(բեմական արվեստի խմբի համակարգող, Հայաստան)

Նիհալ Ալբայրօք

(բեմական արվեստի խմբի համակարգող, Թուրքիա)

Քննարկումների վաղ փուլում գաղափարի մասին իրենց նկատառումներն են հայտնել փորձագետները, կազմակերպիչներն ու ուսանողները: Ստորև ներկայացված նյութի մշակման, շարադրման և վերանայման կանոններն ու ընթացակարգերը նույնպես մշակվել են վերոհիշյալ խմբագրական թիմի կողմից: Խմբագրական թիմը սերտորեն աշխատել է ուսանողների հետ՝ վերջիններիս ուղղորդելով դաշտային աշխատանքի, նյութի մշակման, ընդհանրացման և գրքի ու քարտեզի ստեղծման ժամանակ: Գրքում ներառված գրեթե բոլոր լուսանկարների, մկարների ու տեքստերի հեղինակներն ուսանողներն ու խմբագրական թիմն են:

Ցուրաքանչյուր ճամբարից հետո ուսանողները սղագրում էին հարցագրույցներն ու մշակում լուսանկարները: Այսուհետև հարցագրույցներն իրենց մայր լեզվից թարգմանվում էին անգլերեն: Զայնագրությունները, սղագրությունների բնօրինակները, թարգմանված հարցագրույցները, լուսանկարներն ու մյուս նյութերը վերերևնվել են համացանցային կրիչի վրա, որը հասանելի է բոլոր մասնակիցներին:

Գյումրիում բանավոր պատմության և լուսանկարչության խմբերի ուսանողները գույգերի բաժանվեցին. մեկական մասնակից Հայաստանից և Թուրքիայից աշխատում էին իրենց ընտրած որևէ թեմայի շորով: Աշխատանքի այս ձևաչափը թույլ էր տալիս ուսանողներին հենց սկզբից քննարկել և համաձայնության գալ նույր թեմաների և եզրույթների շորով: Սկզբում գույգը կամ երեմն նաև անհատ ուսանողը, որոշում էր՝ ինչի մասին է գրելու, հետո խորհրդակցում համակարգողների հետ

և սկսում աշխատել շարադրանքի նախնական տարրերակի վրա: Բեմական արվեստի խմբում ննան բաժանումներ չենան, քանի որ նրանց նյութը ներկայացված է ուսանողների օրագրերի և Մուշի ու Դայաստանի ճամբարների ընթացքում ողջ խմբի կազմած երկու սցենարների տեսքով:

Ուսանողների հեղինակածն այնուհետև քննվում էր մի քանի փուլով: Երբ որևէ աշխատանքի նախնական տարրերակը պատրաստ էր լինում, համապատասխան համակարգողները և գրքի խմբագիրն իրենց դիտարկումներն էին կատարում: Որոշ հատվածներ վերանայվում էին մի քանի անգամ: Դաշորդ փուլում աշխատանքը ներկայացվում էր ոչ միայն համակարգողներին և գրքի խմբագրին, այլև փորձագետներին և կազմակերպիչներին: Այսուհետև էսաները վերջնական տեսքի էին բերվում ու ուղարկվում անգլերեն լեզվի խմբագրին: Միայն անգլերեն խմբագրությունից հետո էր շարադրանքը քարգանդան կողմից:

## **Մուշը՝ որպես դիսկուրս**

Չնայած գրքում ներառել ենք Մուշի պատմության համառոտ ակնարկ՝ անդրադառնալով հայերի համար այս տարածքի մշակութային կարևորությանը և տալով 20-րդ դարի սկզբի որոշ վիճակագրական տվյալներ, մենք չենք ցանկանում ներկայացնել Մուշի տեղական պատմությունը՝ որպես փաստերի շարք կամ քացարձակ ծճնարտություն այդ վայրի և այնտեղ տեղի ունեցած հրադարձությունների մասին: Մեր գրքում Մուշը ինչ-որ առումով դիսկուրս է: Մենք ոչ թե պարզապես Մուշի պատմությունն ենք պատմում, այլ ներկայացնում ենք այդ վայրը այնպես, ինչպես այն հիշում, պատկերացնում և պատմում են Թուրքիայում և Հայաստանում: Մենք չենք ցանկանում ասհմանել, նկարագրել կամ տեղյանացնել Մուշը քաղաքականորեն, վարչականորեն կամ պատմականորեն: Մենք քարտեզագրում ենք Մուշը, բայց ոչ այնպես, ինչպես քաղաքական գործիչները կամ պատմաբաններն են անում: Մենք այն քարտեզագրում ենք մարդկանց պատմությունների և մեր խմբի փորձի միջոցով: Թեև առկա քաղաքական քարտեզներն իրենց հստակ սահմաններով միջամտում են այս դիսկուրսին, մենք կարծում ենք, որ մարդկանց մտային քարտեզներում դրանք գերիշխող են չեն խաղում:

## **Տեքստերն ու լեզվուն**

Գրքի նախապատրաստման ընթացքում հիմնական դժվարություններից մեկը երեք լեզուներով տպագրվելիք գրքի համար ընդհանուր տերմինաբանություն սահմանելն էր: Պատճառն իհարկե այն չէր, որ մենք՝ գիրքը ներկայացնողներն ու խմբագրները, չենք հասկանում և ընդունում միմ-

յանց մտավոր ցանկությունները: Պարզապես եռալեզու գրի տպագրությունն առնվազն երեք տարբեր պետություն և երեք տարբեր լսարան է Ենթադրում: Նախկինում լույս տեսած նմանատիպ բազմաթիվ երկերն այս հարցը լուծում էին տարբեր լսարանների համար տարբեր եղբեր օգտագործելով: Սակայն այս տարբերակը մեզ չէր բավարարում, քանի որ մեր կարծիքով տարբեր լսարանների համար տարբեր բառամեջը օգտագործելով անպայմանորեն երեք տարբեր մոտեցում կձևավորեր խնդրի նկատմամբ: Այլ կերպ ասած առկա էր միևնույն գրի երեք տարբեր խմբագրության վուանգը: Այս պատճառով, ինչ ծրագրի մեկնարկից մենք վճռել էինք գրի անձերեն, բոլորերեն և հայերեն տարբերակներում նույն եզրերն օգտագործել: Այսպիսով, գրում չկան ձևակերպումներ որոնք առկա են լեզուներից մեկում, իսկ մյուսներում բացակայում են:

Բայց և այնպես վստահ չէինք, որ հնարավոր կլինի բոլորին միաժամանակ գոհացնել: Որքա՞ն առաջ կարող էինք գնալ՝ օգտագործելով որոշ բառեր և մեկ այլ լեզվում դրանք այլ բառերով փոխարինելով: Մեզանից ոմանք գերադասում էին ցեղասպանություն եղողույթ, մինչդեռ այլոր հանամիտ չէին պատճառարաններով, որ այն առաջացել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ որոշակի իրավական դաշտի սահմաններում: Այդ տեսանկյունից այն սելեկտիվ բառ էր, որը բավարար կերպով չի համապատասխանում 1915 թվականին տեղի ունեցածին, քանի որ օգտագործվում էր որոշ այլ պատմություններ լրեցնելու համար: Ոմանք էլ քննադատաբար էին մոտենում ցեղասպանություն բառին, որովհետև միջազգային հարաբերություններում այն օգտագործվում է որպես քաղաքական գերիշխանության գործիք: Նման քննադատության մոտավոր հիմքն այն էր, որ պատմությունը չպետք է օգտագործվի որպես իշխանության (նույնիսկ գերակայության և պատժի) հասնելու սոցիալական տեխնոլոգիա, քանի որ կրկին ցեղասպանություն եղողույթ դժվարությամբ է կիրառվում բազմաթիվ այլ համատեքստերի բնութագրման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ մի շարք քաղաքական դերակատարների շահերը հատվում են:

Միևնույն ժամանակ կոտորած բառը չէր բավարարում մեզանից շատերին. այն թաքցնում էր 1915 թվականի իրադարձությունների ծավալները: Մեզանից ոմանք ավելի ազդեցիկ բառեր էին առաջարկում, ինչպես բնաջնջումը, նյութներն էլ նախընտրում էին ավելի քիչ մեկնարանված աղետ բառը: Ուշագրավ է, որ մենք այդպես էլ համաձայնության չեկանք եզրույթների շուրջ, չնայած մեծամասամբ ընդունում էինք 1915-ը՝ որպես Անատոլիայում հայկական կյանքի աստիճանական ոչնչացման գագաթնակետ: Ակնհայտ էր, որ անգամ գրի խմբագրների համար տերմինաբառությունը շատ բազմազան է: Քանի որ գիրքը հիմնված է Մուշում և Հայաստանում

կատարված բանավոր պատմության հարցագրույցների, լուսանկարների և մեր ամենօրյա փորձի վրա, մենք որոշեցինք օգտագործել մեր գրուցակիցների բառամբերքն ու մոտեցումները: Այս է պատճառը, որ գրում օգտագործված եզրերը միշտ չեն, որ արտահայտում են հեղինակների և խմբագրների կարծիքը: Գրի նպատակն է ցույց տալ, թե ինչպես են մարդու Մուշում և Հայաստանում պատկերացնում իրենց տեղական պատմությունը: Արդյունքում, այստեղ առկա բառամբերըն արտացոլում է Հայաստանում և Մուշում մեր այցելած Վայուրի տեղացիների պատկերացումներն ու տեսակետները:

## Գրի կառուցվածքը

Վերևում նկարագրված, ինչպես նաև կուլիսներում տեղի ունեցող գործընթացները, մոտեցումները, գաղափարները և քննարկումները ծնել են այս գիրքը, որն այժմ ծեր ծերքերում է: Բացի ներածությունից և Մուշի մասին մեկ էջանոց տեղեկատվական հատվածից, գիրքն ունի երեք գլուխ և ծանոթագրությունների բաժին: Այսպիսով, խմբերից յուրաքանչյուր (բանավոր պատմություն, լուսանկարչություն և բնմական արվեստ) իր համապատասխան բաժինն ունի, որտեղ պատմում է իր տեսած Մուշի մասին: Գրի վերջում նաև քարտեզով գրպանիկ կա: Քարտեզը Մուշի այլընտրանքային քարտեզն է, որը մեր կարծիքով գրի սիրտն է: Գրում ներառված յուրաքանչյուր պատմություն համապատասխանում է քարտեզի կետերից մեկին: Քարտեզը Մուշը այնպիսին, ինչպիսին մենք այն տեսնում ենք:

## Մուշ. համառոտ ակնարկ

Սուլշը քաղաքը է Աերկայիս Թուրքիայի հարավ-արևելքում: Չնայած քաղաքն այսօր Թուրքիայի տարածքում է, այն հսկայական պատմական և մշակութային նշանակություն ունի հայերի համար: Մուշը Պատմական Հայաստանի կարևորագույն մասերից էր, որ սկսած մ.թ. 5-րդ դարից՝ եղել է տարբեր տերությունների տիրապետության տակ՝ Բագրատունիների կարծամկետ իշխանությանք 9-11-րդ դարերում: Մուշ քաղաքն ու նրա շրջակայքը հայտնի են որպես Մշո դաշտ: Հայ գրականության մեջ այս տարածքը նաև Տարոն է կոչվում: Մշո դաշտն իր բնակչությամբ կարևոր դեր է խաղացել հայ ժողովրդի և Հայաստանի պատմության ընթացքում: Այստեղ են տեղի ունեցել մի շարք անկյունաքարային ճակատանարտեր, ինչպես նաև դարեր շարունակ այն հայերի կրոնական և մշակութային օրինան էր: Հեթանոս հայերի հիմնական պաշտամունքային կենտրոնը և հայոց քրմավետի նստավայրը գտնվում էին Աշտիշատում՝ Արևելյան Եփրատի (Արածանի) ափին՝ Մշո դաշտում: 301 թվականին հետո այստեղ՝ Տարոն աշխարհում, հայոց Տրդատ Երկրորդ արքան իր կոնց, ընտանիքի, բանակի ու հասարակ ժողովրդի հետ մկրտվեց՝ քրիստոնեությունն ընդունելով որպես Հայաստանի պետական կրոն:

Հետո այստեղ՝ Մուշ-Տարոնում, քրիստոնեության ընդունումից հետո բոլոր հեթանոսական տաճարներն ավերվեցին, և դրանց տեղում առաջին քրիստոնեական եկեղեցիները կառուցվեցին: Այստեղ ստեղծվել են հազարավոր մանրանկարներ ու ձեռագիր մատյաններ: Այստեղ են ծնվել հայ պատմագրության, մշակույթի, լեզվաբանության, փիլիսոփայության և քաղաքականության կարևորագույն գործիքներ, որոնց աշխատանքը հսկայական դեր է խաղացել հայ ինքնության ձևավորման գործում: Վերջիններից ամենանշանավորներն են հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը (4-5-րդ դդ.), հայ պատմագրության հայր Մովսես Խորենացին (5-րդ դ.), միջին դարերի ամենահայտնի հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթը (5-6-րդ դդ.) և ավանդաբար սպարապետի տիտղոսը կրող Մամիկոնյան իշխանների տոհմը: Ուշագրավ է, որ հայոց «Սասունցի Դավիթ» եպոսը նույնական այս տեղանքում է ծագել:

20-րդ դարի սկզբին Տարոնը Օսմանյան կայսրության կազմում էր և վարչական առումով Բիթլիսի նահանգի մաս էր կազմում: Ըստ 1914 թվականի Օսմանյան կայսրության

մարդահամարի՝ Բիթլիսի նահանգում ապրում էր 309,999 մահմեդական և 117,497 հայ:<sup>1</sup> Ըստ Հայոց պատրիարքարանի տվյալների, սակայն, նահանգի հայ բնակչության թիվը 218,404 էր:<sup>2</sup> Մուշը Բիթլիսի վիլայեթի ամենահայաբնակ շրջաններից էր, որտեղ բնակչության 60-65 տոկոսը հայ էր: Ըստ տարբեր աղյուսների՝ դարասկզբին Մուշում բնակվում էր 86-100, 000 հայ, որոնցից 12,450-ն ապրում էր Մուշ քաղաքում:<sup>3</sup> Քաղաքը բաժանված էր երկու՝ հայկական և մահմեդական մասերի: Այն ուներ 12 քաղամաս, քարից կառուցված բաղնիք և երկու հյուրանոց: Քաղաքի կենտրոնում գտնվում էր շուկան՝ շուրջ 800 փոքր խանութներով ու արհեստանոցներով, որոնցից 500-ը պատկանում էին հայերին: Քաղաքն ուներ նաև երկու մզկիթ և յոթ եկեղեցի, յոթ հայկական դպրոց և երկու հայկական որբանոց: Բացի նշված դպրոցներից, Մշո դաշտում գործում էին նաև Սուլր Կարապետ, Սուլր Առաքելոց և Սուլր Ախաքերիկ վանքերի դպրոցները:

Այսօր Մշո դաշտում և նահանգում ոչ հայկական բնակավայր կա, ոչ էլ հայ: Մուշի 109 հայկական գյուղերից ընդհանուր 1,500 հայ է փրկվել ջարդերից և ապաստանել Արևելյան Հայաստանում (այն ժամանակ՝ Ռուսական կայսրություն, Աերկայումն՝ Հայաստանի Հանրապետություն) 1915թ. հետո:<sup>4</sup> Մուշում միայն մի քանի անհատներ ու ընտանիքներ կան, այն մարդկանց հետնորդները, որոնք փրկվել են կրոնավիճության միջոցով: Մեր այցելության ժամանակ եկեղեցներն ու աշխարհիկ կառուցներն ավերակ էին:

1. Shaw, Stanford J. and Shaw E. K., History of the Ottoman Empire and Modern Turkey, Volume II, Cambridge University Press 1977.

2. Raymond H. Kévorkian - Paul B. Paboudjian, Ermeniler 1915 Öncesinde Osmanlı İmparatorluğu'nda, İstanbul, Aras 2012.

3. Энциклопедия «Армянский вопрос», статьи - «Муш» и «Мушская самооборона», /Ереван, 1991, стр.234-235/

4. Նոյս տեղում:

ԲԱՆԱԿՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# Ներածություն

Լուսանկարիչները գույներ էին փնտրում, թատերական խումբը՝ գործողություն... Այս ճամփորդության ժամանակ մեր դերը պատմություններ գտնելն էր: Տեղանքի մասին դաշտ, անուշ և դաշնանուշ հիշողությունների վրա հիմնված այս հաշտության ծրագիրը կարևոր, բայց բարդ իրականանալի գաղափար էր, քանի որ պատմությունները, ինչպես և ընկերությունը, ծաղկում են տարօրինակ ալքիմիայի շնորհիվ: Ցավի և ուրախության մի տարօրինակ համակցություն էր՝ միախառնված երեկով և այսօրվա, անցյալի ու ներկայի հետ: Յայաստանում և Թուրքիայում Մուշի տեղական պատմության մասին վկայություններ հավաքելը չափազանց դժվար, բայց շատ հետաքրքիր և նոր գիտելիքներով հարուստ նախաձեռնություն էր: Գրի այս հատվածում ներկայացված հինգ եսեները հիմնված են Մուշի (հոկտեմբեր 2011) և Գյումրիի (ապրիլ 2012) երկշարքյա ճամբարների ընթացքում բանավոր պատմության խնդիրների շնորհից գրանցված պատմությունների և դիտարկումների վրա:

Քանի որ մեր խմբի անդամները բանավոր պատմության համեստ փորձ ունեցող և տարբեր մասնագիտական ոլորտներից հավաքված մարդիկ էին, ամեն ճամբարից երեք օր հատկացված էր հարցազրույց վարելու հմտությունների կատարելագործմանը, դաշտի առանձնահատկությունների և շրջանի պատմությանը վերաբերող հարցերի քննարկմանը: Կարևոր էր, որ խումբը հնարավորինս շատ կիրառական գիտելիք և ուղղորդում ստանար, քանի որ մեր հմտություններն ու դաշտում ճիշտ կողմնորոշվելու ունակությունը հետագայում ազդելու էին այս հրապարակման որակի վրա:

Մեր ծրագրի հաջողության համար որոշչի դեր խաղացող մեկ այլ հանգամանք էր դաշտային աշխատանքի կազմակերպումը: Յուրաքանչյուր ճամբարից առաջ փաստահավաք այցելություն էր եղել ճամբարի անցկացման վայրեր և այդ այցելությունների ժամանակ, բացի ճամբարների կազմակերպչական հարցերից, կազմակերպիչները փորձել էին գտնել հավանական բանասացների կամ տեղանքը լավ ինացող մարդկանց, ովքեր կօգնեին կապ հաստատել բնակիչների հետ: Այս գործընթացները, ինչպես նաև բուն դաշտային աշխատանքը, տարբեր ընթացք ունեցան Յայաստանում և Թուրքիայում: Թուրքիան Յայաստանի համեմատ շատ մեծ էրկիր է, և շատ դժվար էր

կազմակերպել ճամբարը Ստամբուլից (որտեղ գտնվում էր կազմակերպիչների գրասենյակը) հազարավոր կիլոմետրեր հեռու, նույնիսկ նախնական այց կատարելու և Մուշում գործընկերություն ունենալու պարագայում: Ավելին, քանի որ մեզ հետաքրքրող խնդիրներն այս շրջաններում հասարակայնորեն չեն քննարկվել և իհմնականում լրեցվել են, Մուշում խոսել կամեցող բանասաց գտնելն իսկապես դժվար խնդիր էր: Յայաստանում ճիշտ հակառակ պատկերն էր: Ճամբարի կազմակերպումն ու դաշտային աշխատանքն ավելի հեշտ ընթացան, որովհետև մեր այցելած վայրերը Երևանից (որտեղ կազմակերպիչներն են) ամենաշատը մեկուկես ժամվա հեռավորության վրա էին, Յայաստանի գործընկեր կազմակերպությունը մասնագիտացած էր դաշտային հետազոտություններում, և մարդիկ ուզում էին հնարավորինս բարձրածայնել իրենց պատմությունները: Եթե Թուրքիայում մեր հիմնական խոշընդուռը լուրջունն էր, Յայաստանում խնդիրը շիտակ, երբեմն անգամ համար դատողությունն էր:

Մուշի հնգօրյա դաշտային աշխատանքի արդյունքում գրանցեցինք 21 պատմություն, որոնց մեծ մասն օգտագործվել է խսեներում: Որոշ համդիպաւմներ կազմակերպվել են մեր մշեցի ընկերների օգնությամբ, բայց գրանցած նյութի մեծ մասն ինքնարուիս գրուցներ են. մենք ուղղակի քայլում էինք քաղաքի փողոցներով և շրջում գյուղերում՝ խնդելով պատահական անցորդմերին պատմել իրենց բնակավայրի պատմությունը: Փորձը ցույց տվեց, որ շատ դժվար, որոշ դեպքերում նույնիսկ անհնար էր շահել մարդկանց վստահությունը և նրանց բաց ու անկեղծ գրուցից հրավիրել, եթե նրանք նախապես տեղեկացված չէին վստահել միջնորդի կողմից:

Մեր գրուցակիցներից մեկի պատասխանն իր երմիկ ծագման առնչվոր հարցին դիպուկ բնութագրում է Մուշում գրանցված պատմությունների մեծամասնությունը: Սարդ որոշ ժամանակ լրտ էր, հետո ասաց. «Չգիտեմ... չգիտեմ ով եմ... բայց ես տառապում եմ»: Գաղտնիության և լրության տարրերը, մարդկային ողբերգությունն առկա էին մեր բոլոր գրուցակիցների պատմություններում, և չնայած շատ բան սովորեցինք և շատ փորձությունների միջով անցանք, Մուշը և նրա բնակիչներն ընտելացան մեզ, եթե արդեն վերադառնալու ժամանակն էր:

Ճամբարների միջև ընկած վեց ամիսների ընթացքում նախատեսել էինք բոլոր հարցազրույցները սղագրել և քարգմանել անգերեն: Որոշել էինք նաև Մուշի նյութի

հիման վրա կարծ պատմություններ կամ բլոգային նոթեր գրել, ինչը քննարկման առողջ միջավայր կստեղծեր և հետագայում հիմք կծառայեր վերջնական էստեմերի համար: Այս ծրագրում մեր հիմնական թերացումն այն էր, որ այս պատմությունները չգրվեցին, և նյութը չբնադրկվեց: Մուշի հարցազրույցների մեջ մասը պատրաստ էր ընդամենը երկորդ ճամբարի մեջ մենարկից առաջ, և մենք անդրադարձանք դրանց միայն Գյումրիում: Երկարատև լրությունն իհարկե անբարենպատ էր մեզ համար, բայց ծրագրի ողջ ընթացքում այս ցավալի թեմայի քննարկումներն սկսելը ննան էր Պանդորայի արկղը բացելուն: Թեև մենք փոքր-ինչ բարձրացրինք կափարիչը, բայց ընթացիկ հարցազրույցների հուզական դաշտը, յուրաքանչյուրիս ապրումներն ու ընթացքում ծագած տարաբնույթ հարցերն այնքան ճնշող էին, որ չհամարձակվեցինք ավելի խորանալ:

Երկորորդ ճամբարը գրեթե նույնքան ծանր անցավ, որքան առաջինը: Մուշից և Սասունից փրկվածների ժառանգները հիմնականում բնակվում են Հայաստանի Թալիմի շրջանում, որը Հայաստանի հյուսիս-արևմուտքից սահմանակից է Թուրքիային: Գյումրիից այստեղ հասնելու համար առնվազն 40 րոպե էր հարկավոր: Ի տարբերություն Մուշի ճամբարի՝ Հայաստանում գյուղացիները տեղեկացված էին մեր հյա-թուրքական խմբի ժամանան մասին և նախապես համաձայնել էին ընդունել մեզ: Գուցե մի փոքր դրամատիկ հնչյ, բայց մեր խմբի թուրք անդամներն իրենց երկրի առաջին ներկայացուցիչներն էին, որ ոտք դրեցին այդ գյուղեր և տեղացիների հետ գրուցեցին իրենց պատմության մասին:

Մարդիկ այստեղ պատրաստ էին գրուցել մեզ հետ, և բանասաց գտնելու խնդիր այլևս չկար, սակայն մեր գրուցակիցներն իրենք շատ հարցեր ունեին: Հանդիպելով Թուրքիայից եկած մարդկանց՝ սովորաբար առաջին կամ բոլոր հարցազրույցներում այս կամ այն կերպ բարձրացվող հարցն այնքան պարզ և միևնույն ժամանակ այնքան բարդ էր՝ «Նրանք ընդունու՞մ են ցեղասպանությունը»: Այս մարդիկ սերունդներ շարունակ սպասել էին իրենց պատմությունը «Նրանց» պատմելու համար: Քանի որ հարցարույցները հյաերենով էին ընթանում, նրանք ստուգում և վերստուգում էին՝ արդյոք հայաստանցի նասնակիցներն ամբողջութա՞նը էին թագմանում իրենց ասածները: Եթեմն անգամ հարցնում էին՝ արդյոք հարցազրույցը ծայնագրու՞մ է, և խնդրում ծայնագրել ամենայն նանրամասնությամբ:

Խոսել ցանկացողների թիվն այնքան մեծ էր, որ մեզանից ոմանք ստիպված էին օրական մինչև երեք հարցարույց վարել: Այսպիսով, Հայաստանում քահօրյա դաշտային աշխատանքի ընթացքում մեր խումբը 35 հարցազրույց գրանցեց 7 տարբեր գյուղերում: Մուշի պատմությունների համեմատ՝ հայաստանյան պատմություններն ավելի կապացված էին և ընդգրկում էին ամենաքիչը չորս-հինգ սերնի պատմություն: Գուցե դա նաև պայմանավորված է նրանով, որ Մուշում մենք հիմնականում խնդրում էինք մարդկանց պատմել այն, ինչ գիտեին իրենք և իրենց պապերը հյայերի նասին, մինչդեռ Հայաստանում մեր հարցազրույցներն անդրադառնում էին մարդկանց ընտանեկան պատմություններին:

Երկու դեպքում էլ մենք հասկացանք, որ այդ պատմություններում բազմաթիվ «երե»-ներ կան: Այսինքն՝ մարդիկ իրենք իրենց հարցնում էին. «Ինչպիսի՞ն կլինեի ես, ինչպիսի՞ն կլիներ այդ վայրը, ինչպիսի՞ն կլիներ իմ կյանքը, եթե մենք միասին ապրեինք»: Անկասկած, մեր դաշտային աշխատանքն ու հարցազրույցները մեջ մարտահրավեր էին: Պատճառը ոչ միայն պատմական համատեքստը, քաղաքական անորոշությունն ու կազմակերպչական դժվարություններն էին, այլև այս ծանր համատեքստում թիմային աշխատանք և ընկերություն կառուցելու անհրաժեշտությունը: Մի համատեքստ, որտեղ միմյանց նկատմանը վստահությունն անդամար փորձության էր ենթարկվում: Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշեցինք, ընկերությունը տարօրինակ ալքիմիայի շնորհիկ է ծաղկում, և մենք կարողացանք հաղթահրել այս դժվարությունները՝ Շորաստեցնելով ընկերության եռանդի շնորհիկ: Հաջողոր էօերում ներկայացված էսեներն ու պատմություններն արդյունք են ընկերության՝ հաստատված ի հեճուկս դժվարությունների, որոնց մենք որպես թիմ բախվել ենք: Այս ամբողջ ընթացքում ոչ ոք իր տեսակետը մյուսին չպարտադրեց, և գրաքննություն երթեք չկիրառվեց: Արդյունքում մենք ուրախ ենք ներկայացնել այս աշխատանքը՝ որպես ազնիվ և դժվարին քայլ դեպի փոխընթացքում, որպես ոդիսականի միկրոտիեզերը անցյալի և ապագայի համար:

# Հիշելով և պատկերացնելով.

## Մուշն ու հայերը

Հիլալ Ունալ (Թուրքիա)

Շահանե Հալաջյան (Հայաստան)

Սարերի արանքում ծվարած Մուշն առաջին հայացքից փոքր, Անատոլիայի այլ քաղաքներից առանձնապես չտարբերվող վայր է: Մինչև Վերջերս անմասն մնալով բազմաթիվ արտաքին գործընթացներից՝ քաղաքի անցյալի հետքերը դանդաղորեն ոչնչանում են Վերջինիս զարգացմանը զուգընթաց: Քաղաքի հին քաղաքացիները մի կնոջ հետ: Նա ուրախ էր, որ Թօֆի-ն [զանգվածային բնակարանային կառավարման պետական ծրագիր] ծրագրել է նոր բնակելի շենքեր կառուցել իրենց տների տեղում: Թեև տեղի բնակիչներն ավելի լավ կենսամակարդակ ունենալու և առաջընթացի իրավունք ունեն, կարծում ենք, որ քաղաքային միջավայրի նման

փոփոխությունները կարագացնեն հիշողության և անցյալի հետքերի վերացումը:

Յին Մուշից արդեն իսկ քիչ բան է մնացել, որը վերհանելու համար ուշադիր աչք և ճիշտ հարցեր տալու ունակություն է պետք: Գյուղերում, որտեղ ժամանակն ավելի դանդաղ է հոսում, և փոփոխություններն էլ այդքան շատ չեն, հիշողությունն ավելի հեշտ է պահպանել: Մենք զրուցեցինք թե՝ Մուշի, թե՝ շրջակա գյուղերի բնակիչների հետ՝ փորձելով մեր զրուցակիցների միջոցով լսել անցյալ սերունդների ձայնը: Փորձեցինք գտնել այն հետքերը, որոնք նախորդ սերունդներն են թողել տներում, բնապատկերներում և ներկայիս բնակիչների պատկերացումներում:

Խաղողի այգին այն վայրերից էր, որ այցելեցինք Մուշում: Այն քաղաքից այնքան էլ հեռու չէր, սակայն ավտոմեքենայով գլխապույտ ճամփորդություն ունեցանք՝ փոշոտ դաշտերից մինչև քաղաքը շրջապատող լեռների ընդարձակ կանաչը: Այգում մեզ դիմավորեց վերջինիս տերը՝ Թեֆիկ Ռամչապար անունով մի տարեց մարդ: Եթե





Աերկայանում էինք, Թեֆիկը մեզ անակնկալի բերեց իր առաջին հարցով. «Ուզո՞ւ՞մ եք իմանալ ում են պատկանում այս հողերը»: Չնայած մենք ասացինք, որ այդ հարցի պատասխանը չենք փնտրում, ծերունին համառեց և սկսեց պատմել, թե ինչպես սկսվեց պատերազմը [Առաջին աշխարհամարտը]: Իր պատմության մեջ նա ընդունում էր, որ զանգվածային կոտորածներ են եղել, բայց նեղադրում էր գերմանացիներին, որոնք «սկսեցին պատերազմը», քրդերին, որոնք «ավելի շատ սպանեցին, քան բուրբերը», և հայերին, որոնք «անցան ռուսների կողմը»: Պատմությունն ավարտեց հետևյալ խոսքերով. «Ես ինքս հայ չեմ տեսել, բայց հորիցս եմ լսել»: Դեսո, կողքի խաղողի այգիների ավերակ պարհապնդերին նայելով, սկսեց հիշել դրանց հայ տերերի անունները. «Սա Սիփանի այգին է: Սա Սիրոյինն է, ներքեմն է՝ Բարիչինը: Ես բոլորի անունները գիտեմ, հայրս է ասել»: Թեֆիկը փոխանցում էր հոր պատմությունները՝ հուշեր՝ լի իդեալականացմամբ և կարոտով մի ժողովրդի հանդեպ, որին ինքն անձամբ երբեք չէր հանդիպել: Դեսո նա այդ անցյալի մարդկանց համեմատում էր ներկայիս մարդկանց հետ.

«Նրանց [հայերի] համար կարևոր չէր՝ իրենց հարևանները մահմեղական էին, աղքատ, թե չքավոր: Նրանք գիշերները իրենց տուն էին հրավիրում: Տեսե՛ք, առավոտյան չէ, նրանք ռազմավոր փող չին տա: Նրանք հարևաններին գիշերն էին կանչում ու Աստծո տվածքը կիսում նրանց հետ, գիշերը, որ ոչ ոք չիմանա: Այ, այդպիսի հարևան էին, հասկանո՞ւմ եք: Մենք միասին էինք ապրում: Նրանք շատ, շատ լավ մարդիկ էին: Եթե մեկի հացը ուտեին չէ, ել երբեք նրան վնաս չին տա, կասեին՝ մենք նրա հացն ենք կերել»:

Թեֆիկի խոսքը սկզբում թուրքական պաշտոնական տեսակետի մեղմացված տարրերակ էր հիշեցնում, որը շեշտում էր պատերազմը և հավաքական մեղադրանք ներկայացնում բոլորին: Միաժամանակ նա կարոտաբաղդ պատկերացում ուներ հայերի մասին, ըստ որի հայերն այս հողի իրական տերերն էին, լավ հարևաններ և աշխատաեր մարդիկ, որոնց չես համեմատի Մուշի ներկայիս բնակչների հետ: Զայերի մասին այսօրինակ պատկերացում ունեին նաև Մուշի մեր մյուս գրուցակիցները: Փորձելով հասկանալ պաշտոնական տեսակետի (որն այնքան շատ է շրջանառվում, որ մարդիկ սկսում

Են չկասկածել դրա ճշմարտացիությանը) և իրենց նախներից լսած պատմությունների (որոնք ակնհայտորեն նույնական պիտի ճշմարիտ լինեն) միջև եղած հակասությունները՝ մարդիկ անցյալի իրենց տարբերակներն էին ստեղծում:

Ժամանակ առ ժամանակ թեֆիկն անցյալի հայերի հետ ապրելու գրեթե չափազանցված ցանկություն էր հայտնում: Նրա այն միտքը, թե ինքը «Մուշում բացի հայերից այլ ընկերներ չունի» պարզորոշ ցույց է տալիս՝ ինչպես են սոցիալական և կոլեկտիվ հիշողությունները՝ այս դեպքում հրոից լսած պատմությունը, միաձնուվում և ուրվագծում անձնական հիշողության դաշտը: Թեֆիկն անձամբ չէր հանդիպել իր այգու նախկին տերերին, բայց իր հոր կարծիքը դարձել էր հայի մասին իր պատկերացումների հիմքը: Նրա բողոքը իր շրջապատի մարդկանցից, այդ բվում իր իսկ ժողովրդից, կապված վերջիններին նեղմտության, հուսալի և վստահելի չիննելու հետ, կարծես առնչվում էր հայերի օրինակով գիմեգործությամբ օբաղվելու թեֆիկի ցանկությանը, որը չէր խրախուսվում շրջապատի կողմից: Քաղաքի նախկին՝ հետզիտե անհետացող դրվագն ավելի բարենապաստ էր նրա ծրագրերի համար, իսկ բնակչության տեղաշարժերը և տնտեսական փոփոխությունները փոխում էին նրա պատկերացությամբ կատարյալ կյանքն ու հարաբերությունները: ճակատագրի հեգնանքով, սակայն, եթե հայերն իրենց բնակչուն կյանքը շարունակեին Մուշում, այդները, որտեղ թեֆիկը ցանկանում էր խաղող աճեցնել, հականաբար իրեն չին պատկանի:

Մուշում հայերի մասին հիշողությունները հաճախ են կապվում գիմեգործության հետ, և մարդիկ ակնածանքով էին խոսում այդ խորդությունը, բայց մշակվելու դեպքում բերրի հողում գինի արտադրող խաղողագործների հմտության մասին: Ալինց գյուղում հանդիպեցինք ծագումով չեւեն Խսրաֆիլին և Մումբագին, ով ընդգծում էր իր արարական ծագումը, չնայած նշեց նաև, որ տատը հայ է եղել: Շրջանի անցյալի մասին գրուցելիս անդրադանք գիմեգործությանը, և Խսրաֆիլը պատմեց իր տեսած գինու ցուցահանդեսի մասին:

«Այնտեղ ես տեսա «Մուշի գինի» կոչվող գինին: Այն 1820-ականներից էլ շուտ է արտադրվել: Մուշի խաղողից, մեր սարերի խաղողից են քաշել: Յայերը գինին կավե խողովակներով էին քաղաք փոխադրում, հետո պահեստավորում ու վաճառում էին: Այստեղից մի

տաս կիլոմետր էն կողմ կով էին կթում ու կաթը սարերից խողովակներով մղում -թերում էին: Թրդերը հայերի համար են աշխատել, հայերն էս տեղերի տերերն էին: Դենց սա հայի տուն է: Ահա, մի հայ էլ եկավ...»:

Այս խոսքի վրա ներս մտավ նրանց ընկեր Յիքմեթը, ով և հայրական, և մայրական կողմից հայ էր: Յետագա գրուցի մանրանաներին կարելի է մի ամբողջ հողված նվիրել, բայց անցյալի և ներկայի գործերի մասին իրենց հակասական մտքերն ազատորեն արտահայտող այս երեք տղանարդկանց ընկերությունը կարծես արտացոլում էր քրիստոնյաների և մահմեդականների համակեցության ժամանակ եղած վստահությունը, որի մասին մեզ այդքան շատ էին պատմում:

Մուշի հին թաղում հանդիպեցինք Սալիմին և նրա ընտանիքին: Սալիմը պատմեց, որ ինքը ծնվել է Պետրոս Էֆենդիի անունով մի հայի տանը: Մինչ օրս խնամքով ու գգուշորեն պահպանված Պետրոս Էֆենդու հայելին ցույց տալով՝ նա պատմում էր նախկին համակեցության մասին.

«Յայերի և մահմեդականների խանութները շուկայում իրար կողդի էին: Ասենք թե մահմեդականը պետք է աղոթքի գնա մզկիթ, բանալին հանում, տալիս էր հային: Տալիս էր, որովհետև վախենում էր, որ ուրիշ մեկը կգա ու ապրանք կգողանա: Սա ցույց է տալիս՝ ինչքան էին նրանք իրար վստահում»:

Այս դեպքում ինչո՞ւ հավատարմության և աշխատասիրության համար հաճախ գովարանվող այս մարդիկ համակար անհետացան: Այս հարցի մասին ակնարկելիս հայերի դրական կերպարին հակասող պատասխաններ էինք ստանում: Ոմանք ասում էին՝ նրանք գնացել են, որովհետև նրանց «անարգել են» որպես ժողովուրդ, մյուսները պատասխանատվությունից խուսափող պատասխան էին տալիս՝ ասելով, որ «նրանք գնացել են մինչև մեր այստեղ գալը», մինչդեռ մի քանիսը պարզուց, բայց առանց մեկնաբանությունների «կոտորած» բառն էին օգտագործում: Մարդկանց խոսելու կերպը ցույց էր տալիս, որ չնայած թվացյալ վճռական պատասխաններին, թե իրենց կողմից ամեն ինչ «մաքուր է», կային բաներ, որոնցում իրենք ամենակին վստահ չէին:

Բասն տարի Գոմս գյուղի գյուղապետ եղած Սեհմեք Քոչը մեր հարցին հշեսորական պատասխան տվեց.



«Այստեղից մինչև Գյոլբաշի, ամբողջ դաշտը հայեր էին: Որոշ մահմեդականներ կային սարերում, բայց քաղաքը ամբողջովին իրենցն էր [հայերինն էր]: Խայրս էլ քաղաքում տուն ուներ: Ընդամենը մոտ տասը տուն կար քաղաքում, և հորս տունը դրանցից մեկն էր: Բոլորը հայերինն էր: Հետո թե ի՞նչ պատահեց, ինչպե՞ս պատահեց: Կոտորա՞ծ եղավ, թե ինչ: Նրանք բոլորը գնացին: Մի մասը գնաց, մյուս մասը մնաց»:

Խաղողի այգիները, տների պատերում շարված խաչքարերը, մինչ օրս օգտագործվող գյուղերի հիմ՝ հայկական անունները, այս ամենը մշտապես հիշեցնում է անցյալը: Մուշի բնակիչները չեն կարողանում կորվել անցյալից, որովհետև այն դեռ ապրում է իրենց ներկայում և առերևութանում շրջակա նյութական մշակույթի մեջ: Տեղացիների համար իհն եկեղեցիների ու վանքերի ավերակները, հայերի կառուցած տներում ապրող, քնող և հաց ուտող ընտանիքների ամենօրյա իրականությունը, արտերկրից եկած ու մնմեր վառող օտարալեզու խմբերը, բոլորը միահյուսվում և վերակենդանացնում են անցյալի պատկերները:

Միևնույն ժամանակ գետի և սարի մյուս կողմում մարդիկ վաղուց ցանկանում են վերապետել անցյալը, բայց սահմանները, ժամանակն ու այլ գործնական խոչընդոտներն անանցանելի արգելմեր են դարձել նրանց համար:

Դայաստանի Ռոկեհասկ գյուղում հանդիպեցինք յոթանասունյորամյա Ռաֆիկ պապին: Երբ գրուցելու համար իր տուն էինք մտնում, առաջին բանը, որ աչքի զարնեց, պատին փակցված Արևատյան Դայաստանի քարտեզն էր: Դայաստանում մշեցիների գյուղերում մի քանի օր անցկացնելուց հետո պարզ դարձավ, որ տներում քարտեզների առկայությունը բավական տարածված էր և շատ կարևոր բնակիչների համար: Այս քարտեզներն, ի թիվս այլ պատճառների, փոխեցին գյուղի մասին մեր պատկերացումները. մենք կարծում էինք՝ գյուղում արձաններ չեն դնում, բայց արի ու տես՝ մեր այցելած գրեթե ամեն գյուղում մի արձան կար, ինչպես Ռաֆիկի ցույց տված Անդրամիկի արձանը: Մյուս կողմից, փոխաւուցին գյուղացու մասին մեր պատկերացումները՝ քախվելով այն իրողությանը, որ մեր գրուցակիցների մեջ մասը, կամ ինքն էր փորձել գրել, կամ էլ ցույց էր տալիս որևէ ազգականի հեղինակած գյուղի պատմությունը, հուշեր ցեղասպանության մասին:

Ուաֆիկը նույնպես գրել էր իր գյուղի և համազյուղացիների պատմությունը: Երբ հարցրինք՝ ումից է լսել այդ ամենը, ասաց, որ ցեղասպանությունը վերապողեները սովորություն ունեին հավաքվել և իրենց կյանքից դրվագներ պատճել՝ հիշողությունը վառ պահելու և միգուցե հիշողության ծանր բեռը կիսելու համար: Այս հանդիպումները գաղտնի են եղել, որովհետև հատկապես վաղ խորհրդային շրջանում արգելված էր բացեիրաց խոսել ցեղասպանության մասին: Ուաֆիկը տասը տարեկան էր, երբ թարուն գնում էր մեծերի հավաքատեղին ու լսում նրանց պատմությունները, հետո տուն էր գալիս ու գրի առնում: Ակամայից հարցնում էինք ինքներս մեզ՝ ինչ է անցել այդ տասը տարեկան երեխայի մտքով, երբ նման ծավալի հիշողություններ է գրատել: Մինչ Ուաֆիկն այս ամենը պատմում էր Շահամեհն, նրա կինը մեզ իր ննջասենյակ տարավ, որի պատերին կախված էին Ուաֆիկի հեղինակած նկարները՝ մի քանի գունավոր բնապատկեր, Անդրամիկի և իր հոր սիրողական դիմանկարները:

Ուաֆիկն անգիր գիտեր Մուշի գյուղերի անունները: Ինչպես Մուշում էին մարդիկ օգտագործում որոշ գյուղերի սկզբնական անունները, այնպես էլ Հայաստանում Մուշի գյուղերը կոչում էին իհն անուններով, հիշում էին իրենց նախնյաց տները, երեխաներին կոչում էին նահատակված ազգականների անուններով և իրենց մեծերի պատմությունները պատմում, ինչպես իրենց սեփականը: Բազմաթիվ անգամներ լսեցինք՝ ինչպես են մարդիկ երգից հող բերել և Հայաստանում լցորել իրենց մեծերի գերեզմաններին, ինչպես նաև շարունակում են իրենք իրենց «մշեցի» կոչել: Մեր գրուցակիցների ճնշող մեծամասնությունը երբեք Մուշում չէր եղել և ամենայն հավանականությամբ չի էլ լինի, բայց նրանց պատմություններից հստակ երևում է՝ ինչպես են նրանք պատկերացնում այն:

«Ինձ համար Մուշը սուրբ տեղ է: Իմ ծնողների ապրած տեղն է, իրանց երազների երկիրը, իմ հայրենիքն ա: Ծնողներս հաճախ ասում էին. «Գևորգ, լատ, մի օր կգնաս, կտեսնես մեր երգիրը»:

Հայաստանի գյուղերում մեր առաջին հանգրվանը գյուղապետարաններն էին: Մինչև մեր գրուցակիցներին հանդիպելը ներկայանում էինք գյուղապետին, պատմում ծրագրի մասին: Ամեն գյուղին Մուշում արված լուսան-



կարների ալբոն էինք նվիրում, և մարդիկ հավաքվում, լուր նայում ու ծեռքից ծեռք էին փոխանցում այն:

Դարցագորովյաները սկսում էինք մեր գրուցակիցներին հարցնելով՝ որ սերնդից են հիշում իրենց ընտանեկան պատմությունը: Մարդիկ սկզբում հուզվում էին, անգամ աչքերը լցնում, երբ սկսում էին խոսել նախնիներից՝ պատմելով, որ միայն եզակի թվով մարդկանց է իրենց ծնողներից կամ պատերից հաջողվել փրկվել: Մանրանասն պատմում էին փախեփախի մասին, և, ինչպես իրենց մեծերը ապրեցին տեսածի ցավը և էրգի կարոտը սրտերում: Մեր գրանցած պատմությունները ցույց էին տալիս՝ ինչպես են Վերապրածների տեսած քանությունն ու արհավիրքը փոխանցվում հաջորդ սերնդին և Վերջինիս ինքնության մաս դառնում:

Արմատներով Բինօյոլից Փիլոս Յախոյանը պատմեց կոտորածի ժամանակ իր ընտանիքի ապրած ողբերգության մասին՝ ինչպես էր իր մոր առաջին ամուսինը մահացել մինչև ջարդերը, ինչպես էին բուրքերը փախցրել իր մոր առաջին երեխային և մորաքրոջը, և ինչպես էր հետագայում մորաքրոյն իրեն տան կտուրից ցած նետել՝ չիմանալով, որ իր երկու որդիները անցել են սահմանը և ապահով են:

«Ծնողներիս դարդ ու ցավը գենի նման, գենի պես ինձ փոխանցվեց,

Ծնողներիս՝ Դեր-Զոր կոչված անապատը, հազար կանչով ինձ կանչեց,

ճամփեն փակ էր, չհասցրի անցնեմ գնամ, գերեզմանին պահապան-տեր դառնամ»:

Փիլոսի տողերը հազարավոր աքսորյալների շարքերում Դեր-Զոր քշված իր մշեցի հորենքոր մասին էին: Այս հուզիչ արտահայտությունից հասկանում ենք՝ ինչ է Մուշը Փիլոսի համար, և ինչ կարող է նշանակել սահմանի բացումը նրա համար: Ներկայիս Մուշը տեսնելու մարդկանց ցանկությունը մեծ մասամբ պայմանավորված էր իրենց ընտանիքների դառը պատմությամբ, որը նրանք ֆիզիկապես և հոգեպես կլանել են դեռ մանուկ հասակում: Նրանց հետ այս կապի մասին գրուցելիս հասկացանք՝ որքան անցյալ կա մեր ներկայում:

Սուսեր գյուղում տիկին Մարելոյանը պատմեց իր ամուսնու ընտանիքի ճակատագրի մասին: Այն զգացմունքայնությունը, որ այս ծեր կինը դնում էր իր

խոսքերի մեջ, միայն կարեկցանքի զգացումով չես բացատրի, նա բառացիորեն զգում էր իր ընտանիքի ցավը:

«Մեր տատը շատ դժվարություն է տեսել Յենց հիշում էր՝ լաց էր լինում, չէր կարողանում խոսալ: Յետո որ ինքը փախել է, մի քուրդ տղայի է հանդիպել: Ես քուրդ տղան իրեն խոստացել եմ, որ գետը անցնենք, իրար հետ գնանք, ես քեզ տանեմ, Արաքսն անց կացնեմ: Մեր տատիկին ինչ-որ մեկը չարոխներ է տվել: Չարոխը գիտե՞ս որն է: Կաշվից սարքած կոշիկները: Եսի որ պառկել է քնելու, ես քրիդ տղան հելել է իրիկունը, տատի բաները հագել է՝ չարոխները, ու փախել է: Աչքը ետ չարոխներին է եղել: Տատը բորիկ է մնացել: Ու բորիկ ոտքերով, պատկերացրա՝ ինչքա՞ն է եկել, ու՝ ու եկել [ձայնը երերալով]: Բորիկ...»:

Զարմանալի չէ, որ նման պատմությունների մեջ մեծացած մարդիկ Մուշը կապում են ցավի հետ: Բայց սա նրանց լսած պատմությունների միայն մի մասն է: Մյուս մասը մեկ այլ կյանքի մասին է, երբ հողը բերիդ էր, տներո՛ մեծ, և ընտանիքները՝ երջանիկ: Կոտորածից առաջ եղած այս բարեկեցությունը և բարձր կենսամակարդակը կազմում են Յայաստանում Մուշի մասին պատկերացումների մյուս ըները: Փիլոսը, որի նախնիները Մուշից ու Սասունից են, սա նկատի ուներ՝ ասելով:

«Ուրեմն լավ են ապրել ջանըմ, չէ իրենց բանից, որ մարդ անընդհատ-անընդհատ իր սրտի մեջ ախ ու վախ է անում, չի կարող վատ ապրուստ, վատ կենցաղ ունեցած լինի: Դե իրենց կենցաղը գյուղացիական կենցաղ է, չեմ ասում բարձրակարգ կենցաղ է եղել, գյուղացիական կենցաղ է եղել, և շատ գոհ են եղել, շատ գոհ են եղել»:

Այս պատմություններում Մուշը հաճախ համեմատվում էր դրախտի հետ: Ըստ Գիլգամեշի մասին էպոսի Բարելոյան պատումի, հերոսն ուզում էր հասնել Եղեմի այգին՝ «կենդանի ջուրը» գտնելու համար: Նա ճամփա է ընկնում Արարատյան թագավորություն, որտեղից սկիզբ էին առնում Սիջագետքի ջորս գետերը: Այս էպոսը ներքափանցել է Աստվածաշունչ, և 71-ամյա Վարդգես Միսիքարյանը Կաթնաղբյուր գյուղից կապում էր այս առապելը էրգի հետ.



«Ես չպիտի գովամ մեր էրգիրը: Կարդացեք Աստվածաշունչ, որն աշխարհի ամենամեծ գրականությունն ա, էնտեղ գրած ա՝ Աստված ստեղծեց մարդուն և տեղադրեց դրախտում, որտեղից սկսվում էին 4 գետեր՝ Տիգրիս, Եփրատ, Տիտն, որը Արաքսն ա, Քուռ: Դրախտը աշխարհի, ուրիշ էլ ո՞նց նկարագրեմ մեր էրգիրը: Աշխարհի դրախտը Արևմտյան Յայաստանն էր»:

Արմատներով Մշո Ցրոնք գյուղից և Կարսից Յակոբյան և Մաթևոսյան տարեց ամուսինները պատմում էին Մուշում եղած բազմաթիվ քրիստոնեական և հեթանոսական սովորությունների մասին՝ պտղաբերության ծեսեր, լեռներուն կատարվող ամուսնական արարողություններ և այլն: Տիկին Մաթևոսյանը պատմեց նաև գասպե կոչվող բույսի մասին, որը հաճախ էր հիշատակվում մշեցիների գյուղերում: Մեր գրուցակիցները գասպեն հաճախ բնութագրում էին որպես երկնային մանանա և անգամ երգ ունեին դրա մասին.

«Ուրեմն գիտե՞ք, թե Մշո դաշտը ինչքա՞ն հարուստ է եղել դեղաբույսերով..... խավոքիլով: Ասում է՝ հանկարծ մի քիչ շանջուններ ունենայինք, քան ունենայինք, դաշտից կգնայինք եղ մի ճյուղ խավոքիլը, մի ճյուղ կրաղեինք, կուտեինք, դրանից հետո բուժող արդեն հատկություն ուներ, բուժում էր: Ուրեմն գասպեն բույս է եղել, որի վրա շաղը նստելով դարձել է քաղցր բույս: Եվ մարդիկ բերել են, եփել են, ասում է՝ Էսօրվա մեղրը ավելի անորակ է, քան եդ մեր գասպեն, մանանան: Մանանա են ասել, նշանակում է երկնքից իջած պարզե, իջել է գասպե բույսի վրա»:

Մուշի՝ որպես դրախտավայրի ընկալումներն արտացոլում են մարդկանց կապը հողի հետ թե՛ անցյալում և թե՛ այսօր, ինչպես նաև բարեբեր հողի կարևորությունը հողագործի համար: Դժվար է ասել՝ որքանով են առատության և կարոտի այս պատմությունները չափազանցված: Մարդիկ իրենց պապերի պատմությունները պատմում են այնպես, ասես դրանք իրենցը լինեն: Արդյո՞ք սա այն ամենն է, ինչ

Նրանք կարողացել են բերել հայրենիքից, թե՝ Մուշն իսկապես այնքան հարուստ էր, ինչպես նկարագրվում է: Իրականությունը, որն ինքնին սուրյեկտիվ է, սերնդեսերունդ փոխանցվելով՝ էլ ավելի սուրյեկտիվ է դառնում: Այնուամենայնիվ մեր հանդիպած գրեթե բոլոր մարդիկ կարոտով էին հիշում Մուշը և ուզում էին վերադառնալ:

Այս, որ մարդ կարող է կարոտել մի վայր, որտեղ ինքը երեք ոտք չի դրել, մի կողմից տարօրինակ է թվում, մյուս կողմից՝ հասկանալի՝ հաշվի առնելով, որ այս մարդիկ իրենց կյանքի մեջ մասն անց են կացրել ծնողների և պապերի կողքին՝ մշտապես լսելով երգի մասին նրանց կարոտագին պատմությունները: Մարդկանց և տարածքի այս կապը խորհրդանշական արտահայտություն է ստացել երգից բերված հողը գերեզմաններին լցնելու սովորության մեջ: Այս ծեսը միահյուսում է գաղթականների սերունդների կարոտն ու պատկերացումները: Ինչոր առումով նրանք երկակի քաղաքացիություն ունեն. Ֆիզիկապես նրանք Դայաստանի Դանրապետությունից են, բայց մտովի երգի զավակներ են:

Ծագումով եղի Քյարամը, որի՝ Արևմտյան Դայաստանից գաղթած պապերը հիմնել են Դայաստանի Զարթոնք գյուղը, նույնպես այս երկակիության կրողն է.

«Ես կարոտս լուսանկարներով եմ հանում... Դայրս չտեսավ ես նկարները, բայց որ մտածում եմ՝ կողքից նայողը կարող ա մտածի, որ աննորմալ եմ...»:

Նրա ընկեր Պարույրը, ում պապը սկզբից հաստատվել էր Թալինի Դաշտահեմ գյուղում, հետո տեղափոխվել Զարթոնք, շարունակեց.

«Ես ծնվել եմ ստեղ, չէ՞: Ծնվել եմ իխուններեք թվին ստեղ: Բայց ինձ, որ հարցնում են, որտեղի՞ տղա ես, ասում եմ՝ քալինցի տղա եմ: Չեմ ապրել, ոչ էլ ծնվել եմ ետեղ, բայց չկա ամիս, որ մի քանի անգամ չզնամ, չտեսնեմ»:

Նրանց մյուս ընկեր Աշոտն ավելացրեց.

«Մի քիչ ել որ խմում ենք, ասում ենք՝ երգից ենք»:

Մուշում կյանքը սովորականի պես շարունակվում է. մարդիկ գնում են աշխատանքի, մշակում են իրենց

արտերը և ապրում Արևելյան Թուրքիային հատուկ բոլոր հոգսերով: Նրանց մտքերը գերազանցապես առօրյա խնդիրներով են զբաղված, այլ ոչ անցյալի մասին խորհելով: Յետևաբար իմանալ, որ սրանք Սուլը Մարինե Եկեղեցու փլատակներն են, իսկ այն տունը պատկանել է Պետրոս Էֆենդուն, նրանց համար մեծ նշանակություն չունի: Իրականում շատ մարդիկ սկսում են հիշել սա միայն այն ժամանակ, եթե տեսնում են զբոսաշրջիկների կամ մեզ պես հետաքրքրասեր ուսանողների, որոնք խնդրում են նայել հետ՝ անցյալին, ու պատմել իրենց իմացածք, պատմել մեզ համար, պատմել փոփոխության համար: Այդ ժամանակ նրանք ասում են, որ մի ժամանակ ունեցել են ազնիվ և աշխատասեր հարևաններ, որոնք, սակայն, դավաճան դուրս եկան, և այնպես ստացվեց, որ գնացին: Միևնույն ժամանակ սահմանի մյուս կողմում «գնացած» մարդկանց երեխաններն ու թռչները շարունակաբար նայում են հետ՝ անցյալին: Նրանց տներուն կախված են անցյալի քարտեզները, նոր սերունդները ժառանգում են անցյալի անունները և գգում են անցյալի ցավը: Այս մարդկանց խսքերով այդ ցավը կմեղմանա, եթե հաղորդակցության դրները բացվեն, և մյուս կողմն ընդունի ու ճանաչի իրենց պատմությունները: Մարդիկ պետք է կարողանան լսել իրար և միգուցե արժե սկսել՝ միմյանց մարդկայնությանը հավատալով: Մուշի խաղողի այգիներից մեկում Թեֆիկ պապը հույս հայտնեց, որ պատճառված ցավը կճանաչվի, և այն դարմանելու ճանապարհները կգտնվեն: Նրա խոսքերը անցյալի և Երկայի հաշտության հույս են ներշնչում.

«Այստեղ աղբյուր կա, մի հայ կին էր եկել... գրկել էր քարերը ու համբուրում էր: Նրա հոր այգին այս տան ետևում էր: Ծեր կին էր, 25 տարվա պատմություն են պատմում: Դիմա նրանք, ովքեր փախել են Երևան, մահացել են իհարկե: Նրանք էլ չկան, բայց նրանք թռչներ ունեն: Սեծերը գրել, փոխանցել են փոքրերին: Նրանք շատ են կարոտում էս տեղերը: Սեռնում են էս հողի համար, Մշո հողի համար»:

Թեֆիկը մեզ իր այգու խաղողն է հյուրասիրում՝ ասելով խմբի հայ անդամներին. «Կերե՛ք, սա ձեր պապերի խաղողն է»:

## **«Գնացածներն» ու «մնացածները» Անի Պողոսյան (Հայաստան) Սերջան Չինար (Թուրքիա)**

### **ճանապարհը**

Ժողովուրդն ասում է. «Մարդուն լավ ճանաչելու համար ինտը ճանապարհ պիտի գնա»։ Մեր ճամփորդությունն սկսվեց 2011 թվականի հոկտեմբերին Մուշում և շարունակվում է մինչ օրս։ Սա պարզապես մի վայրից մյուսը ֆիզիկապես տեղափոխվելու փորձ չէր. մենք ճանապարհ ընկանք մի իրականությունից մյուսը, անցյալից անցանք ներկա, առասպելից՝ իրականութ-

յուն և, շրջելով մենք-նրանք մշտագո հակադրությունը, դարձանք «նրանք», որ վերագտնենք մեր «մենքը»։ Մենք ճամփորդում էինք Հայաստանում և Թուրքիայում հանդիպած մարդկանց հոգիներով ու իիշողություններով, փորձում վերանալ մեր կենսափորձից և աշխարհին նայել նրանց աչքերով, հասկանալ նրանց ու ստացած գիտելիքը կիսել ավելի լայն լսարանի հետ։

Հավաքված նյութի վերլուծությունն ու շարադրանքն ավելի երկար ժամանակ խլեցին, քան սպասում էինք, և վերջնական արդյունքն է նախնական մտահղացումից տարբեր ստացվեց։ Թեև երկուս էլ ո՞չ մարդարան ենք, ո՞չ էլ բանավոր պատմության մասնագետ, և այս ոլորտ-ների մեր իմացությունը բավական սահմանափակ է, մեզ հաջողվեց իրավես հետաքրքիր պատմություններ գրանցել, որոնք մի հաստափոր գործի հիմք կարող էին



դաշնաւլ: Սակայն ծրագրի ժամանակային և ժավալային սահմանափակումներից դրդված՝ ստիպված էինք հնարավորինս արագ կողմնորոշվել և մեզ հետաքրքոր բազմաթիվ թեմաներից միայն մեկն ընտրել:

Ըստ նախնական պայմանավորվածության՝ պատրաստվում էինք գրել ցեղասպանությունից առաջ հայերի և քրդերի կյանքի մասին, հետո անդրադառնալ քրդական հարցին ներկայիս համատեքստում: Բայց շուտով հասկացանք, որ ձեռքի տակ եղած նյութը պատշաճ ներկայացնելու համար անհրաժեշտ է հավելյալ հետազոտական աշխատանք կատարել, ինչն անհնար էր ծրագրի ժամանակային սահմանափակումների պայմաններում: Այդ պատճառով որոշեցինք փոխել մոտեցումը և կենտրոնանալ Արածանի/Մուլուղ գետի մասին հիշողությունների ու պատմությունների վրա, քանի որ գետը միշտ եղել է Մուշի գյուղական կյանքի և աշխարհագրության առանցքներից մեկը: Սակայն այս նյութը հիմնականում Հայաստանում էինք գրանցել և Մուշից համարժեք նյութ չունենք:

Սկսելով և անվարտ թողնելով երկու շարադրանք՝ մենք անցանք երրորդին: Այս անգամ որոշեցինք կոնցեպտուալ փոփոխություն կատարել՝ հրաժարվել թեմատիկ բաժանումից, ընտրել մեզ դուր եկած երկու հարցագրույց և փորձել պատմել այդ երկու մարդկանց կյանքը: Քանի որ մեր նյուու գործնկերները կոնկրետ թեմաների վրա էին աշխատում՝ տարբեր հարցագրույցներ օգտագործելով և մեջբերելով բոլորին, մենք որոշեցինք ներկայացնել մեր գրուցակիցներից երկուսին: Ընտրությունն ընկավ Հայաստանի Իրինդ գյուղից Տարոն Մուլուղյանի և Մուշից Շուշլու հանրմի վրա: Ցեղասպանությունը մեծապես սահմանել էր նրանց և նրանց նախնիների կյանքն ու խորապես ազդել այդ կյանքի վրա: Երկուսի պապերն էլ հայ են եղել, որոնք կոտորածի արյունքում որբացել են, այնուհետև ապաստանել քրդերի մոտ: Տարոն Մուլուղյանի պապը պատահաբար հանդիպում է իր ազգականներից մեկին և նրա հետ փախչում արևելք՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածք: Մենք հանկարծ հասկացանք, որ Շուշլու հանրմի պապի պատմությունը հետուությանը կարող էր Տարոն Մուլուղյանի պապինը լինել, եթե վերջինն Հայաստան չգտա: Իսկ Տարոնի պապի պատմությունը նման է այն մարդկանց պատմություններին, որոնք կարողացել են սահմանի այս կողմն անցնել:

Տավի ու վախի զգացումով լի այս երկու կենսագործյունները դատապարտված են եղել մենության և լուրջան: Տարոնը և Շուշլուն խոսում են Թուրքիայում և ԽՍՀՄ-ում լուցնելու քաղաքականության մասին, և ինչպես դրան հակառակ, մարդիկ միևնույնն են, հավաքվելու և խոսելու միջոցներ էին գտնում: Բազմաթիվ ուղղակի և անուղղակի ձևերով անդրադառնում են իրենց նախնիներից ժառանգած վերքերի բերին և ամենակարևոր՝ պատմում իրենց սեփական վախերի մասին, որոնք շատ նման են թվում: Շուշլու հանրմի Մուշի շուկայում հավաքված հայ զրոսաշրջիկներից ուզում է հարցնել իր պապի մասին, բայց վարանում է և չի մոտենում, մինչդեռ Տարոնը երկնտում է՝ զնա՞ էրգիր և իր նախնիների հողն իր աչքերով տեսնի, թե՞ ոչ: Ակնհայտ է, որ այս մարդիկ դեռ տառապում են «Երերուն» ինքնությունից: Թուրքիայից դուրս ապրող արևմտահայերի ժառանգների համար այն արտահայտվում է տևական ցավով և կորուսյալ հայենիքի հետ մտային անուր կապվածությամբ, ինչը երկակի պատկանելության զգացում է առաջացնում: Նրանց համար, ովքեր մնացին Թուրքիայում և խառնվեցին քրդերին ու բոլորքերին, այն կրկին պայմանավորված է ցեղասպանության տանջալից հիշողությամբ, ինչն ավելի է սաստկանում տևական վախի մթնոլորտում, որն այդ մարդկանց թույլ չի տալիս վերջապես վերագտնել իրենց տեղը հասարակության մեջ:

## ԱՅԻ Պողոսյան (Հայաստան)

**«Դա արյան մեջ է: Հասկանու՞մ ես, ինչ-որ բան ձգում է թեզ... »**

Հայրեթին բեյը՝ հայտնի նաև հայկական Սերոբ անվամբ, միջին տարիքի, թիսամորթ, մեծ կանաչ աչքերով տղամարդ է: Հայազգի հոր և քուրդ մոր զավակ Սերոբ Մուշում այն քչերից է, ովքեր բացեկրաց խոսում են իրենց հայկական ծագման մասին: Ցեղասպանության ժամանակ Սերոբնենց ընտանիքը Սաստոնում էր ապրում, և նրա հայրը, հորեղբայրն ու հորաքուրը փրկվել էին Շեկո Աշիրեթի<sup>1</sup> քրդերի օգնությամբ: Ինչպես փրկված հայերից շատերը, Հայրեթինի հայրը հետագայում անուսնացել էր Շեկո տնից մի քրուիկու հետ:

1. Աշիրեթ Շահանակում է օջախ կամ ցեղ: Հայաստանում մեր թանաացներից շատերը քրդերի օգնության մասին պատմենիս հիշատակում են «Շեկո» կամ «Շիգո» աշիրեթը:

Սերոբին հանդիպեցինք Մուշ հասնելու հենց առաջին օրը, և հաջորդ երկու շաբաթների ընթացքում աշխատանքային ժամերից հետո (Սերոբը աշխատում էր տեղական շաբարի գործարանում) նա գալիս էր մեր հյուրանոց՝ խոսելու և միասին ժամանակ անցկացնելու: Նա նաև օգտակար էր բանասացներ գտնելու հարցում, քանի որ ինքը հայկական ծագում ունեցողների «ընդհատակյա» ցանցի անդամ էր: Ինչպես ինքն էր ասում՝ «փորձում եմ բոլորի հետ լավ լինել», և Մուշում ճարդիկ վստահում էին նրան: Սերոբը հայկական արմատներով մարդկանց էր փնտրում և ուզում էր Մուշի հայերի կազմակերպություն իհմնել: Սերոբն էր, որ մեզ ուղեկցեց նախկինում հայերին պատկանող խաղողի այգիներ և տարավ Շուշլու համընմի կամ ինչպես ինքն էր ասում՝ իր «քրոջ» տուն, որը մեր սրտերում վառ հետք թողեց:

Շուշլուի ընտանիքն ապրում էր Մուշի նորակառույց քաղամասերից մեկում: Քաղաքի կենտրոնական՝ Արաթուրի պողոտայից մինչև նրանց թաղ մերենան 10-15 րոպեում հասավ: Կարմրաքար ժամանակակից առանձնատերը՝ փոքր պարտեզներով և շագանակագույն կտուրներով, կտրուկ առանձնանում էին գավառական և բավական աղքատ Մուշի ընդհանուր պատկերից: Չնայած արդեն սովոր էինք տեղի տնտեսական անհամաշակություններին (նորագույն մերենաներ և աղքատիկ շուկա, քաղաքային, մարդաշատ կենտրոն և ավանդական իին քաղամաս), քաղաքային տեսարանի փոփոխությունն այնքան ակնհայտ էր, որ մի պահ սկսեցի կասկածել՝ արդյոք դեռ Մուշում ենք: Զարմանալի է՝ քանի երես ու շերտ ուներ այդ քաղաքը, քանի չպատճառած ու չքացահայտված պատճություն կար մեր շուրջը: Յետզիետ պարզ էր դառնում, որ ծրագրով հատկացված ժամանակահատվածում հասցնելու էինք այդ պատճությունների միայն մի փոքր մասը գրանցել: Նոր և իին Մուշի կամ հայտնի և անհայտ Մուշի մասին մտածունքների մեջ ընկած՝ ինքս էլ չնկատեցի՝ ինչպես իջա մերենայից և քայլեցի դեպի տունը, բայց սրակվեցի, երբ լսեցի Յայրեթինի ողջույնի խոսքերը մեզ դիմավորող տանտերերին:

Շուշլու համընք քառասունն անց կին էր՝ միջահասակ, գլուխը ծածկած, արտահայտիչ, կամային ծայնով: Երկու երեխաների մայր էր. մի տղա ուներ, մի աղջիկ: Նրա ջերմ ողջույնների, բարի ժախտի, հուզված աչքերի, հյուրներների համբույրների շնորհիվ մեզ զգացինք ինչպես տանը:



Մեզ հյուրասենյակ հրավիրելով և համոզվելով, որ բոլորս հարմարավետ տեղապորվել ենք՝ նա իր դստեր հետ գնաց խոհանոց՝ մեզ համար թեյ բերելու, և ես հետևեցի նրան: Մեկս մյուսի լեզուն չգիտեինք և իրար չէինք կարող հասկանալ: Բայց նա այնքան հուզված էր, որ գրկեց ինձ և շերմորեն համբուրեց: Զգացվում էր, որ լսելու ենք մի մարդու պատմություն, որը փրկվել էր ցեղասպանությունից ու կյանքը շարունակել գլխիվայր շրջված, հայկականությունը կորցրած աշխարհում: Կողքի սենյակում 16 հոգի՝ Շուշլուի ամուսինը և որդին, բանավոր պատմության ամբողջ խումբը և մեր վավերագրական ֆիլմի անձնակազմը սպասում էին նրա խոսքին:

«Պապս յոթ տարեկան էր: Անունը Յուսսեյն էր: Նրա նախկին [հայկական] անունը չգիտեմ. այդպես էլ չասեց: Պապիս հոր անունը Յազար էր, հորեղբոր անունը՝ Սուլշը: Նրանք Մանոյի տնից էին՝ երկու եղբայրներ: Ինչ որ գիտեմ, պապիս եմ լսել: Նա երկու երեխա ուներ՝ մայրս և քեռիս: Քեռիս հինգ աղջկի ունի, երեք տղա: Մայրս էլ չորս տղա ունի, չորս աղջկի: Այսինքն՝ յուրաքանչյուրն ութ երեխա ունի: Յիմա ես պապիս եղբար եմ փնտրում: Լսել ենք, որ Յայաստանում է: Նա պապիս մեծ եղբայրն է, այն ժամանակ տասնյոթ-տասնութ տարեկան է եղել գնացել է սովորելու, և այլև լուր չեն ունեցել: Որտեղ էլ լինի, գոնե կարողանայինք տեսնել նրան, երեխաներին, թոռներին տեսնել»:

Շուշլուի մայրական պապը (Յազարի որդին) ճնվել էր Օսմանյան կայսրության Բինգյուլի գավառի Գուզի գյուղում: Թեև Շուշլուն փոքր է եղել, երբ պապը մահացել է, չափազանց երիտասարդ՝ վերջինիս իր անցյալի մասին հարցնելու համար, նա շատ ջերմորեն և սիրով է իշխում պապին և փայփայում է մորից իրեն հասած ցանկացած տեղեկություն:

«Նա կարծես իրեշտակ լիներ՝ ճեփ-ճերմակ. միջահասակ էր, բայց շատ լուսավոր մարդ էր: Շատ քիչ էր խոսում: Եթե մենք զոռով մի քանի հարց տար, երկու-երեք բար կասեր: Նա չէր կարողանում շատ խոսել»:

Այս ընթացքում Շուշլուի ամուսինը լուր էր, միայն երբեմն հարցեր էր տալիս և ժամանակ առ ժամանակ

լրացնում կնոջը: Յավանաբար իխունն անց տղամարդ էր՝ սկահեր, բարձրահասակ, կնոջ դիմաց հպարտորեն բազկաթորին բազմած: Նա էր, որ ասաց Յազարենց գյուղի (Գուզի) ներկայիս անվանումը և պատմեց Յազարի զբաղնունքի մասին: «Գյուղը հիմա կոչվում է Ասլարայա թոյու, Բինգյուլում է: Բայց կինս մի բան մոռացավ նշել, որ 1900-ականներին Գուզին շրջկենտրոն էր: Նրա պապը այդ շրջանի հոգենոր հովիվը էր»:

Շուշլու հանըմ. «Իմ մեծ պապը այդտեղի քահանան էր: Նա քաղաքապետ էր և շատ ազդեցիկ մարդ»:

Ամուսինը. «Գյուղի կեսը նրան էր պատկանում: Ասուն էմ՝ Յազարի գյուղն է»:

Շուշլու հանըմ. «Քանի որ նա և քահանան էր, և քաղաքապետը, և որովհետև նա մեծ մարդ էր, բոլորը գիտեին նրա անունը: Յիմա էլ են նրա մասին խոսում, ասուն են՝ դու Յազարի թոռն ես, նա մեծ մարդ էր»:

Ինձ թվում էր, թե Շուշլուն ու իր ամուսինը փոքր-ինչ չափազանցնում էին, որովհետև հոգևորականը հազիվ թե աշխարհիկ պաշտոն զբաղեցներ: Կարծում են՝ մարդիկ երբեմն ուրացնում են իրենց նախնիների կենսագրությունները, և եթե դրան ավելացնենք «հարուստ հայերի» մասին համընդիմանուր կարծրատիպը, կարելի է հասկանալ պատմության մեջ առկա խառնաշփոթը:

Ընտանիքում ամենաշատը Շուշլուի մայր Ոինդան էր փորձել իմանալ իր հոր անցյալի մասին: Նա նաև այլ հայերի հետ էր կապ պահպանում: Շուշլուի խոսքերով.

«Նրանք, ովքեր այստեղ մնացին, մորս հետ հանդիպում էին: Մենք գիտեինք նրանց: Օրինակ, Ֆատմա Սեֆոյի աղջիկը, նաև իմ սկեսուրի մոր ընտանիքը: Նրանց ընտանիքում էլ հայկական արյուն կար, բայց նա երիտասարդ տարիքում մահացավ, մենք նրան չենք տեսել: Նաև իմ քրոջ սկեսուրը: Նրա հին անունը Զարուն էր, հետո դարձրին Ասյա: Նրանք հարցուիրուն էին անում, փնտրում էին իրար, իրար հյուր գնում: Մենք ջահել, փոքր երեխեր էինք, երբ սենյակում մարդ չէր լինում, մայրս հարցնում էր. «Քանի՞ եղբայր եք եղել: Ի՞նչ պատահեց»: Իմ պապը յոթ տարեկան էր: Նա ցանկացել է փախչել, բայց չի կարողացել: Ասում էր. «Ես փախսա, բայց չգիտեմ մնացածի հետ ինչ եղավ»: Պապի մայրը այս դեպքերի ժամանակ արդեն մահացած է եղել, նրա մեծ քույրն իր ամուսնու հետ արդեն գնացել էր Յայաստան: Մեծ

քույրն էր: Չորս կամ հինգ երեխա էին, ես տեղյակ չեմ մնացածից: Այսինքն, չէր էլ պատմում: Ասում էր, որ մեծ եղբայր ուներ, որը գնացել էր Ստամբուլ սովորելու»:

Անգամ այսօր Թուրքիայի գավառներում հայկական ծագում ունեցող մարդկանց մեծ մասը վախտենում է խոսել իրենց էրենիկ պատկանելության մասին և թաքցնում է այն: Մուշի և Վերջինիս շրջակա գյուղերի պես փոքր համայնքներում, որտեղ բոլորն իրար ճանաչում են, շատ դժվար է ծագումը թաքցնել, և ննան վայրերում խտրականությունն ու այլատյացությունը շարունակում են ցավալի իրականություն մնալ:

Մուշի խանութեներում մեզ հաճախ էին հարցնում՝ որտեղից ենք: Մի խանութպան իմանալով, որ Յայստանից ենք, փակեց դուռն ու ասաց, որ ինքն էլ է հայ, բայց թույլ չտվեց, որ իրեն ձայնագրենք: Յայկական ծագում ունեցող մի ուրիշ խանութպան խոստացավ մեզ հետ գրուցել աշխատանքային ժամերից հետո և չնայած պայմանավորված ժամին եկավ մեր հյուրանոց, զգուշացրեց, որ պետք է շտապ ինչ-որ տեղ գնա և հեռացավ: Ցեղասպանության սարսափը և ամեն տեսակ խտրականություն տեսած վերապրողների և նրանց սերունդների կյանքում վախը դարձել է որոշիչ գործոն: Եթե նրանք երբեք պատճում էլ են իրենց պատճությունները, դրանք մնում են ընտանեկան ներ շրջանակում: Շուշլուի պապի պատմությունը բացառություն չէ:

«Երբ պապիկս փախսավ այդտեղից՝ Գուգիից, եկավ Օրուք: Օրուքից գնաց Կոշը, ենտեղից էլ անցավ Դերսիմ: Մուշի Դերսիմ գյուղը, ոչ թե Թունջելին: Կոշը գյուղի մոտ է՝ այստեղից երրորդ գյուղն է: Յիշա անունները փոխվել են. մեկը Վերին Կալեթեկ է, մյուսը՝ Ստորին Կալեթեկ: Այնտեղ մի ցեղի հետ է ապրել, նրանք մեծացրեցին պապիս: Ես ցեղը որ յայլա է գնում, զազաների են հանդիպում: Մրանք ասում են. «Եթե Յազարի որդուն տաք մեզ, ինչ որ ուզեք, ձեզ կտանք՝ տուն, հող, ինչ որ ուզեք»: Նրանք ասացին. «Կյանքներս կզոհենք, բայց այս տղային ձեզ չենք տա»: Անչափ շնորհակալ եմ նրանց, նրանք հոգ են տարել պապիս համար: Նա շատ ինքնամփոփ էր, կնստեր ու ժամերով թքեցի կիաշվեր: Մայրս հարցնում էր. «Քանի՞ երեխա եք եղել: Ի՞նչ մարդ էր քո հայ-

որ: Քեզ լա՞վ էր վերաբերվում, սիրու՞մ էր քեզ»: Բայց նա չէր խոսում: Յոջան ասել էր նրան, որ մեղսագործ կրաօնա: Այդպես նա չէր կարողանում ոչինչ ասել: Նրան ասել էին՝ ոչ ոքի չասի, որ ծնողները հայ են եղել: Այնքան են խղճում նրանց: Լաց գալիս է, ցավում եմ: Նրանք ասացին, որ երբեք չխոսի, ասացին որ դժոխք կգնա ու մեծ մեղսագործ կրաօնա: Պապս շատ երիտասարդ էր, և հոջան ասաց նրան. «Դու մահմեդական ես դարձել, էլ երբեք»: Դրա համար էլ նա չէր խոսում այդ մասին: Աստված ինչ ուզում է թող անի էր հոջաների հետ: Յոջաները այդպես արեցին, որ կառավարեն նրանց: Իրենց ձեռքի տակ էին պահում բոլորին»:

Շուշլուի ամուսինն իր հերին հետաքրքիր շեշտադրում արեց, երբ իր կինը խոսքն ավարտեց.

«Խսնդիր կրոնի մեջ չէ: Ես միշտ ասում եմ՝ մի՛ ուրացեք ինքներդ ձեզ: Յենց այս պատճառով մենք պետք ե անցյալը մի կողմ դնենք և գլորալացող աշխարհում նոր բաներից խոսենք: Մենք պետք ե ապրենք սիրո և համերաշխության մքնուրոտում, մեր մշակույթը, մեր ավանդույթները կիսենք իրար հետ: Իմ կիմն իսկապես շատ հավատացյալ է: Ղուրանը անգիր գիտի: Տեսեք, ես զգիտեմ, բայց նա գիտի: Նա օրը իմն անգամ աղորում է, ես՝ ոչ: Յենց գործը հասնում է հայրին, Յրանտ Դինքի սպանության համար մի շաբաթ լաց եղավ: Դա արյան մեջ է, ինչ-որ բան քաշում է քեզ: Այսինքն՝ նրանք, ովքեր զգացմունքներ ունեն, ազդվում են ինչ-որ բաներից: Տեսեք՝ ոնց է այս մոլի մուսուլման կիմը այդպիսին դառնում: Աստված տա՝ լավ բաներ տեսնենք: Նկատի ունեմ անցյալի սխալների մաքրումը և հասարակության մեջ առկա ճնշումն ու ատելությունը: Մրանց վերացումն առաջին հերին տեղացիներին է ձեռնոտու: Ուզում եմ ասել՝ պետք է կարողանանք այս բաները հաղբահարել, պետք է այս ֆեռալական և տգետ մտայնությունից ազատվենք: Ինչպես ասում էի՝ ո՞նց կարող ենք մենք միասին ապրել: Ո՞նց կարող ենք իրար սիրել: Այս հարցերի պատասխանները պիտի գտնենք: Տեսեք, ես Թուրքիայի Յանրապետության ժողովրդական [CHP] կուսակցության անդամ են: Ուրիշ մեկն այդքան խիզախտություն չէր ունենա, բայց ես ունեմ, որովհետև ես

խնդիր ունեմ պետության և հայերի հետ: Այդ դեպքերը տեղի են ունեցել 150 տարի առաջ: Այսօր ես ոչ ոքի հանդեպ ատելություն չեմ տածում: Ես բոլորին սիրում եմ՝ հանհային, հանհ բուրքին, հանհ քրդին: Եվ որովհետև ես բոլորին սիրում եմ, ես միշտ պատրաստ եմ բոլորի հետ համատեղ ապրել: Որովհետև ես որոշ բաներ հաղթահարել եմ:

«Նա օրը իհնգ անգամ աղոթում է, ես՝ ոչ: Չենց գործը հասնում է հայերին, Յրանտ Դինքի սպանության համար մի շաբաթ լաց եղավ: Սա գենետիկ մի բան է, ինչ-որ բան թեզ քաշում է: Տեսեք՝ ոնց է այս մոլի մուսուլման կինը այդախին դառնում»: Այս խոսքերը շարունակ գլխումն պատվում են: Խորապես կապված լինելով պապի հետ և հստակ իմանալով, որ ինքը հայ մարդու ժառանգ է՝ Շուշլու հանճմը պետք է որ երկար մտածած լիներ, թե ինչ է դա իր համար նշանակում: Թեև մեր գրուցք շատ երկար չեր, և նրա ինքնության հայկական կողմը մեզ հիմնականում անհայտ մնաց, մենք զգում էինք՝ որքան է այդ կինը ազդված այդ ինքնությամբ: Նրա ամուսնու խոսքերը, որոնք կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից, (ըստ Շուշլուի՝ ամուսնու մայրը նույնպես հայ էր), դրա ևս մի ապացույցն են:

Զրույցի ընթացքում Շուշլուն շարունակ կրկնում էր, որ ուզում է տեսնել պապիկի՝ 1915 թվին անհետացած եղբոր ժառանգներին: Այս փնտրությը, անշուշտ, խոսում է անձի ամենաբարձր մարդկային հատկանիշների մասին, բայց հետաքրքիր է՝ որքանով կարող ենք այս ցանկությունը վերագրել նրա ինքնության ճնշված շերտերին: Բանն այն է, որ իրենց հայկական ծագման մասին բարձրածայնող շատ մարդկանց նմանատիպ փնտրությունը Հայաստան էր բերել: Օրինակ՝ Յայրեթինը մի քանի անգամ է եղել Հայաստանում և բազմաթիվ նշեցիների է ճանաչում: Լինելով Հայաստանի Թալիհնի շրջանում՝ նա պատմել էր Շուշլուին, որ մշեցի հայերն այնտեղ են հաստատվել, և Շուշլուն հույս ուներ նրանց մեջ գտնել իր հարազատներին և միգուցե դրանով մեղմել մեծերից ժառանգած ցավը: Պատասխանելով մեր հարցին, թե ինչպես է պատկերացնում իր հայ ազգականների հետ հանդիպումը, Շուշլուն ասաց.

«Ես շատ եմ ուզում, գոնե կարողանայինք տեսնել նրանց, իմանայինք՝ որտեղ են ապրում, ինչպես են

ապրում: Ինչպես իմ մորեղբայրն է ինձ համար, այդպես ել իմ մոր համար այդ մարդն է: Յորիցդ շատ տարբեր չէ: Ի՞նչ տարբերություն կա մոր ու քեռու միջև: Բայց մորդ ու հորդ ընտանիքների մեջ մեծ տարբերություն կա: Կարն ու արյունը մարդուն դեպի մորական կողմն են ձգում: Մարդ ավելի նվիրված է նրանց, նրանց համար ավելի շատ է տառապում: Իհարկե հրական կողմի համար էլ ես ցավում, անհանգստանում, բայց այս մեկն ավելի սրտանց է:

Եթեք տարի առաջ գնացի շուկա: Նորից եկել էին [հայերը], ես էլ կանգնած իրենց էի նայում: Ինձնից մեծ էին՝ մոտ 45 տարեկան: Մտածեցի՝ հարցնե՞մ, թե՞ չէ: Մոտեցա, բայց չկարողացա հարցնել: Չետո շատ ափսոսացի, մտածեցի, որ եթե նորից տեսնեմ, անպայման կիարցնեմ: Ովքե՞՞ն են նրանք: Կիմանա՞ն արդյոք: Որովհետև եթե հարևանդ է, կիմանաս, չէ?: Ոնց որ ես գիտեմ Մուշի մարդկանց, գյուղերը, բոլորի մոտ այդպես է, չէ՞»:

Ի՞նչը կանգնեցրեց նրան: Մի՞թե զուտ ամորֆսածությունն էր: Յազիվ թե... Լեզուն նույնպես չէր կարող լուրջ խոչընդոտ լինել: Ուրեմն ի՞նչը հետ պահեց նրան: Պատասխանը մենք այդպես էլ չիմացանք: Ոչ էլ իմացանք՝ ինչպես էր Շուշլուն արտահայտում իր ինքնության հայկական կողմը տանը կամ հասարակայնորեն: Չիմացանք՝ ի՞նչ են զգում նրա երեխաները՝ հյուրընկալելով հայ և թուրք ուսանողների մեր խմբին և տեսնելով, թե ինչպես է իրենց մայրն իր պապի մասին պատմում: Արդյո՞ք դա նրանց համար ընտանեկան պատմությունը լսելու հերթական հնարավորությունն էր, թե՞ հազվագյուտ դեպք: Կարծում եմ՝ պետք է երկրորդ, միգուցե երրորդ անգամ այցելեինք Շուշլուին նման խորը անձնական գրույցի համար, բայց չկարողացանք և Աստված գիտե էլ երբ այդպիսի հնարավորություն կունենանք: Այնուամենայնիվ մի բան կա, որ դեռ կարող ենք անել Շուշլու հանճմի համար՝ պահել խոստումը և շարունակել փնտրել Բինգոյլի գուզի գյուղի Մանոյի որդի Յազարի ազգականներին:

**Սերջան Չինար (Թուրքիա)**

## «Գուցե պապիս պատմածն ավելի գեղեցիկ լինի, քան իմ տեսածը»

Տարոն Մուրադյանը ծնվել է Հայաստանի Թալինի շրջանի Իրինդ գյուղում 1950 թվականին: Նա ապրում է իր հայրենի գյուղում, բայց աշխատում հարևան Դաշտադեմում, որտեղ էլ զորուցեցինք նրա հետ: Տարոնի հայրական կողմը Մշո Արան գյուղից է, իսկ մայրականը՝ Մշո Հովարակ գյուղից: Նրա պապը՝ Սերոր Մուրադյանը, սովորել է Մշո Արաքելոց վանքում: Պապը 14 տարեկան էր, երբ իր աչքի առաջ սպանվեցին իր եղբայրները, քոյլերն ու ծնողները: Ափա թե ինչպես է ներկայացնում Տարոնն իր պապի փրկության պատմությունը.

«Պատմում էր, որ ժողովուրդը փախել են ստեղ, փախել են ընդեղ, հավաքել են, լցուել են եկեղեցին, դուռը փակել են ու վառել են, ինքն էլ դրանց մեջ, իրա բախտը ներքանով բերել, որ ընկել ա դրան մոտ, դե հասկանալի է, որ ճոցով, ուշագնաց ընկել են դիակներն իրար վրա, տակինը, օդի մուտք չի եղել, ուշագնաց է եղել, առավոտը, որ դրան արանքից թարմ օդ ա եկել, սրափել ա, ուշքի ա եկել, սողալով դուրս ա եկել, փախել ա»:

Սերորն իր գյուղից միակն էր, որ փրկվեց: Այնուհետև նա ապաստան է գտնում կողքի գյուղում՝ իրենց քուրդ քրիվայի տանը: Քրիվան Սերորի ինքնությունը թաքցնելու ձև է գտնում՝ վերջինիս արգելելով հայերեն խոսել:

«Ընդունում է քուրդը, ճանաչում է, ասում է, որ Վարդանի տղեն է՝ Սերորը, ասում է Սերոր, սրանց հետո դու Յասան ես, Սերոր չես, ով ինչ կհարցնի, դու չպատասխանես, խուլ ու համր կձևանաս: Ու ինքը քրդերեն չի իմացել, որ համկարծ չիմանան, թե հայ ա, կարող է սպանեն, գառները տալիս է ձեռքը, քոլուսը դնում գլխին, ասում՝ դու դառնում ես իմ գառներն արածացնողը»:

Տարոնը պատմում է, որ իր պապը մեկ կամ երկու ամիս մնացել է քրիվայի գյուղում, չնայած գյուղացիներից ոնանք գլխի էին ընկել նրա ծագման մասին: Մի օր Սերորը գյուղում հայ գաղթականների խումբ է տեսնում՝

իիմնականում կանայք և երեխաներ: Գաղթականների մեջ քայլելիս տղան հանկարծ հանդիպում է իր հորաքրոջ աղջկան՝ Էլիկին, որին ինքը հորաքրոյր էր կոչում, և որի ամուսնուն մինչ այդ սպանել էին: Յորաքրոյրը ճանաչում է նրան և հարցնում՝ արդյո՞ք նա Վարդանի որդին է, բայց Սերորը վախենում է խոսել և դիմում է փախուստի: Յաջորդ օրը նա վերադառնում է գաղթականների մոտ, և հորաքրոյրն ասում է, որ չվախենա, և որ իրենց խումբը շարժվելու է կեսօրին: Ըստ Տարոնի՝ պապը երկմտում էր՝ մնալ, թե՝ միանալ խմբին.

«Ասում է, արածացնում եմ, մեկ էլ տեսա գաղթականությունն արդեն շարժվում ա, հիմա ես մտածում եմ՝ գնա՞ն, թե՞ չգնամ: Դե համ պարտքի զգացում կա. դե էլ մարդու գառներն են չչ, բողեմ անտեր, ուր՝ գնամ, համ էլ վախ կա, ու ասում է հրանք արդեն կորան հորիզոնում, վերցրեցի փափախս, խփեցի գետնին, վագնվագ գնացի, հասա իրանց՝ թե ես Սերորն եմ»:

Տարոնի խոսքերով իր հարազատները, աներևակայի ծանր ճանապարհ կտրելով, Թալին են հասել միայն 1920 թվականին:

Սա է Տարոն Մուրադյանի նախնիների փրկության պատմությունը: Այս պատմությունը մտապահելով՝ կցանկանայի կենտրոնանալ մեր գրուցից մյուս հատվածների վրա, որոնք շատ կարևոր են պատմությունների սերնեսերունդ փոխանցման և քուրքերի մասին պատկերացումների կառուցման ներքացքը հասկանալու համար: Այս համատեքստում կըննարկենք նաև Խորհրդային Միության պետական քաղաքականության դերը պատմությունների փոխանցման և «քուրքի» պատկերի ձևավորման գործում:

Մեր գրուցակիցները իիմնականում ցեղասպանության վերապրողների երրորդ սերնդին էին պատկանում: Դեպքերի ժամանակագրական հեռացվածությունը կարող է ազդել պատմության փոխանցման և պահպանան ձևի վրա: Այս փաստը, որ ցեղասպանությունից հետո շատ ժամանակ է անցել, կարևոր է և կարող է ազդել մի սերնդից մյուսին փոխանցվող պատմությունների ձևավորման վրա: Պետք է նաև հաշվի առնել հիշողության տարբեր կառուցվածքներն ու շերտերը, ինչպիսիք են անձնական և ընտանեկան փորձը, հասարակական դիսկուրսը և պետական քաղաքականությունը:

Պատմությունների սերնդեսերունդ փոխանցման ընթացքում հնարավոր են որոշ ընդհանրացումներ: Որոշ մանրամասներ ականատեսների համար կարող էին ավելի կարևոր եղած լինել, քան պատմությունը պատմողների: Ժամանակի ընթացքում պատմությունը կարող է պարզեցվել, որպեսզի պատմողի համար ավելի հեշտ լինի այն փոխանցելը: Ին ունեցած զրույցներում նկատելի էին և մանրամասների պարզեցումը, և պատմության որոշակի մասերի շեշտադրումը՝ այն ավելի հիշարժան դարձնելու համար: Դետևաբար պատմելուն ստվրաբար բնորոշ են ընդհանրացումները՝ ներդաշնակ պատմություն ստեղծելու համար: Սակայն որոշ դեպքերում մանրամասնելը պատմելու կարևոր գործիք է:

Նեզուն և բառամբերը նույնպես վերապատմելու կարևոր բաղադրիչներ են: 1915-ին առնչվող պատմություններում առկա են բազմաթիվ թուրքերեն բառեր, որոնք այլև չեն օգտագործվում ժամանակակից թուրքերենում: Կարծում եմ՝ սա կարևոր հանգանանք է, քանի որ տարբեր սերունդներ այս եզրույթների հետ կապված տարբեր գործորդումներ ունեն, և այս բառերը տարբեր

ինաստներ կարող են ունենալ անցյալի ու ներկայի բառամբերքում:

Թուրքի՝ ընդհանրացված ինքնության պատկերը հաճախ էր հանդիպում հարցազրույցներում: Եր մեր զրուցակիցները պատմում էին ցեղասպանության շրջանի Մուշի մասին, նրանք մարդասպաններին և եղեռնագործներին որպես թուրք էին սահմանում: Սակայն Մուշի ժողովրդագրական կառուցվածքը վկայում է, որ և ցեղասպանությունից առաջ, և հետո քրդերն են կազմել տեղի ոչ քրիստոնյա բնակչության մեծամասնությունը:

Վերադարձնաբ Տարոն Մուրադյանի պապի պատմությանը, որտեղ նա ասում է. «Պապս էլ ծնվել է 1901 թվականին Մուշի Արան գյուղում: Սովորելիս է եղել Մշո Արաքելոց վանքում: 15 թվականին ինքը 14 տարեկան, եր որ սկսվել է կոտորածը, եկել է գյուղ, գյուղում է եղել էդ ժամանակ, իրա աչքի առաջ բոլորին սպանել են, իրա եղբայրներին, քոյրերին, հորը, մորը, ինքն էլ դե 14 տարեկան, կարծահասակ: Թուրքերն ու քրդերը հավաքել են բոլոր կանանց, երեխաներին, ծերերին գյուղի վաճ՝ եկեղեցին ու փակել, փառել են»: Մի ուրիշ դրվագում



նշում է. «Յա, Արածանին, Սեղրագետը, ասում էր էդտեղ կա ձուկ, մի տեսակ ձուկ, որը գանգի վրա, գանգոսկրին խաչ կար, ոսկորը խաչի նման էր, ասում էր դրա համար էլ քուրքերը չեին ուտում, ասում էին՝ Էր քրիստոնեական ձուկ ա: Ասում է՝ տեսնես հիմի կամ շատացել են, որ չեն կերել, կամ էլ լրիվ ոչնչացել են»: Այս հատվածներում քուրքի պատկերը միահյուսվում է մահմեդական ինքնության հետ:

Տարոնը խոսում է նաև Մուշի շրջանում ապրող քրդերի մասին: Նրա պատմության մեջ որոշ քրդեր տարբերվում են զնիանրական պատկերից և դիտարկվում որպես հայերին օգնած մարդիկ: Տարոնը պատմում է.

«Դե ինքը փաստորեն մազապուրծ փախել ա, առավոտ փախել ա և դուրս է եկել սարերը: Ինքը իմացել է, որ հարևան չգիտեմ ինչ գյուղի մի հատ քուրդ իրանց քիրվա է եղել, քիրվա գիտեր չէ՝, մոտիկ մարդ, պաշտպան լինեն, մոտիկություն են արել: Գնում է էդտեղ: Ընդունում է քուրդը, ճանաչում է, ասում է, որ Վարդանի տղեն է՝ Սերոբը, ասում է՝ Սերոբ, սրանից հետո դու Յասան ես, Սերոբ չես, ով ինչ կիարցնի, դու չպատասխանես, խուլ ու համր կձևանաս: Դե ինքը քրդերեն չի իմացել, որ համրած չիմանան, թե հայ ա, կարող է սպանեն, գառները տալիս է ծեռքը, քուրսը դնում ա գլխին, ասում ա, դու դառնում ես իմ գառներն արածացնողը»:

Կարծում եմ՝ այստեղ իրավիճակի եզակիությունը ցույց տվող ենթաթերաստ կա: Յաջորդ նախադասությունից հասկանում ենք, որ ընդհանուր առնամբ քրդերը հայերի դեմ էին տրամադրված. «Բայց ասում ա, էլ քրդու լամուկները գլխի էին ընկել, որ ես հայ եմ, ասում ա, որ ես գնում էի, իմ հետևից խփում էին քարով, ասում էին «Քըլը»: «Ֆըլը» նշանակում է «հայի տղա»: Միևնույն ժամանակ հետաքրքրական է Տարոնի պապի՝ իր ինքնությունը բացահայտելու վախը, նույնիսկ երբ հանդիպում է իր ազգականներին: Նա երկնտում է՝ արդյոք պետք է մնա՝ և պաշտպանի՝ քուրդ քիրվայի ունեցվածքը, թե զնա խմբի հետ: Նրա՝ քիրվայի հանդեպ ունեցած պարտավորության զգացումն ակնհայտ է: Տարոնի պատմածից երևում է, որ նրա պապը շատ է վարանում մինչև որոշում կայացնելը: Զնայած այս իրադարձությունները տեղի էին ունենում ջարդերի ժամանակ, նրա որոշման վրա ազդում էր

քրդի ունեցվածքը պաշտպանելու ցանկությունը:

Տարոնի՝ քուրքերի ընկալումը երևում է նաև, երբ նա պատմում է իրենց գյուղում ապրիլի 24-ի հիշատակման արարողության մասին:

«Մեր գյուղում մի բլուր կա, եթե տեսել եք: Տանջանքով, թե ոնց եղ մեծ կալումները հանում դնում ենք ընդեղ: Գիշերը վառում են: Վառում են, որ քուրքերը տեսնեն, որ մենք կանք: Սի հույսներդ դրեք, որ մենք չենք իհշում, կամ չգիտեմ Մենք կանք»:

Այս ծեսը տեղի է ունենում հայ-քուրքական սահմանի վրա: Հստակ է, որ Տարոնի կարծիքով սահմանի մյուս կողմում միայն քուրքեր են ապրում, և նա իր գոյությունը հակադրում է նրանց գոյությանը:

Մյուս կետը, որին կուզեի անդրադառնալ այս պատմության մեջ, ներկայիս քաղաքական համատեքստն է, որն ի հայտ է գալիս, երբ Տարոնը խոսում է Ղարաբաղյան շարժման մասին: «Ղարաբաղը մերն ա, եղ հայրենասիրություն էր: Բայց քանելելուն, իշխանափոխությանը դեմ եմ եղել», - նա կարծեն միահյուսում է քաղաքական դիրքորոշումն ու պատմությունը, երբ ավելացնում է. «Ես գիտեմ, որ եթե չպայքարենք, ոչ մի բան էլ չի լինի: Եթե չպայքարենք, եթե հիշողություն չունենանք, եթե մեր էրեխանց մեջ չսերմանենք, ոնց որ մեր պապն ա մեր մեջ սերմանել»:

Այս ծրագրի ընթացքում մի ընդհանուր միտում նկատեցի, որ մարդկանց քաղաքական հայացքները ձևավորվում էին անցյալի փորձի և հիշողության հիման վրա: Երեխաների քաղաքական հայացքների ուղղորդումը և պատմության հիման վրա քաղաքականության կառուցումը ազգայնականության տարածված ուղղագծերից են և կիրառվում են նաև թուրքիայում: Ինձ մտահղում է այն, որ եթե պատմությունը շարունակի ուրվագծել ամենօրյա կյանքը և քաղաքականությունը, հաշտության հասնելու որևէ հնարավիրություն չի մնա, որովհետև պատմությունը կդառնա ստատիկ և թույլ չի տա առաջ շարժվել: Այս իրավիճակում անհնար է ելակետ կամ միջանկյալ կետ գտնել:

Սահմանված կարգն ու ինքնությունները շարունակում են կառուցվել պատմական փաստերի հիման վրա, իսկ ներկայում տեղի ունեցողը հաշվի չի առնվում: Տարբեր ինքնությունների հանդեպ ընդհանրացված մոտե-



ցումները և ազգային պատկանելության զգացումը կարող են վիճարկվել նիստական իրադարձությունների հանդեպ քննադատական մոտեցման արդյունքում։ Այլապես պատմությունը բեռ է դառնում մեր ուսերին և ըստ իս անհնար է դարձնում հաշտությունը։ Այս միտքը պետք չէ ընկալել որպես ցեղասպանության հանդեպ ժխտողական մոտեցման մաս։ Պետք է միջանկյալ ճանապարհ գտնել պատմության բեռը կրելու և մոռանալու միջև։ Նկատի ունեմ, որ պետք է փորձել չընկնել երկու կողմերի պաշտոնական դիսկուրսների ազդեցության տակ։ Իմ կարծիքով սա կարևոր նախապայման է հաշտեցման համար։ Տարոն Մուրադյանի կարծիքով իր երեխաները հայրենասեր են, քանի որ նրանք գիտեն իր պապի պատմությունը։ Երբ նրան հարցրինք, արդյո՞ք իր

երեխաները գիտեն իր պապի պատմությունը, նա ասաց. «Դա, բա ոնց չգիտեն։ Տղիս, ոդել, ստիպել եմ, որ կարդա։ Բա ո՞նց չի կարդացել։ Տղիս հայրենասեր տղա է։ Ըստ նրա՝ պատմությունը իմանալը հայրենասիրության բաղկացուցիչ և ցուցանիշ է։

Ավելին, ցեղասպանությունը հիշելը խորհրդային կարգերին դիմադրելու ձև էր։ Մինչև 1965 թվականը խորհրդային Միության խիստ քաղաքականությունը ցեղասպանության հիշատակման հարցում հայերի բողոքն ու դիմադրությունն էր առաջացնում։ Տարոնը պատմում է՝ ինչպես էր իր պապը Արևմտյան Դայաստանի մասին արգելված գրականություն վնտրում։ «Պապս նաև, որ գրագետ էր, ճարում էր եղ երգի մասին արգելված գրականություն, Սասունի պատմությունը ճարեց, բերեց, եղ

թղթերի մեջ հատուկ պահում էր խնամքով, դնում լամպի լույսի տակ, կարդում էր...ամեն մարդու չեն տվել, վստահելի մարդ պետք է լինի, և երեխանց տանում նստցնում էր, կարդում էր»:

Այս դիմադրությունն ուղղված էր մշակութային և պատմական մի շարք երևույթների պետական մակարդակով լրեցնելու դեմ: Դիմադրությունը պետք չէ հասկանալ միայն որպես պետական ուժերի հետ փաստացի առճակատում, այս պատմությունները կարդալը նույնպես բողոքի դրսուրում է: Եթու Տարոնը պատմում էր իր և իր համագյուղացիների ջանքերով Ցեղասպանության և Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ զոհված համագյուղացիների հիշատակին կանգնեցված հուշարձանի մասին, նա նշեց. «Այստեղ մի սկ քար կադրած: Ես քարի վրա նախատեսված էր Սոլոյնոն Թեհլերյանի նկարը դնել, որպես վրիժառու, թե մենք կանք... Որտեղ գրված էր «Մորթեցին մի ող ժողովուրդ», ուզում էին Սոլոյնոն Թեհլերյանի նկարը դնել: Չթողեցին»:

Այս հատվածը ցոյց է տալիս, թե ինչպես էին մարդիկ հակադրվում խորհրդային քաղաքականությանը՝ ակտիվորեն հիշելով պատմությունը. գյուղացիների հավաքած գումարով կանգնեցված հուշարձանը նվիրված էր և Երկրորդ համաշխարհային պատերազմի, և ցեղապանության ժամանակ զոհված մարդկանց հիշատակին: Գյուղացիներն ուզում էին Թեհլերյանի նկարը դնել հուշարձանի կենտրոնում՝ կարծես ասելով, որ նրանք կռվել են ԽՍՀՄ-ի կողմից և իրենց դահիճների դեմ: Բայց Թեհլերյանի նկարով հուշարձան ստեղծողների մտայնությունը վրեժի գօացում է պարունակում, և այս իրավիճակը մշտական հակամարտություն է ստեղծում և վերստեղծում Արարատի Երկու կողմերում:

Վերջում Տարոն Սուրաղյանը խոսում է 1945-ից հետո քրենի կողմից հգիրուն սկսված բնակելի շենքերի շինարարության մասին (Թուրքիայի կառավարությունը այդպիսի շինարարական ծրագիր ուներ, և Տարոնը նշում է դա) և այստեղ մատնանշում խորհրդային Միության դերը: Նա պատմում էր, որ իգիրում շինարարությունը սկսվեց միայն այն քանից հետո, երբ Կոսիգինը (ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահը) գնաց Թուրքիա և ասաց, որ իրենք ոչ մի պահանջ չունեն:

«45 թվին ստեղի՝ Հայաստանում, գտնվում էին զորքեր՝ սովետական զորքեր, որ Թուրքիան՝ որպես

Գերմանիայի դաշնակից անընդհատ էր զորքերը պահում էին ստեղի, լարված դրություն էր՝ հանկարծ շիարձակվեն, իիմի Ստալինի մտածողությունն էր, որ Արևելյան Հայաստանին միացնի Արևնոյան Հայաստանը: Արդեն Արևնոյան Հայաստանի գործկումին նշանակել էին: Էլի Ամերիկայի պրիզիդենտը՝ Տրումենը, չքողեց, ոումբը զցեց նապոնիայի վրա, ստեղ է զգուշացրեց, որ տեսն բան չանես...ստեղ էլ հայերի բախտը չբերեց»:

Վերջին Երկու նախադասություններից հետևում է, որ նապոնիայի վրա Երկու միջուկային ռումբ նետելն ընկալվում է որպես հայերի նժբախտություն, որովհետև դա խանգարեց Արևմտյան Հայաստանը վերադարձնելու ծրագրին: Ստացվում է, որ ատոմային ռումբերը և միջուկային պատերազմը նրա համար նաև ազգային իմաստ ունեն:

Անփոփելով կուգեի վերաբառնալ վերնագրին: Տարոն Սուրաղյանը հետևյալ միտքն արտահայտեց, Երբ պատմում էր Մուշում աճող մի բույսի՝ գասպեի մասին.


«Պատմում էր [պապը], անընդհատ պատմում էր, մեր արյան մեջ մտած էր դա...հիմի էս քաներից հետո ես անընդհատ ասում եմ գնամ, գնամ, հետո մի տեսակ էլ քան կա էլի մեջս... առաջին՝ գնամ, տեսնեմ, կարող ա պապիս պատմածը ավելի գեղեցիկ է, քան թե տեսնեմ, հիասքափեմ, ավերակներ տեսնեմ, հետո չգտնեմ իմ նախնիների գերեզմանը, տունը»: Երբեմն անցյալը պատմություններում պահելն ավելի խելամիտ է, քան իրականության հետ անմիջականորեն առերեսվելը, որովհետև մարդիկ ուզում են իրականությունն ավելի գեղեցիկ կառուցել:

# Գանձերի հետևից Ելեմ Նազլը Թաղդեմիր (Թուրքիա) ՈՒԽԵՔ Իսաջյան (Դայաստան)

## Գանձեր որոնողները Մուշում

Մուշ քաղաք և Սշո դաշտ այցելող հայերի թիվը տարեցտարի ավելանում է: Իրենց նախնիների տները փնտրող հայ գրսնաշրջիկների հանդիպելը՝ ծեռքներին ծեռագիր կամ տպագիր քարտեզներ, հետզինետ Մուշի համայնապատկերի սովորական մաս է դաշնում: Այնուամենայնիվ հայ-թուրքական համատեղ խմբերի համեմատաբար երկարատև այցերը դեռ շատ հազվաբեա են:

Ուստի 2011 թվականի հոկտեմբերի վերջին Մուշում մեր խմբի հայտնվելը մեծ «իրադարձություն» էր քաղաքի և արհասարակ ամբողջ շրջանի համար: Մուշում, հավանաբար, նման բան դեռ չէր եղել. մենք ոչ միայն հայ և թուրք ուսանողների խումբ էինք, այլև համատեղ հետաքրքրվում էինք Մուշի պատմությամբ՝ էլ ավելի գրավելով տեղացիների ուշադրությունը: Նորությունը, որ «քաղաքում հայ և թուրք ուսանողներ կան», միանգամից տարածվեց: Երբ սկսեցինք զյուղեր այցելել և տեղացիների հետ զրուցել հայերի մասին, մեր զրուցակիցների մտային քարտեզների վրա նկատեցինք գանձերի հետ կապված բազմաթիվ դրվագներ: Շատերը բացեիքաց հարցնում էին՝ արդյոք եկել ենք ոսկի փնտրելու՝ և ուստի արդյոք մեր պատերի գծած քարտեզները: Տեսի



հայ բնակիչների հարստության և ֆիզիկական հատկանիշների մասին պատկերացումները միֆականացված և ուռացված դեռևս ապրում են այս շրջաններում, իսկ հայատառ քարտեզներն ու այն, ինչ մնացել է հայկական մշակույթից՝ համայում պատճության այս խորհրդավոր և երևակայական կողմերը:

Երբ Մուշի իին թաղում մեր հերթական գրուցակցին էինք փնտրում, միջին տարիքի մի տղամարդ, հետաքրքրվելով մեր ծրագրով և ինանալով, որ խնդիր մեջ հայ ուսանողներ կան, ջերմորեն իրենց տուն հրավիրեց: Մեր խոսակցությունը իիմնականում հայերի և հայկական բնակավայրերի անվանումների շուրջ էր: Շատ զգացված էինք մեր գրուցակցի հյուրընկալությունից և շրջակա գյուղերի ու կորողների մասին պատմելու պատրաստականությունից: Ինացանք, որ որոշ տեղանուններ առ այսօր իին՝ հայկական անուններով են կոչվում: Զրոյիշի ընթացքում, սակայն, տանտերը հաճախ հարցում էր մեզ հետ բերված քարտեզների մասին: Սա քական զարմանալի էր, որովհետև մեր կարծիքով դրանք հասարակ, ցանկացած գրախանություն վաճառվող քարտեզներ էին: Միայն երկրորդ այցելության ժամանակ էր, որ տանտերը նայեց քարտեզին և ասաց.

«Իհարկե հայերը գնացել են նրանք գնացել են: Այն ժամանակ քարտեզն այսպիսին էր, երբ նրանք գնացին, տեղանքն այսպիսին էր: Հատկապես այս շրջանի տեղանունները: Ոչինչ չի փոխվել: Ասացեք նրանց, որ ոչինչ չի պատահել»:

Հետաքրքիր էր լսել, որ մարդիկ դեռ իին անուններն էին գործածում, քանի որ պաշտոնական քարտեզներում տեղանունները կամ փոխված են, կամ թրքացված տարբերակով են գրվում: Հետաքայում պարզեցինք, որ սա միակ դեպքը չէր, և Մուշում բազմաթիվ մարդիկ օգտագործում էին գյուղերի նախկին՝ հայկական անունները: Մինչ տանտերը խոսում էր քարտեզի և տեղանունների մասին, նրա կիմք մեզ.

«Երանի մյուս անգամ կարողանանք սարերը գնայ Մարդիկ լիքը ոսկի են գտնում, այսինքն՝ փորում-հանում են: Արուների, աղբյուրների միջից, որ մաքուր ջուր է գալիս, այդ տեղերում ոսկի է թաղված լինում: Բոլորը դա գիտեն... Արվեստի գործեր... Նրանք ոսկի

են հորել, վրան ծածկել ու նշաններ թողել: Փորած տեղերի մոտ հայերներով նշաններ են արել: Սարոնիկ շատ են փորփորում, մասն են գալիս: Հայաստանը [Ծկատի ունի հայերը] գալիս է: Հայաստանը թուրքերի հետ գալիս, շրջում է, հետո տարբեր իրեր են հանում, փորում-հանում են: Հայաստանի հաշվին թուրքերը հարստանում են: Հայաստանից եկողները քարտեզներ են բերում, նրանք գիտեն իրենց պատերի ու գյուղերի անունները, նշանների տեղերն էլ գիտեն՝ փորում-հանում են: Ասում են, որ իրենց [հայերի] պատերը գիտեին միգուցե ասել են իրենց թոռներին նշանների տեղերը: Միգուցե եթե նիշասին փնտրենք, մի բան գտնենք»:

Ահա այսպես հասկացանք՝ ինչպես են Մշո դաշտի բնակիչներն ընկալում հայ գրոսաշրջիկներին՝ իրենց քարտեզներով և տարօրինակ նշաններով, որոնք իրականում պարզապես հայատառ նշված տեղանուններն են: Մի քանի հարցազրույցից հետո պարզվեց, որ տեղացիները ոչ միայն «ոսկի փնտրող» մարդկանց են տեսել, նրանք նույնիսկ «ոսկի» գոտած մարդկանց պատմություններ գիտեն: Նախկին հայկական գյուղերից մեկում ծագումով չերքեզ մեր գրուցակիցը Մուշի հայերի մասին խոսելիս մի պատմություն հիշեց.

«Հողը փորում ենք, հայերի դրամն ու փամփուշտներն են դուրս գալիս: Մեր տան ետևում քույրս լրի էր ցանել: Մի օր ջրում էր, ջուրը բացել, թողել-գնացել էր: Հետո երբ նոյն տեղում ակոս է բացում, որ բոյսը լավ ջրվի, ոսկու մի մեծ կտոր է գտնում, երկու ապարանջան, նաև մարդու դիակ և նրա շորերի կոճակները: Կոճակները կաել էին ոսկորներին: Երկի էր մարդը փախչելիս է եղել, բայց մահացել է, ու ապարանջանները գրաբանում են մնացել»:

Այսպիսով, ոչ ոսկիների պատմություններն են լոկ մարդկանց երևակայության արդյունք, ոչ էլ քարտեզների ու գանձերի որոնման պատմություններն են պարզապես առասպել: Նման պատմությունները ցույց են տալիս, թե ինչպես են մարդիկ հիշում անցյալը և մինյանց այդ անցյալում: Այս պատմությունների միջոցով մենք հասկացանք, որ տեղացիների պատկերացումներում հայերը հարուստ են, իսկ որոշ մարդիկ հարստությունը



Կապում էին նրանց աշխատասիրության հետ: Տեր առաջն զրուցակի կինն այսպես ասաց. «Ի տարբերություն թուրքերի՝ հայերն ուժեղ էին, դրա համար էլ այդքան ոսկի ունեին: Նրանք շատ, ավելի շատ էին աշխատում, քան մենք»:

Որոշ մարդիկ, ինչպես մեր հերթական զրուցակիցը Սուշի գյուղերից մեկում, անգամ փորձում էին բացառիկ, թե ինչու էին հայերը ստիպված թողնում իրենց ոսկին:

«Այս կողմերում ոսկի փնտրելը շատ տարածված է. մարդիկ հայերի թողած ոսկին են փնտրում: Ես էլ հարցնում եմ՝ երևէ մտածե՞լ եք՝ ինչու են այդ ոսկին թողել: Ինչու՞՝ Կարող էին չէ՞ այդ զարդերը վրաները կապել ու իրենց հետ տանել: Ինչու՞՝ են այստեղ թողել: Որովհետև պետությունը աքսորի մասին օրենք ընդունեց»:

Ինչպես տեսնում ենք, միֆերը անցյալի մասին սոցիալական հիշողություն և երևակայության շերտեր են ստեղծում:

Դետաքրքիր է, որ համընդիանուր պատկերացում կա, թե հարստությունը պահված է հայկական լրված եկեղեցիների և վաճքերի ավերակների մոտակայքում: Այս կարծիքը միգուցե որոշ չափով փաստարկված է, որովհետև եկեղեցիների շուրջը, որպես կանոն, թաղում էին հարուստ մարդկանց: Հանրահայտ Մշո Սուրբ Կարապետ վաճքի ավերակների վրա կառուցված Չենգիլի գյուղի բնակիչները փորձեցին «գանձեր» վաճառել մեզ և ասացին, որ ինչ-որ տարօրինակ հայեր պարբերաբար իրենց գյուղ են գալիս՝ ոսկու փնտրությով: Այլ դեպքեր էլ կային, երբ մեզ ասում էին, որ գանձերը պահված են եկեղեցիներում: Գյուղերից մեկում տեղի երեխաների հետ զրույցն արտացոլում է եկեղեցիներն ու վաճքերը գանձերի հետ կապելու մտայնությունը:

Հարց. Հիմա այստեղ հայեր չեն ապրում, բայց անցյալում ապրում էին: Մեզ նման այցի եկող հայեր կա՞ն: Մենք Ստամբուլից ենք եկել:

- Այո՞:
- Նրանք նախկինում էլ էին գալիս:
- Մի քանի տարի առաջ էլի էին եկել:

Հարց. Ի՞նչ են անում, երբ գալիս են:

- Լուսանկարում են:
- Եկեղեցին են նկարում:
- Երբ եկել էին, եկեղեցում խոտ չկար, մերս մտան և միջի նշանները նկարեցին:

Հարց. Պարզ ա: Իսկ գիտե՞ք՝ խոտի տակ ինչ ա: Երբեւ տեսե՞լ եք:

- Չե՞: Բայց ասում են՝ մեջը ոսկի կա:
- Տենց են ասում:

Հարց. Եկեղեցու տա՞կ:

- Ընթաց Ասում են՝ այնտեղ գանձեր, ոսկի կա:
- Տակից էլ դուռ է բացվում:

Հարց. Ուսկին դեռ այնտե՞ղ է:

- Զգիտենք:
- Յա՞:
- Քրիստոնյաներն են պահել:

## Մուշից Հայաստան

Մենք կարծում էինք, որ «գանձերի պատմությունները» միայն Մուշին են հատուկ, բայց արի ու տես, որ Հայաստանում դրանք նույնպես ընտանեկան գրույցների առարկա են: Ոսկեհասկ գյուղում յոթանասուներկուամյա Դանիել Դանիելյանը կարոտով էր խոտում իր պասի մասին, նրա պատմածներից հիշում էր Մշո Բուլանըի բերդի արտերը, խաղողի այգիներն ու փերակները, բայց նի պահ ընդհատելով նկարագրությունը՝ հետևյալ դրվագն է պատմում.

«Պապ ունեինք մեզի քիչ հեռու, արդեն մերնելու վրա է, զարկե ծընգներուն՝ այս Խչկա ագոն, Խաչիկի ագոն: Խաչիկի ագոնը ծյունն որ կիալի, շուտ կրացվի, եթ նաև ու բան կըրնան արդեն գնան, եղի լավ տեղ է եղել, ինքը փախտեփախի ժամանակ ոսկի է ունեցել, բաղել է ըստեղ: Քերս կըսեր հիմա որ էրթամ,

կգտնեմ: Յոթ դայիշ էր մարդը չափել է, հաշվի առնելով, որ հանկարծ վարելու խոտը չկպճի, թաղել է, կըսե այս Խչկա ագոն, Խչկա ագոն: Կըսեն այ կյակե, շատ բաժինը պապ չեն ըստ մեծերին, կյակե են ըսել, կյակո-բրո, եդ իհարկե քրդերեն է, հաստատ քրդերեն է: Այ կյակո, էն լավ տեղերը, էն լավ աղբյուրները, խաղողի այգիները, էն լավ տեղերը չպատմիս՝ հա Խչկա ագոն, Խչկա ագոն: Կըսե, լատ, ոսկին եմ բողել: Ինչքան է բողել, ինչքան է փորել՝ չգիտեմ»:

Ուշագրավ է, որ Հայաստանում ապրող մարդիկ, որոնք խոսում էին ընտանեկան կորած հարստության մասին և սերնդեսերունդ փոխանցում այդ հիշողությունը, հույս ունեին, որ մի օր ընտանիքի անդամներից մեկը վերադառնալու և գտնելու է այդ ոսկին: Պատմում են, որ կան ընտանիքներ, որոնք փորձել են գնալ երգի և տեր կանգնել ընտանեկան հարստությանը: Սուսեր գյուղում գերգ Մարգարյանն ասում է.

«Դեստ էր ունեցվածքը, ոսկի են ունեցել շատ, բայց թողել են, հորերի մեջ: Յոր են ունեցել, հացահատիկի հոր, գցել են ընկեր, թողել եկել են: Բայց հորեղբայրս ու իրա ընկերը՝ Բարե կար, հետ են դարձել, նորից են գնացել, եդ պատերազմից հետո մի օր գիշերը անցել գնացել... Ոտքով գնացել են, որ էդ ոսկուն տիրություն անեն: Դրանք չեն կարողացել... ես Բարեն գոնը անասունի աղիք տակը լցուել է ու թողել եկել: Գոմաղթի տակից հանել, բերել է»:

Կարճաղբյուր գյուղից մի կին բացատրում էր՝ ինչու էին իր նախնիները պահել ոսկին.

«Ու կըսե մենք լրիվ հորեր ինք ունեցել, իրանց հարստություններ, մե հոր ցորեն ենք լցուել, մե հոր գարի ենք լցուել, ամեն ինչն, հարստություններն, ոսկին, կըսե մենք ամեն ինչն պահեցինք, մենք կարծեցինք, թե նորից պիտի վերադառնար մեր երգիր, մեր հողն ու ջուրը, դրա համար էլ մինչև վերջին վայրկյան ըսեր ա՝ չերթանք մըր երգիր, ըսիր՝ չերթանք մըր երգիր, կըսե՝ ընի էր երգիր, ընի էր երգիր, հավկիր դնեին գետնին՝ կեֆեր, հողն ու ջուր ընի էր, տաք էր, ըստեղի հող ու ջուր ինքն ինքն չհավնավ, մինչև իրա կյանքի վերջ չհավնավ»:

Ցանաքասար գյուղում Սոսը հայ-թուրքական սահմանի մոտ բնակվելու իր նախնիների որոշումը հիմնավորում է վերադաշնալու և իրենց ունեցվածքին տեր կանգնելու հույսով։

«Պատկերացրեք, որ էդ տեղահանությունը, էդ կոտորածները, մարդիկ կորցրել են, երեխեք են կորցրել, ասենք թե քույր- եղբայր են կորցրել ժամանակին։ Իրենք օրվա հացով են դուրս եկել, ունեցվածքն ամբողջ, կարողությունները՝ ինչ ունեցել- չեն ունեցել քողել են իրենց պապական հողերում։ Կարող է նոյնինիկ հարստություն են ունեցել՝ որոշակի գումար, ոսկի, ըստենց բաներ են ունեցել, որոնք քաղել են հենց իրենց տների պատերի տակ, քաղել են՝ նպատակ ունենալով ուշ թե շուտ կերպանք, էդ մեր ունեցվածքին տեր կանգնենք»։

Ինչպես Մուշում էին մարդիկ փորձում տրամաբանութեն բացատրել՝ ինչու էին հայերը ստիպված լքել իրենց թանկարժեք իրերը, դա կապելով տեղահանության օրենքի ընդունման և այն հանգամանքի հետ, որ տեղահանվողներն իրենց հետ շատ բան չէին կարող տանել, այնպես էլ Հայաստանում ապրողներն էին այս հարցի պատասխանները փնտրում իրենց ընտանեկան պատմություններում։ Հայաստանցիների տեսանկյունից, սակայն, հարստությունը քացրել են ոչ թե աքսորի պատճառով, այլ որովհետև մարդիկ դեռ հույս ունեն վերադաշնալ իրենց տները։

Միևնույն ժամանակ որոշ դեպքերում ոսկին ոչ թե քացրել են, այլ օգտագործել տարբեր նպատակներով, ինչպես ութսունմեկամյա Փիլոս Հախոյանի պատմածում։

«Ենտեղ հայրս ահազին ոսկի է ունեցել, էդ ոսկին էլնում է, տալիս է կնոջը, երեխաներին ու մորը, որպեսզի գոնեն դրանք ոսկով ազատվեն, իրենք փախնում են եղբայրներով՝ սարերով-քարերով, ասում է շները ընդեղ հաշում էին, բան էին անում, տենց գալիս են հասնում են ռուսական բանակին, ռուսական բանակի հետ փրկվում, Անդրանիկի հետ միասին փրկվում են, գալիս են»։

Բացի Մուշում թողած կամ Հայաստան բերած գանձե-

րի պատմություններից, Հայաստանում մարդիկ խոսում էին նախսկինուն իրենց ներկային բնակավայրերում ապրած քուրդ կամ քուրդ ընտանիքների թողած ոսկիների մասին։ Օրինակ, երբ Ուկեհասկ գյուղում Ռաֆիկ Ավագյանին հարցողնք իրենց ընտանիքի՝ Մուշում թողած կարողության մասին, նա այսպես պատասխանեց։

«Ի՞նչ պիտի թողնեին էն խեղճ ու կրակ աշխատավոր մարդիկ էնտեղ, որ պատմեին, հազիվ իրանց ու երեխերի օրվա հացն են ազնիվ վաստակել։ Բայց պատմում էին, որ քրոքերի տներից են ոսկի գտել ստեղ։ Պատերի մեջից, հատակից, իրանց գնալուց հետո որոշ հարուստի տներում գտել են, բայց ավել չգիտեմ»։

Հայաստանցի գյուղացիներից շատերն ասում էին, որ իրենց ներկային գյուղերի նախսկին բնակիչները վերադարձնում, գնում էին սարերի աղբյուրները՝ իրենց ոսկին փնտրելու, ծիշտ այնպես, ինչպես հայերն են անում Մուշի բնակիչների պատմածներում։ Կաթնաղբյուրցի Արամայիս Խորայելյանն ասում է.

«Եւ, գնացել էին։ Թուրքերը գնացել էին, բայց մի հատ թուրք կար, որ ապրել էր իմ հորս հորողբոր տունը։ Ըդ կինն միշտ գալիս էր, ամեն տարի գալիս էր, գալիս էր և բարձրանում էր վերև, ստեղ աղբյուր կա։ Վերև, էդ ջրերն էր նայում, հետո ժողովուրդը ուրիշ բաներ էր խսում, ասում էր՝ երկի հարստություն է պահել եղտեղ»։

Նրա համագուղացի Արշակ Թորոսյանն էլ պատմում էր, որ հարևաններից մեկը տեսել է՝ ինչպես է իր տան նախսկին տերը գիշերը ինչ-որ բան հանում [ենթադրաբար ոսկի] գոմի սալի տակից։

«Ապրել են մի վախտ իրար հետ [հայերն ու թուրքերը], տեսել են չե, չի ստացվում, թուրքերին ասել են՝ ձեր վեշեր վերցրեք ու հեռացեք։ Եղել է մի դեպք՝ Միրոյի տուն։ Միրո անունով մարդ՝ հայ։ Էդ թուրքին հանել է դուրս, ինքը մնացել է։ Էդ թուրքին եղել է ոսկի էդ տան մեջ։ Գոմի մեջ, դե պատմում է, ես չեն տեսել, գոմի մեջ ոսկին պահում է թուրքը ու գնում Մասիս։ Են ժամանակ ուղտերով, էշերով բերում էին ստեղ մեր մոտ խաղող, պոպոր։ Դե գյուղ էդ ժամանակ չկար ոչ



մի բան, ոչ ծառ, ոչ մի բան: Բերում էին ստեղ խաղող էին ծախում, պապոք: Եդ քրիերը՝ Մասհիս թուրքերը, որ ստեղից գնացել էին: Եդ Միրոն որ ասում եմ, դրա տան թուրքը եկել էր ուղտով իրա տուն, առևտուր արել: Առևտուր արել պրծել, եդ օր մնացել է ստեղ, գիշերով ելել է, մտել է տուն, ուսկին վերցրել գնացել է: Առավոտ Միրոն ելնի, տեսնի գետնի սալը հանած քաօծ է»:

### **Մեր գտած գանձերը**

Բացի թարցրած ու գտած ոսկու մասին խոսակցություններից, մենք Մուշում և Յայաստանում գրանցել ենք պատմություններ հարստության մի ուրիշ տեսակի մասին: Բազմաթիվ հայ ընտանիքներ երգից բերված հնամյա ավետարանները, աղոթարաններն ու պաշտամունքի այլ առարկաները հարստություն և գանձ են համարում: Ուսկեասկ գյուղում Սեղա Պարգևանն ասում է.

«Բա խո էդոնք իրանց ոսկի իրանց հետ չեն բերել, տղա ջան, էդոնք ասենք իմ նանեիս զարդն է եղել քանի մը հատ: Սրբի հետ կապել է: Ոսկիք մնաց, լատ: Քանի մը հատ զարդ ու բան է եղել, են ժամանակ ծախել են... հերս ու հորդիսաերս փոքր եղած, ծախել է ու պահել է եդ որբերին: Սուրբն էլ իմ ախաղոր տունն է՝ Երևանում»:

Յայաստանում մեր այցելած գրեթե բոլոր գյուղերում երգից բերված տաճ սրբեր կային: Այս սրբերը ոչ միայն պաշտպանում և աջակցում են գյուղացիներին, նրանց համար դրանք Մուշից բերված և աքսորի ճանապարհն իրենց տերերի հետ կիսած մասունքներ են:

Ամենահետաքրքիրն այն էր, որ Յայաստանում որոշ մարդիկ գանձ ասելով նկատի չունեին ոսկի կամ հարստություն: Գանձը դաշտերն ու սարերն էին, գետերը, լճերը, հուշարձաններն ու կողրցրած պատմությունը: Բոլոր թվարկաներն այժմ էլ հայերի կորուսյալ հայրենիքի ֆիգիկական, մտային և ժամանակագրական քարտեզների



կարևորագույն մասն են կազմում: Եվ չնայած ընտանեկան հարստության, ոսկու գործոնն առկա է հայաստանյան պատմություններում՝ այն չի նշվում որպես Մուշ այցելելու առաջնային պատճառ: Երբ խոսքը Մուշ այցելելու և այնտեղից հնչ-ինչ իրեր բերելու մասին էր, ոսկին կարծես դուրս էր մնում մարդկանց մտային և ճանապարհային քարտեզներից:

Ամենից հաճախ մարդիկ ուզում են այցելել պատմական և մշակութային նշանավոր վայրեր, որոնք դեռ կենդանի են իրենց պատկերացրած Մուշում, ինչպես օրինակ՝ Սուրբ Կարապետ և Սուրբ Առաքելոց վանքերը, Ղացիկ/Ղացելաց գյուղը՝ Մեսրոպ Մաշտոցի ծննդավայրը: Մեր զրուցակիցներն ուզում են տեսնել Արածանի/Մուրադ գետն ու Մշո դաշտը, իրենց նախնյաց գերեզմաններից, գյուղերից ու տներից մի բուռ հող կամ մի քար բերել: Արամայիս Խորայելյանը հիշում է.

«Հա՛, իրանց երգիր կարոտում էր իմ պատին: Ճըլը իրանց մտքին են էր, որ պտի ես երթան իրանց տուն, իրանց ծառ ու ճյուղին, իրանց աղբրի ջրին, իրանց ամեն ինչին: Եդ մտքին էին, բայց չեղավ: Չգիտեմ էլ հետո կլինի, թե չէ: Մշո դաշտի մասին, որ իմ պապին պատմում էր, կըսեր Լառ, խոտն ծովի նման էր, ցորեն կցանեիր, հաց կեղներ նորմալ ձևով, ծառ ու ճյուղ կար, ամեն ինչ կար: Ուրիշներ մեկ-մեկ զնում ման գալիս, գալիս են, ես ուղղակի տրաքվում եմ, այ մարդ, ոնց ես չեմ հաջողացնում տեսնեն ես էլ, երգիրն, գետն, որ իմ հերն ա լողացե մեջն, եդ տներ, եդ բաներ տեսնեմ»:

Չնայած Ղայաստանում բնակվող շատ մշեցիներ ուզում են երգիրը տեսնել, ոմանք, այնուամենայնիվ, մտավախություններ ունեն, ինչպես Տարոն Մուրադյանը իրինդ գյուղից:

«Դիմի ես շատ եմ ուզում գնամ Արան գյուղը, Արանը իրենց Արածանիի ափին ա, քարտեզների մեջ շատ փոքր գյուղ ա եղել էլի, շատ քարտեզների մեջ չկա, մոտ է Աշտիշատ գյուղին, Ողական ամրոցին, հանրահայտ Սուլուկի կամուրջին, ասում ա [Տարոն Մուրադյանի պապը]՝ ես լավ հիշում եմ Գևորգ Զառուշի կրիվը Սուլուկի կամուրջի մոտ: Յոք թվին է չէ՝ եղել, ինքը եղել ա վեց տարեկան, ասում ա, երբ որ կրակում

էին, ընդեղ ձենը լսվում էր, հրացանի ձենը, էդքան մոտիկ են եղել էլի, ինքը հիշում էր: Դե, հասկանալի էր... Ամեն մարդու համար իրա ծննդավայրը ամենալավն է, դրախտավայր է, բայց պիտի հասկանալ՝ Մշո դաշտ, Արածանիի ափին, խաղողի այգիներ, խնձորի այգիներ, աճատուն պահել, իրանց սրտու դաշտը, իրանց անտառը, մանաման, գասպեն... Պատմում էր, անընդհատ պատմում էր, մեր արյան մեջ մտած էր դա... Դիմի էս բաներից հետո ես անընդհատ ասում եմ գնամ, գնամ, գնամ, հետո մի տեսակ էլ բան կա էլի մեջս... առաջին, գնամ, տեսնեմ, կարող ա պայիս պատմածը ավելի գեղեցիկ է, քան թե տեսնեմ, հիասքափվեմ, ավերակներ տեսնեմ, հետո չգտնեմ ին նախնիների գերեզմանը, տունը»:

Դայրենիքը կարոտող մարդիկ խնդրում են երգիր գնացողներին մի կտոր քար, մի բուռ հող կամ ջուր բերել, կարծես դրամը են իրական գանձերը: Նրանք նույնիսկ մեզ հարցրին՝ ինչու հող կամ քար չենք բերել Մուշից: «Դիմա որ մարդ կգնա երգիր, կիսնդրեմ, որ գնան պապերու հողը՝ գյուղ Խոշգյալդի, ու հող բերեն մի թիչ», - ասում էր Ռաֆիկ Ավագյանը Ռսկեհասկ գյուղից:

Սուշում և Դայաստանում մշեցիների գյուղերում մեր լսած պատմությունները վկայում են երկու կողմերի կորուստները, որոնք ցանկացած գանձից անդին են:

Դրանու Դինքը շատ դիպուկ խոսք ուներ Թուրքիայում հայկական գերեզմանոցների և Եկեղեցիների ավերակներում ոսկի փնտրողների համար. «Դուք փորում և հողի տակ եք հարստություն փնտրում առանց հասկանալու, որ այս հողի վրա քայլող իրական հարստությունը ոչնչացվել է»:



# ԻՆՐԱԿԱԺԻՍՏՈՒՄ. ԿԱՆԱՆԳ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՆԵՔ ԻՍԱԳՅԱՆ (ՀԱՅԱՍՏԱՆ)

Մուշում մեր հանդիպած մարդկանցից շատերը, ինալով, որ Հայաստանից ենք, ասում էնք, թե ինեն տատերն է են հայ եղել: Ցավոր, մենք չինք ճշտում, թե այդ տատերը ո՞ր բնակավայրից են եղել, ու՞ն աղջիկն են եղել: Եթե ավելի լավ նախապատրաստված լինեինք, գուցե կարողանայինք պարզել որոշ մարդկանց ազգակցական կապերը Հայաստանի մշեցիների հետ, և, ո՞վ գիտե, գուցե կորած երեխաների ներկայիս հայաստանյան ազգականների համար որոշ միփրարական տեղեկություններ բերեինք:

Փաստացի, սահմանի երկու կողմում՝ «գաղթածների» և «մնացածների» պատմություններում ամենադրամատիկ դեպքերը ծավալվում են ընտանիքի կորած անդամների՝ հատկապես մայրերի և տատերի շորով: Երկու գուգահեռ պատմություն կա, իրարից անտեղյակ, սահմանով բաժանված, սակայն միևնույն է իրար շատ նման: Երկու ճյուղին էլ բնորոշ են բռնությունների վախր, լուր տառապանքը և նոր պայմաններին հարմարվելու դժվարությունները: Ֆիշտ է, մենք Մուշում քիչ հայերի ժառանգների ենք հանդիպել: Նրանց մեջ մասը դեռևս գերադասում է լրել ինենց «հայկական անցյալի» նախի: Ես վստահ չեմ, որ այն քիչը, ինչ մենք ինացանք, կարող է հիմք հանդիսանալ ամքողից մասին խոսելու: Բայց դատելով նաև Մուշի հայկական ծագում չունեցող մեր բանասացների ընդհանուր պատմություններից՝ այդ քիչը բավական տիպական է: Մուշի մեր գորուցակիցներից մեկը, որի տատը հայ էր, ասում է.

«Հորական կողմից հայ եմ, մորական կողմից՝ եղի: Մերոնք Կարսից են: Հայրս մորս այնտեղ է հանդիպել, այնտեղ են ամուսնացել: Մենք արդեն Մուշում ենք ծնվել, մեծացել: Տատիցս մի քիչ հայերեն ենք սովորել: Կարոցներ ինչու եմ սովորել: Տասու տաճը հայերեն չեղ խոսում: Չեղ խոսում, որովհետև 9-10 տարեկանում տեսել էր 1915 թվին այստեղ տեղի ունեցած բոլոր ջարդերը (նրանք [հայերը] այդ տեղանքը Հարպետ են անվանում, իհմա այն էլազգ է կոչվում): Իմ տատը տեսել է, դրա ականատեսն է եղել: Ինքն ինձ ամեն ինչ պատմեց, այսինքն՝ ես գոռով պատմել տվեցի: Մեր տաճը ոչ ոք այնքան չգիտի, ինչքան ես: Ես անընդհատ հարցու-

փորձ էի անում, գոռով իրեն պատմել էի տալիս: Յինա այստեղ բոլորը մերժում են դա, բայց քանի որ իմ տատը ինքն էր ջարդերի միջով անցել, ինքը պատմում էր, պատմում էր այն, ինչ տեսել է: Տասու միշտ վախտենում էր, միշտ զգուշանում էր, որովհետև իր աչքի առաջ էին ջարդերը տեղի ունեցել, ամեն անգամ կարծես վերապեր դրանք: Զարդը միշտ իր մտքում էր... ու պատմում էր մեզ... իրան ասում էի: «Տատիկ, ինչի՞ն մեզ հայերեն չես սովորեցնում: Ուզում եմ իմանալ հայերեն հացը, ջուրը ո՞նց կլինի, Աստված ո՞նց կլինի»: Ասում էր. «Ալլահը՝ Աստված, սուն՝ ջուր»: Այդպես եմ սովորել, գոռով էի խոսացնում: Ինքը ասում էր, որ պետք չի սովորել, ես էլ հարցում էի ինչու: «Որովհետև դրսում իրար մեջ կխսաք, գյուղացիները միանգամից կիսականան, որ հայ ենք. մի գիշերվա մեջ մեզ կլերացնեն այստեղից: Արդեն հարյուր հազարավոր մարդկանց սպանել են»: Տատիկիս մասին բաներ գիտեմ, որ չեմ կարողանում պատմել: Շատ ցավալի դեպքեր են: Ծեծից, ջարդից, մարագներում բնելուց ել վատ բաներ են եղել»:

Տատի մասին պատմելիս քառասունն անց այս տղամարդը հազիկ էր զսպում հուզմունքը: Տատի պատմություններն իրեն այնպես էին տաճում, կարծես իր սեփական փորձը, իր հսկ հիշողությունները լինեին:


Մուշում հայ տատերի մասին լսելոց հետո սկսեցինք Մուշում մնացած հայ աղջիկների հետքերը փնտրել մեր հայաստանյան գրուցակիցների պատմություններում: Այսպես պարզեցինք, որ իրենց ընտանիքներից առևանգված աղջիկների մասին շատ պատմություններ կամ: Հայաստանում, սակայն, պատմության թելը կտրվում էր առևանգումից անմիջապես հետո, քանի որ մարդիկ սովորաբար չգիտեին, թե դրանց հետո ինչ է տեղի ունեցել:

«Հորքուր ա էղել մեզ, հեռու հորքուր, էնքան սիրուն ա էղել, որ թուրքերը բռնել, չեն տվել, բռնել տարել էին: Տարել են, թե հմի կին են տարել, թե ինչ են տարել, բայց հմի նաղդի իրանը բռնեցին չքողեցին թերեին: Նազոն էր, անունը լավ չեմ հիշում, բալա ջան, բայց երևի նազոն էր», - հիշում է արնատներով Մշոն Ծղակ գյուղից Սարո Ղուկասյանը: Հայաստանի Կաթնաղրյուր գյուղում Մխիթար Քլոյանը, որի պապերը Մշոն Աներ գյուղից էին, պատմում է. «Իրանց ախաղորն են սպանած էնտեղ, Խաչիկ անունով մարդ, իրա քրոջն

Են փախցրած, անուն Խազալ էր: Ինքն շատ սիրուն է եղել, ու իրա մազերը շատ երկար ին էղել, Խազալը: Խազալը թշումի անուն ադրբ ին, առջիկը...»:

Քանի որ փախցնելը բավական տարածված երևոյթ էր, հայ ընտանիքները փորձում էին թաքցնել գեղեցիկ կանանց և աղջիկներին. Երեսներին ցեխ էին քսում, տղամարդու հագուստ էին հագցնում կամ տան որևէ ապահով անկյունում թաքցնում: Ութունամյա Մեդա Պարգևանը՝ Հայաստանի Ոսկեհասկ գյուղից, պատմում է.

«Հացեկաց, Հացիկ, Մեսրոպ Մաշտոցի գյուղից ենք: Ին պապերը էնտեղ են եղած, էնտեղ են զոհված, տղա ջան: Ուրեմն կպատմեմ, թե ինչպես են զոհվել: Յիմի ին տատը՝ հորս մերն, ստեղ գաղթեցին էն ժամանակ: Պոկվել էին երկու տղա՝ ին հերս ու իրա ախատը, էղոնք պոկվել էին: Մնացած սաղ էր տաս էրեխտն զոհվել են, մի աղջկան էլ՝ տասմերեք տարեկան, տարել են... Ին պապս եղել ա տերտեր, պապիս հերն էղել ա տերտեր: Զոհվել են երկուսն էլ: Սպանել են բուրքերը: Կտայինք պատմել ու կնստեինք, լաց կեղնեինք: Թե ինչ ձևի են սպանած էր մարդուն դաժանորեն: Սաղ օր պատմել կտայինք՝ ինչն են սպանած իրա հորն ու նորն: Ին տատի հորն ու նորն: Կըսեր՝ լատ, տարան քյարեն... Քյարեն՝ սարն: Կըսէ իրա մազերն՝ մոր մազերը, երկար են եղել, կըս սպանել են հորն ու նորս, մորս մազեր փաթթել են վզով: Պտտվանք, պտտվանք, գնացինք սարը որ գտանք, որ հերս ու մերս էսպես ընկած սպանված, մորս մազերն էլ էսպես իրա քիմն փարքած... Ին հորդուին՝ 14 տարեկան, շատ գեղեցիկ աղջիկ է եղել, ին տատն, որ ինացել է՝ պիտի հավաքեն, քսել է մուր էրեսը, կոխել է թնդիր: Սալ է եղել էն ժամանակ, տղա ջան, սալն էլ դրել է դրա վրեն: Գիտեին, որ էր տունը էրեխս կա, եկել են, ման են եկել, չեն գտելի, թնդրա սալիկը հանել են, որ էրեխտն մեջը նստած է: Կքաշին մի հատ էլ ին նամեի դին կքրֆի, «քու դինը» թուրքերեն ու էրեխին կտանեն: Կենդանին էրեխս: Մինչև մեռավ, գիշեր ու ցերեկ էր աղջկա անուն տալով մեռավ: Պապիս սպանել են, վերացրել են, էլ տղամարդ չի եղել տան մեջ: Էռ խեղճ կնիկը իրա էրեխտերով, 12 էրեխից երկու հատ է անցել էս կողմ: 12 հատ հորողքեր-հորքուր, 12 էրեխս ա ունեցել: Յերս էլ Յատիլեր կերավ: Են էն ժամանակ զոհվավ, էլ մեզի ոչ մի բան չմնաց»:



Յնարավոր առևանգնան վախն այնքան մեծ էր, որ շատ կանայք և աղջիկներ ինքնասպանության էին դիմում: Նույն Ոսկեհասկ գյուղում արնատներով Սշո Դերիկ գյուղից Յօհիկսիմեն պատմում էր իր Շուշան տատի և դերիկցի երիտասարդ աղջիկների մասին.

«Ինքը շատ գեղեցիկ կին ա էղեր Շուշան տատս, իրա էրեսին ցեխ ա քսեր, որ հանկարծ իրեն չփախցնեին տամնեին: Կըս մենք աղջիկներ վախենալով, ցեխ քսած մեր երեսներին, կտանեին... ու կըսէ էր մոլեն էնքան ու շաղիր կնայեր, որ տեսնե իրոք սիրուն էինք, թե գեշ.. Կըս ու մենք վրազ մեր գլուխն կախ... Անպայման

Կըսէ աղջիկներին, ինք կըսէ սալին, լրիվ ժողովրդին, աղջիկներին, մանավանդ կանանց, պիտի բերեն հարկերն, տղամարդկանց իրանք համաձայն չէ եղեր ին, իրանք մենակ համաձայն էղեր ին կանանց, որ կանայք բերին իրենց հարկ ու տուրքն փակին...Սիրուն կանայք, աղջիկներ ին եղե, որ տանեն... Կըսէ շատ աղջիկներ մանավանդ գաղրի ճամփին, կրոնին թուրքերը շատերին, դրա համար կրցին իրանց Մուրադ գետն, որ կրոնափոխ չլինեին: Դա, կըսէ մազերից կկապեին ու կրցեին իրանց Մուրադ գետը: Իրանք կկապեին մազեր իրարու ու կրցեին Մուրադ գետ, որ խեղմվին ու թուրքի դնին, իրանց լեզվով կըսիմ, որ թուրքի դնին չդառնան: Որ մնանք հայի դնին, կրոնափոխ չեղնինք, չտաճկ-

նանք: Ու ինքն էլ՝ Շուշան տատը, իրա էրեսին միշտ ցեխ ա քսեր, շալը սենց կապած էղեր ա, որ սիրուն կին ա եղեր, աղջիկ ա եղեր, կըսէ գոնե հանկարծ թուրքն ընձի մատով չկամեր, ես բան չեղմեի, իմ հայ ժողովորդի հետ ամուսնանայի, իմ կյանքն կապեի հայի հետ, կարգվեինք, իրա բառով ըսի, իրա լեզվով ըսի, ու հայի հետ կարգվավ, իմ մանայի հոր հետն»:

Գեղեցիկ կանանց առևանգման պատմությունները կրկնվում են Մուշի ներկայիս բնակիչներից ոմանց պատմածներում: Այսպես, Մուշում մեր զրուցակիցներից մեկը պատմում էր, թե ինչպես էին ջարդերի ժամանակ գեղեցիկ կանանց ընտրում և խմբավորում.



«Մի դեպք պատմեմ, երբ հարյուրավոր կանաց առանձնացին և տարան Ֆրաթ [Արևելյան Եփրատ/Արածանի կամ Մոլորա] գետի ափի: Տարան, հետո սկսեցին ամենագեղցիկներին իրենց հանար ընտրել: Ում ձեռքին փոքր երեխա կար, իլեցին, գցեցին ջուրը: Յեսո բոլոր տղեղ կանաց սպանեցին ու մարմինները գետը գցեցին: Գեղեցիկներին տարան և քանի-քանի ամիս որպես ստրուկ էին պահում, հետո, երբ ամեն ինչ հանգստացավ, խաղաղվեց, այդ կանաց տարան էլազրդի բերդ ու գնդակահարեցին: Եզներով լըված սայլեր բերեցին, ետ մարմինները դրեցին սայլերի վրա ու տարան գետը լցրին, ամբողջ գետը կարմիր էր դարձել այդ արյունից»:

Մուշում մեզ նաև պատմում էին կրոնափոխության և խառնամուսնության պատմություններ.

«Քրիստոնյաների և մահմեդականների միջև ամուսնություններ չկային, բայց երբ հայերը Արաբոնակ-Գիվասից, Սալիհանի մոտից փախսան, շատ աղջիկներ այստեղ մնացին: Տեղացիներն ամուսնացան նրանց հետ: Դիմա նրանք բազմաթիվ ժառանգներ ունեն, բայց բոլորը մահմեդական են», - ասում է Մուշի Չենգիլի գյուղում մեր գրուցակիցներից մեկը: Մշո Գոնս գյուղից մի կին պատմում է. «Այստեղի բոլոր հայերը փախսան էարոյի հետ: Նրանցից շատերը սպանվեցին Անդոկի փեշերին, բայց մի կին, թաքնվելով դիակների տակ, կարողացել էր փրկվել: Մենք չենք տեսել այդ կնօքը, բայց նա պատմել էր իր պատմությունը իմ սկեսուրին... անունը նվազու էր, մահմեդական անունը՝ Ռեհան. մեր գյուղի հարսն էր»:

Եթե Մուշում պատմություններ էինք լսում հայրենիքում փրկված և խսանացած կանաց թաքրուն և վախեցած կյանքի մասին, ապա Հայաստանի պատմությունները հիմնականում գողացված հայ կանաց ու աղջիկների մասին էին: Սակայն Հայաստանի Սուսեր գյուղում մի պատմություն լսեցինք, որը թեև հայկական համատեքստի համար եղակի էր, բայց ինչ-որ առունով Մուշում մեր լսածների «գորգահեռն» էր: Մուշում հայերի ջարդերի ժամանակ մի հայ տղանարդ փախցրել էր Ի՞նչ անունով մի երիտասարդ քրողուհու և իր հետ բերել Արևելյան Հայաստան՝ Սուսեր: Մեր խնդիր անդամներից երեքը Ի՞նչոյի թռուան՝ Իգիրի հետ այցելեցին գյուղի գերեզմանոցը՝ քրողուհու տապանաքա-

րը տեսնելու և նրա կյանքի պատմությունը լսելու համար: Տապանաքարի վրա գրված էր. «Ի՞ն Սուլեյմանի Զաքարյան», իսկ պատմությունը հետևյալն էր.

«1976 թվին մեռել է ես եղել եմ տասը տարեկան... Գրկեր ու ինձի սիրեր գը... Բոյով ինքը, մազերը մինչև գետին... Կուկլա, զյողալ... եղի մեր տատիկն էր ԱՇ Կեմեր, որ մի օր երբար Թուրքիան տենար, եթ հրա ծննդավայրը... Ինքը ախաբերներ է ունեցել, տասը հատ ախաբեր ինքը էնդեղ է ունեցել: Միշտ կերգեր քրդերն ու կլացեր, միշտ կլացեր, քրդերն երգեր ու լացեր գը Իգիր պապիս իրեն գողացել է, 15 թվին բերել է Եջմիածին, կնքել է, դարձրել է քրիստոնյա, նոր ամուսնացել է հետո»:

Հայ-քրոջական հարաբերություններին պատանդ մնացած քրդուհի Ի՞նոն երբեք չհաշտվեց իր նոր՝ քրիստոնեական Մարիամ անվան հետ:

«Ինքը մինչև մեռնելը մեզի կըսեր, անուններ կտար, իրա ախաբերների մասին, քանի ախաբեր են եղել, որ հանկարծ կըրնա, հայերն ու քուրքերը միանան, դուք կարաք ձեր քարեկամներին գտնիք: Կըրնա կըսե, խաղաղվեր, ես հայ-քրոջական հարցերը կարգավորվեր, ես հայերի, թուրքերի հարցերը լուծվեր, դուք գնացեր, ես ինչ հասցեներով գտեք իրաք... Ես են վախտ ո՞վ կարար խոսար, այսինքն՝ Թուրքիայի մասին Կոմունիստական կուսակցության ժամանակ մենք չենք կարա ասել Անդրանիկ, կամ թուրքերը մեզի թշնամի են մեզի կարային աքսորեին, դրկեին Սիրիի, իրավունք չկար խոսալու, ես կովի մասին մարդ չեր խոսա»:

Իգիրին հարցրինք, թե ինչպես էին հայերը վերաբերվում Ի՞նոնին, որը, փաստորեն, հավատափոխ մուսուլման էր.

«Ծատ լավ, ու ընդունված էր, որ միշտ ջահենները մեծերին են ենթարկվե, ասենք իրա պապուն, մեր մեծերը, բան, սադ գնացել են խորհուրդների էս մարդկանց մոտ: Կար սիրել, հարգել... Ինքը շուտ չէր կարա քներ, մինչև իրա տղեն գործից չգար, կոմբայնավար էր, կնստեր, կսպասեր մինչև ժամը մեկը, երկուսը, մինչև իրա տղեն գար, որ ինքը հելներ, հաց կերցներ, նոր երթար քներ

Ինքն շատ բարի կնիկ է եղել: Ես հիշում եմ շատ լավ, որ մենի տունը հաց չէր լինում, ճաշ պատրաստում, տանում էր: Բայց տեսաս սերը ինչքան մեծ բան է, որ հայր գողցել բերել է քրոին: Եղոր պատերազմ չի ճանչնար, սահման չկա սիրո մեջ, խաղ չկա»:

Իգիրը պատմում էր, որ իր տասը հարազատների և հայրենիքի կարոտը սրտում մահացավ: Նա միշտ երազում էր, որ սահմանը բացվի, այցի գնա եղբայրներին, բայց սերունդներ անցան, կապերը խզվեցին, և հանդիպումը անկարելի դարձավ:

Կանանց հանդեպ բռնության թեմաները որպես կանոն խնամքով շրջանցվում են վերապրածների ընտանեկան պատմություններում: Մարդիկ, նույնիսկ երկորորդ երրորդ սերնդում չեն ուզում պատմել, չեն հիշում իրենց ընտանիքի մահմեդականացած և կամ բռնաբարված կանանց մասին: Այդ թենային անդրադառնալիս հուզվում են, անաչում են, բարկանում: Արդի գյուղից փախած իր պապի ընտանիքի մասին հիշելիս կարնաբյուր գյուղից Արշակ Թորոսյանը պատմեց, որ պապը վեց երեխա է ունեցել՝ ինձգ աղջիկ, մի տղա:

«Յինգը, իինգ աղջիկ են եղել, հերս մենակ տղամարդ ա եղել: ճանապարհին սպանել են... Տարել են (մի քիչ բարկացած): Երեք հատը մեջ են եղել, չափահաս, չափահաս [իամարյա նրմնցում է «չափահաս» բառը]: Տարել են [մի քիչ բարկացած]: Կարող ա տարել պահել են. գեղեցիկ աղջիկներին տարել են: Երկուսին ել սպանել են ճամփին, մենակ հորս պահելով, ուսի վրա, տենց պահելով բերել հասցրել են [նորից իշեցնում է ծայնը]...»:

Ցավագին հիշողությունները և խոր արմատավորված վախը հավանաբար կտրուկ փոխել են ջարդերից փրկված որոշ կանանց հոգեբանությունը՝ հանգեցնելով իրենց կին լինելու հանգամանքի ուրացմանը: Ուսկեհասկ գյուղում ապրող Ամայան, որի նախնիները Մշո Դերիկ գյուղից էին, պատմում է, որ իրենց ընտանիքից փրկված միակ աղջիկը փախուստի ժամանակ տղամարդու շոր է հագել՝ հնարավոր գողացողներից թաքնվելու համար: Փախուստից և փրկվելուց հետո նա այլևս երեք կին չի դարձել և ամբողջ կյանքն ապրել է որպես տղամարդ.

«Սաղին կտրել են, սպանել են, մնացել է էդ աղջիկ մենակ ու տղամարդու շոր է հագել... Էդ իմ հորողբորս աղջիկն էր՝ Յովհաննես էր անունը: Ենթել սաղին սպանել են, մենակ ինքը եկավ, տղու շոր հագավ ու մինչև վերջ... էդպես էլ մեռավ: 70 տարեկան մեռավ... Սա գիտեին, թե տղա է: Գիտես՝ ինչ կըսեին, Ղզիկ Յովիաննես: Էդ վախս ո՞վ տղի շոր կիազմեր»:

Քանի որ կառավարության հրահանգով տղամարդկանց հավաքել էին, գաղրի կամ փախուստի ճանապարհներին մեծ մասամբ կանայք, տարեցներ և երեխաներ էին մնացել: Ուժասպար մայրերը հաճախ են ստիպված եղել երեխային կամ երեխաներին բռնել ճանապարհին կամ նույնիսկ... սպանել: Այս դեպքերը փրկված կանանց կյանքը հետագայուն դժոխքի վերածող ամենածանր հիշողություններն էին: Յայաստանի Թալինի շրջանի Ցամաքասար գյուղում ապրող Զիվան Եղիազարյանը հիշում է.

«Յորս հորոխսպոր կինը մի երեխին՝ ծծկեր երեխուն, բռնում ա ընդեղ, հողի մեջ իրա ձեռով ա թաղում, որ երեխի լացի վրա չգան, էն մյուս հազար հոգուն էլ ջարդեն, ստիպված [շեշտադրելով է արտաքրում՝ էտ ծծկեր երեխուն բռնում ա ընդե, մյուսին հետո թերում ա: Իր երեխային թաղում ա չագիլի, հողի մեջ: Չագիլը գիղե՞ս որն ի: Արտերից հավաքած քարերը, որ կույտ են անում: Թարերով ծածկում ա»:

Յոր գերղաստանի շարունակականության մտահոգությունը կանանց և աղջիկներին ստիպել է անհնարին թվացող զոհողությունների գնալ.

«Ու գաղրի ճամփին միշտ ասել են, էլի, որ գերադասել են աղջիկ երեխերին, դե ասենք երեք երեխս ունին, երեքին գրկած պտի բերեին չէ, գերադասել են աղջիկ երեխերին քետն, տղա երեխերին բերեն, որ սերունդը շարունակվի, շառավիղը չկորի».- պատմում է մեր գրուցակից Փիլոս Յախոյանի բարեկամը:

Ծնողների տառապանքների մասին պատմությունները լսելու ես շարունակ այնպիսի գգացողություն ունեի, որ դրանք մի տեսակ միֆականացված են, որ հետագայում դրանք լրացվել են սերունդների ապրումներով և վեր են ածվել հեքիաթի մի տեսակի: Բայց երբ Զարթոնք գյուղում

ապրոյ Պարույր Զաքարյանը պատմում էր Մուշի Ծղակ գյուղի իր պապի մասին, ով մինչև իր մահը ամեն առավոտ աղոթում ու լաց էր լինում իր աչքի առաջ այրված մոր մասին հիշողությունից, և երբ նա պատմեց իր պապի մոր այրվելու պատմությունը, ես հանկարծ շատ սրափ ու հստակ զիտակցեցի, նույնիսկ չգացի, այլ գիտակցեցի, որ այդ պատմությունները շատ որոշակի են, շատ կոնկրետ մարդկանց մասին են, ում կյանքը լիովին փոխվել է միանգամայն կոնկրետ դեպքերից: Պարույր Զաքարյանը իր Կարդան անունով պապի մասին պատմեց հետևյալը.

«Ուրեմն իմ պապս եղել ա մարագի մեջ: Կըսէ հարյուրավոր ժողովուրդ լցված էր մեջը: Ընդէ ծեն են տվէ՝ ծղակա Վարորան, ծղակա Վարորան (պապիկիս անուն Վարդան է եղէ): Ենքան ժողովուրդ էր մեջ, որ մի կերպ ես հելա դուրս, հելա դուրս ասում ա, հենց դուռը բացի, տեսա նայրս կանգնած ա դրան դեմք, համբուրեց ինձ, և ասում ա՝ խիմն քցին մարագի մեջը: Ասում ա՝ ես չեմ հասցրել այռոշներս գոնե նորս կպցնեմ: Ու ասում ա քուրդ մարդու ձեռք, քուրդ ա եղէ, քուրդ չի եղէ, քորի ձեռք եղել ա մոր գոտին՝ մեջքի գոտին: Երկի տվել ա եղ քրդին, որ պապիկիս ինքը համել ա էլի: Ինքը դուրս ա էկել, պապիկիս տեղը իրա նայրն ա մտե, այ եղ ձկի: Յիմա ասում ա մի հինգ րոպէ հետո, եղ քուրդն տարավ ինձ մի կողմի վրա: Ու ասում ա սալոնները, խոտերը լցրած, սայարկեն լցրին, ասում ա՝ նավք ա ինչ ա, լցրին ու ամբողջ մարագը վառեցին: Յարյուրավոր ժողովուրդ ասում ա: Եղ հոտը, եղ ծովիսը: Ասում ա՝ կիլոմետրերով հեռանում էնք, քամին որ կողմը որ գալիս էր, եղ ճենճահոտը ասում ա մինչև իիմի, ոնց որ իմ քթիս մեջը լիներ էլի եղ հոտը»:

Այս պատմությունը ավելի դաժան չէ, քան մեր լսած ուրիշ պատմություններ, բայց այն այնքան իրական է. ուրիշ ի՞նչ կարող էր անել մայրը, ում որդին ակնհայտորեն պիտի այրվի, բայց կարող է փրկվել, եթե ինքը զոհվի: Ես հանկարծ տարօրինակ պարզությամբ զգացի, որ հենց այդպես էլ պիտի վարվեր: Բայց հենց դրանով էլ դժոխքի վերածվեց նրա Վարդան որդու փրկված կյանքը: Այս պատմությունից հետո հաճախ են մտածել, թե որն էր Վարդանի փրկությունը: Ո՞րն էր ավելի ծիշտը՝ դժոխային կյա՞նքը, թե՝ մահը: Արդյոք մայրը, մահը նախընտրելով, չփրկե՞ց դժոխքից իր կյանքը: Բայց որդու համար կյանքը նախընտրելով՝ չվերածե՞ց այն դժոխքի: Սա անհնարին ընտրություն է: Զգի-

տեմ, ես պատասխան չունեմ: Գիտեմ միայն, որ այդ պատմությունը խիստ իրական դարձեց պատմությունների միջականացվածության մասին իմ զգացողությունը: Մարդոք երբեք, երբեք չպիտի ննան ընտրության առջև կանգնի:

Փրկվածները Յայաստանում հետագայում ապրեցին դաժան հիշողությունների թերով, ողբերգությամբ և ճանապարհներին թողած երեխաների մասին ամենօրյա հիշողություններով: Զարդերից փրկված, Թուրքիայում մնացած և հսկանացած կանայք ու երեխաները, հավանաբար նաև տղանարդիկ, ապրեցին մահվան մշտական տագնապերով, վախի ստրկության մեջ, ընդ որում՝ հարկադրված լինելով թաքցնել իրենց վախերը: Նրանք կարծում էին, որ իրենց ինքնությունը թաքցնելով՝ պաշտպանում էին իրենց ընտանիքը և իրենց հետագա սերունդներին: Մուշում քառասունամյա մեր գրուցակցին հարցրինք՝ արդյոք մանուկ հասակում իմացե՞լ է իր հայկական ծագման մասին.

«Այո՛, տատիկս պատմում էր: Տասու պատմում էր՝ ոնց եր կյանքը, ինչով էին զբաղվում պապերս, հետո ինչ տեղի ունեցավ... Բայց չուզելով էր պատմում: Ինքն իր ամբողջ կյանքն այդ հոգեբանությամբ ապրեց, որովհետև երբ մարդու աչքի առջև այդպիսի դեպք է տեղի ունենում, նա տարիներով չի կարողանում դա մնուանալ: Ինքներդ մտածեր... Երբ հեռուստացույցով ֆիլմեր էին ցույց տալիս՝ պատերազմի մասին ֆիլմեր, տասու երեխայի պես լաց էր լինում: Նայում էր այդ հունա-բրութական, քուրդ-կիարական ֆիլմերը, այդ կրակոցները ու ասում. «Սա իմ կյանքն է, իմ աչքի առաջ է սա կատարվել. չեմ կարող մոռանալ»: Տատիկս տանջվում էր այդ հիշողություններից, մինչև կյանքի վերջ այդպես էլ չագատվեց դրանցից: Միշտ վախենալով Միշտ Նրանք կսպանեն մեզ Նորից մորթվելու ենք Նորից են մեզ ջարդելու»:

1915 թվականն անդառնալիորեն շրջեց հազարավոր կանանց ճակատագրեր: Չենք ուզում համեմատել Թուրքիայի տարածքում մնացած և մեկուսի կյանքով ապրողներին Յայաստան հասած վախստականների հետ: Նրանք, ովքեր «մնացին», պետք է սովորեին ապրել թաքնված, վախերով՝ սովորելով միշտ հնազանդ լինել և իրականում միայնակ: «Գաղթածները» նույնպես պետք է վերակառւցեին իրենց կյանքը վախի պայմաններում՝ ապրած սարսափների հիշողության թերու ուսերին:

# Թասից և խաղողի այգիներից մինչև Արարատ. անցյալի և ապագայի խորհրդանիշերը Հազար Աթա (Թուրքիա) Տաթև Հայրապետյան (Հայաստան)

«Ես թասը երգից ա: Եղ թե պապին ա բերել, թե հոպարը, չեն իիշում դրա պատմությունը, թե ոնց ա ստեղ հասել, չեն իիշում: Սա սուրբ մասունք է, հազվադեպ մասունք է, տարել են քանգարանը Երևանի [Յայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտ], ցուցադրում էին, եկան, տարան էնտեղ, մի ամիս հետո բերեցին նորից ստեղ: Եթե հիվանդանում էր մարդ, դրանով ջուր էին տալիս, խնում էր, լավանում էր: Մինչև հիմա էլ կա, եթե հանկարծ մի տեղմերս ցավում ա, դրանով ջուր ենք խնում, անցնում ա»:

Այսպես է Դավիթ Յովսեփյանը՝ Հայաստանի Դաշտադեմ գյուղից, բնութագրում այն թասը, որն իր նախնիները բերել են Մուշից: Ի տարբերություն Թուրքիայի այլ շրջանների, որտեղից Առաջին աշխարհամարտի տարիներին հայերին աքսորեցին և ստիպեցին բռնել սիրիական Դեր-Զոր անապատի մահաբեր ճամփան, Մուշից սակավաթիվ փրկվածները պատմում էին, որ Մուշում ամրողջական գյուղեր իրի ճարակ են դարձրել: Դժվար է պատկերացնել՝ ինչպես են ջարդերից մազապուրք մարդիկ կարողացել իրենց գյուղերից մասունքներ փախցնել: Եթե մեր զուցակիցներին հարցնում էինք՝ արյուք իրենց նախնիները կարողացել են Մուշից որևէ բան բերել, նրանք հաճախ հուզվում էին՝ հիշելով իրենց ընտանիքի փրկության պատմությունները: Ինչպես՞ ս կարող էր առհասարակ մարդ որևէ բան բերել նման դժվարագույն իրավիճակում, եթե ի վիճակի չէին անգամ իրենց ընտանիքի անմիջական անդամներին ու սիրելիներին փրկել:

Դավիթ Յովսեփյանի հայրական ընտանիքը Մշո Էրիշտեր գյուղից է, և նա հիշում է իր պապի փրկության պատմությունը.

«Մինչև գաղթը մեր ժողովուրդը ի՞նչ կոտորումներ է տեսել. բուրքերը մեր տան տնտեսությունը վառել են,

գոնի մեջ, լցոնել են գոնի մեջ երշտերում ու վառել են: Ոչ մեկ չի փախել, լրիվ վառվել գնացել են: Պապիկի պատմելով ասում է՝ իրա փոքր եղբարը ուզեցել է դուրս էթա չիշիկ ընելու, Յակոբը, լաց է եղել, բան, գրկել են, տարել են դրան մոտ, բուրքերին ասել են, թող երեխեն երթա: Յա, երկու ախատեր են՝ ին հոպարը ու ին հերը, փախել են սարը, փախել են սարը, ասում է, հասանք լինեղ, վառվավ տունը, Յետո իրանք երկու ախատեր որք թափառել են էստեղ-էստեղ, սրանք տները, մինչև ուսւները եկել են, ուսւների հետ իրանք եկել են էստեղ, տարել են Աշտարակի որբանց: Իրանց հոպար Միքայել Միքայելյանը գնացել առբանոցից բերել ա»:

Դավիթ Յովսեփյանն անգիր գիտի իր պապի փրկության պատմությունը, սակայն զգիտի՝ ինչպես է Յայաստան բերվել և կամ ինչ գործառույթ է ունեցել Երիշտերում թասը, որն իր և իր ընտանիքի հաճար խորհրդանշում է Մուշը: Մեր զուցակիցներից շատերի նման պարոն Յովսեփյանը ևս այն հարցին, թե արյուքը իր պապերը որևէ բան կարողացել են բերել Մուշից, պատասխանում է. «Ե՛, չէ, չէ, չ ոչ մի բան չեն բերել»: Միայն ավելի ուշ նա հիշեց, որ Երգից ինչ-որ թաս են բերել: Իր պապերի և ծնողների մասին խոսելիս Դավիթը հուզվում և երբեմն հազիվ էր զայում արցունքները: Թասի «արտասովոր և բուժիչ» հատկությունները նկարագրելիս նա նշում էր, որ այն շատ հազվագյուտ է, և իր ընտանիքն այն սուրբ մասունքի պես է պահպանում: Եվ դա իրոք այդպես էր: Ինչպես տեսանք մշեցներով բնակեցված գյուղերում, ցեղասպանությունը վերապած մարդկանց ժառանգների հաճար Երգից բերված յուրաքանչյուր փոքրիկ առարկա դարձել է շատ կարևոր և եղակի: Նրանց հաճար այս իրերը խորհրդանշում են ոչ միայն կորուսյալ հայրենիքը և իրենց նախնիների կյանքը Մուշում, այլև սերնդի շարունակականությունը և կապն այն վայրերի հետ, որոնք անձամբ երբեք չեն տեսել:

Ութսունիննամյա Խարուն տատին հանդիպեցինք Յայաստանի Կաթոնադրուր գյուղում: Փրկվածների ժառանգներից շատերի նման նա ևս խոսքն սկսեց իր ծնողների փրկության պատմությամբ.

«Ին մամ եղած ա մշեցի, ին հեր Մշու Աներ գյուղից, ին մերն՝ Մուլուկս գյուղից: Կոտորում որ եղեր ա, քոչած



ա եկած ա: Ընդեւ, որ կոտորած են, ուրանց հավաքած ա լցած ա եկեղեցու մեջ, վառած ա ուրանց, բայց նի հաստ լավ թուրք էղեր ա, իմ մոր հոր ծանոթն ի էղե: Իմ մորն ու նի հաստ հայ կնոջ իրա հետ՝ իմ մոր հետ, ազատած դուրս ա հանած: Էլած ա գիշերով փախած ա եկած ա, իմ կարծիքով էկած ա մինչև Ղարաբաղ: Ուտքով, սելերով Ղարաբաղ չգինյամ մոռացեր իմ, թե ինչքան ա մնացած տեղ: Լավ չըմ իհշի, որովհետև ես իմ մորից լավ մանր-մանր չքննի, չգիտցա էի: Քացած ա ընդեղից եկած ա հասած ա մինչև Ուժան: Եկած է Ուժան գյուղն, ընդեւ իմ պապին չթողեր ա մնա, ըստեր ա՝ չէ ըստեղ չմնաք, էրթանք սարի գյուղեր, քոչած ա ընդեղից եկած ա ըստեղ:

Ահա այսպես են նրանք հասել Կարմաղբյուր: Մարդ չի կարող չզարմանալ՝ ինչպես է Մուշից գաղթած նարդը հասել Ղարաբաղ, հետո անցել Ուժան և Կարմաղբյուր՝ ամբողջ ճանապարհին չբաժանվելով էրգրից վերցված մասունքից: Խարունի մայրը միշտ կրում էր էրգրից բերված վզնոցը, որն իր մահից հետո անցավ Խարունին: Ըստ ընտանեկան պատմության՝ Խարունի հայրը վզնոցը գտել է էրգրում և իր հետ բերել ներկայիս Յայաստանի տարածք:

Խարուն տատի հարսը երկար երկմտում էր, սակայն ի վերջո մեզ ցույց տվեց էրգրից բերված իրերով սնդուկը: Պարզվեց, որ Խարունը սնդուկը աչքից հեռու է պահում և խուսափում է այն ցույց տալ նույնիսկ ընտանիքի անդամներին, որովհետև սնդուկը իր մորից մնացած



թանկագին մասունք է: Խարունը պահել էր նույնիսկ 1949 թվին Խորհրդային Հայաստանում ստացած մոր անձնագիրը, որտեղ նշված էր, որ Խազալ Գրիգորյանը ծնվել էր Թուրքիայում 1887 թվականին:

Մեր դաշտային աշխատանքի և հարցազրույցների ժամանակ իմացանք, որ շատ մարդիկ առ այսօր պահում են իրենց պատերին պատկանող փաստաթղթերը՝ որպես կորուսալ հայրենիք հետ իրենց կապի առարկայական պապույց: Աշխարհում, որտեղ սահմանի մի կողմք դեռ ժխտում է իր պատմությունը, մյուս կողմում այդ պատմության զիերը մինչ օրս ձգտում են իրենց հետ տեղի ունեցածի ճանաչմանը հասնել: Չնայած պահպանված փաստաթղթերը սովորաբար Մուշից չեն, դրանք այնուամենանիվ ցույց են տալիս, որ իրենց տերերը սերել են այն տարածքից, որը մեր զրուցակիցներն Արևմտյան Հայաստան կամ Էրգիր են կոչում:

Բայց փաստաթղթերը պատկանելության և արմատներից հանկարծակի կտրվելու միակ խորհրդանշից չեն: Գյուղական գերեզմանատների տապանաքարերն այս կապի թերևս ամենաակնառու ապացույցն են: Գերեզմանոցով մի պտույտն իսկ բավական է գյուղացիների անցած ճանապարհի մասին պատկերացում կազմելու համար: Տապանաքարերի արձանագրությունները լույս պատմում են իրենց տերերի պատմությունը.

«Մեսրոպ Միկիթարի Գասպարյան, ծնվել է 1903 թվականին Մշո Ցրոնք գյուղում, մահացել է 1937 թվականին»:

Նիշտ այնպես, ինչպես փաստաթղթերը, այս տապանաքարերը պատմում են իրենց տերերի չպատմված պատմությունները: Այս երկուսը միասին խորհրդանշում են մի վայրից մյուսը տեղափոխվելու հանգամանքն ու ներկայացնում նախորդ վայրի հետ կապը պահելու, անգամ հրապարակավ այդ կապը բարձրաձայնելու ուժեղ պահանջը: Թվայցալ անտրամարանական, բայց չափազանց հորդիչ պատմություններ գործ առանք մարդկանց մասին, որոնք գնացել էին Արևմտյան Հայաստան և այնտեղից հոր բերել իրենց ծնողների և պապերի գերեզմաններին լցնելու համար: Այս հորդ հանգուցյալների և նրանց սիրած, երազած ու կարուտած հայրենիքի հետ խորհրդանշական կապի վերահաստառումն էր: Մեր զրուցակիցների խոսքերով իրենց պապերը «մահացան հայրենիքի կարուտը սրտում»: Որոշ մարդիկ հավատում էին, որ երգից բերված հորդ կարող է բուժել կամ գոնե սփոփել իրենց նախնիների տառապյալ հոգիները: Ավելին, ինչպես պարզեցինք, հայկական ավանդություն շատ կարևոր է, որ հանգուցյալի դին թաղվի հայրենի հողում: Քանի որ տվյալ պարագայում հայրենիքն անհասանելի է, երգից բերված հորին հենց այս խորհուրդն է վերագրվում:

Յոթանասունութամյա Արամայիս Խորայելանը՝ Հայաստանի Կաթնաղբյուր գյուղից, պահում է մի գոտի, որն



իր մայրը բերել էր էրգից: Նա համոզված է, որ գոտին հայ վարպետների ծեռքի աշխատանք է:

«Ես իմ մորս մերն ա տվել իմ մորը, ամուսնության ժամանակ, իմ մերն էլ էրգից բերել ա: Սա իմ մերս կապում էր: Են ժամանակ փոքր էի, որ հարսանիք էր լինում, բոլորին կանչում էին: Իսկ որ սեղանատնից վերջացնում էին, իրիկուն գնում էին կոլխոզի գոմեր ու ընդհանուր պարում էին: Են ժամանակ բոլորն էլ գնում էին պարելու: Եսի իմ մոր մերն կապում էր իմ մոր մեջքին, տանում էր հարսանքատուն: Իմ մեր ասում էր, լավ ա ըսի պահի իմ հարսի համար: Փչացավ, տեր չկայնանք, մե անգամ տվի ռեմնոնտի: Ուկեցրած էր, ընենց լավն էր, տեր չկայնանք: Արծարից փուսկութեր էին կախած»:

Բացի գոտուց, նա էրգից բերված գորդ ուներ, որը Փերարա Խորոյի նվերն էր: Խորոն հայտնի ֆիրայի էր, որն Արևմտյան Հայաստանում վնատրում և հավաքում էր առևանգված կամ մահմեդականների ընտանիքներում թաքնվող հայ որբերին՝ ամեն երեխայի համար մեկ ոսկի վճարելով: Սովետական կարգերի հաստատումից հետո Խորոյին սկսում են հետապնդել, և Արամայիսի պապը օգնում է նրան:

«Իմ պապին ջրաղացան էր: Ջրաղացը մոտ երկու-իրեք կիլոնետր հեռու ձորին մեջն ա: Գիշերներ իր գոյությունն պահելու համար, իր ընտանիքի գոյությունն պահելու համար գիշերներ միշտ հանդիպել է իմ պապին: Օգնություն է պապին ցույց տվել իրան: Ինքը էդ խալին Թուրքիայից է բերե: Էդ խալին նվեր կիտա իմ պապին»:


Սահակյանների ընտանիքը գորգը պահում էր որպես մասունք Արևմտյան Հայաստանից, չնայած հետագայում այն բազմաթիվ անախորժությունների պատճառ դարձավ. Խորոյից նվեր ընդունելով՝ ընտանիքը բոլցկիկյան իշխանությունների կողմից ինքնաբերաբար ընկալվեց իբրև վերջինիս մեղսակից: Նրանք չէին կարող գորգը դեն նետել, որովհետև այս էրգից և Խորոյից ժամանգություն մնացած մասունք էր, բայց միևնույն ժամանակ վախենում էին այն տանը պահել: Միայն որոշ ժամանակ անց գորգը դարձավ «օրինական»:



Բոլցկիկյան վարչակարգի հանդեպ վախը շատերին է դրդել ոչնչացնել էրգից բերված մասունքները: Ոմանք անգամ անցյալի հետ իրենց բոլոր կապերն են խզել: Ցանաքասարցի Մելք Վարդանյանը, որի նախնիները կոտորվել են Մշո Տրոնը գյուղում, իշշում էր ցեղասպանության ժամանակ որբացած հոր պատմությունը: Հայոց տարիներ անց իմացել է, որ իր փրկված հարազատներից ոմանք հաստատվել են Ստամբուլում:

«Գիտեմ, որ խոսում էին միշտ պապայիս հետ, նամակ գրում, պապսա վախեցավ, նամակներ վարեց: Որ նեղում էին [կոմունիստները՝ սաղ վարեց: Մուշից նկարներ կային, վախից բոլորը վարեց»:

Նման նյութական, շոշափելի խորհրդանիշերից և առարկաներից բացի, որոշ ավանդույթներ նույնպես խորհրդանշական բնույթ են ստացել Հայաստանում բնակվող մշեցիների ժառանգների համար: Լավագույն օրինակներից մեկը իրինդ գյուղից Տարոն Մուրադյանի պատմությունն է: Նա պատմում է, որ իրենց ընտանիքում թոնիրը ամեն օր վարելու սովորությը Մուշից է փոխանցվել: Սա սովորական երևույթ չէ, քանի որ սովորաբար թոնրում հաց թխում են շաբաթը մեկ. «Պապս ստիպում էր տառութ, որ ամեն օր վախի թոնիրը՝ նույնիսկ ձնորան



ամիսներին: Էրգորում կարգը տեսն էր: «Պապս ամեն օր կուզեր թարմ թխած լավաշի հոտը առներ»: Ըստ պարոն Մոլոայյանի՝ այս սովորույթի շնորհիվ իր պապը կապված էր մնում Էրգորին ու այնտեղի կարոտն առնում:

Բազմաթիվ ընտանիքների համար Մշո ճաշատեսակներ պատրաստելը նույնպես շատ կարևոր սովորույթ է: Դավիթ Յովսեփյանի խոսքերով Մուշում հարիսա եկելը գլխավորապես տղամարդկանց գործն էր.

«Իմ հայրը, որ նախագահ էր աշխատում, պատվիրակություններ էին գալիս Երևանից, իմ հերը հարիսա էր դնում, բոնդի մեջ եփում էին հարիսան, հարիսան կապում էին բոնիր, մեծ ամանով եփում էին, մինչև արդեն հասնում էր էն աստիճանի որ ամբողջ գիշեր եփում էր, եփում էր, մերս գնում նայում էր, հանկարծ չչորնա, ջուր էր ավելացնում: Տղամարդիկ էին անում: Շետո առավոտ լինում էր, բերում էին կանգարը, խառնելու համար, թրկոց էին ասում հա, դրանով ենքան էին խփում, մինչև դառնում էր այ սենց, ծորալով իջնում էր»:

Նման սովորույթներն ինչ-որ առումով խորհրդանշութեն նարդկանց կապում են Մուշին և միմյանց: Շարունակելով իրենց նախնիների ավանդույթները՝ նրանք զգացմունքայնության և փոխադարձ կարեւցանքի մի դաշտ են ստեղծում, որն արտացոլում և պահպանում էր իրենց կապը Մուշի հետ:

Բացի ընտանեկան և անհատական ավանդույթներից և խորհրդանիշերից, գոյություն ունեն մի շաղը համբուրհանուր խորհրդանիշեր, որոնք համախմբում են Մուշից և Սասունից Հայաստան եկած մարդկանց: Այս խորհրդանիշերը ծևավորվել են Հայաստանում և գաղթածների ժառանգների ինքնության կարևոր նասն են կազմում: Շետաքրքրական է, որ դրանք միտքած են անցյալի հետ կապի պահպանմանը և հիմնականում կապված են Ցեղասպանության հետ: Խորհրդանիշերը տարբեր են՝ տների կենտրոնական պատերից կախված Արևատյան Հայաստանի քարտեզներից մինչև գյուղամիջում կանգնեցված հայ հերոսների ու ֆիդայիների (Անդրանիկ, Գևորգ Չառլ) արձանները: Գյուղերի միջև անգամ մրցակցություն կա, թե որ արձանն է առաջինը տեղադրվել: Օրինակ՝ Ուլեհասկ գյուղի բնակիչները պնդում էին, որ իրենց տեղադրած արձանը Անդրանիկի առաջին ամբողջական արձանն

է, մինչդեռ Ուժան գյուղինը, որը համարվում է Անդրամիկի առաջին արձանը Հայաստանում, ընդամենը կիսանդրի է: Եթե անձնական և ընտանեկան խորհրդանիշերն օգնում են մարդկանց պահպանել կապն իրենց հայրենիքի և արմատների հետ, ապա համայնքային և հանրային խորհրդանիշերը, ինչպիսիք են այս արձանները, պահում են ցեղասպանության հիշողությունը:

Ամենակարենը հանրային խորհրդանիշը հավանաբար ապրիլի 24-ն է: Սա այն օրն է, երբ համայն հայությունը հարգանքի տուրք է մատուցում Եղեռնի զոհերին: Սակայն օրը տարբեր վայրերում տարբեր կերպ է նշվում: Մեր հարցին, թե որ սովորույթներն են լավ պահպանված իրենց գյուղում, ցանքասարցի Զիվան Եղիազարյանը պատասխանեց:

«Մշտ դաշտից եկած սովորությունները: Հիմնականում, դե էսի Հայաստանով ա, բայց ապրիլի 24-ը մեր մոտ ահավոր ա ստացվում, ասենք եր կրակները, որ Թուրքիային միշտ ցույց ենք տալիս, որ զգիտեմ, շատ տեղեր՝ մեր էս Աքբարանի էն կողմները չկա, գիդես, եդ կրակների պահը: Օրինակ՝ Լենինականի էն կողմը Արթիկի գյուղերը դե կան, շփում ենք եդ մարդկանց հետ, ասում են՝ չէ, ասում են եդ ի՞նչ հիմար բան ա: Ուրեմն, ապրիլի 24-ին ինչից որ կարանք լավ կրակ ստանանք, երկի մաշված ակներն ա պատուների, դե գյուղով, օրինակ ես հետաքրքրվիմ, հանկարծ որ տեսա, հեզ որ չէ, փողով ըլմի, դե տրաքած, պետք չի չէ, ասենք մի 500 դրամ տամ, տվեք ընծի, կտան, կրերեմ, կուրակեմ, ամեն մարդ իրա հերիքն եր օրը լցում ենք մեծ ավտոների վրա, հանում ենք սարի գագառը ու վառում ենք, վառում ենք եդ կրակը, որ 24-ին էս օրը ըսենց բան ա եղե, որ էս բանը մենք չենք մոռացե լիոդով է ասում» անկախ նրանից ինչ տարիքում ուզում ա ըլմենք, տեսած ըլմենք, թե տեսած չըլմենք: Նայում ե՞ս, էս մեր տերիստորիան այ էս, այ էս սարը կա՝, դրա գագաթին են վառում, դե էնի ամենաբարձրն ա, որ էրևում ա, ու սենց, էս կոմի վրա լիկվ կրագները էրևում ա, էն կողմն ա մի քիչ չկա էլի, պակասում ա ոնց որ, քանի գնում ա մեր էն Արագածի կողմները մի քիչ պակասում ա»:

Սարերի գլխին վառվող նման խարույկները Թուրքիային սահմանակից շատ գյուղերի բնակիչների հա-

մար հիշատակման համատարած ծև են: Քանի որ մենք չենք եղել սահմանից այն կողմ ընկած գյուղերում, չգիտենք՝ ինչպես են խարույկները մեկնաբանվում այնտեղ:

Ընտանեկան սովորույթները և առանձին առարկաները, ինչպես նաև հասարակական-համայնքային խորհրդանիշերը հայերի համար մի տեսակ սրբազն բնույթ են կրում: Այս առարկաներն ու սովորույթներն օգնել են մշեցի հայերին պահպանել իրենց հիշողությունը Եղեռնի և կորցրած հայրենիքի մասին, և այս զգացումները փոխանցվել են սերնդեսերունդ: Դավանաբար այս պատճառով է, որ իրենց պապերի և ծնողների պատմությունը պատմելիս մարդիկ ներկայացնում էին այն այնպես, ասես հենց իրենք են անցել այդ ամենի միջով և ականատես եղել 1915 թ. հայերի կործանմանը: Այս նյութական մշակույթի և բազմաթիվ սովորույթների շնորհիվ մշեցի հայերը փայփայում են իրենց հայրենիք վերադառնալու և այնտեղ կյանքը շարունակելու հույսը:


Մուշում հայերի թողած ժառանգությունը՝ տները, խաղողի այգիները, եկեղեցիները, ոչ միայն պատմություն պատմող նյութական մշակույթի տարրեր են, այլև դարձել են այս վայրերում հայերի գոյության խորհրդանիշ: Մուշի մեր գրուցակիցները հաճախ էին կրկնում, թե «այս վայրը հայերին է պատկանել» կամ «այս երկիրը ձերն է» [նկատի ունենալով հայերին]: Մուշում հայերի նասին հիշողությունները կապված են հայերի թողած ունեցվածքի և ժառանգության հետ, իսկ Մուշից բերված առարկաները Հայաստանում ապրող մշեցիների վերջին նյութական հիշողություններն են իրենց հայրենիքի մասին:

Մուշում և Հայաստանում մարդիկ հայելու, սպասքի, պահարանների նման հասարակ բաների մասին խոսում էին այնպես, ասես դրանք սրբություն են: Մենք, իհարկե, չենք տեսնում այդ ամենը, բայց հասկանում ենք նրանց զգացածը, և թե ինչ մեծ նշանակություն ունեն այդ առարկաներն իրենց տերերի համար: Հայաստանում ապրող մշեցիների համար այս առարկաները Մուշից մնացած միակ բաներն են, որոնք հիշեցնում են կորցրած մարդկանց, վայրերի մասին և հետևաբար զգացմունքային մեծ արժեք ունեն: Մինչդեռ Մուշում հայերի թողած ժառանգությունը հիշեցնում է տեղացիներին, որ այնտեղ ժամանակին հայեր են ապրել:

Մուշում նկատեցինք, որ անցյալի իրերը նոր և ավելի խոր իմաստ են ստանում: Այսօր Մուշի բնակիչները՝ հատկապես հին սերունդների ժառանգները, մի տեսակ

կապվածություն ունեն ծագումով Մշո դաշտից հայերի հանդեպ: Նրանք հայերին կապում են և նյութական մշակույթի, և դրոշակի մասնագիտությունների հետ: Այսպես, Եկեղեցիների ավերակները, խաղողի այգիները և հայերի բոլած տարբեր առարկաներ Մուշում կենդանի են պահում հայերի մասին հիշողությունները:

Մուշում մենք այցելեցինք Տարոնի լեռներում գտնվող խաղողի այգիներ: Ներշնչված էինք գեղեցիկ բնապատկերով: Այգում մեզ դիմավորեց այգու տերը՝ Թեֆիկ Ռանչար անունով մի քուրդ: Երբ ներկայացանք, և Թեֆիկն իմացավ, որ մեր խմբում նաև հայեր կան, նա հուզվեց և ասաց.



«Ուզու՞մ եք ինձնալ, թե այս վայրն ում է պատկանում: Այս գյուղը հայերին է պատկանում: Դուք գիտե՞ք՝ ինչ է նշանակում «հակ» [արդարություն]: «Հակ» Ալլահի անունն է: Այս վայրը հայերինն էր, բայց այսօր այլևս նրանցը չի»:

Ահա թե ինչպես Թեֆիկը սկսեց ժամանակին հայերին պատկանող խաղողի այգիների մասին իր պատմությունը: Մեր գրուցակիցը հիշում էր իր հոր պատմած պատմությունների մանրամասները և նույնիսկ այգիների հայ տերերի անուններ էր տալիս: Նա ոգևորված էր և ուզում էր, որ խումբը՝ հատկապես հայ անդամները, խաղող ուտեն. «Փորձեք այս խաղողը, այն ձեր պապերինն է»: Ինչպես նա նշեց՝ ոչ բուրքերը, ոչ էլ քրոքերը գինեգործությամբ առանձնապես չեն զբաղվել:

«Խաղող աճեցնում էին հայեր՝ գինի քաշելու համար: Դայս գինեգործությամբ զրավող քիչ մահմերականներից էր: Այս հողը հորս սեփականությունն է. նա գնել է այն գանձարանից<sup>1</sup>: Յողը գանձարանին էր պատկանում, քանի որ հայկական էր: Գանձարանը վաճառեց այն իմ հորը: Այն ժամանակ նրանք, ովքեր միջոցներ ունեին, կարող էին գանձարանից գնել բռնագրավված հողը: Յորս հողը պատկանել է Սիփանին»:

Մինչեւ Թեֆիկը թվարկում էր նախորդ հողատերերի անունները, մենք հասկացանք, որ նա հայերին կապում էր գինեգործության հետ: Բարեբեր հողն օգնում էր Թեֆիկին կենդանի պահել հայերի մասին իր պատկերացումները և հոր պատմած պատմությունները: «Այս հողերը շատ բերրի են: Նոյնիսկ ոչինչ էլ չտնկես, միևնույն է, բերը է տալու: Արմատներն օձի ննան են: Երբ գարունը գալիս է, թարմանում են, իին կաշին նորով են փոխում, բացատրեց Թեֆիկը՝ ավելացնելով, - այս հողը մշակվել է երկու հազար տարի շարունակ, տարածքն առնվազն հազար տարեկան է»: Խաղողի մասին պատմելիս թուրքերն «ուզում»-ի փոխարեն Թեֆիկը հայերն «խաղող» բառն էր օգտագործում: Այսօր Մուշում ընդամենը մի քանի խաղողի այգի կա, բայց հայ խաղողագործների

1. Հայերից վերցված ունեցվածքը սկզբում գրանցվել է որպես «լրված ունեցվածք», այնուհետև անցել պետական գանձարանին: Ունեցվածքի մեջ մնաց տրվել է Բալկաններից ու Կովկասից եկած փախստականներին, իսկ մնացածը վաճառվել է տարբեր ծագորդների (իհմնականում «Տնտեսության ազգայնականացում») շրջանակներում:

Ժառանգությունը չի անհետացել: Ժամանակին Մուշում վեց գինու գործարան է եղել: «Տրամք գինին ուղարկում էին Եվոպա՝ Ֆրանսիա»: Բացի խաղողից, Թեֆիկը մեզ թեյ և սուրճ էր ուզում հյուրասիրել, բայց այնքան շատ էինք, որ բաժակները չհերիքեցին: Թուրքական ասացվածքն ասում է՝ մեկ բաժակ սուրճը հավասար է քառասուն տարվա ընկերությանը: Փաստորեն մենք ոչ սուրճ խմեցինք, ոչ էլ թեյ, բայց հասկացանք, որ մեկ ողկույզ խաղողն ավելին արժե, քան մեկ բաժակ թուրքական սուրճը և հավասար է ամենաքիչը հազար տարվա ընկերության: Այնպես որ մենք բախտավոր էինք, որ կարողացանք խաղող համտեսել: Հարածեշտի ժամանակ մեթիկն իր ողջույններն ուղարկեց Հայաստան. «Եթե նրանք վերադառնան, այն, ինչ ես ունեմ, իրենցն է: Ես ցույց կտամ նրանց այս բոլոր այգիները»:

Հաջորդ կանգառը Մուշի հին բաղամասն էր, որտեղ մի տուն գրավեց մեր ուշադրությունն իր գեղեցկությամբ: Տան շուրջը պատվելիս հանդիպեցինք Սալիմին և իր ընտանիքին: Սալիմը ապրում էր Պետրոս Էֆենդի անունով հայի տանը և նախկին տանտերերից մնացած մի քանի իր ուներ:

«Այս տունն ավելի ուշ է կառուցվել: Ես մյուս տանն եմ ծնվել, այ այնտեղ [ցույց է տալիս պարտեզի ուղղությամբ], բայց այդ շենքը փլատակ է իհմա: Իմ նախնիներն այս վայրը Պետրոս Էֆենդուց են ժառանգել: Չգիտեմ՝ ինչ եղավ իր հետ: Մի տուրիստական խումբ կար, Երևանից էին եկել, Սարիհամ Աստվածածնի եկեղեցին տեսնելու: Նրանցից մեկը Սան Ֆրանցիսկոյում էր ապրում և ինձ ասաց, որ ճանաչում էր Պետրոսին: Ասաց նրա թոռներից մեկը Վրաստանի կողմերում է ապրում»:

Հայերից մնացած իրերից Սալիմը կարևորում էր հատկապես մեծ հայելին: Նա ասաց, որ պահելու է հայելին այնքան ժամանակ, մինչև հայ տիրոջ թոռները գան, այն տանեն.

«Դորս հորից է մնացել: Ես գիտեմ, որ հայելին այն տնից է, որտեղ ես եմ ծնվել: Պապիցս անցել է հորս, հորից՝ ինձ: Միգուցէ ինձնից էլ իմ թոռներին անցնի»:



Սալիմի կինն իր հերթին պատմեց, որ «հայերից մնացած ուրիշ բաներ էլ կային՝ զգեստապահարան, սկուտեղ, թաս, պղնձե մեծ կաթսա և թավա... Միայն երկու կաթսա է մնացել և մի թաս, ուրիշ ոչինչ»:

Սալիմը չնանրանասեց, թե ինչ է եղել մյուս իրերի հետ, բայց հնարավոր է, որ դրանք գողացվել են: Արյունքում մնացած իրերն ընտանիքը թաքցնում է տան ձեղնահարկում: Սալիմը պատմեց նաև իրենց թաղի մասին իր պատմածները.

«Մուսուլմաններն ապրում էին վերին թաղերում և ամրոցի հետևում: Յայկական թաղը ներքեւում էր՝ ցորենի դաշտերից մինչև առում: ճանապարհի մյուս կողմում ֆրանսիական դպրոցն էր ու գերմանական հիվանդանոցը»:

Երբ մոտեցանք պատուհանին՝ դպրոցի և հիվանդանոցի փլատակները տեսնելու, Սալիմը կնոջը խնդրեց ինչ-որ բան բերել: Կինը մի այցեքարտ բերեց՝ Վրան անուն և կոնտակտային տվյալներ:

«Մի գերմանացի [նորվեգացի Բոդիլ Բյորնին նկատի ումի] բուժքույր էր այստեղ ապրում, անունը՝ Բոդիլ Բյորն: Նոր թոռը եկել էր Մուշ և միաժամանակ մեր տանն էր ապրում: Նա մեզ նույնիսկ նորվեգիա հրավիրեց, բայց ինքներդ եք տեսնում մեր պայմանները, ինչպես այդքան ճանապարհ կտրենք-անցնենք: Յայրս ասում էր, որ Բոդիլ Բյորնը գեղեցիկ կին է եղել և տաղանդավոր հեծյալ: Յայրս ընտանիքի միակ արու զավակն էր, և պասս նրա համար Բոդիլ Բյորնից իր ձին է խնդրել: Բայց վերջինս մերժել է, որովհետև ձին մի քահանայի նվեր էր: Նա պապիկիս ասել է, որ նվերը վաճառել չի կարող»:

Սալիմի համար Պետրոս էֆենդու տանն ապրելը, հայելին և մյուս իրերը երկակի նշանակություն ունեին անձնական և մշակութային պատմության համատեքստում: Նա խնամքով պահպանում է դրանք՝ հույսով, որ մի օր վերադարձնելու է լիիրավ տերերին:



Մուշ քաղաքից բացի, մենք հարցազրույցներ ունեցանք նաև մոտակա գյուղերում: Մի չերքեզարնակ գյուղում խոսեցինք Մումբազ անունով մարդու հետ, որն արաբական ծագում ուներ: Մումբազն իր հորից և պապից հայերի մասին շատ պատմություններ էր լսել: «Չենգիլիում մի եկեղեցի կա, որ նախկինում հեթանոսական հավատատեղի է եղել: Յայերը, որպես առաջին քրիստոնյաներ, իին շենքը եկեղեցի են դարձրել: Յայերն այստեղ ապրել են Քրիստոսից առաջ», - պատմում էր Մումբազը:

Նա իր պապերից հայերի առօրյա կյանքին և մասնագիտություններին առնչվող պատմություններ էր լսել:

«Մարդիկ գինեգործությամբ էին զբաղվում, և Մուշի գինեները մեծ պահանջարկ ունեին Ֆրանսիայում: Մեր դիմացի այգիները ինչերելի այգիներն են, այն կողմում Փամուկի և Սոնգոկի այգիներն են: Յայերը զբաղվում էին նաև արհեստագործությամբ և դարբությամբ»:

Մինչ մենք քննարկում էինք հայկական կյանքը Մուշում, Մումբազի որդին դրտուկ էր նվազում: «Մենք այն անվանում ենք հայկական գործիք, մենք գիտենք, որ այն հայկական է, բայց այս ընթացքում անունը փոխվել է: Հիմա մենք դրտուկին «մեյ» ենք ասում, բայց գիտենք, որ հայկական է»:

Չենգիլի գյուղում, որը, ըստ տեղի տարրական դպրոցի ուսուցչի, իր անունը ստացել է եկեղեցու զանգ կամ «չան» բառից, մենք շրջեցինք Սուլը Կարապետ վանքի ավերակներում: Քայլելիս նկատեցինք, որ գյուղի տների շարվածքում օգտագործված որոշ քարեր տարբերվուն են մյուսներից: Դրանց վրա հայտառ գրություններ, արձանագրություններ, քրիստոնեական նշաններ, քանդակներ և պատճեններ կային: Գյուղացիներն օգտագործել էին վանքի քարերն իրենց տները կառուցելիս: Տեսրի պատերին այլ նշաններ և արձանագրություններ էլ կային, որոնք փաստուն ամրագրում էին տան կառուցման տարեթիվը, օրինակ՝ 1962: Նման արձանագրություններ Մուշի մյուս գյուղերում չէինք նկատել: Տեսանք նաև այլ կրոնական և մշակութային խորհրդանշեր, որոնք 1915-ից հետո փոփոխվելով գյուղի նոր կյանքին և նոր բնակչություններին: Թվում էր, որ տների վրա նմանատիպ գրառում-

Աեր կատարելով՝ մարդիկ փորձում են խորհրդանշորեն ընդգծել իրենց կապը Մուշի հետ, այսինքն՝ նման գրառումները գրեթե նույն գրոժառույթն ունեն, ինչ Յայստանում տապանագրերն ու անձնական փաստաթղթերը։ Պատերին փորագրված տարեթվերն ասես ներկայացնում են բնակիչների՝ պատմությունն այդ կետից վերսկսելու ցանկությունը, ծիչու է, ավերակների վրա և անցյալի ճնշող ներկայությամբ։

Սշո՞ Գոնս գյուղում հանդիպեցինք Մեհմեթ Քոչին, որը մեզ պատմեց հերթական հայկական խորհրդանշիչի «Փորկության» պատմությունը։

«Այստեղ մի քար կա, գյուղացիներն էին բերել։ Գյուղամիջում եմ տեսել ու այստեղ բերել։ Բերեցի ու փրկեցի։ Պատմական հուշարձան է, վրան հայերեն գրություն էլ կա, խաչ, ներքևի մասում էլի ինչ-որ բան»։

Մեհմեթը հիշում էր՝ ինչպես էր իր հայրը բնութագրում հայերին։

«Յայրս ասում էր՝ հայերը խիոր, կարեկցանք գիտեին։ Նրանք լավ մարդիկ էին, աշխատասեր»։

Մուշում հայերի կյանքի մասին գեղեցիկ պատմություններով Մեհմեթ Քոչը պահպանում էր Գոնսում հայերի ժառանգությունը։

Բոլոր բերված պատմությունները հուչում են, որ Մուշի ներկայիս բնակիչներից շատերը տարբեր ձևերով կապված են հայերի և նրանց պատմության հետ։ Ավերակ դարձած բազմաթիվ հայկական եկեղեցիները, լրված տներն ու ունեցվածքը, կալվածքները Մուշի այսօրվա բնակիչների համար ցավագին անցյալի և իրենց հայ հարևանների՝ հայրենիքից բռնի վերացման հիշեցումն են։

Միևնույն ժամանակ Յայստանում հաստատված ընտանիքները պահպանում են իրենց նախնիների հիշողությունները երգից բերված և փայփայված մասունքների միջոցով։ Եվ, իսկապես, մեր տեսած բոլոր իրերը եղակի էին և լի զգացմունքային բովանդակությամբ՝ խորհրդանշելով սերնդեսերունդ փոխանցված հայրենիքի գեղեցկությունն ու հարստությունը։

Մուշում և Յայստանում անցկացրած ժամանակը

ցույց տվեց, որ պատմությունը վերացական չէ։ Մենք հասկացանք, որ որոշ գործիքների միջոցով հնարավոր է թվայալ վերացականը դարձնել շոշափելի։ Յարցագրույցների ժամանակ տեսանք այն իրերն ու խորհրդանիշները, որոնք մեր գրուցակիցներին կապում են իրենց անցյալի հետ և վերակենդանացնում այդ անցյալը մեր բոլորի համար։ Միևնույն ժամանակ շատ բան ստվորցինք բռնության և մարդկային ոգու տոկունության մասին պատմություններից, հանդիպեցինք մարդկանց, որոնք չեն կարողանում զապել իրենց գգացմունքները 1915-ը վերապրած հարազատների մասին պատմելիս։ Չնայած մի ամբողջ դար է անցել, պատմությունը չի մոռացվել, և շատերի համար կորստի խոր ցավը դեռ շատ թարմ է։

Ամենակին հեշտ չէ հասկանալ, թե ինչու էին Յայստանի մեր գրուցակիցներն այշչափ խորը կապված թուրքական մնացած հողերին, որոնք նրանցից շատերն անգամ չեն ել տեսել։ Ծնողների ու ասպերի ոլրերգական ճակատագրերը ժառանգներին երբեք թույլ չեն տա պատմությունը մոռանալ։ Յիշողությունները կենդանի են, և Մուշից բերված իրերը հիշելու խթաններից մեկն են։ Այդ է պատճառը, որ Յայստանում բազմաթիվ մարդիկ նույնացնում են իրենց անցյալն ու անցակըներին հայրենիքից բերված հազվադեպ առարկաների հետ։ Մինչդեռ նման իրերը շատ քիչ են, դրանք հույս են ներշնչում հեռվում բողած մյուս բաների հետ կապված։

Այնուամենայնիվ կա մի բան, որ հայերը, ոչ միայն մշեցի հայերը, բերել են երգից։ Դա Արարատ լեռն է։ Չնայած Արարատը որպես կանոն ոհոտարկվում է բիրլիական համատեքստում, հայերի մոտ այն սրբացվում է։ Սա է պատճառը, որ Յայստանում մարդիկ փորձում են այնպիսի բնակարաններ ընտրել, որոնց պատուհանները կամ պատշգամբները նայեն Արարատին։ Յայստան Յարավային Կովկասի լեռնոտ երկրներից է, և այստեղ բազմաթիվ այլ սարեր կան, բայց հայերի կարուտը Արարատն է։ Յայստանում մեր գրուցակիցներից Յակոբը, խոսելով Մուշի մասին, շրջվեց դեպի պատուհանը, որից Արարատի գեղեցիկ տեսարան էր բացվում, և ասաց։

«Եթե ես երբեկ այնտեղ գնամ, ուզում եմ Արարատի մյուս կողմը տեսնել»։

Յայերի համար Արարատը կորուսյալ հայրենիքի հետ կապող կենդանի պատմություն է։ Մեր հայստանցի



գրուցակիցների տներում էրգրի տարբեր խորհրդանիշեր տեսանք: Դավիթ Յովսեփյանի համար դա թասն է, Արամայիս Խորայելյանի համար՝ գոտին: Բայց էրգիրը խորհրդանշող այս անձնական իրերից բացի, Արարատի խորհրդանիշը ամենատարածվածը և համախմբողն է, որը բոլոր հայերի համար մարմնավորում է ազգի անցյալը, ներկան և ապագան:

Մենք Արարատի երկու կողմերում ապրող մարդկանց իետ հանդիպելու հնարավորություն ունեցանք: Լսեցինք և գրի առանք Եզակի պատմություններ և ունեցանք իրարամերժ զգացումներ: Մենք՝ Դայաստանից և Թուրքիայից եկած ուսանողներս, այս բոլոր պատմությունների միջով միասին անցանք՝ հասկանալով, որ հնարավոր չէ խաղաղ ապագա կառուցել՝ առանց ընդունելու մեր ընդհանուր պատմության ցավն ու ողբերգությունը:

Մեր փորձը ցույց տվեց, որ պատմությունը ստատիկ և անցյալում մնացած երևոյթ չէ: Այն կենդանի է, քանի դեռ կան մարդիկ, ովքեր հիշում են իրենց նախնիների պատմությունները: Արարատի երկու կողմերում տեսած նյութական մշակույթի տարրերը՝ լինի դա թաս, թե եկե-

ղեցի, պահպանում են պատմությունը: Մարդկանց խորը անձնական կապվածությունն այս հիշողություններին և առարկաներին մեզ հույս է ներշնչում, որ բոլորն են ուզում ավելի լավ ապագա, որտեղ անցյալը չի մոռացվի, այլ կիհշվի: Նման պարզ բաները պատմությունը ներկայացնելու, անցյալը մարմնավորելու և ապագան խորհրդանշելու մեջ կարողություն ունեն:



ԼՈՒՍԱՆԿԱՐՎՈՒԹՅՈՒՆ



## Ներածություն

Տեղական պատմության այս ծրագիրը պետք է պատկեր և վավերացներ հիշողությունն առօրյա կյանքում՝ Մշտական դաշտում և Հայաստանի՝ նշեցիներով բնակեցված շրջաններում։ Սա մեր գլխավոր խնդիրն էր, որպես առանձին լուսանկարչության խումբ՝ Թուրքիայից և Հայաստանից եկած մասնակիցներով։ Խնդրեից յուրաքանչյուրն ուներ տվյալներ հավաքելու, դաշտային աշխատանքի և ստացված արդյունքները ներկայացնելու իր ձևը։

Ծրագրից քաղված կարևոր դասերից մեկն այն էր, որ մեր կենսափորձը, ինչպես օրինակ՝ մեր պատմած ու լսած պատմությունները, պատկերներ են թողնում իրենց հետևից։ Յասկացանք, որ իիշելը երթեմն շատ անձնական է։ Բացահայտեցինք, որ սահմաններ հատելով՝ պատմություններով կիսվելը շատ բարդ գործընթաց է՝ լինեն դրանք իրական, մշակութային, զգայական թե մետաֆիզիկական սահմաններ։ Մեր աշխատանքի միջոցով բացահայտեցինք լուսանկարչության՝ ինքնուրույն պատմելու ուժը, որը տարբերվում է խոսքից, տեքստից կամ բեմադրությունից։

Լուսանկարչությունը նմանություն է հաղորդում այնպիսի առարկաների, որոնք կարող են միայն թեք ընդհանրություններ ունենալ։ Տարբեր և չկապակցված առարկաները, վերարտադրվելով միևնույն էջի վրա, կարող են նույնական և կապակցված թվական։ Ցուրաքանչյուր իր կորցնում է իրեն հատուկ գույնը, խստությունը, հարաբերական չափերն ու ծավալը, սակայն մի ընդհանուր ոճ է ստանում։ Այսպես, լուսանկարի շրջանակում ոչինչ չի կարող գոյություն ունենալ նոյն շրջանակում տեղ գտած մյուս դրվագներից անկախ։ Լուսանկարչի քաղաքական օրակարգը, անձնական պաշարն ու ոճը նույնական անհնար են դարձնում լուսանկարում որևէ դրվագի պատահական լինելը։

Այս տեսանկյունից Մշտական դաշտում և Հայաստանի տարբեր վայրերում մեր արած լուսանկարներն ավելին են, քան պարզապես տեսարանների կամ դիմանկարների հավաքածու, որը գեղագիտորեն արժեքավոր էր ժապավենի վրա ամրագրվելու համար։ Միևնույն տեղում գետեղված տարբեր ժամանակային գոտիները, իին պատմությունների մեկնաբանությունները բացվեցին մեր առջև, և լուսանկարչությունը, որպես գործիք, մեզ հնարավորություն տվեց ծևավորելու այլընտրանքային տեսողական մոտեցում այս բոլոր իրավիճակները հասկանալու, զգալու և կիսելու համար։ Ավելին, լուսանկարչությունը, որպես գործիք, միավ-

թեց ուր տարբեր մարդկանց, սիրողական մակարդակի լուսանկարիչների, որոնք բոլորն էլ խանրավառված էին իրենց վերագրված նոր, լուսանկարիչ - վավերագրողի դերը կատարելու նտքով: Այստեղ կարևոր է նշել, որ նաև նակարագիները մտահոգ ու անհանգիստ էին լուսանկարչությունը՝ որպես շրջակայիրի, հատկապես տեղացի մարդկանց հետ հաղորդակցվելու գործիք օգտագործելու հարցում: Մեր լուսանկարիչների ունեցած հիմնական զգացողությունն առնչվում էր լուսանկարելու գործնթացի էթիկային: Ինչպես մի անգամ արտահայտվեց մասնակիցներից մեկը, նրանց թվում էր, թե իրենք գորդանում են լուսանկարված մարդկանց կյանքի պահերը: Սա այն դժվարություններից է, որոնց հանդիպում է լուսանկարիչը նախատիպ աշխատանք կատարելիս: Ինչպես նշում է հայտնի ամերիկացի գորոդ ու գրական կերպար Սյուլզան Չոնթագը, լուսանկարել մարդկանց, նշանակում է բռնանալ նրանց վրա՝ տեսնելով նրանց այնպիսին, ինչպիսին իրենք իրենց երեք չեն տեսել, նրանց մասին իմանալով մի բան, որը նրանց հասու չէ. դա մարդկանց վերածում է իրերի, որոնց հենարավոր է սիմվոլիկ կերպով տիրանալ: Այս զգացողությունը հավանաբար վկայում է մասնակիցների՝ իրենց ուրիշ մեջ իրական ներգրավման մասին:

Մեր ապրած արկածներն ու պատմությունները տարաբնույթ էին և գունագեղ: Լուսանկարչական ակնարկները հիմնականում անդադառնում են նյութական մշակույթին, որը յուրացվել կամ ամտեսվել է հաջորդ սերունդների կողմից, մարդկանց, որոնք հիշողությունների ու պատմությունների կրողներն են, մեր ապրումներին, թե ինչպես ենք մենք պատկերացնում այդ մարդկանց միջև շփումը, ինչպես ենք մենք զգում վախճ, անվատահությունը, մտավոր սահմանները, բայց միևնույն ժամանակ փոփոխության ցանկությունը: Լուսանկարչության խնդիր ակնարկների ծևաչափը վիզուալ ներկայացումից զատ իր մեջ ունի նաև մարդարանական նոտեցում մեր պատմություններին: Այս բոլոր փորձառությունները, պատմությունները, հիշողությունները, զուգորդումները, իրադարձությունները, որոնք ազդել են մեր գիտակցության վրա, մեր բոլոր խնճերի կողմից դասակարգվել են այլընտրանքային, մտավոր քարտեզի վրա:

Ծրագրի հիմնական նպատակներից մեկն էր ցույց տալ, որ քաղաքը լոկ հողի կտոր չէ: Յուրաքանչյուր քաղաք որոշակի տարածք է գրադեցնում Երկրի վրա, սակայն քաղաքն ավելին է: Քաղաքը մեր մտածողության և հիշողության մեջ էլ է տեղ գրադեցնում, եթե անգամ մենք ֆիզիկապես հեռու ենք նրամից: Այս գիտքը, հատկապես լուսանկարչության

բաժինը, փորձում է ցույց տալ, թե ինչպես է ժամանակակից Մուշն իր շրջակա գյուղերով ընդարձակվում ու ներխուժում առօրյա, ձև ստանում, իսկ հետո ապրվում մեկ այլ համատեքստում՝ Հայաստանի Հանրապետության՝ մշեցիներով բնակեցված գյուղերում: Նման «ընդարձակումը» հնարավոր է դաշնում պատմությունների սերնդեսերունդ փոխանցմանը (հիշողության միջոցով), այնտեղից բերված իրերի գործածնամբ (նյութական մշակույթ) և անցյալում մնացած վայրերի հետ կապ պահպանող մարդկանց հանդիպելով:

Մենք ոչ միայն ձեռնարկեցինք այս հանդիպումները Հայաստանում և Մուշում, այլև փորձեցինք մեր լուսանկարներով տեսանելի դարձնել, թե ինչպես է Մուշը տարածվում ու Հայաստանի առօրյա ներխուժում հիշողության և նյութական մշակույթի միջոցով: Նախքան ծրագրի երկշարայրայացածային աշխատանքները Մուշում և Հայաստանում լուսանկարչության խնդիր ոչ մի մասնակից պրոֆեսիոնալ լուսանկարչության փորձ չի ունեցել: Նրանք կրթական տարրեր ուղղություններից էին, սակայն հասկացան մեր ծրագրի գլխավոր խնդիրները՝ վավերագրել և մեկնաբանել մարդկանց և հողի միջև ներևա գոյություն ունեցողը, բայց հետզիտեն մարող կապը: Ավելին, նրանց հաջողություն հասկանալ Մշու դաշտում և Հայաստանում մեր այցելած գյուղերի բնակչության ներկայիս կյանքը ու կենսակերպը: Այսպիսով, մենք համատեղ ստեղծեցինք Երկու ճամբարների ընթացքում մեր ձեռք բերած փորձի լիարժեք պատվերը:

Մեր խնդիր աշխատանքի ընթացքում ի հայտ եկած խնդիրն այն էր, որ մասնակիցներն իրար հետ քննարկելու, կիսելու կամ անգամ բանավիճելու շատ բան չունեին. սա կամ դժվարամարս պատմությունների նկատմամբ ունեցած անհատական մոտեցումների հարց էր, կամ լուսանկարչության ազդեցությունն էր՝ մեզանից յուրաքանչյուրի տեսածն ու նկարածը: Պատկերներն այնքան հարազատ էին մասնակիցների սրտին ու երևակայությանը, որ նրանք չկարողացան դրանք ավելի լայն քննարկման առարկա դարձնել: Այդ է պատճառը, որ այս գլխի լուսանկարչական ակնարկները համեմատարար վերացական և նկարագրողական են. առաջին հայացքից դրանք կարող են անգամ փափուկ ու միամիտ թվական: Դրանք ընթացքողի մոտ սուր զգացողություններ չեն առաջացնում, այլ առավելապես տայիս են սուր թեմաները հանգիստ զննելու հնարավորություն: Այս ակնարկներում գլխավոր դերակատարը լուսանկարներն են. նրանք ինքնուրույն են իրենց ասելիքի մեջ և բաց են դիտողի զանազան մեկնաբանությունների համար:

# Սահմանագրկելով անցյալը, վերականգնելով ներկայի պատկերը՝ քարտեզագրությունն ու պատմասացությունը ազգային- պետական սահմանների դարում Բերուլ Կայա (Թուրքիա)

Այս ծրագիրն ինձ բազմակողմանի ուղևորության տարավ դեպի քաղաքի անցյալը: Ժամանակային ճանփորդությունն ինքնին բավական բարդ էր: Հաճախ զգում էի ժամանակակից դիմուլսների մեջ քանված անցյալը և այն բացահայտելու համար բանալիներ որոնելու անհրաժեշտությունը: Նախքան այս ծրագիրը Մուշ այցելելու հեռանկարն ինձ առանձնապես չէր հետաքրքրում: Ծրագրի միջոցով այս քաղաքը այցելելն ու տեղի մարդկանց հետ գրուցելն ինձ ստիթեց խորհել քաղաք հասկացության, ինչպես նաև լեզվի, տարածության ու ժամանակի՝ գաղափարի վրա ունեցած հարկադրանքների մասին: Ես մտածեցի, թե ինչպիսին կլիներ Մուշը, եթե կարողանայինք հաղթահարել այդ սահմանափակումները և ներառել պակասող մասերը՝ քացակա մարդկանց, լեզուները, մշակույթներն ու պատմությունները: Տեսնելով մարդկանց լյանքի պատմությունները լսելու հանդեպ մեր հետաքրքրությունը՝ ընտանիքի և լյանքի մասին խոսելու խանրավառությունն անմիջապես աճեց և դարձավ մեծ քայլ՝ այս սահմանափակումներից այն կողմ արահետ ստեղծելու համար:

Մեր գրուցների ընթացքում ինձ անձնական և ընտանեկան իրեր՝ գոտիներ, կառաւետներ, օրագրեր, ինչպես նաև եկեղեցու ավերակներ էին ցոյց տալիս: Սա ինձ օգնեց մտովի ստեղծել Մուշի մի քարտեզ, որը պայմանավորված չէր տարածությամբ, ժամանակով կամ լեզվով: Ծրագիրը ֆիզիկական և մետաֆիզիկական ուղղություն էր, որի միջոցով ես հաղորդակից դարձա Մուշի շատ սիրված ու իշխվող «փառահեղ օրերին», ծանոթացա իր գինով հայտնի Մշո դաշտին, կարողացա պատկերացնել այն ժամանակները, երբ դաշտն ամբողջովին պատված էր խաղողի այգիներով, ծանոթացա սերունդներ առաջ եղած երգերին, որոնք մինչ օրս հիշվում և երգվում են, անգամ Մշո ավանդական պարերը սովորեցի: Նման փորձ ես ունեցա թե՛ Մշո դաշտում և թե՛ Հայաստանի այն գյուղերում, որտեղ ապրում են մշեցիների ներկայիս սերունդները: Այս երկվությունն ինձ օգնեց ստեղծել միացյալ քարտեզ՝ այս երկու վայրերում մեր գրուցների, երգերի, պարերի և միասնական քննարկումների նշումներով:

Մուշի այս նոր պատկերը բաղկացած է ոչ միայն մեր անձնական պատմություններից, այլև Թուրքիայում և Հայաստանում մեզ հետ կիսած հիշողություններից: Հայաստանում մենք հանդիպեցինք մարդկանց, որոնց համար Մուշն իրենց հայրենիքն էր. Վայր, որտեղ իրենց նախնիներն ապրել են սերունդներով, բայց և վայր, որն իրենց պապերը հարկադրաբար լրել են:

Հայաստանի և Թուրքիայի միջև քաղաքական սահմաններն այսօր փակ են, սակայն Հայաստանում ապրող շատ մշեցիների, ինչպես նաև Մուշի ներկայիս բնակչների համար այդ սահմանները բաց են հիշողության շնորհիվ: Այս մարդկանց համար «հայրենիք» հասկացությունը ծևավորվել է շատ վաղուց, նախքան ներկայիս քաղաքական քարտեզների հաստատումն ու գժագրումը: Զայած առկա ֆիզիկական սահմաններին՝ մարդկի, որոնց հանդիպել ենք Հայաստանում, հավանաբար կնախընտրեին իրենց ներկայիս բնակվայրը տեղադրել Մուշում, իրենց նախնիների գյուղերին հնարավորինան մոտ: Պատահական չէ, որ ներկայիս Հայաստանում նրանք, ովքեր ծագումով Մուշից են, մինչ օրս շարունակում են մշեցի կոչվել: Այսպիսով, նրանք հեշտությամբ կոտրում են իրենց պարտադրված «հայրական» սահմանները:

Մշո դաշտում հայրենիքի տեղակայումն արտահայտում է ինչպես տաճ, այնպես էլ տեղահանման զգացողություն: Սահմանները ներխուժում են Հայաստանում ապրող մշեցիների գյուղերը, նրանց մտքերը, նրանց տանը և տանից հեռու լինելու զգացողությունների մեջ՝ այսպիսով վերարտադրվելով առօրյա կյանքում: Սակայն սա պարզ փորձառություն չէ: Մինչեւ սահմանների գաղափարն այնպես հեշտությամբ քանդման ենթակա է թվում մեր անձնական քարտեզներում՝ իրական բաժանումն անհնար է անտեսել:

«Նրանք որոշել էին վերադառնալ, երբ ճանապարհները բացվեն», - ասաց 80-ամյա մի ծերունի Հայաստանի Կարճաղբյուր գյուղում: Եվ նրանք համապատասխանաբար կառուցել էին իրենց կյանքը: Գյուղերից մեկը, օրինակ, երկար տարիներ չըներ գերեզմանոց, քանի որ մտադիր էին վերադարձներին թաղում էին մեկ այլ սահմանամերձ գյուղում, որպեսզի, երբ սահմանը բացվեր, ստիպված չլինեին նախնիներին լրել: Նման փորձն ուժեղացնում է կապվածությունը ֆիզիկապես հեռու, բայց հիգիենիկ մոտ վայրերի հետ: Սա լինում է պապերի հուշագրությունները լարդալով, նրանց պատմությունները կապակները, կճուճները, սովորույթները, ավանդույթները և այլն, պահպանելու միջոցով: Սրանք ամենօրյա գրուղություններ են, որոնք մեղմում են տեղահանման և բաժանման զգացումը:



Հայկական Սուլրք Կարապետ վաճիքի քարերից շարված տան պատը Թուղթիայի Չենգիլի գյուղում: Աբ. Կարապետ վաճիքի ավերակներից հավաքած քարերը վերանշակվել և օգտագործվել են Չենգիլի նոր տների պատի շարվածքում: Զավեշտական է, որ անցյալը կազմաքանդվել և վերսակառուցվել է ներկայի մեջ: Սակայն հայերի համար, որոնք գիտեն վաճիքի պատմությունը, տան շինությունների (հատկապես՝ ախոռների ու գոմերի) մեջ օգտագործված այս քարերը ստեղծում են նոր

ժանր սահմաններ: Նրանք կարծում են, որ իրենց մշակույթը, պատմությունն ու հիշողությունն անարգված են: Չնարավո՞ր է արդյոք, որ այս քարերը, որոնք ներկայացնում են անցյալն ու ներկան միաժամանակ, իրենց իսկ գոյությանք կոտրում են սահմանը տեղի բնակիչների և հայ այցելուների նիշեր: Արդյո՞ք կիասկաննք, որ անցյալն այժմ բոլորինս է, միայն թե տարբեր ձևերով:



Հայաստանում մեր այցելած շատ տներում ցույց էին տալիս իրենց ընտանեկան ալբոմները: Այս ալբոմները հիշեցումներ են ընտանիքի ծեր կամ մահացած անդամների մասին: Լուսանկարները, փաստորեն, այս մարդկանց քարտեզների բազում մանրամասների ցուցիչներ են:




Մշո դաշտը աստվածաբան և լեզվաբան, հայոց գոերի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի ծննդավայրն է: Յետևելով լեզվական զարգացմանը՝ Մշո դաշտի շատ եկեղեցիներ վերափոխվեցին կրթական կենտրոնների՝ ընդարձակ գրադարաններով: Դպրոցների այս ցանցը տեղացիներին գրավոր մշակույթ տվեց: Այսօր գրավոր մշակույթի նման օրինակներ, ինչպես՝ հուշագրությունները, շատ հին աստվածաշունչ մատյանները, ծեռակերտ քարտեզները, գրքերում կատարված անձնական գրառումները, երեմն անգամ քուրքերեն, առանց սահմանների վկայություններ են: Դրանք կյանք են տալիս սերունդներից եկած պատճություններին: Քանի որ սրանք շոշափելի առարկաներ են և տներում իրենց հատուկ տեղն ունեն, վերջիններս հիշողության ամենօրյա ծանուցում են:





«Թույլ տվեք ձեզ մի պատմություն պատմել», - ասաց 80-ամյա մի ծերունի Կաթնաղբյուրից: Այդ պահին ես գիտակցեցի, որ յուրաքանչյուր քարտեզագիր առաջին հերթին պատմություն ասող է: Իրենց հիշողությունների ու պատմությունների միջոցով մարդիկ իրենք պատում երի և քարտեզների օբյեկտներն ու սուբյեկտներն են: Օրորոցայինները, երգերը, անհայտ լեզվով (հավանա-

բար քրդերեն կամ թուրքերեն) փոքրիկ բառերը, որոնք անցել են սերնդեսերունդ և մինչ օրս հստակ հիշվում են, երբեք չեն կորցրել իրենց իմաստը: Չնայած մարդիկ լեզուն չեն հասկանում, նրանք կարող են հասկանալ բառերի միջոցով փոխանցվող զգացմունքներն ու հոգեվիճակները:



Երբ հիշողությունն այնքան լավ է պահպանված սահմանի հայկական կողմում, ցավալի է իմանալ, որ սահմանի մյուս կողմում ապրողները դեռևս տառապում են ճանաչման և հիշողության փոխանցման պակասից, հիշողությունը, որը երկար ժամանակ վնասվել ու ճնշվել է:



Գերեզմանոցները նույնպես հայրենիքի մաս են դարձել, քանի որ դրանք վկայում են անցյալի մասին: Մուշում մեր այցելած հայկական գերեզմանոցներն ավերվել են՝ թողնելով գերեզմաններն առանց տերերի: Սա մեզ հիշեցրեց Ռուկեասկ գյուղի 77-ամյա Ռաֆիկ Ավազյանի նման մարդկանց՝ մի մարդ, որը հիշատակում է 1915 թվականի սպանվածներին որպես «հայեր առանց գերեզմանների»:

# Սփոված բեկորներ

## Օգգե Սերգեյ (Թուրքիա)

### Ռուզաննա Բաղդասարյան (Հայաստան)

Սուրբ Կարապետի վանքը Մշո դաշտի ամենահին հայկական վանքերից է: Այն թվագրվում է մեր թվարկության 4-րդ դարով, երբ ավանդույթի համաձայն՝ Յայ Առաքելական եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորիչն այստեղ թաղեց Սուրբ Յովհաննես Սկրոտչի (Կարապետի) մասունքները: Տեղանքը, որը հայտնի էր իր հնը բնական աղբյուրներով, ժամանակին եղել է հեթանոսական սրբատեղի և դարեր շարունակ սրբազն է համարվել հետագա կրոնական ավանդույթների համար:

Վանքը պարուրված է ժողովրդական բանահյուսությամբ: Յայկական ավանդազրույցներից մեկը պատմում է, որ երբ Գրիգոր Լուսավորիչը սկսեց կառուցել Սր. Կարապետի վանքը, հաջորդ օրն այն ավերված գտավ այստեղ ապրող չար ոգիների կողմից: Զարքերին քաղելու համար նա մի փոս փորեց, բայց դրանցից մեկը Լուսավորչի ողորմածությունը խնդրեց: Գրիգոր Լուսավորիչը գրաց նրան՝ պայմանով, որ չարքն իր ողջ կյանքում կմնա վանքում: Դարեր շարունակ մարդիկ հավատում էին, որ չարքը վանքում է: Կա նաև մեկ այլ առասպել մի աղջկա մասին, որը մտնում է Սր. Կարապետ Եկեղեցին այն ժամանակ, երբ կանանց մուտքն արգելված էր: Յայտնի էր, որ Սր. Կարապետը կանանց նկատմամբ դաժան սուլը էր, և մարդիկ հավատում էին, որ եթե կինն աղոթարան մտնի, նա կանճիվի խելագարությամբ: Աղջիկը Սր. Կարապետից ամուսին է խնդրում, սակայն սուլըն այնքան է զայրանում նրա վրա Եկեղեցի մտնելու համար, որ վերածում է երկսեռ էակի: Մինչ օրս էլ Սր. Կարապետի վերաբերյալ շատ ավանդազրույցներ կան՝ երկակայության, խորհրդավորության և պատմության տարրերով:


Դարեր շարունակ վանքը տարածաշրջանի կարևորագույն հոգևոր և կրթական օջախներից է եղել՝ հայտնի իր գրադարանով ու տպարանով, ինչպես նաև բազմաթիվ խաչքարերով ու յուրօրինակ ճարտարապետությամբ: Կառույցը մի քանի անգամ երկրաշարժից վնասվել է 18 և 19-րդ դարերում, բայց և ամեն անգամ վերակառուցվել: Մուշի հայկական բնակչության բնաշնորհից հետո վանքը հողին է հավասարեցվել օսմանյան բանակի կողմից:

Հետագայում տարածում նոր բնակիչներ հաստատվեցին և վանքի ավերակների վրա հիմնեցին Չենգիլի

գյուղը: Տների կառուցման տարեթվերը, օրինակ՝ 1962, 1981 կամ 1991, աչքի էին զարնում մեր՝ Չենգիլի կատարած այցելության ժամանակ: Թվում էր, թե Սր. Կարապետի վանքից ոչ մի հետք չի մնացել: Սակայն շուտով հասկացանք, որ սխալվում էինք: Պարզվեց, որ անգամ գյուղի անունը՝ Չենգիլի, ծագում է թուրքերն «chanlı kılıç» արտահայտությունից, որը նշանակում է «ենթեցու զանգ», մի զանգ, որի ձայնն արձագանքում էր Մշո դաշտով մեկ: Ավելին, բազմաթիվ տներ կրում էին անցյալի դրոշմ՝ թե հիշողության և թե իրական քարերի տեսքով: Վանքի խաչքարերն ու քարարեկորները ցիրուցան են արվել և օգտագործվել որպես շինանյութ նոր գյուղի համար: Այս քարերը երևում էին Չենգիլիի տների հիմքերի ու պատերի շարվածքում՝ նոր քարերի հետ միասին:

Առաջին հայացքից Չենգիլիի բնակիչները պահպանուական էին թվում: Նրանք ապրում են մի փոքրիկ ու մեկուսի համայնքում, բայց և այնպես հաղորդակցվում են օտար մարդկանց հետ՝ գրուսաշրջության ակտիվ գործունեության միջոցով: Այցելության ընթացքում նկատեցինք, որ որոշ գյուղացիներ իրենց հեռու են պահում այցելուներից: Գյուղի տղանարդկանցից մեկն իր անհանգստությունն արտահայտեց, երբ տեսավ տեսախցիկներով ու ձայնագրիչներով շրջող մեր խումբը: Նա սկսեց տարբեր բառեր բացականչել մեր հասցեին՝ մեր՝ «Ermeni», այսինքն՝ հայ հյուրեր լինելու վերաբերյալ: Այս արձագանքին հակառակ՝ նրա հարևանութիւննեահասակ տիկին մեզ իր տուն հրավիրեց: Նա մածուն էր պատրաստում, որը բոլորին հյուրասիրեց մի մեծ փայտե շերեփով:

Ի տարբերություն ավագ սերնդի շատ երեխաներ, բացի քրդերենից, նաև թուրքերեն էին խոսում: Մենք՝ օտարականներս, հետաքրքրում էինք երեխաներին, և նրանք պատրաստականորեն օգնում էին մեզ բացահայտել, թե ինչով է իրենց գյուղը տարբերվում մյուսներից: Յայկական խաչքարերն ու զարդարանդակները ցրված էին անբողջ գյուղով: Որոշ ժամանակ անց երեխաներն ու մյուս գյուղացիները մեծ տարան մատուռ, որը գոմի էր վերածվել: Նրանք կարծես հպարտանում էին, որ իրենց կենցաղային շինությունը մի խումբ օտարականների համար այդքան կարևորություն ունի: Նրանք բացատրեցին, որ որոշ մարդիկ խնամում են իին վանքի մնացորդները և հասկանում վերջինիս կարևորությունը ոչ միայն որպես իրենց սեփականության մաս, այլև իր պատմական արժեքի համար: Գյուղացիներն ասում են, որ եթե խաչքարերն իրենց տների հիմքում չդնեին, հայկական հիշողության այս վերջին փոքրիկ թեկողները և կողոշեին:



Դ.Լինչ, Հայաստան. ճանապարհորդություններ ու հետազոտություններ. թուրքական նահանգները, Գլուխ երկրորդ, 1901: Այս գրքի լուսանկարները ժամանակին փառահեղ ու ծաղկուն վանքի վկայություններն են: Ներկայիս բնակիչները փորձում են պահպանել ավերակներն իրենց պատմական նշանակության համար:

Այստեղ պատկերված շինությունները որոշ գյուղացիներ ախորի են վերածել:



Գյուղացիներն իրենց առաջին տները Սբ.Կարապետ վանքի քարերով են կառուցել: Գյուղի մյուս նասերը հայտնի են հայկական խաչքարերով և այլ զարդարանդակներով:




Վերջիններս սփռված են ողջ գյուղով մեկ: Ամենազեղեցիկ գլուխգործոցները բաքնված էին ամենաանսպասելի վայրերում:




Ընդհանուր լեզվի բացակայության պատճառով զբոսաշրջիկները, որոնք հաճախ անգլիախոս են, տեղացի երեխաների հետ հաղորդակցվում են շարժումների և իրենց իմացած մի քանի անգլերեն բառերի միջոցով: Մեր հանդիպած տեղացի երեխաները շփվել էին անգլիախոս շատ զբոսաշրջիկների հետ և արդյունքում կարծում էին, թե այս հողերը ժամանակին անգլիական տիրապետության տակ են եղել:

Չենգիլիում միայն տարրական դպրոց կա: Միջնակարգ կրթության համար երեխաները Մուշ քաղաք են գնում: Աղջիկներին հիմնականում չեն թույլատրում դպրոցի համար գյուղից դուրս գալ, ուստի նրանք ամուսնանում և երեխանք են ուժենում շատ երիտասարդ տարիքում:





Չենգիլիի կանանցից շատերի հաճար օրն անցնում է տան գործերով՝ լավաշ թխելով, ձեռագործության վրա կամ ձմռան նախապատրաստությունների մեջ։ Այստեղ նրանք այնքան անհրաժեշտ հանգիստն են վայելում։



Որոշ կանայք բավականին հաճգիւտ էին զգում մեր ներկայությամբ և շարունակում էին առօրյա աշխատանքն առանց դադարի: Անորդածները լուսանկարվել չեն ցանկանում, մինչդեռ նյուსաները հաճույքով լուսանկարվում և անգամ խնդրում էին նկարմերն իրենց ուղարկել:

# ԱՆԻՐԱԿԱՆ, ԲԱՅՋ ՌԴՀ. ԻՐԱԿԱՆ, ԲԱՅՋ ՄԱՀԱԳՈՒ ԱՐՄԵՆՈՒԻԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ (Յայաստան) ԲԵՔՈՒԼ ԿԱՅԱ (Թուրքիա)

Յայաստանում Ար.Առաքելոց վաճռն ընկալվում է որպես ապաստարան: 1915 թվին Կրևսյան Անատոլիան սասանվեց ավերածությամբ: Գյուղերը ոչնչացվեցին, իսկ ընտանիքները տեղահանվեցին ու տարբեր կողմեր սփռվեցին: Երազանքներն ու հիշողությունները մնացին հետևում, եթե հայերին ստիպեցին հեռանալ: Առանց մտածելու հնարավոր վերադարձի մասին, առանց նախապես ծրագրելու՝ հայերն իրենց հետ վերցրին առաջին պատահած իրերը՝ գավաթներ, գլխաչորեր, գրքեր: Այսօր Առաքելոցից փրկված իրերը կազմնում են դրանց սեփականատերի հավաքածուի ամենաաժեքավոր մասը:

Առաքելոցի պատմությունը մեզ ստիպեց Մուշի ներկայիս բնակիչների և Յայաստանի գյուղերում ապրող մշեցիների կյանքում առկա երկու անորոշություն տեսնել:

Առաջին անորոշությունն առնչվում է դեպի Առաքելոց վաճռ մեր ճանփորդությանը: Առաջնորդվելով տեղացի ուղեկցողների կողմից՝ մենք չգիտեինք վաճռի գոնվելու ստույգ վայրը, բայց մեր լուսանկարչության խճռով կատարած «ուխտագնացությունից» հետո հասանք մի հին ու կիսավեր եկեղեցու: Եթե Մուշ քաղաք վերադարձանք, մեր միջև անվերջ քննարկումներ սկսվեցին: Եկեղեցու ճշգրիտ վայրի հետ կապված անորոշություն կար: Մեզ պարզապես սասահն, որ մեր գնացած վայրն Առաքելոցը չէ: Մեր կատարած քաղնարիկ լուսանկարները, հովհանքների հետ զրոյցները և արշավի ժամանակ ունեցած ապրումներն ամրապնեցին այն համոզնումը, որ մեր այցելած վայրն իսկապես Առաքելոց վաճռն էր: Գոնե մեզ համար դա Առաքելոցն էր: Այնուամենայնիվ, դեռևս կասկածներ ունեինք, քանի որ կազմակերպիչներից ոմանք իրենց նախնական այցի ժամանակ այցելել էին ինչ-որ ավերված եկեղեցի, և իրենց ասել էին, թե դա Առաքելոց վաճռն է: Սակայն այժմ վստահ ենք, որ մեր «հայտնաբերածը» իրենց Առաքելոցն էր, քանի որ հետո կարողացանք համեմատել մեր լուսանկարների հետ:

Գրեթե բոլորս համոզված էինք, որ Առաքելոցի պատմությունը՝ որպես լուսանկարչության նյութ, կավարտվի Մուշում, սակայն իրականում այդպես չեղավ: Յայա-

տանի գյուղերի շատ տներում մենք շարունակում էինք լուսանկարել Առաքելոցից բերված սրբապատկերները: Յետո պարզեցինք, որ դրանցից շատերը հավանաբար Առաքելոցից չեն բերվել: Սա երկրորդ անորոշությունն էր, որը մեզ համար բեկումնային կետ դարձավ: Մենք հասկացանք, որ Առաքելոցին վերագրվող սրբապատկերների բազմազանությունն ու անորոշությունը վկայում և մարմնավորում են այդ վայրի հետ մարդկանց կապվածության աստիճանը:

Առաքելոց վաճռը հայերի համար գրւտ կրոնական կառուց չէր, այլ խոշոր կրթական կենտրոն, որտեղ հնարավոր էր բարձրագույն կրթություն ստանալ: Այն ուներ նաև իր գրատունը, որտեղ շատ մասնագետներ աշխատում էին ծեռագրերի վրա: Այդ ծեռագրերից մեկը՝ Մշո ճառնտիրը, այսօր պահպում է Երևանի Սատենադարանում: Առաքելոցից մեկ այլ նմուշ՝ վաճռի փայտյա փորագիր դուռը, այժմ պահպում է Յայաստանի պատմության թանգարանում: Շատ մարդիկ, որոնց հայրերն ու նայրերը, պատիրն ու տատերը գարել են Մուշից և հարակի շրջաններից, Առաքելոցից բերված իրերը մեծ սիրով ու հոգատարությամբ են պահպանում: Նրանք ոչ միայն կարող են նկարագրել եկեղեցին, այլև այնտեղ տանող ճանապարհը: Նրանք համոզված են, որ գիտեն եկեղեցու յուրաքանչյուր անկյունը և ունեն նիկնույն հավատքը, որը մարդկանց ուղղորդում է դեպի Առաքելոց: Ինչու՞ է այն ուղղորդում: Որովհետև բեկորներն ու սրբապատկերները դեպի սրբավայր տանող մտավոր տոնսեր են. այս մարդիկ Առաքելոց են այցելում իրենց մտքերում, հիշողությունները նրանց տանում են դեպի մի վաճռ, որն իրականում կենդանի է միայն գրեթում՝ պատկերների մեջ:

Այնտեղ, որտեղ ժամանակին կանգնած էր Առաքելոցը՝ իր ժամանակի հզոր վաճռերից մեկը, այժմ միայն ավերակներ է հնարավոր գտնել: Մինչեւ Յայաստանում մարդիկ Առաքելոցը պահպանում են իրենց հիշողությունների միջոցով, Առաքելոց վաճռի ավերակները Մուշում իրական պահպանության կարիք ունեն: Այս ավերակներն անցյալի ծայնն են, և եթե դրանք համապատասխան հոգատարություն չստանան, այլևս չեն կարող զրոյցել նրանց հետ, ովքեր հաճախ այցելում են իրենց հիշողությունների Առաքելոցը, և ովքեր մի օր կարող են վերադարձնալ՝ իրական վաճռը տեսնելու:



Անիրական, բայց կենդանի Առաքելոցի պատկերը մի գրքում, որը հոգատարությամբ պահում են Յայաստանի Ցամաքասար գյուղի բնակիչներ:



Սուրբ Առաքելոց վանքի դուռը, Յայաստանի պատմության թանգարան:



Իրական, բայց մահացող Առաքելոցը, որը պահպանման կարիք ունի:



Մուշ, Արաք գյուղ: Իրական Առաքելոցի ճանապարհին: Մտովի Առաքելոց այցելող մարդիկ շատ լավ գիտեն վանքի ճանփան, մինչդեռ Մուշի ներկայիս բնակիչները դժվարությամբ են այն տեղակայում. «Սարի մյուս կողմում: Այնտեղ: Այն ծառից հետո», - ասում էր մեր ուղեկցողը՝ մատնացուց անելով հեռու մի կետ: Նրանք իրենք էլ համոզված չէին, թե որտեղ էր Առաքելոցի ստուգ տեղը: Մենք գիտեինք միայն ուղղությունը և շարունակում էինք քայլել:



Սուսեր, Յայաստան: Սրբապատկերներ և լուսանկարներ, որոնք ենթադրաբար թերվել են Առաքելոցից 1915-ից հետո:



Ոսկեհասկ, Յայաստան: Յայաստանի մշեցիների գյուղերում շատերը տանը «սրբանկյուն» ունեն:

# Վախր

## Արմենուհի Նիկողոսյան (Հայաստան)

Կյանքը շռայլ է գտնվել մեր նկատմամբ՝ աշխարհում մեր ուղին գտնելու համար տարրեր զգացումներ շնորհելով: Մարդոն ունի զգացումների հետ խաղալու ուժ, սակայն երբեմն զգացումները կարող են ավելի ուժեղ գտնվել և խաղալ իրենց կրող զոհերի հետ: Նման զգացումները կարելի են մակարույթների հետ համեմատել, որոնք ապրում են իրենց հյուրընկալողի հաշվին: Վախր նման մակարույթ զգացողություններից է: Վախրն ապրում է իրեն հյուրընկալույի մեջ և սնվում է նրա զգացումներով ու մտքերով: Ավելին, եթե վախ կրողը չի կարողանում պայքարել այդ մակարույթի դեմ, այն տարածվում է ուրիշների վրա՝ խարաբերով նրանց մտածելակերպն ու պահվածքը: Նման մակարույթ վախի փոխանցում անհերթելիորեն առկա է երկու հարևան ազգերի՝ հայերի ու բուրքերի միջև:

Կյանքում առաջին անգամ բուրքի հանդիպել են մի ժրագրի շրջանակներում, որտեղ ներգրավված է կազմակերպչական աշխատանքներում: Ես շատ զբաղված էի և մասնակիցների հետ շփվելու ոչ ժամանակ ունեի, ոչ էլ, պետք է խստովանեմ, առանձնապես ցանկություն: Մի օր մասնակիցներից մեկը խնդրեց իրեն օգնել նիստերի դասինում կորցրած շարֆը գտնելու գործում: Եթե նա դիմեց ինձ, ես շրջվեցի ու շփորված աչքերով նայեցի նրան: Ինքու ինձ մտածեցի: «Ես բուրքը ինձ խնդրում է իր համար մի բան անել. բուրքը ինձ ինչ-որ բան է խնդրում»:

Շարֆը գտնվեց, բայց ոչ իմ աղեկվատ մարդկային վարքագիծը եվ երբ արդեն պատրաստվում էի Սուլշ ճամբարին, շատ հաճախ ինձ բռնացնում էի զգացածին՝ վախի դեմ պայքարելիս: Վախ՝ առերևսվելու այն իրողության հետ, որը ներսումն թուրքերի հանդեպ ատելություն ու անվստահություն էր սերմանել: Բայց...ես չի պատրաստվում այլս այդ մակարույթն ին մեջ տանել. դու դեմ դեղամիջոց գտնելու ժամանակն էր, քանի որ ես միակը չեմ, ով տառապում էր դրանից:

«Թուրքերն ու բուրքերն օգտագործում են Երեսու Օշլո Երեսու [հայի զավակ] արտահայտությունը՝ որպես վիրավորանք: Նրանք մեր [հայկական ծագում ունեցող մարդկանց] դեմքին են դա ասում: Տարիներ առաջ մենք չեինք կարող ասել, որ հայ ենք. այդ մասին խոսում էինք միմիայն մեր ընկերների հետ: Եթե ասում ես, որ հայ ես, մարդիկ թեզ սկսում են որպես թշնամի ընկալել: Մենք դեռ վախենում ենք: Վախենում ենք, որովհետո տգես մարդիկ շատ կան»: Մրանք

թուրքիայում բնակվող հայազգի Յիքմեթի սրտաբրւէ խոսքերն են: Նա տեսել է, թե ինչպես են թուրքերի ու քրիստոնյաց մարդիկ, որոնք հայկական ծագում ունեն, վախենում բացահայտել իրենց ինքնության այդ կողմը: «Մուշում մեր նման մարդիկ շատ են, բայց քանի որ նրանք [թուրքերն ու քրիստոնյաց] հայ լինելը շարունակում են ընկալել որպես ինչ-որ վատ բան, մենք վախենում ենք»:

Մուշում և շրջակա գյուղերում այն մարդիկ, որոնք հայկական արմատներ ունեն, ապրում են «օտար» լինկալվելու վախր սրտներում: Նրանք չեն ուզում անազնիվ համարվել, ուստի պարզապես զսպում են իրենց:

Իմ սեփական վախի երայրունը հասկանալու երկար ճանապարհին ես ինացա, որ Մուշում եղել են քրիստուրքեր, որոնք ցեղասպանության ժամանակ ցանկացել են օգնել իրենց հարևան հայերին, բայց...վախեցել են: «Ինչո՞ւ եք օգնում հայերին. ինչո՞ւ եք այսուղի օգնում թշնամուն», Մուշում պատմեց մի մարդ, որը խաղողի այգիներ ուներ, այգիներ, որոնք ժամանակին հայերին են պատկանել: Մարդկանց սպանում էին, եթե նրանց բռնացնում էին հայերին օգնելիս:

Փոխանցվելով սերնդեսերունդ, կտրելով ժամանակն ու տարածությունը՝ վախը եկել, հասել է Հայաստանի Դաշտադեմ գյուղը, որտեղ հաստատվել են ցեղասպանության մահաբեր ճիրաններից փրկվածները: Խորեն պապն իր ստեղծած մի յուրօրինակ անյուն ունի՝ թանգարանի նանա մի սենյակ. ինը ընտանեկան լուսանկարներ, հայտնի ու ազդեցիկ մարդկանց պատկերներ, բազում գործեր և շատ ուրիշ իրեր, որոնք խոսում են ինը օրերի ու կյանքի մասին: 88-ամյա պապը մեծ ուշադրությամբ ու հոգատարությամբ պաշտպանում է իր սեփականությունը: Նա ուշադիր հայացքով հետևում է իր սենյակ մտնող յուրաքանչյուր շնչավոր եակի, որպեսզի ոչ ոք ոչինչ չվերցնի: Բայց հանկարծ զաղոնիքը բացահայտվեց (միզուցե դա միակը չէ). սենյակում կար նկուղ, որն ինքն իրեն բացահայտեց հակառակ խորեն պապի ցանկության: Մեր խմբի անդամներից մեկը պատահաբար ոտքը դրեց նկուղի ծածկին և քիչ էր մնում մեզն ընկեր: Պապի աչքերն անմիջապես լայնացան, և նրանցում դժգոհություն երևաց, քանի որ «գաղտնիքը» բացահայտվել էր: «Ով իրեն վատ է պահում, ես նրան այնտեղ եմ նետում», - այս բառերը կարծես ինձ ուղղված արդարացում լինեին՝ նկուղի առկայությունը բացատրելու համար: Բառերն արտաքրվեցին ծիծաղկությացքով ու խորամանկ ժայտով: Եթե պապը դուրս եկավ սենյակից, նրա թողը բացատրեց, որ նկուղը կառուցվել է թուրքերից պատսպարվելու նպատակով, եթե վերջիններս

երբեմ հարձակվեն: Նրանք դեռ վախենում են, որ անցյալը կարող է կրկնվել: Նրանք վախենում են, որ կվերապիտն այն, ինչ տեսել են իրենց հայրերն ու պապերը: Նրանք պետք է պատրաստ լինեն...Քանի որ վախենում են:

Գիտակցարար թե ոչ, բայց Մուշում և Թալինում մարդիկ այս կամ այն չափով ճշտապես վախի զգացում ունեն: Վախի գործոնը եղել է ու կա, և այս վախը համգեցրել է վստահության պակասի: Մարդիկ վախենում են շփվել, որ չկորցնեն մտքի խաղաղությունը: Այս համատեքստում հայերն ու թուրքերը կանգնում են մինյանց մասին ունեցած պատկերացումները հարցադրելու մարտահրավերի առաջ: Յայ միտքը փորձում է հասկանալ՝ ինչպես ընկալել այն թուրքին, որը չի տեղափոխվում ցեղասպանությունը հերքողի կաղապարի մեջ: Նա կարող է մտածել՝ արդյոք այն փաստը, որ այս կոնկրետ թուրքն ընդունում է Յայոց Ցեղասպանությունը. Կարո՞ղ է ազդել թուրքերի մասին իր ունեցած ընդհանուր կարծիքի վրա: Այնուհետև նա կարող է խորհել՝ արդյոք սա իրեն դավաճա՞ն է դարձնում իր իսկ ազգի նկատմամբ: Իսկ եթե պարզվի, որ իր նախասպաներն էլ թուրքերի կամ քրդերի են սպանել: Եթե անգամ դա արվել է ընտանիքն ու սեփականությունը պաշտպանելու համար, արդյո՞ք ներելի է:

Նույն կերպ թուրքը կարող է մտածել ցեղասպանությունը ճանաչելու հետևանքների մասին: Արդյո՞ք կիլմեն հողերը հայերին վերադարձնելու պահանջներ: Ի՞նչ կամի Թուրքիան այդ պարագայում: Եվ ի՞նչ կիմի այդ հողերի վրա այսօր ապրող մարդկանց հետ. ի՞նչ են նրանք անելու և ու՞՞ են գնալու: Նա կակի խորհել՝ արդյո՞ք իր նախասպաների տները կառուցվել են հայերի տների վրա: Ի՞նչ ազդցություն կունենա իր տեսակետի փոփխությունը. Եթե նա բացեիքաց ճանաչի Յայոց Ցեղասպանությունը, արդյո՞ք իր ազգի աչքին դավաճան կդառնա:

Սրանք բոլոր հարցերը չեն, որոնք մենք կարող ենք հարցնել ինքներս նեզ, բայց մի հարց պարզ է, և դա վերաբերում է սահմաններին. Եթե տասնամյակներ անց Յայաստանի ու Թուրքիայի միջև բացվեն սահմանները, արդյոք մենք՝ երկու հարևաններս, ի վիճակի կլիմե՞նք հաղորդակցվել ու վստահություն հաստատել՝ առանց ենթակվելու աճբողջ կյանքում մեզ վրա ներազատ կարծրատիպերին:

Յայաստանում և Թուրքիայում մարդկանց սրտերում վախ կա: Այդ վախն արյան միջոցով փոխանցվում է նրանց յուրաքանչյուր թջին՝ թույլ տալով առանձնացնել վախի երկու տեսակ՝ հայկական ու թուրքական: Մենք՝ հայերս, վախենում ենք կորցնել մեր անցյալը, քանի որ այն

չի գտել իր դեմքը: Մենք թույլ չենք տալիս, որ անցյալը մնա իր ժամանակային գոտում. մենք այն քարշ ենք տալիս ներկայի միջով՝ չքողնելով վերջինիս ունենալ իր սեփական կենսագրությունը: Թալինում ապրող մի տարեց կնոջ աչքերը լցվեցին, երբ նա ասաց. «Ինչպե՞ս են նրանք [թուրք մասնակիցները] համարձակվել զալ այստեղ»: Այս նախադասությունն ասես ցավկով պորթկաց նրա սրտից: «Ես չեմ կարող մոռանալ կատարվածը, ոյս այնքան ցավկի է»: Նա արտաքերեց այս խոսքերն ու ծանր հառաչեց իր ընտանեկան հիշողությունների բերի տակ՝ միաժամանակ նայելով թուրք մասնակիցներին՝ ասես փորձելով հասկանալ, թե ինչպես կարող էր նման դաժանություն տեղի ունենալ 1915-ին:

Թուրքիայում մարդիկ վախենում են կորցնել իրենց ներկան անցյալի պատճառով: Նրանք չեն ուզում ընդունել, որ իրենց պատճության մեջ կարող են լինել չարձանագրված սխալներ. Նրանք ուզում են հավատալ իրենց երկրի հզոր պատճությանը և այն առաջնորդներին, որոնք կերտել են երկրի բարեկեցիկ ներկան. Նրանք վախենում են կորցնել իրենց ներկայի դեմքը: «Անցյալն ունի չգրված տարբերակ. այն արձանագրված չէ պատճության մեջ: Որոշ բաներ պատճում են, բայց ոչ ոք չգիտի ճշմարտությունը. ոչ ոք ինձ չի պատճել ճշմարտությունը», - Դերիկի գյուղում մի ծեր մարդ խստովանեց ճշմարտությունն իմանալու իր անկեղծ ցանկությունը, բայց այդ պահին մեկ ուրիշ մարդ եկավ՝ փրկելու իրենց ընդհանուր ճշմարտությունը: Թեկուզ միայն իր համար ներկան դիմակազերծել ցանկացող մարդն ամփակել հեռացվեց և լրցվեց: Մարդիկ վախենում են փոխել իրենց հմացածը, անգամ եթե գգում են, որ դա հավանաբար իրական ճշմարտությունը չէ:

Այս երկու տեսակի վախերը բախվում են իրար և մեր միջև կարծրատիպերի պատ ստեղծում: Երբ ճամբարի առաջին օրն իմ սենյակակիցը բարձրածայնեց իր դրությո՞՝ «Ճեր, այսպես կոչված, ցեղասպանությունը» ասելով, ես զգացի, որ իմ մեջ վերացան թուրք մասնակիցների հանդեպ վստահություն կառուցելու բոլոր հոլուսերը: Բայց, չնայած իմ սենյակակիցի տեսանկյունին, մենք կարողացանք ունենալ հաճելի զրույցներ և անգամ կիսել ընդհանուր մտքեր ու ցանկություններ: Մենք իրար ընկալեցինք ոչ թե «հայի» ու «թուրքի» պիտակներով, այլ զուտ մարդկային տեսանկյունից: Եվ վստահությունը ինքնըստինքյան մեր սենյակ եկավ: Կարծում եմ՝ մեզ նեզանից շատերը վստահություն գտան իրար մեջ, քանի որ մենք դեղամիջոց էինք փնտրում, սպեղանի, որի կարիքը մեր երկու երկրները շատ ունեն. դա «վստահություն» կոչվող դեղամիջոցն է:



1. Աշուաքելոց վաճքը հայերի կարևորագույն ուխտավայրերից էր, որտեղ մարդիկ գնում էին ընտանիքներով:

2. Չենգիլի, Մուշ: Ի տարբերություն Մուշ քաղաքի երեխաների՝ զյուղերի երեխաները սկզբում քաշվում էին, ապա աստիճանաբար հաղթահարելով վախճ ու անհանգստությունը՝ անենուրեք հետևում էին մեզ:

3. Չենգիլի, Մուշ: Նրա համար «հաղորդակցվելը» հեշտ էր՝ ցանկապատի միջով հեռավորությունը պահելով:



Չեմքինի, Մոլշ: Սուշում և շրջակա գյուղներում ոչ միայն կանայք, այլև դեռահասները ներգրավված են ամենօրյա աշխատանքներում:



Չենգիլի, Մուշ: Տուն, որտեղ Սուլը Կարապետ վաճրի քարերն օգտագործվել են որպես սովորական շինանյութ:



Դերիկ, Մուշ: Քուրդ դպրոցականը և հայկական եկեղեցն, որը կորցրել է ամեն ինչ, բացի իր քարերից: Այն այժմ վերածվել է գարու և ցորենի ամբարի:





Դաշտաղեմ, Հայաստան: Խորեն Զաքարյանի տունը: Սենյակ, որը շատ հետաքրքիր առարկաներ ու պատմություններ ունի:



# Առարկաներն ու կառույցները՝ որպես պատմության և հիշողության փոխադրողներ. հարցազրույց երկուսիս միջև Աքաք Այազ (Թուրքիա) Սոֆյա Մանուկյան (Հայաստան)

Ընտանեկան ժառանգությունները, անձնական իրերը, շենքերը և այլ կառույցների ավերակները մեկ ընդհանրություն ունեն. դրանք մեզ հիշեցնում են պատմությունը, կարևոր իրադարձություններ կամ նանկական հուշեր: Դրանց առաջացրած զգացողությունները կարող են լինել դրական կամ բացասական, բայց դրանք հաստատ հույզեր են ադրբանցնում: Նենց այս պատճառով էլ որոշեցինք մեր լուսանկարներում կենտրոնանալ առարկաների ու շինուարուների վրա, որոնք հիշողության հզոր փոխադրողներ են: Մեր երկխոսության միջոցով մենք կճամփորդենք Մուշից (Թուրքիա) դեպի Գյումրի (Հայաստան) և հետ բացահայտելով պատմության այս մեծ կրողների ներաշխարհը: Այսպիսով, մեր լուսանկարների միջոցով այս հարցազրույցը կփոխանցի ծրագրի ընթացքում մեր ապրօք միջավայրը:

**Սոֆյա** - Աքաք, քո լուսանկարներում դու երկու թեմայի ես անդրադառնում՝ 1988-ի Գյումրիի երկրաշրժին և 1915-ի հայոց ցեղասպանությանը: Ի՞նչ կապ ես տեսնում այս երկու իրադարձությունների միջև:

**Աքաք** - Երբ որոշեցի, որ լուսանկարչական ակնարկս ավերակների մասին է լինելու, ես սկսեցի մտածել բնական և, այսպես կոչված, «նարդկային աղետների» միջև եղած ննանությունների մասին: Այս մտածնություններիս պատճառը ծրագրի սկզբում տեղի ունեցած մի իրադարձություն էր: 2011թ. հոկտեմբերի 23-ին, երբ մենք Մուշում դաշտային աշխատանքներ էինք իրականացնում, մեզանից 220 կիլոմետր արևելք գտնվող Վաճ քաղաքում տեղի ունեցավ 7.1 բալ ուժգնությամբ երկրաշրժ: Զոհվեց 604 և անտուն մնաց շուրջ 60.000 մարդ: Երկրաշրժը, որը մեր խումբը զգաց մեծ հեռավորության վրա, մեծ ազդեցություն ունեցավ մեր թիմի որոշ անդամների վրա, հատկապես, որ Վաճ Թուրքիայում առաջին վայրերից էր, որտեղ հայկական խումբը եղել էր Մուշ գալու ճանապարհին:

Այս առումով, Վաճի երկրաշրժն իմ պատմության ելակետներից է: Խումբը գտնվում էր Մուշում, երբ Վաճում եղավ երկրաշարժը: Մենք տեսանք ավերածությունները և դրանից տուժած մարդկանց: Զոհերի մեծ մասը քրդական ծագում ուներ և էլ ավելի էր տառապում իր ազգային ու քաղաքական պատկանելության պատճառով: Մենք նկատեցինք, որ օգնությունը վատ էր բաշխվում, որ անօրեան մարդիկ շատ կային, և նրանց մեծանանությունն այսուհետև ծմբան անցկացրեց Վրաններում: Շատ առումներով նրանց թողել էին բախտի քմահաճույքին:

Ուղեղում սցենարն այնքան ծանոթ էր թվում: Այս նույն տարածաշրջանում՝ հարավ-արևելյան Անատոլիայում, ննան մի բան տեղի է ունեցել հայերի հետ 1915 թվականին: Մարդիկ կոտրովել ու տեղահանվել են իրենց ազգային պատկանելության պատճառով: Այս երկու իրադարձությունների միջև տարբերությունն այն է, որ Վաճի երկրաշրժը բնության ուժերի արդյունք էր, չնայած հաջորդող գործներացները, ինչպես օրինակ՝ օժանդակության կազմակերպումը, մենգորեն օգտագործվում էր քաղաքական նպատակների համար՝ սահմանափակելու քրդերին հասնող օգնությունը: Սա ննան էր Հայոց ցեղասպանության ժամանակ մարդկանց օգնություն ցուցաբերելու մոտեցմանը:

Երկրաշրժի՝ որպես բնական աղետի և ցեղասպանության՝ որպես մարդկային աղետի արդյունքները մեկ այլ ընդհանրություն ունեն՝ ավերակները: Ին լուսանկարչության մեջ ես ավերակները դիտարկում եմ որպես անցյալի վկաներ: Ցավոք, այս ակնարկում տեղ չեն գտել Վաճի երկրաշրժից լուսանկարներ, քանի որ ես աղետից հետո չկարողացա վաճ գնալ: Յետո որոշեցի անդրադառնալ 1988 թվականի Գյումրիի երկրաշրժին, որը մեծապես ձևավորում է ներկայիս Հայաստանը: Կենտրոնանալով հայոց պատմության երկու կարևոր տարբերվերի՝ 1915 և 1988 թվականների վրա՝ ցանկանում են վեր հանել տեղի ունեցածը:

Հայկական տները, եկեղեցիները, դպրոցները, կամ, ավելի ծիշտ, այն, ինչ դրանցից մնացել է, դեռևս Մուշի և Կարսի ննան Արևելյան Թուրքիայի քաղաքներում են, չնայած հայերի մեծ մասն այլևս այս քաղաքներում չեն: Իր հերթին, 1988 թվականին Հայաստանի Հանրապետության հյուսիսային հատվածներում, այդ թվում՝ Գյումրիում, տեղի ունեցած երկրաշրժի արդյունքում բազմաթիվ տեղեր ու գործարաններ փլուզվեցին, և ավերակներից շատերը դեռևս կանգուն են:

Այսօր տեղի բնակիչները նորովի են գործածում իհն շինությունները: Ավերակները, որոնք դեռ չեն վերացել, պահպանում են անցյալի ու անցավոր մարդկանց հուշը: Ես սա ազդեցիկ համարեցի և որոշեցի պատկերել իմ լուսանկարներում: Մի օր ավերակները կփոխարինվեն նոր կառույցներով, և այս լուսանկարները մեզ կօգնեն վերիշել պատմությունը:



**Սոֆյա** - Հասկանում եմ: Ինչպես կարողացար բացահայտել ավերակների հետևում թաքնված պատմությունները: Դու խստե՞լ ես տեղացիների հետ: Ես շատ բան չգիտեի Մուշի ու Գյումրիի ավերակների մասին, ուստի ինձ հետաքրքիր է քո մոտեցումը:

**Աքար** - Մինչև այս ծրագիրը ես չեմ եղել ոչ Գյումրիում, ոչ է Մուշում: Ծանոթ չեմ այս վայրերի պատմությանը: Այնուամենայնիվ որոշակի նմանություններ գտա Մուշի և Գյումրիի ավերակների միջև: Չնայած ճարտարապետության ոլորտում սահմանափակ գիտելիքներ ունեմ, ինձ համար ակնհայտ էր, որ Մուշի շենքերը հայերն են կառուցել: Դա հետաքրքիր է հասկանալ քարերի գույնից կամ զարդանախչի համար օգտագործվող ձևերի ընդհանրությունից: Ցավոր, այժմ դեռևս կանգուն մնացած շինություններն ու ավերակները լի են առբով ու գրաֆիտիով, և ինձ համար դժվար էր ճանաչել դրանք առանց տեղացիների օգնության: Բայց տեղացիները շատ պատրաստակամ և օգտակար են. նրանք բաց արին իրենց դրները և իրենց հացն ու գիտելիքները կիսեցին ինձ հետ: Մենք ոչ միայն խստեցինք շինություն-

ներից ու ավերակներից, այլև պատասխանեցինք մինչամանց հարցերին: Քննարկեցինք հայկական մշակույթը ու Հայաստանի ներկայիս հրավիճակը: Հայաստանում մարդկանց գլխավորապես հետաքրքրում են այն վայրերը, որտեղ իրենց նախնիներն են ապրել: Մյուս կողմից, Մուշում մարդկանց, կարծես, ավելի հետաքրքրում եր, թե ինչու էինք ցանկանում իմանալ տեղի հայկական պատմությունը: Առանց տեղացիների օգնության ես երբեք չեմ իմանա, որ «Ծիրակ» հյուրանոցը, որի ավերակները մինչ օրս կանգուն են Գյումրիում, ժամանակին եղել է կարևոր ու շքեղ մի վայր: Նույն կերպ, Մուշի բնակիչներն ինձ պատմեցին, թե ինչպես է մի հին տուն ռեստորանի պահեստի վերածվել: Առանց տեղացիների օգնության ես երբեք չեմ իմանա, որ դա ժամանակին հայ Շանավոր օպերային երգի Արմենակ Շահմուրայյանի տունն է եղել: Այս օրինակները ցույց են տալիս, թե որքան կարևոր էր ինձ համար տեղանքի պատմությունն անձամբ տեղի բնակիչներից լսելը:



**Սոֆյա** - Ինչքան հասկանում եմ, տեղի բնակիչները հյուրօնեկալ էին ու պատրաստ էին աջակցել քո գործին:

**Աթար** - Այո՛, և կարծում եմ, որ սա կարևոր պահ է: Չգիտեմ՝ արդյո՞ք ծրագրի հայաստանցի մասնակիցները Թուրքիայում որևէ խնդիր ունեցել են, բայց ես Հայաստանում առհասարակ խնդիր չեմ ունեցել իմ՝ Թուրքիայից լինելու հանգամանքի հետ կապված: Հատկապես Հայաստանի գյուղերում, որտեղ հաստատվել են Մուշից փրկված մարդիկ, բնակիչներն ասացին, թե մենք Թուրքիայից եկած առաջին մարդիկ ենք, որ փորձում են իրենց հետ խստել:

Մեր հարցազրույցներից մեկը մյուսներից շատ էր տարրերվում: Մեր զրուցակցին կարելի է «ազգայնական» բնութագիրը տալ: Դա զգացվում էր անգամ ձայնից և մեր հանդես ունեցած սառը վերաբերմունքից: Մինչ հարցազրույցն սկսելը, նա հարցուեց՝ արդյոք քաղցած չենք կամ գիմի չենք կամենա: Զարմացած և շոյված էի նրա հյուրօնկալությամբ:

Ընթանուր առմանք, մեր զրուցակիցներոց շատ սիրալիր էին: Նրանց շնորհիվ Մուշի շրջակա գյուղերում ու Հայաստանում են բազում անհայտ պատմություններ բացահայտեցի: Նրանց օգնությամբ կարողացա այցելել այնպիսի վայրեր, որոնք օգտակար եղան մեր ծրագրի համար: Նրանք պատմում էին իրենց ծնողներից և բարեկամներից լսածը: Օրինակ, նրանք մեզ պատմեցին, որ տարիներ առաջ «Դիմ Մուշը» լի էր հայկական տներով, դպրոցներով և եկեղեցիներով: Ներկայումս, սակայն, դրանցից ընդամենը մի քանիսն են կանգուն:



**Սոֆյա** - Եվ ինչպիսի՞ն է քո տպավորությունը: Ինչու են որոշ շենքեր փլուզվել կամ ոչնչացվել, իսկ մյուսները դեռ կանգուն են:

**Աթար** - Իհարկե Մուշի շրջակայի ավերակների պատճառները տարրերվում են Գյումրիի իրադրությունից: Կան որոշ ընդհանրություններ. օրինակ՝ հին շինություններից մի քանիսը կանգուն են մնացել, որովհետև մարդիկ բնակություն են հաստատել այնտեղ: Շինությունները կարող են շատ հին լինել, բայց այնտեղ բնակվողները հոգ են տանում դրանց նամին: Երբեմն նրանք անգամ վերանորոգման աշխատանքներ են կատարում՝ կառույցն ամրացնելու նպատակով:

Հայոց ցեղասպանության արդյունքում Մուշի բնակչությունը կտրուկ փոփովել է՝ գերիշխող մշակույթի տեսանկյունից: Կրոնի փոփոխությունը, օրինակ, կարևոր դեր ունի այս գործընթացում: Մշո դաշտի ներկայիս բնակիչները հիմնականում մահմեղական են: Սա հավանաբար պատճառներից մեկն է, թե ինչու է Մուշի հայկական եկեղեցին այսօր որպես մարագ ծառայում և երեխաների համար սարսափ պատմությունների աղբյուր հանդիսանում: Ծնողներն իրենց երեխաներին գգուշացնում են, որ եթե վերջիններս իրենց լավ չպահեն, եկեղեցու ուրվականները կհետապնդեն նրանց: Նույն՝ իշխող կրոնի փոփոխության պատճառով է, որ եկեղեցիներն ընդհանրապես չեն գործում, և մարդիկ գողանում

Են հինքերի քարերը՝ տների ու այլ կառույցների, օրինակ, գոմերի շինարարության մեջ օգտագործելու համար:

Դու կարող ես տեսնել այս քարը, որի վրա խաչ է քանդակված, և որն օգտագործվել է գոմի պատի շարվածքում: Ես չեմ կարծում, որ մարդիկ, օգտագործելով այդ քարերը, ցանկացել են վիրավորել հայերին կամ հայկական նշակույթը: Հավանաբար նման իրավիճակի պատճառ է հանդիսացել տնտեսական միջոցների պակասը: Իհարկե, հնարավոր է, որ որոշ մարդիկ հայկական շինությունները ոչնչացրել են ազգայնական միտումներով, բայց սա չի կարելի ընդհանրացնել բոլոր դեպքերի համար: Բայցևանական են պետությանն են մեղադրում տարածքի հայկական շենքերի վիճակի համար: Որոշ հետաքրքրություն կամ մտահոգություն կարող էր ցու-

ցարերվել պատմության այս վերջին մնացորդները պահպանելու գործում:

Ինչպիսին էլ լիներ շենքերի գործառույթը հայերի՝ այս շենքերում ապրելու ժամանակ, ավերակներն այսօր հետաքրքիր դեր են խաղում. դրանք ստիպում են մարդկանց մտածել ու խոսել անցյալի՝ հատկապես ցեղասպանության մասին: Այսպիսով, Մուշի հին տներում այրող շատ մարդիկ տեղյակ են, որ իրենց տները ժամանակին պատկանել են հայերին, որոնք հանկարծակի վերացել են այդ տարածքից:

Կան շատ գործոններ, որոնց հետևանքով Գյումրիում դեռ տեսանելի են ավերակները: Իշխող հանակարգի փոփոխությունը, օրինակ, նշանակալի դեր է ունեցել: Եթե տեղի ունեցավ 1988 թվականի երկրաշարժը, երկրում տիրում էին խորհրդային կարգեր: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո



Գյումրիի երկրաշարժից տուժած գործարանները դադարեցին գործել: Հավանաբար քաղաքական ու տնտեսական գործոնները կարևոր դեր են խաղացել այս իրավիճակում:

**Սոֆյա** - Ի՞նչ ես կարծում, արդյո՞ք ավերակները շարունակում են տեղեկության կրողների դեր խաղալ, անկախ ժամանակի ընթացքում իրենց գործածության փոփոխությունից: Ի՞նչ են դրանք մեզ պատճում որպես տեղեկության կրողներ:

**Արար** - Կարծում եմ՝ այո, դրանք շարունակում են մեզ տեղեկություն փոխանցել: Դին կառույցներին անդրադառնալով՝ ես ուզում եմ ցույց տալ, որ ավերակները մեզ անցյալի մասին նշաններ են տալիս: Ավերակները տեսնելով և դրանց պատճությունն իմանալով՝ սկսեցի խորհել Վաճի երկրաշարժի մասին: Դետո փորձեցի հասկանալ, թե ինչպես են մարդիկ իրենց գգացել 1988-ին և ինչ են զգում, երբ տեսնում են այս ավերակները: Կարծում եմ՝ ավերակները մարդկանց հիշեցնում են իրենց ունեցած կորուստների մասին:

Մյուս կողմից, ներկայիս Մուշի տարածքի ավերված շինությունները ժամանակին հայերի տներ են եղել: Չնայած հայերն այս տներում այլևս չեն ապրում, դժվար չէ նրանց երբեմնի ներկայությունը վկայող նշաններ գտնել: Այլ կերպ ասած, այս շինությունները պահպանում են հայկական նշակույթը ու ներկայությունը, և դրանք դեռ տեսանելի են Անատոլիայի արևելյան հատվածներում: Երբ խոսում էի Մուշի բնակչների հետ, տեղեկացա, որ TOKİ-Շ Թուրքիայի բնակարանային օպերատորը վարչությունը, այդ ժամանակներից դեռևս կանգուն մնացած տները վերացնելու նպատակ ունի՝ դրանք նոր կառույցներով փոխադրինելով: Մի քանի տարի հետո մենք չենք կարող տեսնել այս նշանները, որոնք դեռևս առկա են: Մեր լուսանկարները, սակայն, այս վայրերում հայերի երբեմնի գոյության ապացույց կլինեն:

**Սոֆյա** - Իսկապես, իին շինությունները մեզ շարունակում են պատճել իրենց անցյալի ու պատճության մասին: Դրանք վերացնել նշանակում է թերեւել պատճության էջը և, միգուցե, մոռանալ անցյալի որոշ կողմեր: Մուշ և Գյումրի կատարած մեր ժամփորդության ժամանակ ես բացահայտեցի, որ այնպես, ինչպես ավերակները, իին իրերը ևս հետաքրքիր դեր են կատարում անցյալի պահպանման գործում:

**Արար** - Եվ ի՞նչ իրեր ես դու գտել:

**Սոֆյա** - Հատկապես Հայաստանում էրգից բերված շատ առարկաներ եմ գտել: Մուշում նույնպես կային հայերից մնացած որոշ իրեր, բայց դրանք շատ չեմ: Օրինակ՝





այս լուսանկարն արվել է Մուշում՝ դերձակի արհեստանոցում: Ըստ դրա տիրոջ՝ այն Մուշի հին պատկերն է: Հայաստանի Յամաքսասար գյուղում մի մարդ, որի պատճեռը Մուշից էին, պատճում էր, թե ինչպես էին իր նախնիները նկարագրում Մուշը: Նրանք ասում էին, որ հին ժամանակ-ներում Մուշը լեռան լանջերին է գտնվել: Այս լուսանկարն, ասես, հաստատում է այդ հոսպերը: Այժմ Մուշը ընդարձակվել է ինչպի դաշտավայր: Մինչ օրս էլ, սակայն, լեռան լանջերին կարող ենք գտնել իր տներ, որոնք մի օր կդանան լոկ հիշողություն՝ պատկերված մեր լուսանկարներում:

**Աքար** - Այո, ես նույն էի զգում, երբ լուսանկարում էի ավերակները: Իսկ ուրիշ ի՞նչ իրեր ես գտել այնտեղ:

**Սոֆյա** - Մենք գտանք նաև խոհանոցային պարագաների մնացորդներ: Դրանք պատկերված են լուսանկարում: Շատ բան հայտնի չէ այս իրերի տերերի մասին, բայց տեղացիները կարծում են, որ դրանք ժամանակին հայերի են պատկանել: Ինձ համար այս բեկորները երգում հայկական ժառանգության փոխարեւական վկայությունն են:

Ահա մի հայելի, որը Մուշում հայերի երբեննի ներկայության ապացույց է: Դրա տերն ինձ պատճեց, որ ժամանակին ունեցել է նաև թաս, սկսութեղ, պղնձյա ու կոթավոր կարսամեր, հանդերձապահարան, որոնք նոյնպես նախկինում նշեցի հայերին են պատկանել: Նա ասաց, որ շատ առարկաներ ժամանակի ընթացքում գողացվել են, մնացել է միայն երկու կարսա ու մի թաս: Դրանց տերը սկզբուն այս իրերը դրել էր իր խանություն հարդարանքի համար, բայց այնուհետև որոշել է թաքցնել՝ այն հույսով, որ հայ տերերը մի օր կվերադառնան դրանց հետկից:

**Աքար** - Իսկ Մուշից և շրջակա գյուղերից այլ իրեր գտա՞՞ր:

**Սոֆյա** - Իրականում սա այն ամենն է, ինչ գտել են: Չեն կարօնմ, որ հայերից շատ իրեր են մնացել երգում, չնայած 1915-ին հայերը ստիպված էին լքել իրենց ունեցվածքը: Ինձ համար ցավալի է, որ այդքան քիչ բան է մնացել դարերով Մուշում ապրող հայերից: Եթե չլինեին նարդկանց հիշողությունները, ոչ ոք չէր հավատա, որ հայերն գրեթե են գրվել Մուշում, որ այնտեղ եղել են հայկական դպրոցներ ու թատրոն, որ հենց այստեղ են ստեղծվել հայոց գրեթե 5-րդ դարում, իսկ 7-րդ դարում այստեղ է ծնվել հայ մտօ փիլսոփա Ղավիթ Անհառթը, կասկածի նշույլ անգամ չէր լինի, որ սա է հայ Զշանավիր Մամիկոնյան տոհմի ծննդավայրը: Ցավալի էր հասկանալ, որ Մուշի ներկայիս բնակիչներից շատերի համար քաղաքը գուրկ է «երեկով օրից»:

Հետաքրքիր է, որ մինչդեռ ներկայիս Հայաստանի Հանրապետություն էրգից շատ քիչ բան է բերվել, բերված իրեղը շատ լավ են պահպանվել: Ենթադրում եմ՝ պատճառն այն է, որ այս իրեղը անցյալի արժեքավոր հուշեր են: Օրինակ, Սուսերում ապրող այս կինն իր ձեռքում բռնել է էրգից բերված մի բաժակ: Ըստ նրա ամուսնու, այս բաժակն օգտագործվել է հեղուկ, այսուր և այլ բաղադրիչներ չափելու համար: Նրանք ասացին, որ այն ուղիղ մեկ լիտր է, և անցյալում կանայք հաց թիւնիս այս բաժակով են չափել իրենց անհրաժեշտ այսուրի չափը:

**Արաք - Հետաքրքիր է:** Իսկ ո՞վ է այն սպիտակ կատվով կինը:

**Սոֆյա -** Նա ապրում է Հայաստանի Ուսկեհասկ գյուղում: Նա ինձ ասաց, որ իր կատուն բերվել է Թուրքիայի Վան քաղաքից: Ես էլ որոշեցի նրան իր կատվի հետ լուսանկարել: Նա նաև ինձ ցույց տվեց մի մեծ սափոր և մի կլոր քար՝ երկուսն էլ բերված Կարսից (Թուրքիա): Սափորն օգտագործվում էր պանիր պատրաստելու ու պահելու համար, իսկ կլոր քարը՝ ցորեն աղալու և այսուր պատրաստելու համար: Քարն այլև չի գործածիւմ, բայց նա մինչ օրս օգտագործում է սափորը՝ պանիր պատրաստելու ու պահելու համար:

**Արաք -** Ես նկատեցի, որ քո լուսանկարներում հիմնականում կանայք են: Կարծու՞մ ես՝ նրանք հատուկ դեր ունեն մշակույթի պահպաննան գործում:

**Սոֆյա -** Այո՛, ես այդպես եմ կարծում: Հայաստանի գյուղերում նկատեցի, որ կանայք հատուկ դեր են խաղում այս իրերի և դրանց հետ կապված պատմությունների պահպանման գործում: Օրինակ, այստեղ տեսնում ենք Ուսկեհասկ գյուղում ապրող մի կնոջ, որը կրօքին մոտ սրբապատկեր է պահում: Մրբապատկերն ու բոլոր աղոթքները բերվել են Կարսից՝ հյուսիս-արևմեջան Թուրքիայից: Իր լսած պատմությունների համաձայն՝ այս մասունքներն ունեն հավատացյալներին ու իրենց աղոթողներին բուժելու հատկություն: Ուսկեհասկի մեկ այլ մասունք է Նարեկ գիրքը՝ կոչված իր հեղինակի՝ Նարեկացու անունով: Գիրքը պահպանվել էր, քանի որ այն պահել են 1915 թվականին Մուշից փախչող նարդիկ: Ասում են, որ ովքեր աղոթում են Նարեկին, նրանց ցանկություններն իրականանում են: Այս կնոջ տանը, որը մեզ ցույց տվեց գիրքը, մենք նկատեցինք, որ այն պահպանվում է հատուկ ամեյունում՝ արկի մեջ, որի վերևում խաչեր էին և քրիստոսի նկարը:

**Արաք -** Թուրքիայում և Հայաստանում տեղացիների հետ մեր հանդիպումներից հետո հասկացա, որ ոչ մի իր





պարզապես իր չէ: Գիրքը, բաժակը, շինությունն ավելին են, քան կան: Այս իրերը պատմության առարկայական վկաներն են, և նրանք մեզ ուղեկցում են մեր ճակատագրի ողջ ընթացքում, մեր հաջողություններում կամ դժբախտություններում: Այս պատճառով կարծում եմ, որ նման իրերի

պահպանումն էական ներդրում է պատմության մեջ:

**Սոֆյա** - Համաձայն են: Ավերակները դառնում են ավելի հետաքրքիր, եթե ինանում են նրանց պատմությունը, և կարծում են, որ այս իրերի պատմությունը բացահայտելու մեջ ջանքերն իրական արժեք են:

## Լուրջան փլուզվող պատի դարպասները Ուզաննա Բաղդասարյան (Հայաստան)

Թուրքիայում՝ Մշո դաշտի և Հայաստանում՝ մշեցիների ներկայիս սերունդներով բնակեցված գյուղերում ինձ պատահում են կիսաքանդ դրներ ու պատուհաններ, մուտքի և ելքի կառույցներ: Կարծում եմ, որ առօրյա կյանքում այդքան սովորական այս շինությունները կարող են նաև ծիսական կամ պատմական իմաստ ունենալ: Ի՞նչ է դուքը, եթե ոչ սահման, որը բաժանում է մի իրականությունը մյուսից, դրանք մեկուսացնում իրադից, բայց նաև երկու կողմից էլ մուտքի հնարավորություն տալիս: Միտք եմ անում՝ ո՞ր դրնից պետք է անցնել կամ ընդհանրապես անցնե՞լ, թե՞ ոչ:

Պատուհանները նույնպես դարպասներ են, որոնց միջոցով հնարավոր է դիտել և հաղորդակից դարնալ այլընտրանքային տարածությանը՝ առանց այնտեղ ոտք դնելու: Սակայն սահմանափակ դիտարկումն իր թերություններն ունի: Պատուհանի միջով մենք տեսնում ենք իրականության միայն մի մասը, աճբողջական տեսարանի ընդհամենը կտրված, շրջանակված պատկերը: Մտորում եմ՝ ինչպես կարող եմ առնչվել մի բանի, որի մասին շատ քիչ գիտեմ:

Սերունդներ շարունակ և մինչ օրս Հայաստանի և Թուրքիայի միջև բաց դարպասներ չեն եղել: Միմյանց

մասին անիրազեկությունը կամ ապատեղեկատվությունը սովորական երևույթ են այս երկրների ներկայում: Երբ քայլում են Թուրքիայում՝ Մշո դաշտի և Հայաստանում՝ մշեցիների գյուղերով, զգում են, որ անհրաժեշտ է կրկին միմյանց ներկայացնել այս երկու ժողովուրդներին և նրանց իրականությունները: 1915 թվի դեպքերին հաջորդող դարում այս հասարակություններն իրար միջև ավելի ու ավելի բարձր պատեր են կառուցել: Մի կողմում մեծ եռանդ է գործադրվում մոռանալու, իսկ մյուս կողմում հավասարազոր ջանքեր են թափկում հիշելու համար: Այս կերպ երկու կողմերի «ներկան» սերտորեն կապվում է ընդհանուր անցյալին: Յուրաքանչյուր անցած րոպե ևս մեկ այդու է ավելացնում ժամանակակից Թուրքիայի և Հայաստանի միջև ստեղծված լրության անթափանց պատին:

Բոլորու կրում ենք մեր անցյալի ազդեցությունը, անկախ այն բանից՝ կխոսե՞նք, թե՞ կլրենք դրա մասին: Մեր ինքնությունները ծևավորվում են բազում բաղադրիչներից՝ ներառյալ մեր պատմական, հավաքական և անձնական հիշողությունները, նոյնիսկ եթե դրանք խճճված ու բարդ են:

Կցանկանայի, որ երկխոսություն սկսվեր այս երկու երկրների միջև՝ բաց դրան կամ պատուհանի միջով: Հավատացած եմ, որ միայն սա կարող է ընդարձակել մեր պատկերացումները միմյանց մասին և փոխըմբռնման հանգեցնել:




Լրված դարպասներ。  
Դուռ Գյումրիում, պատու-  
հան Մուշում



Կողման բարձր գույնի գործականություն





Լոռիքյան վիլուզվող պատը



# ԲԵՄԱԿԱՆ ԱՐՎԵՏՈՒՅ



## Ներածություն

Պատմության և մեր կոլեկտիվ տրավմատիկ հիշողության տարրեր կողմերին անդրադարձալու համապատասխան մուտքում գտնելը մեր խմբի համար իրական մարտահրավեր էր: Մենք ուզում էինք, որ մեր ներկայացումն արտահայտի այն իրողությունը, որը մարդիկ գիտեն, որը մարդիկ մարմարավորում են, և թե ինչպես են նրանք այդ ողջ հիշողությամբ ապրում այսօր: Ուզում էինք խուսափել կտրուկ մեկնաբանություններից և հնարավորինս ճշմարտացի լինել՝ դառնալով հետազոտող, որը գնում է դաշտ և այդ դաշտն ավելի լայն լսարանին հանձնում ներկայացման միջոցով: Ներկայացումը մեզ համար լոկ աշխատանքի վերջնարդյունը չէր, այլ ամենօրյա հետազոտական գործընթաց, երբ գործ ունես իրական կյանքի հետ, և այդ իրականությունը թեզ վրա էլ է ազդում: Տպակիրությունների կիսում ես մարդկանց հետ,

հայտնում անհամածայնություն կամ վերանայում մտքեր, նորից ու նորից կապվում քեզ հանդիպած մարդկանց, և այս ամենն ի վերջո վերաճում է կայացման գործընթացի: Ելակետ, որից հետո ինքոք քեզ վերագրում ես այն իրողության մեջ, որի նասին հենց նոր ես իմացել:

Իրական կյանքի և մարդկային պատմությունների փնտությունը ու դրանց հետ առնչվելու գործընթացը շատ նույր ու անձնական է: Պետք է գտնենք այն ձևը, որը թույլ կտար չկորցնել օրվա ընթացքում մեր արածը, լսածը, տեսածը, սովորածն ու զգացածը: Միևնույն ժամանակ մենք մարդկանց խումբ էինք, որը փորձում էր թիմ դառնալ՝ համատեղ ստեղծագործող կոլեկտիվ, և սա ոչ միայն անձնական, այլև խմբային ռեֆլեկտիվ փորձ էր: Ավելին, անհրաժեշտ էր մշակել մի գործիք, որի միջոցով կարող էինք ծրագրում ընդգրկված նյութ խմբերին ամեն օր տեղեկացնել, թե մեր խումբն օրվա ընթացքում ինչ է արել, որպեսզի նրանք էլ կարողանային տեսնել գործելու և մտածելու մեր կերպը: Որպես թեմարվեստի խումբ, որը միշտ գտնում է այլընտրանքային մտածելու և գործելու միջոցներ, սովորական գրավիր օրագիրը մեզ չէր բավարարում: Մենք մտածում էինք օրագիր մասին, սակայն այլընտրանքային օրագրի: Որոշեցինք պատկերել մեր յուրաքանչյուր օրը և այն փոխանցել մեր նկարների միջոցով: Մուշում ամեն օր մասնակիցներից որևէ մեկը պատասխանատու էր ողջ խմբի այդ օրվա օրագիրը նկարելու համար: Գյումրիում մենք մասնակիցներին խնդրեցինք աշխատանքը գրյագրով կատարել, մի հոգի թուղթիացից և մի հոգի Դայաստանից պետք է միասին նկարեին խմբի օրը: Խմբի անդամները միանգամայն ազատ էին օրը պատկերելու իրենց ընտրության մեջ և եթե որոշում էին բառեր օգտագործել, ապա դա միայն գործընթացը բնորոշելու կամ ամբողջացնելու համար էր: Այս օրագրերը ներկայացված են հաջորդ էջերում և ցույց են տալիս ճամբարի ընթացքում մեր խմբի ամենօրյա անցուդարձը, ինչպես օրինակ՝ առավոտյան արկմին ողջունելու ժեստը, օրվա ընթացքում շարժվել և խաղալ սովորելը, օպերային երգչի տան փնտությունը և այլն:

Մենք նաև համարում էինք, որ խումբը, ինչպես նաև մասնակիցներից յուրաքանչյուրը, աշխատանքային նյութը է, որը կարող է շարժվել (մարմնին), լինել ինքնարուիս և ինպրովիզներ անել՝ գործելով որոշակի տեղանքում (տարածություն) և որոշակի պահերի համար համատեքստ ստեղծելով (ժամանակ): Այսպիսով, մենք մարմինն օգտագործում էինք որպես ծայնագործ սարք, որը դաշտում գրանցում է պատմություններ, թեմաներ, ձայներ, ձայներ, գոյներ, հոտեր, զգացմունքներ, տարածություն և ժամանակ: Այդ նույն ձայնագրիչը՝ մարմինը, այնուհետև ձեռք բերված փորձը խումբ և ապա թեմ է թերում՝

դաշտը ներկայացնելով շատ որոշակի ժամանակի ու տարածության մեջ: Մասնակիցներն առաջարկում են ելակետեր, աղբյուրներ, գաղափարներ կամ կառուցվածքներ, որոնցից խումբն այնուհետև կառուցում է իր հիմնական շարժումները, ձայնը և ոդիմը: Այս մեթոդն ընդարձակեց մեր ստեղծագործական կարողությունները՝ գաղափարներ առաջարկելու գործընթացում ներգրավելով ողջ խմբին: Հնարավիրության սահմաններում մենք կիրառել ենք դրամատիկական բաց կառուցվածք, որն ինքն իր «պատում» ուներ: Մեր դաշտը հիմնականում պատմողական է, ինչը նշանակում է, որ մենք պետք է պատմություն պատմենք կամ տրամարանական (այդ բառով՝ վերբալ) ուղերձ փոխանցեինք: Ներկայացումը (շարժում, խոսք, ձայն և տեսագրություն) մեզ հնարավորություն տվեց դրամատուրգիան դիտարկելով «պատումի» գարգանան մեջ:

Մեր խմբի աշխատանքի մեկ այլ կարևոր սկզբունք է այն էր, որ ուսուցանողների և փորձագետների անձնական գեղագիտական կարծիքը խաղի մաս էր կազմում, բայց չեղ գերակայում: Մենք հավատում էինք, որ կոմպոզիցիան նման է խաղի, փորձ, որի միջով պետք է անցնել ու հաճույք ստանալ: Ստիպված էինք նաև գործ ունենալ և հմտորեն բանեցնել ժամանակակից կոմպոզիցիաի երկու տարածված միտումները՝ անհատական և խմբային ստեղծագործությունը: Այսպիսով, մենք իմարովկիցներ էինք առում՝ որոնելով շարժում, ձայն, բառեր և այլն՝ պատկերացնելով, թե ներկայացում ստեղծելով նման է խճանկար հավաքելուն և այս պատկերելուն: Տարբեր տեսակի կոտորներ են օգտագործվել և համադրվել՝ օրգանական միասնություն ստեղծելու նպատակով: Ինպրովիզը, նախըան ստեղծելու գործընթացին համանելը, սովորաբար իմինված է գաղափարների, խոսքի, ձայնի և հավանաբար երաժշտության կամ որևէ այլ միջոցի վրա, որոնք ասոցացվում են ստեղծվող հատվածի հետ: Մեր դեպքում, քանի դեռ գործընթացը շարունակվում էր, ստեղծագործելու տարբեր միջոցներ կային: Այսպիսով, «մարմին և տարածություն» խճանկարի բոլոր մասերը կարելի էր կարգավորել ժամանակի մեջ: Նույն պատմությունը և շարժումը կարող էին գոյություն ունենալ այնքան ժամանակ, որը ան կամ մեջ գոյություն կամ շարժման տարբեր որակներ ստեղծելու համար: Մենք կարող էինք փոփոխել տեմպը և այդպիսով ներկայացնեան ընթացքում նվազեցնել կամ ավելացնել արագությունը: Մենք խաղում էինք խճանկարի կոտորների՝ մասնակիցների հետ՝ զգալով մեզ կենտրոնում, պատկերացնելով մեզ՝ իբրև շրջանակ, առաջնորդելով գործընթացը և պարզապես լրելով այն:

Հիմնական մոտեցումը միայն դաշտից բերված իրական

նյութը գրանցելն էր՝ պատմությունները, գրույցները, երաժշտությունը, տեսողական պատկերները և այն աննը, ինչն ուղղակիորեն արտացոլում էր մասնակիցների իրական փորձը:

Մուշի ճամբարը մեր ծրագրի համար իրական փորձություն էր: Մուշ ժամանակներուց ընդամենը չորս օր անց տեղի ունեցավ Վամի երկրաշարժը, որը հազարավոր մարդկանց կյանքեր խլեց, բազմաթիվ ընտանիքների բռնեց անտուն և անհապաղ օգնության կարիքի մեջ: Այս ողբերգության պատճառով մասնակիցներից մեկն սկսեց քննարկել ծրագրից դուրս գալու և օգնելու նպատակով Վամ գնալու հնարավորությունը: Մարդիկ տպավորված և շփորված էին և զիտեին հ՞նչ անել, ինչպէ՞ս արձագանքել: Դա առաջին լուրը լարվածությունն էր խմբի ներսում, որը հայ և բուրք մասնակիցներին տարբեր դիմանմկաների մեջ դրեց: Դայերն ընդամենը մի քանի օր առաջ էին Վանում եղել և ունեին նաև 1988թ. Գյումրիի երկրաշարժի հիշողությունը: Այժմ, թուրք մասնակիցների հետ միասին նրանք թուրքայում տեղի ունեցող ողբերգության ականատեսն էին, մի երկիր, որտեղ իրենք եկել էին իրենց ոչ պակաս ողբերգական համատեղ անցյալն ուսումնասիրելու: Այսպիսով, որոշվեց աջակցել Վամ գնացող առաջին օգնության փաթեթներին:

Իրավիճակն էլ ավելի լարվեց, երբ թրական աշխատավորական կուսակցության գիմնազ խմբերը Մուշից ընդամենը 50կմ հեռավորության վրա սուտիկանական ավտոմեքենա պայթեցրին: Դաշտ գնալն այլևս ապահով չէր: Սա հատկապես խնդրահարույց դարձավ մեր խմբի համար: Թուրք մասնակիցները սկսեցին զանգեր ստանալ իրենց ծնողներից, որոնք նրանց տուն էին կանչում: «Եթե չենք կարող քայլել քաղաքում, եթե չենք կարող քաղաքից դուրս գալ, հետո էլ չենք կարողանա հյուրանոցից հեռանալ: Բա էլ ինչո՞ւ ենք այս ծրագիրն անում», - հարցում էին որոշ մասնակիցներ: Փորձերի, երգելու կամ պարելու տրամադրություն այլևս չկար: Նախագծած մերժուաբանությունից մինչև ծրագրաված վարժությունները՝ ամեն ինչ դարձավ ծիծաղելի և անհեթեր:

Ծրագիրը շարունակելու համար պետք է պահպանեինք խմբի կայունությունն ու նոր աշխատանքային ծևազափ գտնեինք: Ցավոք, ճամբարը լրելու որոշում կայացրած երեք թուրք մասնակիցներից երկուսը մեր խմբից էին:

Թուրքայից բենական արվեստի խմբում ընդգրկված մասնակիցներից միայն մեկը երկար երկուտեղուց հետո որոշեց մենալ Մուշում մինչև ճամբարի ավարտը: Դայ մասնակիցները լիովին սպառված էին, գտնվում էին սթրեսային վիճակում, և ծրագրում մեր բաղադրիչի առկայությունը հարցականի տակ էր: Կազմակերպիչները պետք է լուծում գտնեին:

Սա այն պահն էր, երբ հնարավորություն ընծեռվեց տեղական ԴԱՍԼԱ (Մուշում գործող ոչ կառավարական կազմակերպություն) կազմակերպության սիրողական դերասաններին ծրագիր հրավիրելու: Այսպիսով, ստիպված էինք վայրի հետ հաշվի նստել և Մուշի Շերկայիս բնակիչներին ընդգրկել տեղական պատմության մեր ծրագրում: Չնայած ժամանակ գրեթե չկար, մարդիկ ոչ իրար էին ճանաչում, ոչ էլ ընթանուր լեզու ունեին (ԴԱՍԼԱ-ի անդամներն անգլերեն չին խոսում) և մերոդարձնությունն էլ իրենց համար լիովին նոր էր, յուրաքանչյուրն, այնուամենայնիվ, կարողացավ համատեղ ստեղծագործելու ընդհանուր հարթակ գտնել, և եղուափակիչ ներկայացնան արարման ողջ գործընթացը հաճնի էր:

Գյումրիի ճամբարը մեկ այլ մարտահրավեր էր բնենական արվեստի խմբի համակարգորների և փորձագետի համար: Դա ծրագրի երկրորդ մասն էր, և նախատեսվում էր շարունակել մեր հետազոտությունն ու կապել Մուշում գծված քարտեզը Զայաստանում քարտեզագրված կետերի հետ: Բայց ինչպես կարող էինք դա անել Թուրքիայից մեր խմբի նորեկ անդամների առկայության պայմաններում: Մեր խմբի վերջին թուրք մասնակիցը, որը մնաց մինչև Մուշի ճամբարի ավարտը, ծրագրությունը էր կատարել էր նախանակ Գյումրիի ճամբարի սկիզբը, և Թուրքիայից բոլոր երեք մասնակիցները նոր էին ընտրվել: Ավելին, Զայաստանից ևս մի նոր մասնակից ունեիմք:

Այսպիսով, Գյումրիի ճամբարը ամենասկզբից ուներ չորս նոր մասնակից: Պեսր է աշխատեինք ունեցածով: Նրանք տարբեր սպասելիքներ ու փորձ ունեցող մարդիկ էին, և ծրագիրն էլ նրանց համար բոլորովին նոր էր: Մենք՝ համակարգողներս, ընդունեցինք մարտահրավերը և հասկացանք, որ դա իսկական փորձարկում է լինելու, և որ մեր ճարմինը որպես ձայնագրիչ օգտագործելու մեթոդն այնուամենայնիվ կաշխատի: Չնայած մեր մտահոգություններին՝ Գյումրիի ճամբարը հաջողվեց: Մենք գրանցեցինք նոր պատմություններ, համատեղ մշակեցինք աշխատող սցենար, որոշ տեղացիների ներգրավեցինք մեր ներկայացնան մեջ և ամենակարևորը՝ կարողացանք եղուափակիչ ներկայացում բենադրել՝ Մուշի և Զայաստանի պատմությունների հինան վրա:

## Ինչպես կարդալ հաջորդ էջերը

Հաջորդ էջերում դուք կծանրանար ներկայացնան ստեղծման գործընթացին Մուշում և Գյումրիում առանձին-առանձին:

Մուշի ճամբարը սկսվեց մասնակիցների ծանրացմանը: Առաջին օրը նրանց հանձնարարվել էր նկարել իրենց նանկության վախերը և քննարկել դրանք: Դա մինյանց ժանաչելու առաջին փորձն էր՝ ավելի խորը և անձնական տեսանկ-




յունից: Եվ հիմա՝ որպես ընթերցող, դուք մեզ մեր վախերի միջոցով ճանաչելու հնարավորություն ունեք: Գյումրիում մենք սա փորձ-ինչ այլ կերպ կազմակերպեցինք: Այս անգամ մասնակիցները պետք է նկարեին ճանքարից ունեցած իրենց ակնկալիքներն ու բեմադրեին դրանք: Արդյո՞ք սա մարդուն ճանաչելու լավագույն ձևը չէ: տեսնել, թե գործընթացից ինչ սպասելիքներ ունի: Այսպիսով դուք կարող եք ծեզ մեր խմբի մաս զգալ Գյումրիում՝ մեր սպասելիքների գույների միջոցով:

Նկարները Ձեզ կուլդորդեն մեր ամենօրյա փորձի ու տրամադրության միջով, սկզբում Մուշում, ապա Զայաստանում: Գույմերի, բատերի, պատկերների և երբեմն կոլածների միջոցով ընթերցողը կհասկանա և միզուց կզար գրեթե այնքան, որքան մեր մասնակիցները: Սա նշանակում է, որ մասնակիցների նկարների բոլոր գույները և խորհրդանշերը շատ մեծ նշանակություն ունեն առնվազն նկարողների համար: Այսպիսով, դուք կտեսնեք, թե ապագա բեմադրության պատմությունն ինչպես է կառուցվել: Պարզ, սիրողական նկարների շրան նաման է ֆիլմի ժապավենի, որն ընթերցողին մեր ճամբարների մթնոլորտ է տեղափոխում: Յուրաքանչյուր օրը կարծես մի կետ լինի մեր այլընտրանքային քարտեզի վրա, որտեղ հավաքվում է ներկայացնան սցենարը քննարկումների, փորձի փոխանակման, ինչպես նաև կանոնավոր փորձերի միջոցով: Դուք կարող եք տեսնել ներկայացնան սցենարի ուրվագիծն ու սևագիրը, որոնք երբեմն կարող են անընթենելի լինել կամ դժվար հասկացվել, բայց այնուամենայնիվ շատ պատկերավոր են: Եվ երբ վերջապես հասնեք յուրաքանչյուր ճանքարի ներկայացնան վերջնական սցենարին, խճանկարը կամքողջանա է, և հուսով ենք՝ կիստականա:

Սցենարն այնպես է բաժանված, որ յուրաքանչյուր տեսարան համապատասխանում է քարտեզում նշված որևէ վայրի, ինչպես, օրինակ՝ համամի տեսարանը կամ հյուրընկալ տունը, որոնք ներկայացնան հիմնական տեսարաններ են: Յուրաքանչյուր տեսարան սկսվում է դաշտային փորձի մանրամասն նկարգությամբ: Տեսարանները միշտ սկսվում են պատմության կամ տեղեկատվության աղբյուրի նկարագրությամբ և որոշ պատմական տվյալներով: Յուրաքանչյուր տեսարանի սկզբում նաև բացատրվում է, թե ինչու է այդ դրվագն ընտրվել բեմադրվելու համար: Այնուհետև պատմությունը, դառնալով իրական ներկայացում, նկարագրվում է բեմում տեղի ունեցող գործունեության և բեմական գործողությունների միջոցով: Զայնը, տեսագրությունը և բեմականացման բոլոր տեխնիկական կողմերը նույնական ներկայացվում են: Եթե ընթերցողը ցանկանա բեմադրել մեր ներկայացումը, նա կարող է հետևել սցենարին և իր մասն ավելացնել մեր պատմությանն ու քարտեզին:



# Կախուեց





Unit 2  
op 1



Unit 2  
op 2





# Եղրափակիչ ներկայացման սցենար. Մուշ Արիադնա Գրիգորյան (Հայաստան) Մարիամ Գրիգորյան (Հայաստան) Աննա Պողոսյան (Հայաստան)

## «Ի՞նչ եք բերել ինձ համար»

Այս հարցը տրվեց Մուշի Դերիկ գյուղի ամենատարեց քրոջի կողմից: Քանի որ մեզ հետ լավաշ ունեինք, որը մեզ մեկ այլ տանն էին նվիրել, նրան ասացինք. «Մենք ծեզ համար լավաշ ենք բերել»: Բայց նա դանից չուրախացավ. դա բավարար չէ: Քրոջենք դենքեց՝<sup>1</sup> ժամրով երգելու ընթացքում նա կրկնում էր նույն հարցը: Մի քանի երգից հետո նա խնդրեց, որ իյուրերից մեկը հայերեն որևէ բան երգի: Յուրը սկսեց Կոմիտասից: Երբ երիտասարդը երգում էր, տարեց կինը ժամանակ առ ժամանակ ընդհատում էր նրան և շարունակում իր պատմությունը քրոջերեն՝ տեղում ստեղծագործելով: Կինն այնքան էր տարվել երաժշտությամբ, և այն այնքան հոգեհարազատ էր թվում նրան: Ինչքան ավելի շատ էին երգում, այնքան ավելի էր հաճույք ստանում: Սա մի հետաքրքիր երաժշտական երկխոսություն էր տարբեր սերունդներ ներկայացնող և տարբեր պատմական ուղիներ ունեցող երկու նարդկանց միջև: Մենք պատմությունների բացարձի խաչման ականատես էինք:

Գյուղեր այցելելիս միշտ ամենատարեց մարդկանց էինք վիճուրում, որովհետև նրանք թերևս ամենահարուստ հիշողություններն ունեն տեղի ընակչության, այդ թվում՝ ժամանակին այստեղ ապրած հայերի նասին: Յուսու ունեինք գտնել մարդկանց, որոնք կարող էին մեզ կապել անցյալին:

Մուշում տարեց մարդկանցից շատերը թուրքերեն չեն խոսում, ուստի մենք կրկնակի թարգմանության կարիք ունեինք: Այս տանը ծեր կնոջ հարս բացատրում էր, թե իր սկեսուրն ինչ էր ասում՝ նրա խոսքերը քրոջերենից թուրքերեն թարգմանելով, որպեսզի հետո կնոջ ասածն անգլերեն թարգմանվեր: Նա սկեսուրին հարցնում էր. «Ինչո՞ւ՝ չես ասում, որ հայ հարևաններ ունեիր քո հայերնի գյուղում»:

Չնայած կինը դժկամորեն էր խոսում իր գյուղում հա-

1. Դենքեցն առ է, ով պատմում է դյուցազմերական պատմություններ և վեր է հանում կարևոր սոցիալական իրողություններ կիլամի ("kilam" պոեմ) և ստրան ("stran" բալլար) միջոցով: Մինչեւ աս քրիստոն բանավոր գրականության կարևոր մաս է կազմում, դենքեցները նաև առանցքային դեր ունեն պատմություններ ներկայացնելու և այն սերնետ սերունդ փոխանցելու գործում:

յերի ներկայության մասին, երաժշտական փոխանակումը նրան օգնեց հաղթահարել հոգեբանական արգելքները: Մենք ականատես էինք մի երկխոսության, երբ մարդիկ ընդհանուր լեզու չունեն և որպես հաղորդակցության միջոց՝ օգտագործում են երաժշտությունը:

Քոյոր կատարողները թեմ են բարձրանում: Իրենց մայրենի լեզուներով և անգլերեն նրանք հարցնում են միմյանց ու հանդիսատեսին. «Ի՞նչ եք բերել ինձ համար»: Այս հարցը ուղղակիորեն կապված է ներկայացման վերջում հնչող պատասխանների հետ:


## Շարժում՝ ամկանոն շարժումներ

### Տեսագրություն՝ չկա

### Զայն՝ չկա

Խոսք՝ կրկնել հարցը մայրենի լեզվով (թուրքերեն, քրոջերեն, հայերեն, անգլերեն).

«Ի՞նչ եք բերել ինձ համար»:



## Դպրոցի վերածված եկեղեցին

Մուշ քաղաքի կենտրոնում գտնվող դպրոցներից մեկի կառուցման ժամանակ օգտագործվել են քաղաքից 22 կիլոմետր հեռավիրության վրա գտնվող Կարմիր եկեղեցու քարերը: Եկեղեցին սկզբում վճապել է երկուաշարժից և ապա պայթեցվել տեղի կառավարչի կողմից: Տեղացիները պատմեցին այս կառավարչի մասին, որը 1960-ականներին Մուշի շրջանում հայկական ճշակութային ժառանգությունը վերացնելու առաքելություն ուներ:

Տեսագրությունն սկսվում է պայթյունի ձայներով: Հանդիսատեսը տեսնում է, թե ինչպես է եկեղեցու պատից պոկ-վում քարը և տեղադրվում դպրոցի պատից շարվածքում: Միևնույն ժամանակ կատարողները միմյանց հարցեր են տալիս տարբեր լեզուներով՝ անգլերեն, թուրքերեն, քրոջերեն ու հայերեն. «Սա Կարմիր եկեղեցի՞ն է», «Սա Մուշը Կարապետն է», «Առաքելոց վա՞նքը» և այլն: Ներկայացման նաև ականական դասընթացները թեմի վրա իրար տեղից տեղ են տանում՝ մարմինը քարի փոխարեն օգտագործելով:

Շարժում՝ մարմինն օգտագործվում է որպես քար՝ պատ ստեղծելու համար

**Տեսագրություն՝ քարի տեղաշարժը՝ Եկեղեցու պատից դեպի դպրոցի պատը  
Զայն՝ մի քանի անգամ հնչող պայթյուն  
Խոսք՝ «Սա Կարմիր Եկեղեցին է», «Սա Սուրբ Կարապետն է», «Առաքելոց վանքը»**

## **Երկխոսություն դպրոցում**

Հայկական մշակութային ժառանգության հետքերով նախկինում հայկական մի քանի գյուղ այցելեցինք: Դրանցից մեկը քրոբերով բնակեցված Չենգիլի գյուղն էր՝ Մուշից մոտ 35 կմ հեռավորության վրա: Մեզ համար դա կարևոր վայր էր, քանի որ ժամանակին հենց այստեղ է գտնվել նշանավոր Սուրբ Կարապետ վանքը: Այսօր Սուրբ Կարապետից մնացել են մի քանի անձն ավերակ, փորագրված քարերի բեկորներ և խաչքարեր, որոնք ներկայիս նույտված բնակչիների՝ մեծամասամբ զազա քրոբերի կողմից որպես շինանյութ են օգտագործվում՝ հաճախ գտնվելով տների ու կառույցների պատերի շարվածքում:

Սուրբ Կարապետի վանքը մեզ համար շատ կարևոր էր, քանի որ վերջինիս հետ կապված մի շարք հայկական առասպելներ, ժողովրդական պատմություններ ու երգեր կան: Ասում են՝ Սուրբ Կարապետն ինքը կարողանում էր բուժել չբեր կանանց: Մեր խմբի բոլոր մասնակիցների համար ցավալի էր տեսնել՝ ինչքան քիչ քան է մնացել այս երեխնի հզոր և ծաղկուն վանական համալիրից: Անսահման էր մեր հիմարափությունը, երբ տեսանք, որ ժամանակին սուրբ քարերն ու Եկեղեցու կառույցները վերածվել են գոների և ամբարների: Երբ հարցինք, թե ինչու է Եկեղեցին ավերվել, և ինչու են նրանք Եկեղեցու քարերը որպես շինանյութ օգտագործում, ներկայիս բնակչիները մեզ քացատրեցին, որ իրենք այստեղ հաստատվել են այն ժամանակ, երբ վանքն արդեն քանդված էր, և իրենք քարերը պահպանում են՝ դրանք շինարարական նպատակներով օգտագործելով: Մեր այցը Չենգիլի գյուղ մեծ փորձ էր, որը հիմք հանդիսացավ ներկայացման տարբեր տեսարանների համար:

Որտեղ էլ գնում էինք, փորձում էինք ծանրանալ տեղացիների հետ: Երեխաները, որոնք հետաքրքրությամբ մեզ էին նայում և հարցեր տալիս, մեր առաջին քանասացներն ու ուղեկիցներն էին դաշնում: Չենգիլիի Երեխաների համար գյուղում այցելուներ ունենալը սովորական էր: Նրանց հետաքրքրում էր, թե մենք որտեղից ենք: Հայ մասնակիցներից մեկը շրջապատվեց շատ գրուցա-

սեր և աշխույժ երեխաներով, որոնք նրան իրենց դպրոց էին հրավիրում: Երբ նա դասի ժամանակ դպրոց մտավ, նրան հաղորդին, թե արդյո՞ք ինքը գրոսաշոշիկ է Լոնդոնից, չնայած մասնակիցը թուրքերն էր խոսում: (Սման հրավիճակներ հաճախ այլ գյուղերում էլ էին լինում): Նա անգերեն պատասխանեց, որ Հայաստանից է, բայց երեխաները զգիտեին, թե դա որտեղ է: Ուսուցիչը միջամտեց և ասաց, որ հետո կրացատրի: Մի շատ հետաքրքրասեր երեխա ուզում էր մեզ հետ նկարվել, և ուսուցիչը հեգնանքով նրան ասաց՝ «Ասա Սարկողի» ժամանակակից վիճակին:

Նամբարի ընթացքում հայ մասնակիցները հաճախ էին որպես գրոսաշոշիկ ընկալվում, մինչեւ իրենց իրենց պատմական հայրենիք էին եկել: Սա հակասական գգացումներ եր առաջացնում, որովհետև մի կողմից հայ մասնակիցներն ընկալվում էին իրեն արտասահմանցի գրոսաշոշիկներ, իսկ մյուս կողմից դա հազարամյակներ շարունակ Մուշում ապրած իրենց նախնիների հետ կապը վերահաստատելու միջոց էր: Քենց այս պահին հասկացնք, թե ինչ էր կատարվում ճամբարի առաջին օրը, երբ թվարկում էինք մեր՝ Մուշում գտնվելու պատճառները: Այդ օրը Թուրքիայից մի մասնակից ասաց, որ եկել է «Ներողություն խնդրելու համար»: Իսկ մի հայ մասնակից էլ ասաց: «Ես Մուշ եկա և մեծ ցավ ապրեցի, երբ հասկացա, որ ինձ համար կյանքը Մուշում քարացել է 1915 թվականին: Ես հասկացա, որ Մուշն ապրում է, շնչում է, բայց այն այլևս մերը չեմ»: Այստեղ հարց է ծագում, թե ինչպես են հայերն ընկալվում այսօրվա Թուրքիայում: Սա անորոշ և աղոտ է թե հայերի և թե ներկայիս բնակչիների համար:

**Բեմը դասարան է դաշնում, իսկ հանդիսատեսը՝ աշակերտ:** Կատարողները տեղավորվում են հանդիսատեսի շարքերում: Կատարողներից մեկը թեմ է բարձրանում որպես ուսուցիչ, և հաղորդակցությունը հանդիսատեսի հետ հաստատվում է:

**Շարժում՝ նստել հանդիսատեսի շարքերում որպես աշակերտ՝ ստեղծելով հաղորդակցություն**

**Տեսագրություն՝ չկա**

**Զայն՝ չկա**

**Խոսք՝ երկխոսություն**

**Մասնակից:** Çocuklar ne var ne yok? (Երեխաներ, ի՞նչ կա, ի՞նչպե՞ս եք:)

**Աշակերտ 1:** Turist misin sen? (Ջրոսաշրջիկ եք:)

**Մասնակից:** Evet. (Այո՛, նախահայրեն այստեղ են)

## Merabas longirostris

ապրել :)

**Աշակերտ 2:** İngiliz? Londradan mı geliyorsun? (Բրիտանացի՞ ես: Լոնդոնի՞ց եմ գալիք:)

**Մասնակից:** Hayır hayır (Ո՞չ, ո՞չ!)

**Աշակերտ 3:** Amerikandan mi geliyorsun? (Ամերիկայից ես գալիս:)

**Մասնակից:** Hayır Ermenistandan geliyorum, Yerevandan. (Ո՞չ, Քայլատանից եմ, Երևանից:)

**Աշակերտ 4:** Oh Ermenistan. (Օ՛, Հայաստան: Նկարվե՞նք:)

**Ուսուցիչ:** Իհարկե, ասացե՛ք Սարկողի:  
**Աշակերտ 4:** Ermenistan wouw! (Քայլատան, օ՛):

### **Աշակերտ 2: Ermenistan neresi ki? (Որոն**

Հայաստանը:)

**Ասանակից:** Ermenistan, Yerevan. (Հայաստան,

Եղևան:

**Ուսուցիչ:** (բարեկացած) Ermenistan, İğdır'in yanı, Խոյում մասնակիությունը ունեցած է (ՀՀ Հայոց պատմության համապատասխան)՝

komşu ülkemiz bilmiyor musun evladım? (Հայաստան, Եգիսխի մոտ, հարևան Երկիր է, չգիտե՞ս, Երեխա՞):



## Համամի<sup>2</sup> պատմությունը և Աստղիկի առասպելը

Հերանոս հայերի սիրո և գեղեցկության աստվածությի Աստղիկի մասին մի գեղեցիկ առասպել կա, որը կապված է Մուշի հետ: Երբ Աստղիկը լողանում էր Արածանի (Մուրադ) գետում, նա իրեն ծածկում էր մշուշով՝ բաքնվելով տղամարդկանցից, ովքեր իրեն սիրահարված էին և գալիս էին լոգանքը դիտելու: Այդ պատճառով էր տարածքը կոչվում «Մշուշ», որն էլ հետագայում դարձավ «Մուշ»: Ինչպես պարզեցինք, Մուշի ներկայիս բնակիչներն այս առասպելին ծանոթ չեն: Փոխարենը նրանք մի հայտնի երգ ունեն «Yemen Turkusu» անունով, որը, ըստ իրենց ենթադրության, Մուշին է նվիրված: Սակայն երգի շուրջ քննարկում կա: Ոմանք կարծում են, որ «Yemen Turkusu» երգում հիշատակվող բառը Մուշը չէ, այլ «Չուշ»-ն է, որը տարածը է Եմենում:

Մուշի տարբեր գյուղերում մենք շատ առասպելներ լսեցինք: Մեր ուշադրությանն արժանացավ հատկապես համամը (բաղնիք), քանի որ այն Սուշ քաղաքի ամենահին աշխարհիկ կառույցներից էր: Մեր խուճը միակն էր, որը համամ մտավ և այն ներսից ուսումնասիրեց: Մեր տեղացի ուղեկցորդ՝ ծագումով հայ Արմենը, մեզ մի քար ցուց տվեց, որը պատկերում էր խաղող և երկու դայլայլող թռչուններ: Նա նաև մի առասպել հիշեց, որտեղ համամի հայ տերը բռնացրել էր իր տղային, երբ վերջինս նայում էր, թե ինչպես էին լողանում կանայք: Դանուն պատվի հայոց որդուն սպանել էր: Այս պատմության միջոցով տեսնում ենք համամի՝ անցյալի և ներկայի միջև կապը: Այն հարմար էր տարբեր առասպելներ միավորելու տեսանկյունից:

Լույսերն անջատվում են: Բեմի վրա երկու մոմ է դրվում: Երկու կատարող հայտնվում են և օգտագործելով իրենց ձեռքերը՝ ստվերի միջոցով թռչումների դայլայլ պատկերում: Այնուհետև կատարողներից մեկն սկսում է քարդա (փոքր թմբուկ) նվազել: Յետո թռչումները դառնում են կանայք: Մեկ այլ կատարող բեմ է գալիս՝ Աստղիկի լոգանքը մարմնավորելու: Այդ ընթացքում մյուս մասնակիցները նրան սպիտակ սավանով են ծածկում, որը խորիրդանշում է ճշութը: Ստվերները ստեղծում են ժիկրակող մարդկանց տպավորություն, որոնք ծածուկ հետևում են համամում լողացող կանանց: Պատվո սպանությունը ցույց տալու համար մոմերն անսպասելի հանգցվում են, և սարսափազդու ճիշ է արձակվում: Մթության մեջ տղամարդկանց առնական ձայներն աստիճանաբար վերաձգում են բարձր ծիծաղի: Տղամարդկանց թեմում հայտնվելը ցույց է տալիս, որ երկար ժամանակ այս համամը (որը անցյալում բաց էր կանանց համար) միայն տղամարդիկ են այցելել, և ոչ մի կին այն-տեղ այլևս ոտք չի դնում:

## **Ծարժում՝ ձեռքբերով ստվերների ստեղծում, լոգանքի շարժումներով մենապար**

## Տեսագրություն՝ չկա

**Զայն՝ քարդահի ռիթմեր, ճիշ**

Iunup' skw

## Օպերային երգիչ

Արմենակ

### Շահմուրադյանի տունը

Եթք Մուշում ներկայացման համար հետաքրքիր պատմություններ էինք փնտրում, հանդիպեցինք մի տեղացու, որը մեզ ցոյց տվեց հայ օպերային երգիչ Արմենակ Շահմուրադյանի (հայտնի է որպես Մշուսկ) տունը, որն այժմ ռեստորանի է վերածվել: Արմենակ Շահմուրադյանը ծնվել է Մուշում 1878 թվականին, եղել է Կոմիտասի աշակերտը, ապա հասավանդել Սուլըր Կարապետ վարժարանում, իսկ ավելի ուշ Ելույթներ ունեցել աշխարհի տարբեր վայրերում: Նա Միացյալ Նահանգներ է տեղափոխվել նախքան 1915թ. ցեղասպանությունը: Տուն մտանք նախամուտքից, որը պարզվեց՝ ռեստորանի հետնամուտքն էր: Սատուցողը մեզ մի պատմություն պատմեց ինչ-որ հայ կնոջ մասին, որն այնտեղ էր եկել շատ տարիներ առաջ: Եթք նրան հարցող էին՝ ինչու է ուզում տեսնել պահեստը, նա բացատրել է, որ դա իր ծնողների տունն է, և որ ինքն այստեղ է մեծացել: Սենյակից սենյակ անցնելով՝ կինը հիշել է, թե դրանցից յուրաքանչյուր ինչ նպատակով էր օգտագործվում, թե որտեղ էր դրված կահույքը՝ անցյալը վերակենդանացնելով մանկության իշշողությունների միջոցով: Մուշի մի ուրիշ ներկայիս բնակիչ էլ պատմում էր, որ այդ տան նախկին սեփականատերը ենթադրում էր, թե հեռանալիս հայերն իրենց ոսկին տան մի անկյունում թաքցրել են: Նա փորձել էր գտնել այն, բայց փորելիս գերեզմանի է բախվել, և քարն ընկել է: Սա նշան էր, որ փորելը պետք է դադարեցնել, այլապես նա կանխօվի: Նա տունը մեկ այլ մարդու է վաճառում, որն էլ իր հերթին հանկարծակի հարստանում է և այստեղ ռեստորան բացում: Ենթադրվում էր, որ նոր սեփականատերը վերջապես գտել էր թաղված գանձը: Այցելության վերջում ներկայիս սեփականատերը մեզ տեղեկացրեց, որ պատրաստվում է քանդել շենքը ու դրա տեղում ավելի շատ բաց սեղաններ տեղադրել՝ մեծ տարածք ունենալու համար: Նա նույնիսկ զգիտեր, որ սա օպերային երգչի տուն է եղել:

Որոշեցինք օգտագործել մեր մանկության տան գաղափարը: Օրորոցային երգերը, որոնք նամնակացման ամենավաղ հիշողություններն են, կապվում են թե՛ անցյալին և թե՛ մեր լսած պատմությանը:



հասկը

Լուր տեսագրությունը մեզ Շահմուրադյանի տուն է տանում Շահմուրադյանի՝ հայկական երգի կատարման ներքո: Մեկ առ մեկ մասնակիցները հայտնվում և նստում են թեմի վրա՝ մեջքով դեպի հանդիսատեսը: Թվում է, թե նրանց սովորները տան ներսում են: Տեսագրությունը մեզ տանում է տան բոլոր սենյակներով: Կատարողները մեկը մյուսի հետևկից մայրենի լեզուներով երգում են իրենց մանկության օրորոցայինները: Հաջորդ օրորոցայինը սկսվում է նախորդը դեռ չափարտված, միմյանց ընդմիջելով: Հանկարծ լոյսերը վառվում են, և մասնակիցներից մեկը բեմ է բարձրանում ու ընդհատում է օրորոցայինների շարքը ճաշացանկի ընթերցմանը: Սա արտացոլում է տաճ՝ ռեստորանի վերածվելը: Տեսարանն ավարտվում է խոհանոցի ձայներով:

**Հարժում՝ հանդիսատեսին մեջքով նստած երգելը**  
**Տեսագրություն՝ Արմենակ Շահմուրադյանի տան տեսագրությունը**

**Զայն՝** օրորոցային երգեր, երգ Արմենակ Շահմուրադյանի կատարմանը՝ «Յայաստան երկիր դրախտավայր»

**Խոսք՝** ռեստորանի ճաշացանկ



### Յուլը մնկալ տունը

Մուշում հայկական եկեղեցի էինք փնտրում, եթք պատուհանից դորս նայող մի մարդ մեզ թեյ խմելու հրավիրեց: Չնայած նրանից եկեղեցու ճամփան էինք հարցնում, նա մեզ այնքան ժերմ ողջունեց, որ իրաժարվել չկարողացան: Զրույցի ընթացքում նա ասաց, որ իր տատը հայ էր, և ինքը տատից ժառանգել է մի ակուտեղ, ջաղացի քար և այլ իրեր: Սինչ մենք զրույցում էինք, նրա կինը, որը ծագումով Բինգոլից զազա էր, հաց էր թխում և առաջարկեց մեզ խմորը բացել սովորեցնել: Տանտերն ասաց, որ եթե լավ հաց թխել չկարողանանք, եթեք չենք ամուսնան: Թեյ էինք խնում, եթք տանտիրոց մոտ 13 տարեկան աղջիկը փորձեց մեզ զարմացնել՝ ասելով, թե գիտի հայերի ով լինելը: Ապացուցելու համար աղջիկը բերեց իր տեղեկությունների աղբյուր՝ պատմության դասագիրքը: Խսկապես զարմանալի էր տեսնել, թե ինչպես են հայերը



**Ներկայացվում գրքում:** Յայերը պատկերված էին իբրև դավաճաններ՝ ռուսական զինվորական համազգեստով։ Անհարմար զգալով՝ տանտերն անմիջապես աղջկա ձեռքից վեցորեց գիրքն ու մի կողմ դրեց։ Երբ արդեն դուրս էինք գալիս, նա առաջարկեց հյուրանոցի վրա ամփաստ գումար վասնելու փոխարեն իր տանն օթևանել։

Այս տանը, որտեղ մեզ ջերմորեն ընդունեցին, կարելի էր սովորել ճաշ պատրաստել և լավ տնային տնտեսութիւն դաշնալ։ Որոշեցինք այս հատվածն ընդգրկել սցենարում, քանի որ այն ամբողջացնում է Մուլշում մեր տեսած հյուրներկալությունների փորձը։ Այս տեսարանը բեմադրության մեջ ցույց է տալիս հյուրասիրության ինքնարուխ դրսուրումը, երբ քեզ սովորեցնում են հնտություններ, հյուրասիրում են, օթևան տրամադրում և անգամ հոգում ապագային մասին։ Լավաշ և մրգեր մատուցելը հյուրներկալության խորհրդանիշներ են և ապահովում են հանդիսատեսի հետ շփումն ու կապը։

**Տեսարանի սկզբում կատարողներից մեկը լավաշ է դնում մեջտեղում։ Ամբողջ խումբը նստում է լավաշի շուրջը։ Մեջտեղում գտնվող մարդոց մնացածներին սովորեցնում է լավաշ պատրաստել։ Բոլորը մասնակցում են գործընթացին՝ երգելով Միրքութ կոչվող երգը, որը քուրմանցի լեզվով աշխատանքի մասին երգ է և սովորաբար երգվում է, երբ դաշտում աղում են ցորենն ու լավաշ բաժանում։**

**Հարժում՝ հայ թիելու հետ ասոցացվող համահունչ շարժումներ  
Տեսագրություն՝ չկա**

**Զայն՝ Միրքութի կենդանի կատարում  
Խոսք՝ չկա**

### Խոչընդոտները

Չենգիլի գյուղի մզկիթի մոտ բուրք մասնակիցներից մեկը գրուցի բանվեց մի տեղացի երեխայի հետ խմբի մեկ այլ անդամի երկար մազերի վերաբերյալ։ Երեխան ասաց, որ տղանարդկանց դեպքուն երկար մազ ունենալը հարամ<sup>3</sup> է։ Ահմադը, որս ինքը հավատացյալ էր, երեխային բացատրեց, որ նա սխալ է հասկանում սկզբունքը։ Յետաքրքիր գորգադիպությամբ այս հարցը բարձրացվել էր հենց այն գյուղում, որտեղ նախկինում Սուլը Կարապետի վանքն էր գտնվում։ Սուլը Կարապետը Յայ Արաքելական եկեղեցու կարևորագույն սրբերից է։ Յին ժողովրդական ավանդույթը Սուլը Կարապետին պատկերում է երկար վարսերով և ընդհանրացնում հեթանոս հայերի աստված Գիսանեի հետ։<sup>4</sup> Միևնույն ժամանակ այդ նույն գյուղում մեկ այլ մասնակցի հարցողին իր ծագման մասին։ Թուրք մայր և քուրդ հայր

3. Յարամն (արաբերեն՝ مُلْحَّرَام) արաբերեն բառ է, որը նշանակում է «մեղավոր»։ Խլամում այն օգտագործվում է Ալլահին (Աստված) անհած ցանկացած գործողության մասին խոսելիս։

4. Յանդական ծագման հայ հեթանոս աստված, որը Յանձաստանից Յայաստան փախած արքայան էր։ Ենթարկվում է, որ «Գիսան» անունը ծագել է հայերեն «գես» բարից, որը նշանակում է երկար ծամեր, ինչպիսիք ունեցել են հոգևորականները։

ունեցող այդ աղջիկն ասաց, որ քուրդ է և բախվեց նոր հարցի, թե ինչու քրդերեն չգիտի: Երբ զյուղացիներն իմացան, որ նրա մայրը թուրդ է, միանգամից հետևություն արեցին. «Ահա թե ինչու քրդերեն չգիտես»: Այս երկխոսություններն ընդգրկվեցին սցենարում՝ ցույց տալու համար ինքնության, եթիկ պատկանելության, կրոնի, կենսակերպի և մշակույթի վրա իհմնված սոցիալական խոչընդոտներն ու կարծրատիպերը, և այն դժվարությունները, որոնք ընկած են այս խոչընդոտները հաղթահարելու համար անհրաժեշտ երկխոսության մեջ ներգրավվելու ժանապարհին:

Բոլոր մասնակիցները բեմ են քարձրանում և անկանոն շարժվում: Այնուհետև նրանք քարանում են, և երեք մասնակից ներկայացնում են թուրքերեն երկխոսությունը, ինչպես օյուղում էր: Հանդիսատեսից պատահականորեն ընտրված քարզմանիչը բեմ է հրավիրվում երկխոսությունն անգերեն քարզմանելու համար:

### Չարժում՝ անկանոն շարժումներ, անշարժություն Տեսագրություն՝ չկա

Զայն՝ չկա

Խոսք՝ երկխոսություն

Երեխա: Բարի գալուստ:

Մասնակից 1: Շնորհակալություն:

Երեխա: Ինչպե՞ս եք:

Մասնակից 1: Շնորհակալություն:

Երեխա: Որտեղի՞ց եք եկել:

Մասնակից 1: Ես Սուշից եմ:

Մասնակից 2: Ես Անկարայից եմ:

Երեխա: Թու՞ղո եք:

Մասնակից 1: Այո՛, թուրք եմ:

Մասնակից 2: Ոչ, ես քուրդ եմ:

Երեխա: Այսինքն՝ մահմեդակա՞ն եք:

Մասնակից 1: Այո՛, ինչո՞ւ ես հարցնում:

Երեխա: Դե, ինձ թվում էր՝ մահմեդականները երկար մազեր չեն ունենում:

Մասնակից 1: Ո՞վ է քեզ նման քան ասել:

Երեխա: Մեր մեծերը:

Մասնակից 1: Իսկ ինքը երբէւ պրատե՞լ ես:

Երեխա: Չէ:

Մասնակից 1: Ինչպե՞ս կարող ես իմանալ՝ ինչն է հարամ, և ինչը՝ հալալ, առանց պրատելու:

Երեխա: Դե, մենք լսում ենք մեր մեծերին:

Մասնակից 1: Կարծում եմ, պետք է նախ ուսումնասիրնես: Օրինակ, 1400 տարի առաջ մեր մարզարեն նույնպես երկար մազեր է ունեցել: Յիմա հասկացա՞ր:

Երեխա: Րա՛:

### Երկընտրանք: Կեղծավորությո՞ւն, թե՞ հյուրընկալություն

(Այս հատվածը քննարկվել և շարադրվել է մասնակիցների կողմից ներկայացնան նախապատրաստական փուլում: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չեղավ այն մշակել և ներկայացնել եգրափակիչ ներկայացման ժամանակի:)

Ներկայումս քրդերով բնակեցված նախկինում հայրենակ Ներիկ գյուղում մի հետաքրքիր դեպք պատահեց, որը մեր խմբին ստիպեց վերագնահատել ու վերարժնորել մինչ այդ պահը Մուշում մեր ողջ տեսածը, լսածը, ապրածն ու սովորածը: Ծրագրի թուրք մասնակիցներից մեկը երկընտրանքի առաջ կանգնեց, երբ մի տարեց գյուղացու այցելության ժամանակ հարցրեց հայերի և գյուղում նրանց պատմական ներկայության մասին: Ծեր մարդը բացեիրաց պատմեց, թե ինչպես են հայերից հետո գյուղում հաստատված քրդերը մասնակցել կոտորածներին՝ կոնկրետ օրինակներ և դեպքեր նշելով: Երբ նա իմացավ, որ թուրք մասնակցի հետ միասին իր գյուղում հայեր էլ կան, նա անմիջապես փոխեց դեմքի արտահայտությունն ու տոնայնությունը և վախեցած ասաց. «Հայերն այստեղ գտնվել չեն կարող»: Ապա ավելացրեց, որ հայի հյուրընկալել չի կամենում: Նա վախենում էր, թե հայ մասնակիցները եկել են իր հողը ձեռքից վերցնելու, և անգամ հայ տեսնել չեն ուզում: Սակայն երբ հայերից մեկը մոտեցավ, նա չէր կարող վերջինիս տուն չիրավիրել և իր հյուրընկալությունը չառաջարկել: Հայ մասնակիցն թեյ, հաց և պանիր հյուրասիրելուց հետո, տանտերն անդրադարձավ գյուղի նախկին բնակիչներին՝ հայերին: Նա նշեց, որ իր հայրը լուրջ պատմաբան էր, որը հիացմունքով էր խոսում Ստալինի մասին և բացատրում, որ այս գյուղը նախկինում հայկական է եղել, և որ ողջ տարածքը ժամանակին հայկական էր: Նա ասաց, որ իր հայրն ուսումնասիրում էր ցեղասպանությունը և մեղադրում էր Թուրքիայի կառավարությանը 1915 թվականին պատահածի համար:

Թուրք մասնակիցն ուղղակի ապշարություն էր, թե ինչպես

կարող էր այդ մարդը փոխվել հանուն հյուրընկալության՝ իր հյուրին հաճոյանալու հանար, և թե ինչպես էր խոսում այնպիսի բաներից, ինչպիսիք հայ մասնակիցն ակնկալում էր լսել: Նա չէր հասկանում ինչպես բացատրել այս երկընտրանքը և ինչպես շարունակել խոսակցությունը տարեց մարդու հետ: Այս դեպքը քննարկման առարկա դարձավ, որովհետև տվյալ իրավիճակում հայտնված կողմերից յուրաքանչյուրն իր խնդիրներն ուներ. տարեց մարդը ստիպված էր փոխել իր բառերը՝ քաղաքական կոռեկտուրյունից ելնելով, Թուրքիայից մասնակիցը բախվել էր տարեց մարդու վայրկենական փոխված դեմքին, իսկ հայ մասնակիցները պետք է գլուխ հանեին հյուրընկալության մասին իրենց ունեցած պատերազումներից, երբ այն ուղեկցվում էր կեղծավորությամբ:

**Բեմականացումը** չէր որոշվել, բայց որոշ առաջարկներ կային. Աերկել մասնակիցներից մեկի դեմքը՝ ցույց տալու համար մարդու երկերեսանի դիմակը, միևնույն ժամանակ ստեղծել ոիթմի, ձայնի և մեղեդու մի բարդ համադրություն, բոլորին ներկել տարբեր գույներով՝ ցույց տալով, որ բոլոր էլ կարող ենք դիմակներ կրել և կեղծավոր լինել, և բոլոր էլ կարող ենք երկընտրանք մարմնավորել:

**Շարժում՝** բեմի վրա նստած՝ գույներով իմպրովիզ ներ անել

**Տեսագրություն՝** չկա

**Ձայն՝** իմպրովիզ՝ ոիթմեր, ձայն և հնչերանգներ

**Խոսք՝** չկա

## Շնորհակալություն, Երեխանե՛ր

(Այս հատվածը քննարկվել և շարադրվել է մասնակիցների կողմից ներկայացման նախապատրաստական փուլում: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չեղավ այն մշակել և ներկայացնել եղրափակիչ ներկայացման ժամանակ:)

Երեխաները մեր դաշտային ուղևորությունների կարևոր մասն էին կազմում որպես ուղեկցողներ, հյուրընկալուներ, ընկերներ, ինչպես նաև երգերի, պարերի ու կրկեսային հնարքների լավագույն կատարողներ: Մեր այցը Մուշի նախկին հայկական քաղանաս բացօթյա փառատոնի վերածվեց, և որոշեցինք այս համատեքստը եղրափակիչ ներ-

կայացման մաս դարձնել, որպեսզի Երեխաները նույնպես վայելեն թեմ բարձրանալու բերկրանքը:

**Կատարողները** վերաբեղջում են թաղամասում իրենց տեսած իրավիճակը: Յուրաքանչյուր կատարող թեմ է հրավիրում իր ճանաչած Երեխային՝ որպես իր լավագույն ընկերոջ, և խնդրում իր հմտությունները ներկայացնել: Միևնույն ժամանակ օրվա լուսանկարները բաժանվում են Երեխաներին և նրանց ընտանիքներին՝ որպես Երախտագիտության նշան:

**Շարժում՝** պարեր և ակրոբատիկ շարժումներ Երեխաների կողմից

**Տեսագրություն՝** չկա

**Ձայն՝** զրոյց, ծիծաղ, երգ՝ կենդանի կատարում

**Խոսք՝** չկա

## Գերեզմանը վերածվում է

### բանտի և ապա շուկայի

(Այս հատվածը քննարկվել և շարադրվել է մասնակիցների կողմից ներկայացման նախապատրաստական փուլում: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չեղավ այն մշակել և ներկայացնել եղրափակիչ ներկայացման ժամանակ:)

Մուշի բնակիչներից մեկն առաջարկեց քաղաքի շուկա այցելել: Այնտեղ մեզ տանձ հյուրասիրեցին: Վաճառողները խմբի հայ անդամներին հետևյալ բառերով էին դիմում. «Ես տանձը ձեր պատերի այգիներից ա, մեղր ա, մեղրո»: Նրանք մեզ նաև ասացին, որ շուկան ժամանակին գերեզմանց է եղել, և քաղաքը վերևում՝ բլրի վրա է գտնվել (այնտեղ, որտեղ մեծանասամբ հայկական տներն են պահպանված, հայտնի է Յին Մուշ անունը): Այնուհետև գերեզմանոցը բանտի է վերածվել և ապա շուկայի: Նրանք մեզ անգամ հին քաղաքի մի լուսանկար ցույց տվեցին: Յետաքրքիր կերպով բոլոր գաղափարները խաչվեցին: Մենք այս դրվագը որոշեցինք ընդգրկել ներկայացման մեջ, որովհետև այն պատերում է հայկական պատմության փոխակերպումը ներկային քրողական իրականության:

Այն պահին, երբ շուկայում էինք, մեր խնդիր թուրք համակարգողին շրջապատել էին անծանոթ մարդիկ և հարցեր էին տալիս: Յետու իմացանք, որ դրանք ուստիկաներ են և հետաքրքրություն է ին Մուշում մեր ծավալած գործունեությամբ:

Սա մեր այցելության երկորդ օրն էր, և երեկոյան ամփոփիչ համույթական ժամանակ տեղեկացանք, որ ոստիկանները Մուշտում աշխատող մեր մյուս խնճերին էլ են հարցագրնել:

**Կատարողները դուդուկի երաժշտության ներքո պառկում են բեմի վրա, որն իբրև գերեզմանոց է: Յետո նրանք կամքում են, և լուսավորությունը ցույց է տալիս բանտի ծաղերը: Այսուհետև ծաղերը բարձրանում են վեր, և նրանք ժեստերով ու աղմուկի իմիտացիայով (օգտագործելով շուկայի աղմուկի ձայնագործությունը) պատկերում են շուկան: Տեսագրությունը ցույց է տալիս ագռավներով լի երկինք:**

**Շարժում՝ թեմի վրա պառկելը և ստվերի միջոցով բանտի ճաղերի պատկերում**

**Տեսագրություն՝ երկինքը՝ ագռավներով**

**Զայն՝ դուդուկ և շուկայի աղմուկ**

**Խոսք՝ չկա**

## **Այլընտրանքային քարտեզ**

(Այս հատվածը քննարկվել և շարադրվել է մասնակիցների կողմից ներկայացման նախապատրաստական փուլում: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չեղավ այն մշակել և ներկայացնել եղրափակիչ ներկայացման ժամանակը:)

Մուշտի գյուղերում մարդիկ մեզ միշտ հարցնում էին, թե որտեղ է մեր քարտեզը: Տեղացիները մեզ գանձ որոնողներ էին համարում, ինչը սկզբում այնքան էլ հասկանալի չէր: Չենզիլի գյուղում ամենատարեց կինը, որի հետ խոսում էինք, հարցրեց. «Չեզ հետ քարտեզ բերե՞լ եք»: Զրոյցի ընթացքում նա բացահատեց, որ Մուշտում ապրող հայերն ունենոր էին: Այս ծեր կինը պատմեց, որ ջարդերի ժամանակ անխուսափելի բռնությունից, առևանգման և մահվան վտանգից ազատվելու համար հայ կանայք վերցրել են իրենց երեխաներին ու ոսկեղենը և Մուլրադ գետն են նետվել: Ոմանք ոսկեղենն իրենց տներում են պահել կամ էլ հողում թաղել՝ վերադառնալու հույսով: Երբ տեղացի քրդերն այստեղ հիմնվեցին, նրանցից ոմանք գտան թաքցրած ոսկեղենը: Այստեղ նաև Ստամբուլից եկած խնճեր են աշխատել, որոնք պեղումներ են կատարել և Ստամբուլ տարել լավագույն քարերը: Նաև կացանք, որ գանձերի պատմությունը մյուս գյուղերում էլ էր շրջում: Ծեր կնոջ հետ գրուցից հետո հասկացանք, թե ինչ պետք է պատասխանենք այդ

հարցին: Այո՛, մենք գանձ էինք որոնում, սակայն իրական գանձը մեզ համար եկեղեցիներն էին, պատմական ներկայությունը և մշակութային ժառանգությունը:

Մեկ այլ խոսակցություն Գոմս գյուղում տեղի ունեցավ: Նախքան գյուղից հեռանալը, իմանը (մզկիթի աղոթքի առաջնորդը) մեզ շերմորեն մզկիթ հրավիրեց, թեև այն արդեն փակ էր: Ինանձ անգամ կանանց տղամարդկանց հետ միասին մտնել թույլատրեց: Գեղեցիկ մզկիթն առանձնանում էր շրջանի այլ մզկիթներից իր չափերով, ծոխությամբ և շքեղությամբ: Իմանը, որը հապատակ էր տալիս կառույցի ողջ գեղեցկությունը, խոսեց նաև իսլամի մասին՝ շեշտելով, որ բոլոր հարցերի պատասխանը կարելի է գտնել իսլամում: Երբ իման իմացավ, որ մեր խումբը ժամեր է ծախսել տարածքում շրջելով և հարցեր տալով հայկական՝ քրիստոնեական մշակութային ժառանգության մասին, նա ասաց. «Ի՞նչ էիք փնտրում այդ ավերակներում: Այստեղ եկեք: Այստեղ է անենամեծ արժեքը և իրական մշակույթը»: Ի պատասխան՝ խնդիր անդամներից մեկը դիվանագիտորեն ասաց. «Եթե դուք կարողանում եք հասկանալ և գնահատել մշակույթի արժեքը, ապա պետք է նույն կերպ հոգ տանեք ձեր գյուղում առկա այլ մշակութային ժառանգության մասին»:

Նախքան ներկայացումն սկսելը, կատարողները գծում են Մուշտի պատմական և մշակութային վայրերի քարտեզը, մի տեսակ այլընտրանքային քարտեզ «գանձ որոնողների» համար, որոնք եկել են ոսկի գտնելու, բայց արդյունքում բացահատել են ավերված հայկական եկեղեցիների և մշակութային արժեքների իրական գանձը: Քարտեզագրման գործընթացը՝ ուղեկցված «իրական գանձի» շուրջ քննարկումներով, նկարահանվել է: Ներկայացման ընթացքում ցուցադրվում է այս տեսագրությունը, իսկ կատարողները համույթատեսին են ներկայացնում իրենց գժած քարտեզը:

**Հարժում՝ հանդիսատեսին քարտեզներ են բաժանվում Տեսագրություն՝ քարտեզագրման տեսանյութ**

**Զայն՝ չկա**


**Խոսք՝ չկա**



Սելին



Գոհար



Մերվե



Մարիամ



Արիադնա

Նիհալ



-Expectations  
From the project -



Սայաթ


## Գյումրի օր 2



## Գյումրի օր 3



## Գյումրի օր 4



Գյումրի  
օր 6





Գյումրի  
օր 8

**24.04.2012**

**Գյումրի  
օդ 9**

## Script Writing



Գյումրի  
օր 13

Գյումրի  
օր 14

# Եղրափակիչ ներկայացման սցենար. Գյուլմի

Արիադնա Գրիգորյան (Հայաստան), Գո-  
հար Հովսեփյան (Հայաստան), Մարիամ  
Գրիգորյան (Հայաստան), Մերվե Խան  
(Թուրքիա), Սայաթ Թեքիր (Թուրքիա), Աւ-  
լին Շաքար (Թուրքիա)

## Սահմաններ

Հայաստանի՝ մշեցինե-  
րով բնակեցված տարբեր  
գյուղերում մարդկանց հետ  
զրուցելիս միշտ բախվում  
էինք սահմանների խնդրին:  
Դաշտադեմում համովիթեցինք  
մի ճեր կնոջ, որը արդրեցանե-  
րեն գիտեր, լեզու, որը շատ մոտ է թուրքերենին: Նա խոսում  
էր Թուրքիայից եկած մասնակիցների հետ: Այդ տատիկը  
աղբեցանահայ էր, որն Աղբեցանից եկել էր Հայաստան՝  
կրթություն ստանալու, և ապա այստեղ ամուսնացել: Նրա  
սկեսրայոն ու սկեսուրը ծագումով Մուշից են: Պատմում  
էր, որ միշտ հարցնում էր իր ամուսնու ծնողներին՝ ինչու  
են նրանք հենց այստեղ բնակվել և ոչ Գերմանիայում կամ  
Ֆրանսիայում: Պատասխանն այն էր, որ ամուսնու ծնողնե-  
րը միշտ ցանկացել են սահմաննին մոտ գտնվել՝ լուսալով,  
թե մի օր հնարավորություն կունենան վերսկսելու իրենց  
կյանքը հայրենիքում: Այդ նույն Դաշտադեմ գյուղում մի հե-  
տաքրքի երաժիշտ կար: Անունը Վարուժան էր: Նա թուրք  
մասնակիցներին անընդհատ հարցնում էր. «Եթե ձեզանից  
վիզա խնդրեն հայրենիքս այցելելու համար, կտա՞»: Վա-  
րուժանն իր պապից Մուշից բերված գուռնա էր ժառանգել,  
և այս գործիքը Մուշից նվազելը նրա երազանքն է:

Հարցազրույցի ժամանակ մարդկանց հարցնում էինք նաև,  
թե ինչու են հենց այստեղ՝ այս գյուղում բնակություն հաստա-  
տել: Մարդկանց մեծ մասը որպես բնակավայրի ընտրության  
հիմնական գործոն նշում էր սահմաննին մոտ լինելու հանգա-  
մանքը և հետևաբար հայրենիք վերադառնալու հնարավո-  
րությունը: Վարուժանը միշտ նեղվում էր, երբ կինը լվացը էր  
կախում, որովհետև նա փակում էր Էրգորի (Մուշ) տեսարա-  
նը. «Եթե սիրում, երբ նա լվացը է փոռում, որովհետև Մուշն  
այլև չեմ կարող տեսնել»: Քանի որ սահմանի թեման միշտ էլ  
կարևոր հարց է եղել, և որովհետև ներկայումն Հայաստանի և  
Թուրքիայի միջև սահմանը փակ է, մասնակիցները քննարկե-



ցին բաց սահմանների հավանականությունը և դրանից բխող  
օգուտները երկու կողմերի համար:

Ներկայացման մասնակիցները ստեղծում են «Քաղցր Սու-  
շի»<sup>1</sup> պատկերը՝ պատին պրոյեկտված Մուշի նկարի և Սու-  
շի մասին երգի միջոցով: Երգը խորհրդանշում է կաաը Էրգ-  
որի (Մուշ) հետ և հայունաբարձությունը: Մեկ առ մեկ նրանք  
դադարում են երգել և կիսով չափ փակում են Մուշի պատկե-  
րը՝ կարծու սահման ստեղծելով հանդիսատեսի և Մուշի միջև: Ի  
վերջո, կատարողները էկրան են դառնում տեսագրության  
ցուցադրության համար: Սահմանի թեմային առնչվող տարբեր  
պատկերներ պրոյեկտվում են կատարողների ձեռքբորսվ պա-  
հած շահմանների վրա՝ լվացը, խաչքարեր, գմացը, ցանկա-  
պատ: Տեսարանը վերջանում է Վարուժանի՝ կնոջն ուղղված  
նախադասությամբ:

**Հարժում** սահմանի կառուցում մարմինների միջոցով  
**Տեսագրություն**՝ Մուշի լուսանկարներ, կախված  
լվացը, խաչքար, գմացը, ցանկապատ  
**Զայն**՝ «Մուշ, Մուշ, քաղցր Մուշ» երգի կենդանի կատա-  
րում  
**Խոսք**՝ «Եթե սիրում, երբ նա լվացը է փոռում, որովհետև  
Մուշն այլև չեմ կարող տեսնել»:

## Դպրոցի վերածված եկեղեցին

Այս հատվածը նույնն է, ինչ Մուշի ճամբարի ներկայաց-  
ման սցենարում:

## Համամի առասպելը

Այս հատվածը նույնն է, ինչ Մուշի ճամբարի ներկայաց-  
ման սցենարում:

## Ինչու՞ եք այստեղ եկել

Հայաստանի գյուղերում միշտ անհրաժեշտ էր մարդկանց  
վստահությունը ծեռք բերել, որովհետև մենք շատ նուրբ ընտա-  
նեկան պատմություններով էինք հետաքրքրվում: Հատկապես  
թուրք մասնակիցների հետ իրենց պատմություններով կիսվելու  
համար մարդիկ պետք է հավատային մեր ծրագրի կարևորութ-  
յանը, քանի որ իրենց պատմություններում առկա թուրք կեր-  
պարները սովորաբար ոճրագրով դերում են հանդես գալիս:  
Դաշտադեմ գյուղի բնակիչներն անցյալի հանդեպ միշտ էլ զգա-  
յուն են եղել և հավատացել են, որ պատմական արդարությունը

1. Հարցազրույցների ընթացքում լսած պատմություններից  
մասնակիցները որոշեցին, որ մարդիկ իրենց մտքում պահում են «քաղցր»  
Մուշի երազանքը:

## → searching for a place → border

## asking rhetorical question to trees

(Music)  
(Msho K)

մի օր կվերականգնվի, և իրենց հողերը կվերադարձվեն: Նախքան մեզ իրենց գյուղ և տներ բողնելը՝ գյուղացիները հավաքվեցին գյուղապետարանում՝ ճշտելու համար մեր դիրքորոշումներն ու ծրագրի նախակները: Անա տրված հարցերի մի քանի օրինակ. «ինչպէ՞ս եք վերաբերվում ցեղասպանությանը», «ձեր երկրում ի՞նչ քայլեր եք ձեռնարկում՝ պատմական արդարությունը վերականգնելու համար» (սրանք ուղղված էին բոլոր մասնակիցներին), «ձեզանից ո՞վ է բոլոր», «ուզում ենք ինձնալ՝ արդյո՞ք նրանք զղջում են, թե՞ ոչ», «դուք ճանաչո՞ւմ եք ցեղասպանությունը» և «ինչո՞ւ եք եկել այստեղ»: Իրականում, տարբեր ձևերով նախատիա հարցեր տրվում էին մեր այցելած բոլոր գյուղերում՝ թե՛ մարդկանց տներում և թե՛ հանդիպումների ժամանակ: Սա վստահության կառուցման գործընթացի մաս էր կազմում: Մեր մասնակիցները ներկայացումն օգտագործեցին որպես այդ դժվար հարցերն արտացոլելու և դրանց պատասխանելու հնարավորություն:

**Կատարողներն անկանոն քայլում են բեմի վրա: Ժամանակ առ ժամանակ նրանք քարանում են, և նրանցից որևէ մեկը ներկայացնում է ինքն իրեն, ինչպես նաև իր մայրենի լեզվով ասում, թե ինչու է ինքն այստեղ: Այնուհետև մեկ այլ մասնակից քարգմանում է նրան: Այս ամենը կրկնվում է, մինչև բոլորը կներկայացնեն իրենց: Անհանգստության զգացումը զարգանում և արտացոլվում է հաջորդ՝ «Հյուրնկալ տունը» տեսարանում:**

**Ժարժում՝ քայլեր  
Տեսագրություն՝ չկա  
Զայմ՝ չկա  
Խոսք՝**

Բարեկ ձեզ, ես Աղան եմ, այստեղ եմ՝ Մուշը ձեր մտքերում արթնացնելու համար:

Բարեկ ձեզ, ես Սելին եմ, այստեղ եմ՝ միմյանց հետ խոսելու և միմյանց ցավը կիսելու համար:

Բարեկ ձեզ, ես Գոհարն եմ, այստեղ եմ հայ-բուրքական հարաբերությունները խաղաղ լուծելու համար:

Բարեկ ձեզ, ես Մարիամն եմ, այստեղ եմ Մշշ ձայներն աշխարհին հասցնելու համար:

Բարեկ ձեզ, ես Մերվեն եմ: Ես չեմ ուզում սպասել մինչ կառավարությունները կլուծեն հայ-բուրքական հարաբերությունները: Ես այստեղ եմ ինքս քայլեր ձեռնարկելու համար:

Բարեկ ձեզ, ես Սայաթն եմ, ես ստամբուլահայ եմ: Ես այստեղ եմ սահմանները բացելու համար:

## Հյուրընկալ տունը

Հյուրընկալալությունը մեր թիմային փորձի կարևոր մասն էր: Մեզ հյուրընկալած շատ տներում բարձրացվում էր մեր մշակույթի և ավանդույթների նմանության հարցը: Միևնույն ժամանակ Յայաստանի գյուղերում ցեղասպանության մասին շատ նույր հարցեր էին տրվում, և վստահության ձեռքբերումը մի գործընթաց էր, որը շատ բաց ու ծանր գորուցներ էր պահանջում: Ամենահետաքրքիր դեաքերից մեկը Դաշտադեմում էր՝ ծագումով մշեցի Տարոնենց տանը:

Տարոնն ինքը շատ հյուրընկալ մարդ էր: Մենք նրա տանը էինք, երբ եկավ նրա հարևանը: Հարևանը բարեկ և սեղմեց Տարոնի ու նրա որդիների ձեռքը, բայց ոչ մուրքիայից մեր մասնակից՝ Սայաթի: Տարոնն ասաց, որ Սայաթը նույնպես հայ է: Եվ դրանից հետո միայն հարևանը սեղմեց Սայաթի ձեռքը: Ապա հարցողեց: «Ո՞ր են այդ բոլորը», և զնաց այսի, որտեղ խումբը հանգստանում էր: Տարոնը խնդրեց անհարմար միջադեպ չսարքել: Հարևանն էր, թե: «Բոլորն աղջիկներ են: Բա ու՞՞ են տղաները» և ապա հեռացավ այցուց:

Այսպիսով, խումբը որոշեց, որ յուրաքանչյուր մասնակից պետք է նման պահեր արտահայտելու հնարավորություն ունենա՝ ծևակերպելով մեկ հարց, որն իրեն տրվել է այցելությունների ժամանակ:

**Այս տեսարանը սկսվում է այնպես, ինչպես Մուշի սցենարում է: Լավաշի պատրաստման և երգելու գործընթացը ժամանակ առ ժամանակ ընդհատվում է կատարողների բարձրածայնած հարցերով: Յանկարծ ամեն ինչ ընդհատվում է, և բոլորը քարանում են. կատարողներից մեկը հարց է տալիս, իեսոն երգն ու շարժումը շարումակվում են մինչև բոլորը տալիս են իրենց ընտրած հարցերը: Տեսարանն ավարտվում է հանդիսատեսին լավաշ բաժանելով՝ սահուն անցում կատարելով հաջորդ տեսարանին:**

**Ժարժում՝ լավաշ պատրաստելու պար**

**Տեսագրություն՝ չկա**

**Զայմ՝ «Միջոքուր» երգի կենդանի կատարում**

**Խոսք՝**

«Թու՞՞՞ ես: Եթե բոլոր ես, ձեռք չպիտի սեղմեմ»

«Ցեղասպանության հարցում ի՞նչ դիրքորոշում ունես»

«Արյո՞ք դուք զղջում եք»

«Ցեղասպանությունն ընդունո՞՞մ եք»

«Ի՞նչ եք նախաձեռնում ձեր երկրում այս հարցը լուծելու համար»

Questions (Use translator)

Mirkut Drum

-Shedow & an old tree one becomes Red -  
On the street - Suddenly leaves -  
Decorate leaves no stage?

## Հարսանիքն ու Մշո խո պարելու դասերը

Երբ Դաշտադեմում էինք, Տարո-  
նի տղան՝ Տիգրանը, մեզ «Մշո խո»  
պարել սովորեցրեց, որը խճապար է  
և կատարվում է նաև հարսանիքների  
ժամանակ: Միևնույն ժամանակ մենք  
զավեշտալի շատ պատմություններ լսեցինք և հարսան-  
յաց ավանդույթների մասին շատ բան իմացանք Դաշտա-  
դեմ, Ցամաքասար, Տարոնիկ և Սուսեր գյուղերում: Մեզ  
նաև պատմեցին Մուշ-Սասունի և Ջայաստանի այլ գյուղերի  
հարսանյաց ծեսերի նմանությունների ու տարբերություն-  
ների մասին:

Գրեթե բոլոր գյուղերում խոսում էինք Ջայաստանի և Թուր-  
քիայի մշակութային նմանությունների մասին, ինչպես օրի-  
նակ՝ Շուշն պարերը պարելը, տարրեր լեզուներով, բայց նոյն  
երգը երգելը, տարրեր անուններով, սակայն նոյն ուժենատը  
պատրաստելը: Այսպիսով ուզում էինք բոլորով միասին միան-  
ման պարերն ու երգերը կատարել: Որոշեցինք այս հատվա-  
ծը բեմադրել՝ մեր ընդհանուր մշակութային ժառանգությունը  
կարևորելու համար: Սակայն պատմություններն ավելին են,  
քան «միասին երգելը»: Ենց այդ պատճառով որոշեցինք այս  
մասն ընդհատել ցեղասպանության վկաների պատմություննե-  
րով: Բացի այդ, մի կարևոր պատճառ է ունենք այս տեսարանը  
բեմադրելու: Ջայաստանի գյուղերից մեկում մենք մի երաժշտ-  
ների ընտանիք այցելեցինք: Ընտանիքի պատը՝ Մերուժանը,  
գյուղի ամենատարեց դիդախարն է: Նրա թոռը շատ տաղան-  
դավոր կլարնետ և զուռնա նվազող է: Երբ նրանց տանն էինք,  
նրանք կատարեցին «Կարսի հարս» պարը կլարնետով և «Մշո  
Գյովկենին» ու «Քոչարին» մի գուշանյով, որոն իրենք ժառանգել  
են իրենց նախասպափց, և որը բերվել է Մուշից: Զուռնան սո-  
վորության համաձայն փոխանցվում է հորից որդուն և մշակու-  
թային ժառանգության փոխանցող է համարվում: Ներգրավված  
դասընթացներից հետո մենք նրանց հրավիրեցինք Օշականում  
մեր ներկայացումը դիտելու, ինչպես նաև միասին կատարելու:  
Ներկայացման այս հատվածում նրանք նվագեցին իրենց գոր-  
ծիքներով, և մենք միասին պարեցինք:

Լավաշը բաժանելուց հետո հանդիսատեսներից մի կին  
և տղամարդ են ընտրվում՝ հարս ու փեսային ներկայացնե-  
լու համար: Նրանց հանձնվում է իրենց լավաշը, ու սկսում  
ենք պարել «Մշո խո»: Դաշտադեմի ծաղկած ժիրամենիների  
լուսանկարները և տեսագրությունը ցուցադրվում են էկրա-  
նին՝ որպես հարսի խորհրդանիշ: Դույնի ուղեկցությամբ գոր-  
նան սկսում է հնել և շարունակվում է մինչև այն պահը, երբ



լսվում է եկեղեցու զանգի ձայնը, որն ազդարարում է հաջորդ  
տեսարանի՝ «Եղասպանության ականատեսների» սկիզբը:  
Եկոնան ամբողջությամբ կարմրում է:

Հարժում՝ «Մշո խո» պար

Տեսագրություն՝ ժիրամի ծառի և կարմրի սավանի լու-  
սանկարներ

Զայն՝ «Մշո խո» զուռնա-դիոլով  
Խոսք՝ չկա

### Ապրիլի 24.

## Եղասպանության ականատեսները

Յուրաքանչյուր գարուն՝ ապրիլ 24-ին, Երևանում հար-  
յուր հազարավոր մարդկա իրենց ամենայա ուխտագնա-  
ցությունն են կատարում դեպի Ջայոց ցեղասպանության  
գոհերի հուշարձան՝ ի հիշատակ Օսմանյան կայսրությու-  
նում հայերի ցեղասպանության 1,5 միլիոն անմեղ գոհերի:  
Նրանք միասնական երբ են կազմակերպում դեպի Ծիծե-  
նակաբերդի բլուր՝ Ջայաստանի մայրաքաղաքում գտնվող  
Ջայոց ցեղասպանության հուշահամալիր: Արագածոտնի  
մարզի գյուղերում ապրող մշեցիները սովորաբար Երևան  
չեն գնում: Փոխարենը նրանք ոգեկոչում են այդ օրը՝ անվա-  
դողեր այրելով սահմանի մոտ գտնվող լեռների գագարնե-  
րին՝ այսպիսով հիշեցնելով Թուրքիային, որ իրենք անցյալը  
չեն մոռացել:

Ջայաստանում մեր այցելած բոլոր գյուղերում մեզ սար-  
սափելի պատմություններ էին պատմում Օսմանյան կայսրութ-  
յունից իրենց ընտանիքների փախուստի մասին: Թուրքերի  
կողմից իրականացված բոլոր դաժանությունները, բռնությու-  
նը, կոտորածը և վայրագությունները, դեռ երկար կմնան յու-  
րաքանչյուր ընտանիքի հիշողության մեջ: Այնքան շատ պատ-  
մություններ էին պատմում, որ դժվար էր դրանցից ընտրել՝  
ներկայացման մեջ ընդգրկելու համար: Ուստի որոշեցինք  
ստեղծել մի համատեքստ, որտեղ պատմություններն իրենք  
իրենց կխոսեն: Բոլոր ընտանեկան պատմությունները՝ նախա-  
պես տպված, ցրվում են բեմի վրա, կատարողները վերցնում են  
պատմություններից որևէ մեկը և առաջին դեմքով բարձրածայն  
ընթրցում՝ զոհերի հետ նոյնացվելու և նրանց ցավն ու տառա-  
պանքները կիսելու համար:

Պատմություններից մեկը ներկայացնում է հայկական եկե-  
ղեցում կատարված վայրագությունները: Գայանեն՝ Դաշտադեմ՝  
գյուղի մի ուսուցչութիւն, մեզ պատմում էր իր հորից լած պատ-  
մությունը, թե ինչպես են բոլոր հայերին հավաքել եկեղեցում  
և ողջ-ողջ այրել: Այս ամենը դեռ բավական չէր, նրանց՝ նոյնի  
վերածված մարմինները մարդում էին՝ ուսկիներն առանձնանելու

Cat and Bell ringing  
Put lavash on bride and groom, we'll  
decide and choose someone from the  
only dress. Red Red Colour suits best the

Candle story - 2 in Turkish 2 in Ar-  
menian  
Fixed sat - it turn we come and sta-  
dow gets on my face and we speak

համար, և մինչև վարելը ընտրում էին երեք հայ կին՝ այդ գործընթացն իրականացնելու համար:

Մեկ այլ պատմություն պատմեց Փիլոսը Կաթոնադրյութից: Փիլոսի հոր առաջին ընտանիքը Մշո Արոս գյուղում էր: Կոտորածի ժամանակ նա ստիպված էր լքել իր ընտանիքը՝ մորը, կնոջը և երեք երեխաներին: Նա մորն ու կնոջը մի քանի ոսկի է տվել՝ բուրքերից ազատվելու համար, բայց դրանից հետո այլևս երբեք նրանց չի տեսել: Փիլոսի հայրը կարողացել է փրկվել՝ իր եղբոր և կնոջ եղբոր հետ, որովհետև Օսման անունով մի բուրք նրանց օգնել է մի քանի օր խոտի դեզի մեջ թաքնվել:

Մի պատմություն էլ պատմում է Սարոյի հոր մասին, որը վեց եղբայր ուներ: Նրա պապի անունը Գրիգոր էր, և նրանք Ավետիս անունով հորեղբայր ունեին, որը Սուրբ Առաքելոց վաճրում քահանա էր: Երբ ջարդերը Ավսվեցին մարդիկ գյուղից անտառ տեղափոխվեցին, բայց Գրիգորն իր կնոջը պատվիրեց տուն գնալ և ճանապարհի համար հաց թիւն: Կինն իր երեք եղբայրների և երեք որդիների հետ այդ գիշեր տանը մնաց, եկան բուրքերը և սպանեցին նրանց: Այնուհետև ինչ-որ մեկն անտառ եկավ և Գրիգորին հայտնեց, որ նրա ընտանիքը սպանվել է: Սարոն այս բոլոր պատմություններն իր քեզի թերթից էր լսել: Նա քրոքերի և հայերի փոխհարաբերությունների մասին էլ էր պատմում, նաև ասում էր, որ կառավարությունն էր քրոքերին հրամայել սպանել հայերին և վերցնել նրանց ունեցվածքը. ահա թե ինչու էին քրոքերը սկսել սպանել իրենց հարևաններին:

Ներկայացման ժամանակ ընթերցված պատմություններից մեկը Սուտերի գյուղապետից ենք լսել: «Պատմությունը գյուղապետի պապի մասին է, որի օրագրերը նա հպարտությամբ պահպանում է: Նրա մեծ պապը՝ Պետրոսը, որը 1880-ականներին Անդրանիկի ջոկատում է ծառայել, օրագիր էր պահում Սուլշուն: Օրագիրը հայերեն և քրոքերեն գրված հուգիչ բանաստեղծություններ ունի, որոնք ներկայացնուն են թուրքերի հրականացրած վայրագությունները: «Կաթնատու մայր» անունը կրող մի բանաստեղծություն Յայաստանի ազատության և անկախության մասին է, «որը 2 միլիոն հայերն այլև չեն տեսնի»: Ստորև բերված հատվածը ներկայացվում է նաև բուրքերեն և անգերեն լեզուներով.

Այս, անմոռանալի ցավ է իմ սրտին  
Բոլորդ ընկար կոտորածի տակ  
Բախտը չվիճակեց ձեզ և ձեր հետ միասին  
Երկու միլիոն ժորվիդին՝ տեսմել ազատ,  
անկախ Յայաստան:  
15/12/80 Յամաքասար  
Յատված «Կաթնատու մայր» բանաստեղծությունից

Ներկայացման այս հատվածը վերնագրված է «Ապրիլի 24»: Այն սկսվում է «Զինար ես» երգով (երգվում է կուլիսներում): Երգն ընդհատվում է, երբ կատարողները հայտնվում են բեմում: Կատարողները վառվող մոմերով մեկ առ մեկ բեմ են բարձրանում: Գյուղացիների դեմքերը պրոյեկտվում են կատարողների վրա և ապա էկրանին: Վերևում ներկայացված ընտանեկան պատմությունները նախապես տպվել են թերթիկների վրա և տարածված են բեմով մեկ: Կատարողները վերցնում են մոմերը և պատմությունները կարդում երեք լեզուներով՝ անգլերեն, հայերեն, բուրքերեն: Ներկայացումն ավարտվում է մթությամբ՝ որպես անտանելի ցավի խորհրդանշ:

**Հարժում՝ Ըկարների պրոյեկցիա կատարողների վրա**  
**Տեսագրություն՝** այն մարդկանց լուսանկարները, ում պատմությունները ընթերցվում են

**Զայն՝** Կոմիտաս, «Զինար ես», կենդանի կատարում  
**Խոսք՝** գյուղացիների պատմած պատմությունները

## Օպերային երգիչ Արմենակ Շահմուրադյանի տունը

Այս հատվածը նույնն է, ինչ Սուշի ճամբարի ներկայացման սցենարում:

### Գանձերի հետևից.

### Ի՞նչ է Մուշը բեզ համար

Ծիագրի առաջին փուլում՝ Մուշուն, մեզ հարցնում էին՝ արդյո՞ք Մուշ ենք եկել՝ հայերի գանձերը փնտրելու: Բնակիչները պատմում էին, թե ինչպես էին իրենց հարևաններից ունանք գտել հայերի գանձերը և հարստացել ցեղասպանությունից հետո: Սակայն գանձերի մասին որոշ պատմություններ թաքնված էին կամ պարզապես հիմնված մարդկանց ենթադրությունների վրա:

Յայաստանում փորձում էինք հասկանալ, թե ծագումով մշեցիներն ինչպես են պատկերացնում Մուշը: Ընտանիքների մեջ մասը հազիվ էր Մուշից ներկայիս Յայաստան փախուել: Եվ չնայած մեզ համոված մարդիկ ծնվել և մեծացել էին Յայաստանում, նրանց բոլորի մտքում Մուշը մի կատարյալ վայր էր: Նրանց բոլորին Մուշը հետաքրքրում էր, և ուզում էին այնտեղ գնալ, գրեթե պարզապես տեսմել, թե



որտեղ են ապրել իրենց նախնիները: Նրանք բոլորն էլ Մուշը պատկերում էին որպես դրախտավայր կամ օրինված և հարուստ երկիր: Մի անգամ, գյուղացիներից մեկին շոկոլադ նվիրեցինք՝ իրենց տանը մեզ հյուրօնկալելու համար: Տանտեղը հարցող է՝ արդյոք շոկոլադի փոխարեն Մուշից բերված մի բուռ հող չունե՞ք: Մյուսն էլ ասաց, որ իր պապի վերջին ցանկությունը Մուշի հողն իր գերեզմանին լցնելն էր: Հիմնվելով Մուշի և Հայաստանի մեր փորձի, ինչպես նաև այս պատմությունների վրա՝ թեման այնպես զարգացավ, որ մենք հարցը ծևակերպեցինք հետևյալ կերպ: «Ո՞րն է իրական գանձը մեզ համար, և, առհասարակ, ի՞նչ է Մուշը մեզ համար»: Ներկայացնան ընթացքում ցանկանում էինք Մուշն ու Հայաստանը միավորել գաղափարական մակարդակում: Այս հատվածում ննան հարցեր արժարծելու հնարավորություն ունենակ և որոշեցինք պահն ավելի ինտերակտիվ դարձնել՝ մտածելով Մուշի մասին: Դրա համար ընտրեցինք լրագրողական հարց-պատասխանի ծևաչափը:

Կատարողները հերթով մի քայլ առաջ են գալիս և ասում, թե ինչ է Մուշը, և որն է իրական գանձն իրենց համար: Ունաց համար Մուշն է պատճառը, որ ննան ծրագրում երկու կողմերը հանդիպեն, ուրիշների համար Մուշը հայրենիք է, որն իրենք միշտ կիշեն յուրովի: Կատարողներից մեկը, որը Բի-Բի-Սի-ի լրագրող է՝ գինված բարձրախոսով և տեսախցիկով, հանդիսատեսին ներկայացնան մեջ է ներգրավում՝ հարցնելով, թե ինչ է Մուշն իրենց համար:

### Չարժում՝ քայլեր

**Տեսագրություն՝ հանդիսատեսի ուղիղ հեռարձակում Զայնագրություն՝ չկա**

**Խոսք՝** Մուշն այս ծրագրի առաջին փուլն էր ինձ համար: Մուշն ինձ համար անցյալ է, ներկա և ապագա: Մուշն ինձ համար քոչարին է:

Այս նախադասությամբ անցում ենք կատարում ներկայացնան հաջորդ մասին, և սկսվում է երաժշտական նախերգանքը:

## Միավորելով Մուշի և Հայաստանի երեխաներին՝ միասնական պար

Սցենարի այս հատվածը ոգեշնչվել է Շաշտաեմում Տարոնի եղբոր տանը ծավալված գրույցից: Նա գրկաբաց ողջունեց մեզ և ասաց. «Եթե իհնա երաժշտություն միացնենք, անմիջապես ընկերներ կդառնանք»: Նա մեզ համար իր

գործիքները նվազեց, ինչպես ինքն էր բացատրում՝ «քուրքական գործնան» և «հայկական գործնան», որը, ըստ նրա պատեի հարուստ է հայկական եղանակներ նվազելու համար: Նրա «քուրքական գործնան» իր պապն էր բերել Մուշից: Նրա կենդանի երաժշտության ներքո մենք սկսեցինք միասին պարել: Համատեղ պարելու առանձնապես դժվար չէր, որովհետև մեր պարերն իրար նման են: «Պարից հետո Տարոնի եղբայրը հարցուց մեր գերմանացի կազմակերպչին՝ Ուլրիկեին. «Դուք մեր [հայկական և քուրքական] պարելու միջև որևէ տարրերություն նկատեցի՞ք»: Ուլրիկեն ասաց, որ ընդհանրապես տարրերություն չկար: Երաժշտության ուժը տեսնելով՝ որոշեցինք այն օգտագործել Մուշի մարդկանց և հայաստանարնակ մշեցիների միջև կապ հաստատելու համար:

**Ներկայացնան՝ «Գանձերի հետևյաց» վերնագրված հատվածում լրագրողը հարցնում է. «Ի՞նչ է Մուշը ծեզ համար»: Տարեց երաժիշտ Մերուժք՝ Տարոնիկից, պատասխանում է. «Մուշն ինձ համար քոչարին է»: Նա նվազում է իր դիոլը, և մյուս երաժիշտները նրան են միանում: Այնուհետև Օշական գյուղի<sup>2</sup> երեխաների պարային համույթը նույնում է ընդհանուր պատկերի մեջ և հայկական ազգային պարեր կատարում: Այս երեխաների հետևում՝ էկրանի վրա ցուցադրվում են Մուշի փողոցներում պարող երեխաների նկարները: Տեսագրության միջոցով Հայաստանի և Թուրքիայի երեխաները միասին են ներկայացվում թեմի վրա: Եվ քանի որ երաժշտությունը շարունակվում է, հանդիսատեսն ու կատարողներն էլ են միանում պարողներին՝ ծեռք ծեռք տված բրոյրը պարում են: Համբիսատեսի ներգրավմանը ներկայացնում մասնակցային ու գրավիչ է դառնում բոլորի համար: Վերջում կատարողները բեմ են բարձրանում և խոճարիվում, և այսպիսով ներկայացնում ավարտվում է:**

### Չարժում՝ ազգային պար

**Տեսագրություն՝ երեխաների պարը Մուշի փողոցներում**

**Զայն՝ գործնա-դիոլի կենդանի կատարում**

**Խոսք՝ չկա**

2. Հայաստանում մեր եղբափակիչ ներկայացումը տեղի ունեցավ Օշականի մշակույթի տաճո: Այստեղ կապ հաստատեցիմ տեղի մշակույթի ոլորտի պատասխանատուի հետ և կրակիրեցինք գյուղի երեխաների պարային համույթին՝ մեզ հետ ենույթ ունենալու: Բարեբախտաբար նորանք չմերժեցին:

## Զրույց Երեխաների հետ

Դաշտադեմ գյուղի մոտ՝ Եկեղեցի տաճող ճանապարհին, ճամանակիցները հետաքրքիր գրույց ունեցան Երեխաների հետ: Երեխաները մեզ օգնում էին գտնել միայնակ Եկեղեցին: ճանապարհին հանդիպեցինք Երեխաներին, և մեր գրույցը հայ-թուրքական հարաբերությունների, ինչպես նաև ազգային պատկանելության ընկալման քննարկման վերաճեց: Այս խոսակցությունները կարևոր են մեզ համար՝ ինքնությունները, տարրեր ազգությունների վերագրվող կարծրատիպերը և հիմնականում «ուրիշի» հանդեպ ունեցած նախապաշտոնական քննարկելու տեսանկյունից:

---

Ժամանակի սղության պատճառով այս հատվածը չմշակվեց և չըեմարդիվեց:

---

### Տեքստ 1:

**Երեխա:** Յա՞յ ես:

**Ա:** Այո՛, չե՞ս տեսնում՝ վարժ հայերեն եմ խոսում:

**Երեխա:** Ֆրանսիացու նման ես: Այն աղջիկը որտեղից է: Թու՞րք:

**Բ:** Ես միաժամանակ թուրք եմ, հայ եմ, քուրդ եմ, ֆրանսիացի և բրիտանացի եմ:

**Երեխա:** Ամա՞ն:

**Բ:** Դու թուրքի կամ հայի ես նման:

### Տեքստ 2:

**Տղա 1:** Սոտ 12 տարեկան:

**Տղա 2:** Սոտ 7 տարեկան:

**Սայաթ:** Մասնակից:

**Տ1:** Բարև:

**Տ2:** Բարև:

**Ս:** Բարև, ո՞նց ես:

**Տ1:** Լավ, շնորհակալություն:

**Տ2:** Քայերեն գիտե՞ս:

**Ս:** Իհարկե գիտեմ: Ես հայ եմ, Թուրքիայից եմ Եկել:

**Տ1:** Մնացածներն է՞լ են խմբում հայ:

**Ս:** Չե:

**Տ1:** Կարմիր մազերով աղջիկը թուրքի նման չի:

**Տ2:** Աղջիկներից մեկն ինձ ասեց, որ ինքը թուրք չի, որ խառնուրդ ա:

**Ս:** Բոլորն էլ թուրք են:

**Տ2:** Նրանք մեղավոր չեն, չե՞:

**Ս:** Իհարկե, ո՞չ:

**Տ1:** Որտե՞ղ ես ապրում:

**Ս:** Ստամբուլում:

**S1:** Ստեղից մոտիկ ա՞:

**Ս:** Ինքնարիոնվ 2 ժամվա ճանապարհ է, իսկ ավտոբուսով՝ 36 ժամվա:

**S2:** 36 ժա՞՞մ: [S1 և S2 զարմանում են և ծիծաղում:]

**S2:** Թուրքիան շատ մեծ ա, չե՞:

**Ս:** Այո՛, շատ:

**S1:** Իհարկե, մեծ ա: Ասում ա 36 ժամ:

**S1:** Թուրքիայի համեմատ Հայաստանը շատ փոքր ա, չե՞: Բայց Ուսաստանը մեր հետ ա:

**Ս:** [ծիծաղ]

**S1:** Թուրքիայի բանակը հզո՞ր ա:

**Ս:** Այո՛, հզոր է:

**S1:** Աշխարհի ամենամեծ բանակը Չինաստանինն ա:

**Ս:** Կարծում եմ, այո՛: Եկեղեցու կարծ ճանապարհը գիտե՞ք :

**S2:** Յա՛, գիտենք: Յորս գերեզմանն էլ ա ընդեռ:

# Ծանոթագրություններ

## Ակերսել Նիկոլայի Կոսիդին

Ակերսել Կոսիդինը (1904-1980) խորհրդային պետական գործիչ էր 1964 թվականից մինչև իր մահը: Խորհրդային Սիության առաջին վարչապետն էր, որ այցելեց Թուրքիա (1966): 1975 թվականից նորա երկրորդ այցի շրջանակներում կողմները փորձեցին կարգավորել սարը պատերազմի ընթացքում խարարված հարաբերությունները:

## Աշտարակ

Աշտարակը քաղաք է Հայաստանի Հանրապետությունում, գտնվում է մայրաքաղաք Երևանից 20 կիլոմետր հյուսիս-արևմուտք:

## Աշտիշատ

Աշտիշատը ամենահին հայկական բնակավայրերից է: Գտնվում էր Մշո դաշտում՝ Վրածանի/Մուրատ գետի արևելյան ափին: Այստեղ էին գտնվում հեթանոս հայերի աստվածների գլխավոր տաճարը և հայոց քրոնապետի նստավայրը: 301 թվականին՝ քրիստոնեության ընդունումից հետո Աշտիշատի հեթանոսական տաճարները քանդվում են, և կառուցվում է առաջին քրիստոնեական եկեղեցին: Հայտնի է, որ Աշտիշատն ավերվել է 15-րդ դարում:

## Ապրիլի 24

1915 թ. ապրիլի 24-ին հարյուրավոր հայ մտավորականներ և առաջնորդներ են ձերբակալվել Կոստանդնուպոլսում (Ստամբուլ): Այս օրը համարվում է Հայոց ցեղասպանության սկիզբ և ամեն տարի հիշատակվում է աշխարհասփյուր հայության կողմից:

## Անդրանիկ

Անդրանիկ Թորոսի Օզամյան (1865 - 1927), ռուսական բանակի կովկասյան ճակատի գեներալ-մայոր: Առաջին աշխարհամարտի տարիներին նշանակվում է առաջին հայ կանավորական զնիք հրամանատար և մասնակցում Օսմանյան կայսրության դեմ նղված Վանի, Բիրլիսի և Մուշի մարտերին:

## Արինջ (այժմ՝ Չորդուրլու)

Արինջը ամենահաճախ հանդիպող հայկական տեղանուններից է: Հայկական լեռնաշխարհում մի քանի Արինջ կա, որոնցից մեկը Մուշուն էր: 19-րդ դարի վերջում Մուշի Արինջ գյուղում ապուն էր շուրջ 120 հայ ընտանիք:

## Արագած

Արագածը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթներից է և ամենաբարձր գագաթը Հայաստանի Հանրապետությունում:

## Արաքս գետ (նաև Արագ, Արաս, Երասխ, Երեզ)

Արաքսը գետի (թուրքերեն՝ Արաս) ակունքները երգրում շրջանում են՝ Թուրքիայի Հանրապետությունում: Արաքսը հոսում է Արելային հայ-թուրքական սահմանով, անցնում է Իրանով և Ադրբեյջանով՝ թափվելով Կասպից ծով:

## Արմենակ Շահմուրադյան

Արմենակ Շահմուրադյան (1878-1939) ծագումով Մուշից հայագի օպերային երգիչ էր, Կոմիտասի աշակերտը:

## Արևմտյան Հայաստան

«Արևմտյան Հայաստան» եզրույթը վերաբերում է պատմական Հայաստանի արևմտյան շրջաններին: Այս արտահայտությունը օգտագործվել է Սասանյան Իրանի և Հոգևական կայսրության միջև Հայաստանի Թագավորության առաջին բաժանումից սկսած (387թ.): Եթե օսմանցիները գրավեցին Բյուզանդիան, Արևմտյան Հայաստանը մտավ Օսմանյան կայսրության կազմի մեջ: Ակզենական շրջանում օսմանյան քարտեզների վրա այս տարածքը նշվում էր որպես «Հայաստան»: 1880 թվականին Օսմանյան կայսրությունն արգելեց պաշտոնական փաստաթղթերում Հայաստան բարի օգտագործումը՝ փոխարեն գրելով Թուրքիան կամ Անատոլիա: Ըստ Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանման՝ 19-րդ դարի վերջում տարածքը բաժանվեց Բիրլիսի, Դիարբերի, Էրզրում, Խարբերդի (Յարպատ), Սերաստիայի (Սիլվա), Տրաքոնդի և Վանի վիլայենների միջև: Մուշ քաղաքը և Մշո դաշտը մտնում էին Բիրլիսի վիլայեթի մեջ: 1923 թվին այս տարածքը պաշտոնապես վերանվանվեց «Արևելյան Անատոլիա», բայց հայերը շարունակում են այն կոչել Արևմտյան Հայաստան:

## Բինգոյլ (հայերեն՝ Բյուրլակն, թուրքերեն՝ Բինգոլ)

Բինգոյլը Արևելյան Թուրքիայի նահանգներից է: Նախկին Ղերսիմի նահանգի լեռնոտ արևելյան հատվածը (Արևկային՝ Թունչելիս) նոյնպես Բինգոյլ է կոչվում: Այստեղից են սկիզբ առնում Արաքս և Եփրատ գետերը (թուրքերեն՝ Արոս և Ֆըրա): Բինգոյլի հայերեն նավակները Բյուրլակն են: Եվ հայերեն, և թուրքերեն տարեսկերը նշանակում են «հազարավոր արյուղներ»: Հեթանու հայերը հավատում են, որ Բինգոյլի նշաներից լեռներից հոսող կարնագույն ջուրը Անահիտ աստվածունու կրծքի կարմ է, և Վաղարշակարի (ջրի պաշտամունքին նվիրված տոն) տոնախմբություններն այս շրջանում շատ տարածված էին ընդհուպ մինչև 1915 թվականը:

## Բողիլ Բյորն

Բողիլ Կատարինե Բյորնը նորվեգացի միսիոներ բուժքույր էր, որին «Կին միսիոներներ» կազմակերպությունը 1905 թվականին ուղարկում է Օսմանյան կայսրություն: Նա 1915 թվականի Մշո ջարդի ականատես է: Բողիլ Բյորնը մահից փրկում է հարյուրավոր հայ կանաց և Երեխաների՝ վկայագրելով տեսած դեպքերն իր օրագրում և լուսանկարների միջոցով:

## Գասաբ

Մուշի, Սասանի և Բիրլիսի հայերը պատմում են, որ ամռանը ծառերի և խոտի վրա ցողի նման սպիտակ փոշի էր նստում: Եթե փոշին հավաքած խոտն ու տերևը եփում էին, մեղրանման զանգված էր ստացվում, որն անվանում էին գասաբ: Գասաբն հաճախ համեմատում են Աստվածաշնչում նկարագրված մանանայի հետ:

## Գյումրիի Երկրաշարժ

1988 թվականի դեկտեմբերի 7-ի ուժին Երկրաշարժը մեծ

ավերածություններ պատճառեց Հայաստանի հյուսիսային շրջաններում, հատկապես Գյուղի, Սպիտակ և Կանաձոր քաղաքներում: Երկրաշարժն ավելի քան 25.000 մարդու կյանք տարավ, հարյուր հազարավորներ մնացին անտուն:

#### Գոմս

Գոմսը Մշո գավառի հայկական գյուղերից էր: 20-րդ դարի սկզբում ուներ 115 տուն հայ բնակչություն:

#### Գևորգ Չառլզ

Գևորգ Չառլզ (Գևորգ Ղազարյան, 1865 - 1907), հռչակավոր հայ ֆինանի, Մուշի և Սասունի դիմադրության առաջնորդներից էր: Սպանվել է Սովորված կամքոջի կովում:

#### Դեյր-Էգ-Զոր (Անաև՝ Դեր Զոր)

Դեյր-Էգ-Զորը անապատ է մերօրյա Սիրիայում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին այն երիտրուրբական կտառավորության կողմից տեղահանված հայերի հիմնական կուտակման վայրերից էր: Շատերը մահացան տեղահանության ճանապարհին: Նրանք, ովքեր կարողացան տեղ հասնել, զանգվածաբար կոտորվեցին:

#### Դիոր

Դիորը հայկական երաժշտական գործիք է, որը նման է կաշվեպատ երկողմանի թմբուկի: Կողմերից մեկը սովորաբար պատրաստվում է ավելի բարակ կաշվից: Դիոր խփում են կամ ձեռքով կամ փայտով ձողերով:

#### Եզդի (Անաև՝ յազդի)

Եզդիները իրանական ծագման երնո-կրոնական խումբ են:

#### Զանգեզուր (Անաև՝ Սյունիք)

Զանգեզուրը Հայաստանի Հանրապետության հարավային շրջանն է (Երևանից Սյունիքի մարզը):

#### Զարթոնք

Գյուղ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում: Հիմնադրվել է 1950 թվականին և կոչվել Ղանզըլու, վերանվանվել է 1978 թվին: Ներկայումս Զարթոնքում բնակվում են հայեր և եղինակեր:

#### Զազա (Անաև դիմլի, դիմիլի կամ դայլամի)

Զազաները խսուտ են իրանական լեզվախմբին պատկանող զազակի լեզվով: Ապրում են Արևելյան և հարավարևելյան Թուրքիայում:

#### Զուռնա

Զուռնան փողային երաժշտական գործիք է, սովորաբար պատրաստվում է ծիրանի, թթի կամ ընկույզի փայտից:

#### Էրգիր (Անաև՝ Երկիր)

Էրգիրը հայերն երկիր բարի հնջունափոխված տարբերակն է, նշանակում է «ամբողջ աշխարհ», «պետության կամ մարդի մի

մաս», «հող»: Հայերենի որոշ բարբառներում (հատկապես՝ Մուշ-Սասունի) բառը սովորաբար արտասանվում է էրգիր և նշանակում է «հայրենիք»:

#### Էրիշտեր (այժմ՝ Էսմեպինար)

Էրիշտերը Մուշից 30 կմ հեռավորության վրա գտնվող հայկական գյուղ էր: 1957 թվականին՝ Թուրքիայում օտար անունների փոփոխման համաձայնորովի ստեղծումից հետո, վերանվանվել է Էսմեպինար:

#### Թալին

Քաղաք Հայաստանի Հանրապետության Վրագածոտնի մարզում, Խորհրդային Հայաստանում համանուն շրջանի շրջկենտրոն:

#### Թոնիր

Կամլից պատրաստված կամ կավածեփ գլանաձև վառարան: Յայոց մեջ օգտագործվել է սովորաբար գետնավոր տեսակը: Օգտագործվել է թե՛ տունը տաքացնելու, թե՛ կերակուր պատրաստելու, թե՛ հաց թխելու համար:

#### Իգդիր

Քաղաք Թուրքիայում, Երևանից 40կմ հեռավորության վրա: Սիջնադարձում հգիրը (Ցղակերտ) մտնում էր Մեծ Հայքի (մ.թ.ա. 331- մ.թ. 428) Այրարատ նահանգի մեջ: Քաղաքը գտնվում էր պարսկական տիրապետության տակ 16-րդ դարից մինչև ռուս-պարսկական պատերազմի ավարտը՝ 1828 թվվը, երբ այն անցավ Ռուսական կայսրությանը հետո քաղաքը գրավվել են օսմանյան զորքերը: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից մինչև 1920թ. հգիրը Հայաստանի Առաջին համրապետության կազմում էր: 1921 թվին Մոսկվայի և Կարսի ռուս-թուրքական պայմանագրերով հգիրն անցավ Թուրքիային:

#### Լավաշ

Լավաշը բարակ, բլիթանման հաց է, որն ավանդաբար թխվում է թոնրում: Այն ունի մեծ նետր երկարություն և կարող է օգտագործվել այլ ուտելիք փաթաթելու համար կամ ծառայել որպես ափսե:

#### Լեռինական

Լեռինականը Գյուղի քաղաքի խորհրդային անունն է: Մայրաքաղաք Երևանից հետո այն մեծությամբ Հայաստանի Երկրորդ քաղաքն է:

#### Խաչքար

Խաչքարերը (հայերեն խաչ և քար բառերից) փորագրված հուշարձանաբարեր են, որոնց վրա պատկերում են խաչ, շուրջը՝ գարդանախշեր: Խաչքարերը բնորոշ են հայկական մշակույթին և հայոց մեջ ծառայում են որպես հուշարձաններ ու տապանաքարեր:

#### Խորհրդային տարածքային պահանջները

#### Թուրքիայից (Ստալինի ծրագիրը)

Խոսիֆ Ստալինի կառավարման շրջանում Խորհրդային Միունիունը տարածքային պահանջներ է ներկայացնում Թուրքիային:

1945-1953թթ. ԽՍՀՄ-ը տարածքային խնդիրները լուծելու մի քանի ծրագիր էր պատրաստել: Անհամաշոշը ծրագիրը պահանջում էր երգործի, կանի, Սուլշի, Բիրլիսի, Սուլմալուի և Ալաշերտի շրջանների վերադարձը: Խորհրդային կառավարությունը պատրաստվում էր բնակեցմել այդ հողերը Սփյուռքից հայրենադարձված հայերով: 1946-1948թ. Խորհրդային Հայաստան են հայրենադարձվում մոտ 100,000 հայ Սիրիայից, Լիբանանից, Իրանից, Հունաստանից, Բուլղարիայից, Օւսմանիայից, Կիպրոսից, Պատեստինից, Իրաքից, Եգիպտոսից և Ֆրանսիայից: Եթե Թուրքիան միանում է ՆԱՍՕ-ին և ընդունում Մարշալի ծրագիրը, ընկնում է ԱԱԾ պաշտպանության դաշտ, և այս ծրագիրը չի իրագործվում: 1953 թվականին՝ Ստալինի մահից հետո, ԽՍՀՄ-ը հայտարարում է, որ ոչ մի տարածքային պահանջ չունի Թուրքիայից:

### Կարճադրյուր

Կարճադրյուրը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գյուղերից է, Թավինից 5 կմ հեռավորության վրա: 20-րդ դարի սկզբում գյուղի բնակչությունը թթախոս էր, և այն Մեհրիբան էր կոչվում: Գյուղը Կարճադրյուր է վերանվանվել 1950 թվականին:

### Կոմիտաս

Կոմիտասը (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան, 1869-1935) հայագի հոգևորական, վաստակավոր երգահան, երնորաժշտագետ և երաժշտության ուսուցիչ էր: Նա համարվում է հայկական ժամանակակից դասական երաժշտության հիմնադիրը: Կոմիտասը բազմաթիվ հայ նոտավորականների հետ միասին ծնորթակալվում և ասքորվում է Կոստանդնուպոլիսից 1915 թվականի ապրիլի 24-ին: Թուրք պատճ Մեհմեթ Էմին Յուրդակուլի (Կոմիտասի մտերիմ ընկերոց) և ԱԱԾ դեսպան Հենրի Մորգենբարտի միջնորդությունից հետո Թալեար փաշան հրամայում է վերադարձնել նրան Պոլիս: Այնուամենայիվ, աքսորի ճանապարհին տեսած սարսափերը չնորացվեցին և տաճեցին Կոմիտասին մինչև իր մահը փարիզան հոգեռուժարանում:

### Հարիսա

Հարիսան մսից և հացահատիկից պատրաստվող ճաշատեսակ է:

### Հոյք

Հոյք բարձր պարսկական ծագում ունի և օգտագործվում է մարդուն վերագրվող հնաստությունը կամ փորձը նշելու համար: Օսմանյան և արդի բոլոր երեխներն հոյք են կոչում մզկիթների ավագ կրոնավորներին և երեխներ՝ ուսուցիչներին ու դասախոսներին:

### Հրանտ Դինը

Հրանտ Դինը (1954 - 2007) Թուրքիայում բնակվող հայագի խմբագիր, լրագրող և տեսարան էր: Որպես երկեղու «Ազու» շաբաթթերի գլխավոր խմբագիր՝ հայ համայնքի նշանավոր գործիչներից էր: Նա բոլոր-հայկական հաշտեցման և Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության հայտնի ջառագով էր: Դինը քննադատաբար էր մոտենում ինչպես Թուրքիայում՝ Հայոց ցեղասպանության մերժմանը, այնպես էլ հայկական Սփյուռք՝ Ցե-

ղասպանության ճանաչման համար տարվող միջազգային քարոզչությանը: Հրանտ Դինը սպանվել է 2007 թվականի հունվարին, 17 տարեկան բուրյա ազգային կողմից:

### Մանաճան (տես՝ նաև գասապե)

Ըստ Յին Կուակարանի՝ Աստված հրեաներին 40 օր շարունակ երկային մանաճան է ուղարկում, որպեսզի նրանք կարողանան անցնել անապատը և հասնել Ավետյաց երկիր:

### Մասիս

Մասիսը Արարատ սարի հայկական անուններից մեկն է (թուրքերն՝ Աղըր դար): Այս գորում նշվում են նաև Մասիս քաղաքը և Կրարատի մարզի նախկին Մասիսի շոշանը:

### Մեսրոպ Մաշտոց

Մեսրոպ Մաշտոցը (362-440) հայոց գրերի ստեղծողն է: Արդեն 1600 տարի հայերն օգտագործում են 405 թվականին նրա կողմից ստեղծված գրերը: Նա հայ ինքնությունը ձևավորող ամենազդեցիկ ենթակա համարվում:

### Մշո խըր

Մշո խըրը հայկական ավանդական պար է, որի ժամանակ պարողները կանգնում են ուսուսի, մի շարքով, ծեռքձեռքի բռնած, ծեռքը ներքև պարզած և ներքնում խաչված, մատները միահյուսված:

### Սուրադ գետ (նաև՝ Արածանի)

Սուրադ Արևոտնանե Եփրատի՝ Եփրատ գետի ամենամեծ վտակի անունն է: Եվ հեթանոս, և քրիստոնյա հայերի կողմից գետը սրբացվել է: Սա այն գետն է, որում 4-րդ դարում մկրտվել է հայոց Տրդատ III թագավորը՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով:

### Մի ուսիկ՝ մի ոռք

1918-1919 թվականներից մինչև 1925 թվակը տեղանքին լավ ծանոթ հայերը փնտրում էին հայ երեխաներին, որոնք կամ փախցվել էին մուսուլմանների կողմից, կամ փրկվել և ապաստան էին գտնել նրանց տներում: Հայտնի է, որ մի երեխանի համար վճարում էին մի ուսիկ:

### Ողական

Ամրոց պատմական Հայաստանի Տուրութերան նահանգում: Գտնվում էր Արածանիի ծախ ափի բլուրներից մեկի վրա, որտեղից գետը մտնում էր Մշո դաշտ: Վաղ միջնադարում ամրոցը պատկանում էր Մամիկոնյան նախարարական տանը՝ հայոց սպարապետների տոնման:

### Ոսկեհաս

Գյուղ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում՝ մարզկենտրոն Գյումրիից 10 կիլոմետր հեռավորության վրա: Մինչև 1918 թվականը գյուղը բնակեցված էր թթախոս հանրությանը և կոչվում էր Մոլլա Մուսա: 1946 թվականին գյուղը վերան-

վանվում է Ոսկեհասկ: 1981 թվականին Թուրքիայից եկած մի խումբ փախստական հայեր հաստատվում են այստեղ, իսկ Մոլլա Մուսայի թքախոս բնակչությունը տեղափոխվում է ՀՅ Ասահիայի շրջան:

### Չերքեզ

Չերքեզները կովկասյան ծագման ժողովուրդ են, որոնց լեզուն պատկանում է կովկասյան լեզվաբնակիքի հյուսիսարևմտյան խմբին: Սկսած 1864 թվականից՝ Ռուսական կայսրությունը զանգվածարար արսորում է չերքեզներին իրենց հայրենիքից, և նրանք մեծ մասամբ հաստատվում են Օսմանյան կայսրությունում: Չնայած չերքեզներն առանձին էքնիկ խումբ են, կովկասից գրեթե բոլոր ժողովուրդներին Թուրքիայում չերքեզ են անվանում:

### Սուլըր Առաքելոց վաճ

Սուլըր Առաքելոց վաճը հայկական վաճական համալիր էր: Գտնվում էր Սուլշ քաղաքից շուրջ 10 կիլոմետր հարավ-արևելք: Հիմնադրվել է Գրիգոր Լուսավորչի կողմից 4-րդ դարում: Ըստ ավանդության՝ առաքյալներից մի քանիք մասնաւոր այստեղ են ամփոփվել, դրա համար էլ վաճը կոչվել է Առաքելոց: Այստեղ էին քաղված նաև Պատմահայր Մովսես Խորենացին (5-րդ դար) և բազմաթիվ այլ հայ գործիչներ: Առաքելոցը Օսմանյան կայսրությունում հայերի կարևորագույն կրոնական և կրթական հաստատություններից էր: Ավերվել է օսմանյան բանակի կողմից 1915 թվականին և մինչ օրս փլատակ է:

### Սուլըր Կարապետի վաճը (Նաև՝ Գլավանք, Գլավի վաճ, Սուլըր Յովհաննես Մկրտչի վաճ)

Հայկական վաճական համալիր: Գտնվում էր Մուշ քաղաքից շուրջ 35 կմ հյուսիս-արևմտության հեռավորության վրա: Հիմնադրվել է Գրիգոր Լուսավորչի կողմից 4-րդ դարում: Սուլըր Կարապետը հայկական ամենահին վաճերից էր և քրիստոնյա հայերի երեք ամենակարևոր ուխտավայրերից մեկը: Վաճը Օսմանյան կայսրության տարածքում հայկական ամենահին և ամենահարուստ կրոնական և կրթական հաստատություններից էր ընդհույս մինչև 1915 թվականը, երբ ավերվեց օսմանյան բանակի կողմից: Սուլըր Կարապետի տեղում կառուցվել է զագաներով բնակեցված Չենգիլի գյուղը:

### Սուլըր Մարինե (Նաև՝ Աճճա Մարիամ)

Սուլըր Մարինեն համարվում էր Սուլշ քաղաքի յոր Եկեղեցիներից ամենագեղեցիկը: Մյուս Եկեղեցիներն են՝ Սուլըր Ավետարանը, Սուլըր Յարությունը, Սուլըր Կիրակոսը, Սուլըր Գրիգորը, Սուլըր Ամենափրկիչն ու Սուլըր Ստեփանոսը:

### Սևան

Սևանա լիճը և Սևան քաղաքը գտնվում են Յայաստանի Յանրապետության հյուսիս-արևելքում:

### Սողոմոն Թեհիլերյան

Սողոմոն Թեհիլերյան (1897-1960) հայ վրիժառու է, որը 1921 թվականի մարտի 15-ին Բեռլինում օրը ցերեկով, բազմաթիվ վկաների ներկայությամբ սպանել է Օսմանյան կայսրության նախկին մեծ վեգիդ Թալեաթ Փաշային՝ վերջինս կողմից 1915 թվականի

տեղահանության մասին օրենքի ստեղծման համար, որի արդյունքում Օսմանյան կայսրության տարածքում ապահով հայերը դաժանաբար կոտորվեցին և ի վերջո ոչնչացվեցին: Թեհիլերյանը կանգնեց գերմանական դատարանի առջև և անմեղ ճանաչվեց: Թեհիլերյանի գործից ազդված՝ լին փաստաբան Ռաֆայել Լեմկինը հետագայում գրեց. «Ինչո՞ւ՝ մարդ պատժվում, երբ մի ուրիշ մարդու է սպանում: Մի՞թէ միլիոնների սպանությունը ավելի մանր հանցագործություն է, քան անհատի սպանությունը»: Լեմկինի կողմից առաջարկվեց «ցեղասպանություն»՝ եղորություն, և 1948թ. ՄԱԿ-ի կողմից ընդունվեց «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան:

### Սուլըրի կամուրջ (Թուրքերեն նաև՝ Մուրադի կամուրջ)

Սուլըրի կամուրջը կառուցվել է մ.թ. 13-րդ դարում Արածանի/Սուլըր գետի վրա՝ Սուլիի Խոնու (Թուրքերեն՝ Յինիս) տանող ճանապարհին: Սուլըրս գյուղի մոտակայքում:

### Սուլեթ

Գյուղը է Յայաստանի Յանրապետության Արագածոտնի մարզում: Ունեցել է մի քանի անուն, այդ թվում՝ Քաջաթաղ և Խլիջարա: Այն վերանվանվել է Սուլեթ 1946 թվին:

### Ցրոնք

Ցրոնքը Սուլիի հայկական գյուղերից էր: Այն առաջին անգամ հիշատակվում է 5-րդ դարի հայ պատմիչ Սովուս Խորենացու կողմից: Ներկայիս անունը ըօքքոյ է, չնայած տեղի քուրտ բնակչություն օգտագործում է իին՝ Ցրոնք անվանումը: 20-րդ դարի սկզբին գյուղում ապում էր 244 հայ ընտանիք:

### Քիրվա (Նաև՝ Քիրվե)

Քիրվան թլապատման արարողության ժամանակ երեխյանին բռնող մարդն է: Արևելյան, հարավյան և հարավարևելյան Անատոլիայում այս սովորությունը տարածված էր մոլուզման և ոչ միշտ էր պայմանանալու վրա: Այդ ենաքերում քիրվայությունը կարելի է դիտարկել որպես երկարատև և ամուր մտերմություն ընտանիքների միջև:

### Քոչարի

Ամենատարածված և ամենալավ պահպանված հայկական պարն է: Պարողները ձեռքերը դնում են պարզներոց ուսերին, պարում են մի ուղղությամբ՝ հաշվելով ութ պարաքայլ:

### Ֆիդայի

«Ֆիդային-արաբերեն բառ է, որը նշանակում է անձ, ով իրեն զոհաբերում է Սուլըր կամ ճշմարիտ գործի համար: 19-20-րդ դարերի օսմանյան իրավանությունը ֆիդայիները զինված, ռազմական խմբեր էին, որոնք ստեղծվում էին տեղի բնակչությանը համիլյան բռնաճնշումներից պաշտպանելու նպատակով:»